ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1.1. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Առկա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրով 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ համալսարանում գործող ուսանողների թիվը կազմել է 2405, որից վճարովի համակարգում 1966 (81,7%), իսկ 2017 թվականին համապատասխանաբար՝ 2692 և 2143 (79,6 %) (աղ. 1):

2016 թվականին համալսարանը տվել է 152 շրջանավարտ (առկա ուսուցման համակարգից), որից 112-ը (73,7%) վճարովի համակարգից:

Առկա ուսուցման համակարգ ընդունվել են 951 դիմորդներ, որից 129-ը (13,7%) անվճար համակարգում, իսկ 2 ուսանող ՀՀ Պաշտպանության նախարարության պատվերով, իսկ 822-ը՝ (86,3 %) վճարովի:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ակադեմիական արձակուրդ են ձևակերպել 770, իսկ 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ 758 ուսանող, որից 748-ը վճարովի համակարգից, ընդ որում՝ 744 ուսանող զորակոչվել են ժամկետային զինծառայության:

Միայն համալսարանում (առանց մասնաճյուղերի) 2017թ-ի հունվարի 1-ին 2016 թվականի նույն ժամկետի համեմատությամբ ուսանողների թիվը առկա համակարգում և ՀԱԱՀ քոլեջում ավելացել են համապատասխանաբար 287 և 61 ուսանողով, իսկ հեռակայում և մագիստրատուրայում կրճատվել են 355 ուսանողով և 22 մագիստրանտով:

Առկա ուսուցման համակարգում միայն գերազանց գնահատականներով սովորում են 213 ուսանող, որից 83-ը (39,5%) վճարովի համակարգից:

Բարձր առաջադիմությամբ 15 ուսանողներ արժանացել են համալսարանի անվանական կրթաթոշակի, 24 ուսանողի վարձավճար զեղչվել է «ԱՄՔՈՐ», 51 ուսանող՝ «ՎԻՎԱՍԵԼ», 38 ուսանող՝ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, որոնցից 15-ը սահմանամերձ համայանքներից, 2 ուսանող արժանացել են Հ.Պետրոսյանի անվան կրթաթոշակի, 1 ուսանող Ռոսգոստրախ ապահովագրական ընկերության կրթաթոշակի:

Սոցիալապես անապահով 91 ուսանողների վարձավճարը զեղչվել է անկախ կրթական ծրագրերից և ուսուցման համակարգից (փոխհատուցվել է պետության կողմից):

Համալսարանի միջոցների հաշվին սկսած 2015 թվականից, անվճար համակարգի ուսանողների թվաքանակի 10%-ը(12 ուսանող) սովորում են անվճար համակարգում, որոնք հետագայում ենթակա են շրջափոխման:

Բացի վերը նշվածներից, հաշվետու տարում առկա համակարգում զեղչվել է 284 ուսանողների վարձավճարը:

2016-2017 ուստարում զեղչվել է նաև ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած 32 ուսանողի վարձավճարը (առկա համակարգում) և 55 ուսանողի վարձավճարը (հեռակա ուսուցման համակարգում):

Ընդհանուր առմամբ հաշվետու տարում համալսարանի միջոցների հաշվին, ինչպես նաև համալսարանի աջակցությամբ տարբեր միջոցներից վճարովի համակարգի 792 ուսանողների վարձավճարը զեղչվել է տարբեր չափերով (20-70%-ով), իսկ մի մասինը՝ ամբողջությամբ:

Աղյուսակ 1

Տվյալներ ՀԱԱՀ-ի ցերեկային ուսուցման բակալավրային մասնագետների կրթական աստիճան ստանում ստացող ուսանողների թվաքանակի վերաբերյալ

Հ/հ	Ցուցանիշներ \ Ֆակուլտետներ	Ընդամենը համալսարանում		Որից՝ ըստ ֆակուլտետների						
				Ագրոնոմիական	Ագրոբ. և շուկայ.	Տնտեսագիտակ.	Պարեն. տեխնոլոգ.	Ան-բուժ. և ան-բուծ.	Գ/Մն Ա/Տ	ՄՋև ՀՇ
1	Ուսանողներիթվաքանակըառ 01.01.16թ.	ընդ.	2405	225	452	746	423	186	158	215
		որիցվճ	1966	150	402	690	315	134	111	164
2	Ուսանողների թվաքանակ ըառ 01.01.17թ.	ընդ.	2692	278	443	797	517	257	178	222
		որիցվճ	2143	176	389	742	363	186	121	166
3	Շրջանավարտներիթվաքանակըտարվաընթացքում	ընդ.	152	7	61	50	8	8	7	11
		որիցվճ	112	2	54	43	6	1	3	3
4	Ուսանողներիը նդունելությունը տարվա ընթացքում	ընդ.	951	142	44	66	318	141	129	111
		որիցվճ	822	112	34	60	279	122	116	99
5	Հեռացումներ	ընդ.	182	31	27	23	36	22	23	20
		որիցվճ	174	27	26	22	35	21	23	20
6	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.16թ	ընդ.	770	91	81	132	166	72	120	108
		որիցվճ	760	91	79	132	164	70	117	107
	որից զին.ծառ. կապակցությամբ		760	91	76	130	164	71	120	108
7	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.17թ	ընդ.	758	91	43	89	198	78	127	132
		որիցվճ	748	88	43	88	194	76	127	132
	որից զին.ծառ. կապակցությամբ		744	91	39	88	190	77	127	132
8	Օգտվելենվարձավճարիզեղչից	15-16ուս. տ. II կիս.	177	8	42	80	19	7	10	11
		16-17ուս. տ. I կիս.	214	23	21	72	42	23	17	16
9	Ազատվել են վարձավճ. օրենսդ. սահմ. կարգ.	վճ.համ.	33	1	3	15	4	2	4	4
10	Գերազանցուսանողներիքանակը	ընդ.	213	16	23	96	45	9	5	19
		որից վճ	83	-	-	79	-	2	-	2
11	ՀԱԱՀ անվանական կրթաթոշակ	ընդ.	15	2	2	2	2	2	3	2
12	Անվանական այլ կրթաթոշակներ	ընդ.	2	2	-	-	-	-	-	-

2016 թվականին ընդունվել են 951 դիմորդ, սակայն հոկտեմբերի 1-ի դրությամբ կցագրված 200 դիմորդ համալսարանչեներկայացել և չեն ձևակերպվել:

1.1.1. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 2015-2016 ՈՒՍ.ՏԱՐՈՒՄ

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպումը և անցկացումը համալսարանի հիմնական գործառույթներից է, որը մշտապես գտնվել է համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի և բոլոր ստորաբաժանումների ուշադրության կենտրոնում:

Այս առումով պետք է նշել, որ ուսումնական տարվա սկզբից մշակվում և հաստատվում է կրթական բոլոր բաղադրիչների ժամանակացույցը: Ըստ այդ ժամանակացույցի՝ կազմակերպվել են կիսամյակային քննաշրջանները, պարտքերի առաջին և երկրորդ մարման ժամկետները և տրամադրվել ֆակուլտետներին:

Գիտելիքների ստուգման և վերահսկման կարգը քննարկվել են ռեկտորատում և համապատասխան ֆակուլտետներում:

Քննությունների ժամանակացույցը կազմելիս հիմնականում հաշվի է առնվել ուսանողների կարծիքը քննական առարկաների հանձնման հերթականության սահմանման վերաբերյալ:

Գրաֆիկները համաձայնեցվել են նաև ամբիոնների հետ և վերջնական տեսքով ներկայացվել հաստատման: Հաստատված գրաֆիկները բազմացվել և քննաշրջանից 3-4 շաբաթ առաջ փակցվել են ֆակուլտետների հայտարարությունների ցուցափեղկերում, մեկական օրինակ տրամադրվել է ուսումնամեթոդական կենտրոնին և որակի վերահսկման խմբին, իսկ առանձին ամբիոններին վերաբերող քննական ժամանակացույցերը՝ քաղվածքի տեսքով դեկանների կողմից տրամադրվել են ամբիոններին և դասախոսներին: Քննաշրջանների ժամանակացույցը ներկայացվում է նաև համալսարանի կայքէջում, որպեսզի տեղեկացվեն նաև ուսանողների ծնողները և բոլոր շահառուները: Նախապես, ըստ կուրսերի, մասնագիտությունների և առարակների՝ հատկացվել են լսարանները, որոշվել ռեկտորատի ներկայացուցիչները (մեկ օր առաջ) և քննության անցկացման ժամանակը:

Քննություններն անցկացվել են կենտրոնացված կարգով՝ ռեկտորատի ներկայացուցիչ-ների, դեկանների, ամբիոնների վարիչների և որակի վերահսկման խմբի վերահսկողությամբ:

Ստորև ներկայացվում են քննաշրջանի արդյունքներն ըստ կիսամյակների և մասնագիտությունների (աղ. 2):

2015-2016 ուս.տարվա առաջին կիսամյակում համալսարանում քննություններին պետք է մասնակցեր 2221 ուսանող, որից՝ ագրոնոմիական ֆակուլտետում՝ 211 ուսանող՝ տնտեսա-գիտական ֆակուլտետում՝ 731, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 172, պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 389, գյուղ. մեքենայա-ցման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետում՝ 144, հիդրոմելիորացիայի, հողաշինա-րարության և հողային կադաստրի ֆակուլտետում՝ 179, ագրոբիզնեսի ու շուկայաբանության ֆակուլտետում՝ 395:

Ինչպես նախորդ տարում, այնպես էլ այս տարվա առաջին կիսամյակի քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն է գրանցվել պարենամթերքի տեխնո-լոգիաների ֆակուլտետում՝ 83,0% (դեկան՝ Ա.Աղաբաբյան), անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 81,4% (դեկան՝ Ա.Վարդանյան), տնտեսագիտական ֆակուլտետում՝ 78,5% (դեկան՝ Է. Ղազարյան), իսկ առավել ցածր առաջադիմություն է գրանցվել ագրոբիզնես և շուկայաբանության ֆակուլտետում՝ 56.0% (Հ. Ջավադյան):

Վերջին ուս.տարիների կտրվածքով ուսանողների բացարձակ առաջադիմության ամփոփիչ արդյունքներն ըստ ֆակուլտետների և կիսամյակների ներկայացված են ստորև (աղ.3):

Ըստ կուրսերի համալսարանում ամենաբարձր միջին բացարձակ առաջադիմությունը գրանցվել է 4-րդ կուրսում՝ 77,0%, իսկ ամենացածրը՝ 1-ին կուրսերում (72.7%) և 2-րդ (68.8%):

Առավել ցածր առաջադիմություն է գրանցվել ագրոնոմիական ֆակուլտետի 1-ին (48.9 %) և 5-րդ (20%)կուրսերում, հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի 2-րդ կուրսում՝ 51.3 %, ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի 2, 3, 4, 5 կուրսերում 52.7- 57.6%:

Աղյուսակ 2

Ուսանողների առաջադիմության ամփոփ արդյունքները՝ ըստ ֆակուլտետների (2015-2016 ուս. տարի)

Ֆակուլտետը	2015-2016ուս. տարի						1-ինկիսամյակ						2-րդկիսամյակ					
	1-ինկիսամյակ			2-րդկիսամյակ			1-ինվերահանձնում			2-րդվերահանձնում			1-ինվերահանձնում			2-րդվերահանձնում		
	Ուսա-նողն. թիվը	**Առաջա-դիմութ. %**	**Միջին գնահա-տակ.**	**Ուսա-նողն. թիվը**	**Առաջա-դիմութ. %**	**Միջին գնահա-տակ.**	**Ուսա-նողն. թիվը**	**Առաջա-դիմութ. %**	**Միջին գնահա-տակ.**	**Ուսա-նողն. թիվը**	**Առաջա-դիմութ. %**	**Միջին գնահա-տակ.**	**Ուսա-նողն. թիվը**	**Առաջա-դիմութ. %**	**Միջին գնահա-տակ.**	**Ուսա-նողն. թիվը**	**Առաջա-դիմութ. %**	**Միջին գնահա-տակ.**
Ագրոնոմիական	211	63,5	3,5	192	73.4	3.7	60	95.3	3.1	10	100	3.0	40	95.8	3.1	8	100	3.0
Անասնաբուժ. բժշկ. և ան-բուծ.	172	81,4	3,5	165	84.8	3.7	17	97.6	3.1	4	100	3.0	36	83.6	3.1	27	97.0	3.0
Պարեն.տեխն.	389	83,0	3,6	341	85.9	3.7	64	97.7	3.1	9	100	3.0	38	98.8	3.1	4	100	3.0
ԳՄևԱՏ	144	78,0	3,4	118	72.0	3.5	32	86.8	3.1	19	100	3.0	33	86.4	3.1	16	96.6	3.0
ՀՄևՀՇ	179	72.0	3,7	162	62.3	3.6	46	97.8	3.0	4	100	3.0	32	82.1	3.0	29	99.4	3.0
Տնտեսագիտակ.	731	78.5	3,7	690	74.9	3.7	113	94.0	3.1	44	100	3.0	106	89.8	3.1	70	95.7	3.0
Ագրո. շուկայաբան.	395	56.0	3,4	355	63.4	3.6	186	89.0	3.0	20	100	3.0	140	71.4	3.0	39	100	3.0
ՀԱԱՀ	***2221***	***73,5***	***3,6***	***2023***	***74.2***	***3.6***	***518***	***95.0***	***3.1***	***110***	***100***	***3.0***	***425***	***90.4***	***3.1***	***193***	***98.0***	***3.0***

Աղյուսակ 3

Ուսանողների առաջադիմության ամփոփ տվյալների դինամիկան վերջին երեք ուսումնական տարիների տվյալներով

Ֆակուլտետը	2013-2014 ուս. տարի						2014-2015 ուս. տարի						2015-2016 ուս. տարի					
	1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ			1-ին կիսամյակ			2-րդ կիսամյակ		
	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ .%	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ. %	Միջին գնահա-տակ.	Ուսա-նողն. թիվը	Առա-ջադի-մութ.%	Միջին գնահա-տակ.
Ագրոնոմիական	159	64.2	3.6	100	66.0	3.8	184	52,2	3,4	142	67,6	3,6	211	63,5	3,5	192	73.4	3.7
Անասնաբուժ. բժշկ.և անասնաբուծ.	129	78.3	3.6	126	81.7	3.8	167	73,7	3,4	160	83,8	3,6	172	81,4	3,5	165	84.8	3.7
Պարեն. տեխն.	269	83	3.7	174	82	3.6	353	74,0	3,4	223	83,0	3,5	389	83,0	3,6	341	85.9	3.7
ԳՄ և ԱՏ	173	81	3.5	100	74	3.4	153	65,0	3,4	116	67,0	3,1	144	78,0	3,4	118	72.0	3.5
ՀՄ և ՀՇ	195	57	3.5	125	54	3.4	186	60,0	3,6	135	54,0	3,5	179	72.0	3,7	162	62.3	3.6
Տնտեսագիտակ.	1045	69.1	3.5	771	64.9	3.5	840	72,6	3,6	606	65,7	3,5	731	78.5	3,7	690	74.9	3.7
Ագրոբիզնես և շուկայաբանութ.	710	56	3.5	494	43	3.4	530	63,0	3,5	360	50,0	3,5	395	56.0	3,4	355	63.4	3.6
ՀԱԱՀ	***2680***	***66.9***	***3.5***	***1890***	***61.5***	***3.5***	***2413***	***67,7***	***3,5***	***742***	***65,7***	***3,5***	***2221***	***73,5***	***3,6***	***2023***	***74.2***	***3.6***

Հատկանշական է, որ նախորդ տարվա նույն կիսամյակի համեմատությամբ շուրջ 11.3 %-ով բարձրացել է ուսանողների առաջադիմությունը ագրոնոմիական, 9%-ով՝ պարենամթերքի տեխնոլոգիաների 13%-ով՝ գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի, 7.7%-ով՝ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, 12%-ով՝ հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետներում, իսկ ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում առաջադիմությունը նվազել է 7%-ով:

Համալսարանի մակարդակով ուսանողների առաջին կիսամյակի բացարձակ առաջադիմությունը կազմել է 73.5 %:

1-ին կիսամյակում համալսարանում ուսանողների առաջադիմության միջին միավորը կազմել է 3.6 (անվճարում՝ 4.3, վճարովի համակարգի սովորողների մոտ՝ 3.4): Առավել բարձր միջին միավոր ապահովել են տնտեսագիտական (3.7) և հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետները (3.7), իսկ ցածր միավոր է գրանցվել գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ու ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետներում (3.4):

Ըստ կուրսերի վերլուծության՝ առավել բարձր միավոր է գրանցվել 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների մոտ՝ 3.7, իսկ առավել ցածր՝ 1-ին կուրսում՝ 3.2:

Համալսարանում մի շարք առարկաների գծով դեռևս բարձր է քննություններին չքույլատրված ուսանողների թվաքանակը, ինչպես օրինակ «ԿՆՏ» առարկայից՝ 60,0%, «Ջերմատեխնիկա» առարկայից՝ 50%, «Գյուղ. գների վերլուծություն» առարկայից՝ 50%,«Ձեռնարկատիրականգործունեություն» առարկայից՝ 54,5%, «Էլեկտրոնային կոմերցիա» առարկայից՝ 72.7% և այլն:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ բազմաթիվ առարկաներից գրանցվել են 90-100%առաջադիմություն:

2-րդ կիսամյակի քննությունների վերլուծությունից պարզվում է, որ 2023 ուսանողից սեսիոն քննությունների ժամանակ բոլոր քննությունները հանձնել է 1502 (առաջադիմությունը՝ 74.2%) ուսանող, ընդ որում՝ ամենացածր առաջադիմությունը գրանցվել է 1-ին կուրսի ուսանողների մոտ՝ 67.7%, իսկ ամենաբարձր առաջադիմությունը՝ 5-րդ կուրսի ուսանողների մոտ՝ 100%:

Ըստ կուրսերի վերլուծության արդյունքների՝ բարձր առաջադիմություն է գրանցվել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի 3-րդ (100%) և 4-րդ (100%), Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողայինի կադաստրի ֆակուլտետի 3-րդ կուրսերի ուսանողների մոտ (100%) և պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 4-րդ կուրսերի (96,0%) ուսանողների մոտ, իսկ ցածր առաջադիմություն՝ Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողայինի կադաստրի ֆակուլտետի 1-ին և 2-րդ կուրսերում (45.9%) և ԳՄ և ԱՏ ֆակուլտետի 1-ին կուրսում (58%):

2-րդ կիսամյակում համալսարանում ուսանողների առաջադիմության միջին բալը կազմել է 3,6, ինչպես և 1-ին կիսամյակում (անվճարում՝ 4.3, վճարովի համակարգում՝ 3,5): Առավել բարձր միջին միավոր ապահովել են անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, տնտեսագիտական, պարենամթերքի տեխնոլոգիաների և ագրոնոմիական ֆակուլտետներում (3,7), իսկ ցածր միջին միավոր է գրանցվել է ԳՄ և ԱՏ ֆակուլտետում (3,5):

Քննությունների արդյունքներով 2-րդ կիսամյակում ամենացածր առաջադիմությունը գրանցվել է հետևյալ առարկաներից.1-ին կուրսում՝ «Անասն.մթերք.վեր. տեխ.»՝ 33.3%, «Աշխ. կազմ. սննդ. ձեռն.»՝ 31.82%, «Տնտ. մաթ. մեթոդ.և մոդ.»՝ 18.18%, «Պետական և մունիցիցպալ կառավարում»՝ 42.8%, «Արտ. կազմ. սննդ. ձեռն.»՝ 42.8%:

1-ին կիսամյակի սեսիոն քննությունների 1-ին վերահանձնումից հետո արձանագրվել է 512 պարտքատեր ուսանող, որը կազմում է ուսանողների ընդհանուր թվաքանակի 28.7%-ը,

այդ թվում՝ 185-ը (10.36%)՝ չներկայացած, 280-ը (15.7%)՝ չթույլատրված, իսկ 47 ուսանող (քննությանը մասնակցած 1321 ուսանողների 3.56%) ստացել է անբավարար գնահատական, այսինքն՝ մեր խնդիրն է ապահովել ուսանողների լիարժեք մասնակցությունը քննություններին:

2-րդ կիսամյակի սեսիոն քննություններից հետո ստացված արդյունքներից պարզվում է, որ քննություններին մասնակցած ուսանողների 93.11%-ը ստացել է դրական գնահատական, իսկ 6.89%-ը՝ անբավարար գնահատական:

Հատկանշական է, որ անվճար համակարգի ուսանողների առաջադիմությունը կազմել է 89.9%, իսկ վճարովի համակարգի ուսանողներինը՝ 70.4%: Անվճար համակարգում սովորող ուսանողները կազմում են քննության թույլատրված ընդհանուր ուսանողների 20.4%-ը:

2-րդ կիսամյակում համալսարանի 7 ֆակուլտետներից առավել բարձր առաջադիմություն է գրանցվել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 84.8% (դեկան՝ Ա. Վարդանյան), պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 85.9% (դեկան՝ Ա. Աղաբաբյան), իսկ ամենացածրը՝ ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում՝ 63.4% (դեկան՝ Հ. Ջավադյան), ՄՋ և ՀՇ ֆակուլտետում՝ 62.3% (դեկան՝ Գ. Եղիազարյան):

Ըստ տարբեր ուստարիների՝ ուսանողների բացարձակ առաջադիմության դինամիկան դիտարկելու և վերլուծելու նպատակով ուսումնասիրվել են վերջին երեք տարիների առաջադիմության ցուցանիշները՝ համալսարանի մակարդակով և ըստ ֆակուլտետների:

Վերլուծության արդյունքներով պարզ է դարձել, որ համալսարանի բացարձակ առաջադիմության միջին ցուցանիշը վերջին երեք տարիներին տատանվել է 61.5%-74.2.5%-ի սահմաններում:

Համալսարանում 2016թ. հուլիսի 18-ի դրությամբ երկրորդ կիսամյակում 2023 ուսանողից 367-ը (18.1%) դեռ ունեն առարկայական պարտքեր, իսկ նրանցից 78-ը (21.2%) պարտք է միայն ստուգարքներից:

Ագրոնոմիական ֆակուլտետում 192 ուսանողից պարտքեր ունեն միայն 15 (0.74%)-ը, անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում 165 ուսանողից պարտքեր ունեն 19-ը (0.94%), պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում 341 ուսանողից՝ 59 ուսանող (2.91%), ԳՄ և ԱՏ ֆակուլտետում 118 ուսանողից՝ 33 ուսանող (1.63%), ՄՋ և ՀՇ ֆակուլտետում 162 ուսանողից՝ 27-ը (1.33%), տնտեսագիտական ֆակուլտետում 690 ուսանողից՝ 155-ը (7.66%), ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում 355 ուսանողից՝ 59-ը (2.92%):

1-ին կիսամյակում միայն գերազանց գնահատականներով քննությունները հանձնել է 223 ուսանող (10,0%), գերազանց և լավ գնահատականներով՝ 359 ուսանող (16.1%), խառը գնահատականներով՝ 583 ուսանող (26,2%) և միայն բավարար գնահատականներով՝ 468 ուսանող (21,1%), իսկ անբավարար ստացել է 416 ուսանող (18,7%):

2-րդ կիսամյակում միայն գերազանց գնահատականներով քննությունները հանձնել է 271 ուսանող (13.4%), գերազանց և լավ գնահատականներով՝ 357 ուսանող (17,6%), խառը գնահատականներով 507 ուսանող (25,1%) և միայն բավարար գնահատականներով՝ 367 ուսանող (10,1%), իսկ անբավարար ստացել է 350 ուսանող (17,3%):

Ընդհանուր առմամբ պետք է նշել, որ ուսանողների (առաջին կիսամյակ) 26-30% է հանձնել քննությունները լավ և գերազանց գնահատականներով, ինչը բավարար ցուցանիշ չէ:

1.1.2.ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսանողների հաճախելիության հարցը միշտ էլ եղել և մնում է համալսարանի բոլոր ստորաբաժանումների, գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետների և ամբիոնների ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Վերջին տարիներին համալսարանում արձանագրվել են ուսանողների հաճախելիության բարձր ցուցանիշներ:

2008-2009 և 2009-2010 ուստարիներին ուսանողների հաճախելիության միջին ցուցանիշը տատանվել է 93%-ի սահմանում, իսկ 2010-2011-ից սկսած մինչև 2014-2015 ուս. տարիներին՝ 91-91.3%:

2015-2016 ուստարում այդ ցուցանիշը կազմել է 91.0%: Այնուամենայնիվ, 9,0% բացակայությունը համալսարանում անհանգստացնող խնդիր է: Չնայած համալսարանի աշխատակազմը միջոցներ է ձեռնարկում ուսանողների հաճախելիությունն առավել բարելավելու առումով, սակայն ուսանողն ինքը ևս պետք է գիտակցի դասերին հաճախելու և սովորելու կարևորությունը:

2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակում ուսանողների հաճախումների բարձր ցուցանիշ է գրանցվել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 95.73% (դեկան՝ Ա. Վարդանյան):

Համալսարանի ուսանողների հաճախումների միջին ցուցանիշը 1-ին կիսամյակում կազմել է 91.25%, իսկ 2-րդ կիսամյակում՝ 90.7%:

2015-2016 ուստարվա 2-րդ կիսամյակում 1-ին կիսամյակի ուսանողների հաճախումների ցուցանիշների համեմատությամբ դարձյալ բարձր ցուցանիշ է գրանցվել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 95.1/% (դեկան՝ Ա.Վարդանյան) և պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 94.9% (դեկան՝ Ա.Աղաբաբյան):

2015-2016 ուս. տարում առավել շատ բացակայություններ են արձանագրվել 5-րդ կուրսերի ուսանողների մոտ՝ 14.09%, իսկ ամենաքիչը՝ 3-րդ՝ 7.99% և 2-րդ՝ 8.73% կուրսերում (աղ. 4,5):

Առավել շատ բացակայություններ արձանագրվել են ՄՁ և ՀՇ ֆակուլտետում.միջին ցուցանիշը ուս. տարում կազմել է 15.58% իսկ ամենացածր արդյունքը՝ անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում՝ 4.27% և պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում՝ 4.78%:

1-ին կիսամյակում համալսարանում ուսանողների բացակայությունների միջին ցուցանիշը կազմել է 8.75%:

Վերջին 3 տարիների՝ առանձին ֆակուլտետների և համալսարանի մակարդակով ուսանողների հաճախումների միջին ցուցանիշների արդյունքներից երևում է, որ նախորդ տարվա համեմատությամբ 2015-2016 ուս. տարում ուսանողների հաճախելիության ցուցանիշը ագրոնոմիական ֆակուլտետում 91.75%-ից իջել է 89.88%-ի, այնուհետև աճել է մինչև 92.39% (2-րդ կիսամյակ), անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում այդ ցուցանիշը աճել է 94.58%-ից մինչև 96.28% (1-ին կիսամյակում), իսկ 2-րդ կիսամյակում նվազել է մինչև 95,06%պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետում ցուցանիշը աճել է 94,32%-ից հասել է 95,48% (2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակ), և նվազել է մինչև 94.9% (2-րդ կիսամյակ), ԳՄ և ԱՏ ֆակուլտետում՝ տատանվել է 90.91%-91,67%-ի սահմաններում, ՄՁ և ՀՇ ֆակուլտետում ցուցանիշը մնացել է գրեթե նույնը՝ 84,25%-ից հասնելով 84,66%-ի, տնտեսագիտական ֆակուլտետում 90,81%-ից աճել է՝ 1-ին կիսամյակում հասնելով 91.89%-ի, 2-րդ կիսամյակում նվազել է հասնելով 90.44%, ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում ցուցանիշը նվազել է՝ 90.91%-ից հասնելով 87.84%:

Համալսարանում 2015-2016 ուս.տարում ուսանողների հաճախելիության միջին ցուցանիշը գրեթե նույնն է. այն տատանվել է 90,7-91,25%-ի սահմաններում:

Ֆակուլտետներից հաճախելիության մակարդակի նվազում է նկատվել ՄՋ և ՀՇ ֆակուլտետում, ինչը պետք է անհանգստացնի դեկանին և բոլոր ամբիոնների վարիչներին:

Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել հաճախումների ցուցանիշը բարձրացնելու և բարձր մակարդակի վրա պահելու ուղղությամբ: Հարկ է կրթության ոլորտում կիրառել տեղեկատ-վական նոր տեխնոլոգիաներ, անընդհատ վերահսկողություն սահմանել ուսանողների հաճախումների, մատյաններում օբյեկտիվ և անթերի գրանցման, օպերատիվ միջոցառումների կիրառման և ուսումնական կարգապահության բարձրացման նպատակով:

Ամփոփելով համալսարանի առկա ուսուցման համակարգի ուսանողների հաճա-խումների արդյունքները՝ հարկ է նշել, որ 2015-2016 ուստարվա ընթացքում մեկ ուսանողի բացակայությունը (հարգելի, անհարգելի) կազմել է 40,5 ժամ, ընդ որում՝ 1-ին կիսամյակում՝ 39 ժամ, իսկ 2-րդ կիսամյակում՝ 42 ժամ: Հաճախումների առավել լավ ցուցանիշներով աչքի է ընկնում անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետը՝ 7,6 ժամ (դեկան՝ Ա. Վարդանյան), այն դեպքում, երբ ամենավատ ցուցանիշը գրանցվել է ՄՋ և ՀՇ ֆակուլտետում՝ 76.1 ժամ (դեկան՝ Գ.Եղիազարյան), տնտեսագիտական ֆակուլտետում՝ 46 ժամ (դեկան՝ Է.Ղազարյան), ագրոնոմիական ֆակուլտետում՝ 45,2 ժամ (դեկան՝ Գ.Սանթրոսյան), ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում՝ 48,6 ժամ (դեկան՝ Հ.Ջավադյան):

Աղյուսակ 4

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2015 - 2016 ՈՒՍՏԱՐԻ, I ԿԻՍԱՄՅԱԿ

Ֆակուլտետը	**ՈՒսանողների թիվը**	**Ուս. ժամերի քանակը, ժամ**	**Ուսանողների բացակայությունները , ժամ**	**Նույնը, %**
Ագրոնոմիական	229	114538	11586	10,12
Տնտեսագիտական	742	363840	29514	8,11
Անասնաբուժ. բժշկ	187	33893	1260	3,72
Պարենամթ.տեխն.	422	209700	9475	4,52
ԳՄ և ԱՏ	170	81354	6776	8,33
Հիդրո.,հողաշին. և հ.կ.	217	106775	16820	15,75
Ագրոբիզն.և շուկ.	401	155422	17750	11,42
Ընդ.	2368	1065522	93181	8,75

2015 - 2016 ՈՒՍՏԱՐԻ, II ԿԻՍԱՄՅԱԿ

Ֆակուլտետը	**ՈՒսանողների թիվը**	**Ուս. ժամերի քանակը, ժամ**	**Ուսանողների բացակայությունները , ժամ**	**Նույնը , %**
Ագրոնոմիական	192	97784	7441	7,61
Տնտեսագիտական	695	325890	31162	9,56
Անասնաբուժ. բժշկ	164	28337	1400	4,94
Պարենամթ.տեխն.	341	168572	8600	5,10
ԳՄ և ԱՏ	120	59262	5387	9,09
Հիդր., հողաշին. և հ.կ.	162	78319	12014	15,34
Ագրոբիզն.և շուկ.	356	156842	19065	12,16
Ընդ.	2030	915006	85069	9,30

2015 - 2016 ՈՒՍՏԱՐԻ

Ֆակուլտետը	**ՈՒսանողների թիվը**	**Ուս. ժամերի քանակը, ժամ**	**Ուսանողների բացակայությունները , ժամ**	**Նույնը , %**
Ագրոնոմիական	421	212322	19027	8,96
Տնտեսագիտական	1437	689730	60676	8,80
Անասնաբուժ. բժշկ	351	62230	2660	4,27
Պարենամթ.տեխն.	763	378272	18075	4,78
ԳՄ և ԱՏ	290	140616	12163	8,65
Հիդր., հողաշին. և հ.կ.	379	185094	28834	15,58
Ագրոբիզն.և շուկ.	757	312264	36815	11,79
Ընդ.	4398	1980528	178250	9,00

Աղյուսակ 5

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՃԱԽՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2015 - 2016 ՈՒՍՏԱՐԻ, I ԿԻՍԱՄՅԱԿ

Կուրսը	ՈՒսանողների թիվը	Ուս. ժամերի քանակը, ժամ	Ուսանողների բացակայությունները, ժամ	Նույնը , %
I	671	309763	27068	8,74
II	587	269629	23109	8,57
III	378	186167	13644	7,33
IV	602	255649	22996	9,00
V	130	44314	6364	14,36
Ընդ.	2368	1065522	93181	8,75

2015 - 2016 ՈՒՍՏԱՐԻ, II ԿԻՍԱՄՅԱԿ

Կուրսը	ՈՒսանողների թիվը	Ուս. ժամերի քանակը, ժամ	Ուսանողների բացակայությունները , ժամ	Նույնը , %
I	528	247179	23883	9,66
II	532	243091	21645	8,90
III	365	172009	14957	8,70
IV	597	251583	24544	9,76
V	8	1144	40	3,50
Ընդ.	2030	915006	85069	9,30

2015 - 2016 ՈՒՍՏԱՐԻ

Կուրսը	ՈՒսանողների թիվը	Ուս. ժամերի քանակը, ժամ	Ուսանողների բացակայությունները , ժամ	Նույնը , %
I	1199	556942	50951	9,15
II	1119	512720	44754	8,73
III	743	358176	28601	7,99
IV	1199	507232	47540	9,37
V	138	45458	6404	14,09
Ընդ.	4398	1980528	178250	9,00

Ուսանողների հաճախումների մակարդակը բարձրացնելու նպատակով համալսարանը կազմակերպում է ուսանողների հաճախումների անհատական ստուգումներ անկախ հանձնաժողովի կողմից՝ միաժամանակ ստուգելով դասախոսների մատյանները: Ստուգումները կազմակերպվել են ըստ զույգ ժամերի՝ 1-2, 3-4, 5-6 և 7-8, առաջին և երկրորդ կիսամյակներում:

2-րդ կիսամյակում ստուգումները կատարվել են փետրվարի 15-ից մինչև մայիսի 21-ը:

Ըստ ստուգման արդյունքների՝ համալսարանում հաճախումների ցուցանիշը կազմել է 86,8$^0/_0$ (առանց մագիստրատուրայի):

Բարձր ցուցանիշ է արձանագրվել անասնաբուժական բժշկ.և անասնաբուծ. ֆակուլտետում՝ 92,18$^0/_0$, այնուհետև ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում՝ 89,7$^0/_0$, իսկ ցածր ցուցանիշ գրանցվել է ԳՄ և ԱՏ ֆակուլտետում՝ 82,3$^0/_0$, ՄՁ և ՀՇ ֆակուլտետում՝ 81,5$^0/_0$:

Ուսանողների հաճախումների հետազոտություն է կատարվել նաև ըստ ամբիոնների.

Բոլոր ամբիոններում հաճախման ցուցանիշը տատանվել է 80-90$^0/_0$-ի սահմաններում, բացառությամբ 2 ամբիոնների՝ 74,3$^0/_0$ ընդհանուր քիմիայի (ամբ. Վարիչ Օ. Քամալյան), ֆիզիկայի և ջերմատեխնիկայի ամբիոնում 77,5$^0/_0$ (ամբ. վարիչ՝ Ա.Պապոյան) :

1.1.3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ 2015-2016 ՈՒՍ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՓՈԽՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կրթության համակարգում սովորողների գիտելիքների գնահատումը մի գործընթաց է, որի հիման վրա կատարվում է անվճար-վճարովի համակարգերի ուսանողների շրջա-փոխումը: Այդ գործընթացին լավատեղյակ են բոլոր ուսանողները և ակտիվ մասնակցում են այդ մրցակցությանը: Նման մոտեցումը, որտեղ գործում է մրցակցություն, նպաստում է առավել բարձր որակի գիտելիքներ ստանալուն: Ուստարում շրջափոխումն իրականացվում է՝ հաշվի առնելով քննական առարկաների վարկանիշային միավորը՝ տարեկան ՄՈԳ-ը: Շրջափոխման դինամիկայի վերլուծությունից երևում է, որ շրջափոխման մակարդակը բարձր է 1-ին կուրսում և տատանվում է 15-60%-ի սահմաններում, իսկ կուրսերի բարձրացմանը զուգընթաց այդ մակարդակը նվազում է (աղ. 6):

Ամփոփ տվյալները վկայում են այն մասին, որ 2015-2016 ուս. տարվա քննությունների արդյունքում առաջինից երկրորդ կուրս փոխադրված ուսանողների 25,8%-ը վճարովի համակարգից փոխադրվել է անվճար համակարգ, երկրորդ կուրսից երրորդ կուրս փոխադրվածների 29,2%-ը, երրորդ կուրսից չորրորդ կուրս փոխադրվածների 13%-ը, չորրորդ կուրսից հինգերորդ կուրս փոխադրվածների 12,3%-ը: Համալսարանի մակարդակով այն կազմել է 21,1%:

Ֆակուլտետների միջև շրջափոխման արդյունքների վերլուծությունից պարզվում է, որ առաջին կուրսում շրջափոխման արդյունքների ավելի բարձր ցուցանիշ է գրանցվել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծական ֆակուլտետում, հիդրոմելիո-րացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի, տնտեսագիտական ֆակուլտետներում (50%), ագրոնոմիական ֆակուլտետում (35%), պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտե-տում՝ (31,6%), իսկ ամենացածր ցուցանիշը գրանցվել է ԳՄ և ԱՏ ֆակուլտետում (20%), ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում (22,2%): Տարեկան ամփոփ տվյալների (բոլոր կուրսերի) վերլուծության արդյունքում պարզվում է, որ ամենացածր շրջափոխման մակարդակ գրանցվել է ԳՄ և ԱՏ ֆակուլտետում (16,7%):

Աղյուսակ 6

Ուսանողների շրջափոխման արդյունքները

2015-2016 ուս. տարվա առաջադիմության տվյալներով

Հ/հ	Ֆակուլտետը	1-ինկուրսից 2-դրկուրս			2-դրկուրսից 3-դրկուրս			3-դրկուրսից 4-դրկուրս			4-դրկուրսից 5-դրկուրս			Ընդամենը			ՎՀ-իցանվհ. տեղափոխվածուս.% -ը
		Անվճարտեղերիքանակը	Նախկի-նամեկել են ամսկ.	Նախկի-նամ եղել են վճար.	Անվճարտեղերի քանակը	Նախկի-նամեկել են ամսկ.	Նախկի-նամ եղել են վճար.	Անվճարտեղերի քանակը	Նախկի-նամեկել են ամսկ.	Նախկի-նամ եղել են վճար.	Անվճարտեղերի քանակը	Նախկի-նամեկել են ամսկ.	Նախկի-նամ եղել են վճար.	Անվճարտեղերի քանակը	Նախկի-նամեկել են ամսկ.	Նախկի-նամ եղել են վճար.	
1	Ագրոնոմիական	25	25	-	4	4	-	14	14	-	5	5	-	48	48	-	-
2	Տնտեսագիտական	6	2	4	6	3	3	6	5	1	10	7	3	28	17	11	39.3
3	Ագրոբիզն. և շուկայաբան	11	9	2	11	4	7	10	8	2	12	12	-	44	33	11	25.0
4	Պարենամթերք. տեխն.	38	27	11	38	29	9	20	16	4	22	19	3	118	91	27	22,9
5	Անասնաբուժ. բժշկ և Անասնաբուծ.	18	10	8	18	12	6	8	8	0	10	8	2	54	38	16	29.6
6	Գյուղ.մեք. ևԱՏ	10	8	2	9	7	2	9	8	1	12	12	-	40	35	5	12.5
7	Հիդրո. Հողաշ.և հող.կադ.	12	8	4	10	9	1	10	8	2	10	8	2	42	33	9	21.4
	ԸնդամենըՀԱԱՀ	120	89	31	96	68	28	77	67	10	81	71	10	374	295	79	21.1

1.1.4.ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀԱԱՀ-ի 2016թ.-ի առկա ուսուցման համակարգում ընդունելությունը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության կողմից հաստատված մասնագիտությունների ցանկի և ըստ մասնագիտությունների, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ընդունելության տեղերի թվաքանակի և քննությունների:

ՀՀ կառավարության 2013 թ.-ի նոյեմբերի 28 N1329-Ն որոշման համաձայն 21 մասնագիտություններում ընդունելություն է կատարվել վճարովի համակարգ ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի գնահատականների հիման վրա: Տնտեսագիտական երեք՝ (ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա, ագրարային քաղաքականություն, խորհրդատվություն և տեղեկատվություն, ապրանքագտություն) մասնագիտություններում անվճար և վճարովի ուսուցման համակարգ ընդունվելու համար դիմորդը պարտադիր հանձնում է մեկ միասնական քննություն՝ <<մաթեմատիկա >> առարկայից, իսկ հայոց լեզու և օտար լեզու առարկաների գնահատականները հայտագրում է ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթում նշված առարկաների քննությունների գնահատականը:

Ըստ այդ ցանկի 2016 թ.-ին ՀԱԱՀ-ում ընդունելություն է կազմակերպվել 31 մասնագիտությունների գծով: Ըստ ֆակուլտետների դիմորդների թիվը հետևյալն է.

1. Ագրոնոմիական - 142
2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծական - 141
3. Պարենամթերքի տեխնոլոգիաների - 318
4. Տնտեսագիտական -64
5. Ագրոբիզնեսի և շուկայաբանության -44
6. Գյուղ.մեքենայացման և տրանսպորտային փոխադրումներ - 129
7. Հիդրոմելիորացիա, հողաշինարարություն և հողային կադաստր – 111
8. Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա (ՊՆ) -2

Ընդամենը՝ 951 դիմում

2016թ.-ի ընդունելության կազմակերպումը և անցկացումը կարելի է բաժանել 2 մասի:

1. Փաստաթղթերի ընդունում ըստ մասնագիտությունների

2. ՀԱԱՀ-ում օտար լեզուների գծով (այլ բուհերի համար) կենտրոնացված համակարգով

ընդունելության քննությունների անցկացում

Փաստաթղթերի ընդունումն ըստ մասնագիտությունների կատարվել է ս.թ. մայիսի 5-ից մինչև հունիսի 1-ը: Օտարերկրյա քաղաքացիների և 2016թ-ի գարնանային զորակոչից զորացրված դիմորդների և քոլեջների շրջանավարտների փաստաթղթերն ընդունվել են հունիսի 25-ից մինչև հուլիսի 2-ը (2-րդ փուլ):

2016թ.-ի ընդունելության ցանկի համապատասխան ՀԱԱՀ-ին հատկացված էր 1342 տեղ, որից 123 անվճար՝ այդ թվում 10 տեղ բանակից զորացրվածների համար, 11 տեղ նպատակային ընդունելիության և 1219 վճարովի տեղ ԱՏ համակարգում:Բոլոր մասնագիտու-թյունների գծով առաջին հայտով ընդունվել է 951 դիմում (աղ. 7):

Հանրապետության մարզերից և այլ պետություններից դիմորդների թվաքանակները բերված են աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 7

ՀԱԱՀ առաջին հայտով դիմած դիմորդների թիվը

Ֆակուլտետ	Ընդամենը	Ատեստատով	
		թվաքանակը	%-ով ընդամենից
Ագրոնոմիական	142	110	77.5
Անասնաբուժական բժշկագիտությանանանասնաբուծական	141	120	85.1
Պարենամթերքիտեխնոլոգիաների	318	275	86.5
Տնտեսագիտական	64	-	-
Ագրոբիզնեսիևշուկայաբանության	44	-	-
Գյուղ.մեքենայացմանանտրանսպորտայինփոխադրումներ	129	100	77.5
Հիդրո, հողաշինարարություն և հողայինկադաստր	111	66	59.5
Ագրո, և սննդա, էկոնոմիկա (ՊՆ)	2	-	-
Ընդամենը	951	671	70.5

Աղյուսակ 8

ՀԱԱՀ դիմորդների թիվը ըստ ՀՀ մարզերի և այլ պետությունների

Մարզը	Միասնական քննությունով		Ատեստատով		Ընդամենը	
	թիվը	%-ը	թիվը	%-ը	թիվը	%-ը
Երևան	180	64.3	178	26.5	358	37.6
Տավուշ	7	2.5	44	6.6	51	5.4
Գեղարքունիք	10	3.5	45	6.7	55	5.8
Սյունիք	6	2.1	22	3.2	28	2.9
Վայոցձոր	5	1.8	28	4.1	33	3.5
Արմավիր	27	9.6	100	14.9	127	13.3
Արարատ	7	2.5	90	13.4	97	10.2
Արագածոտն	6	2.1	49	7.3	55	5.8
Լոռի	4	1.4	6	0.89	10	1.05
Շիրակ	10	3.5	22	3.2	32	3.4
Կոտայք	18	6.4	72	10.7	90	9.5
Այլ պետություններից	-	-	15	2.2	15	1.5
Ընդամենը	280	100	671	100	951	100

Բոլորից շատ դիմումներ ստացվել են հետևյալ ֆակուլտետներում՝

1. Ագրոնոմիական -116
2. Անասնաբուժական բժկագիտ. և անասնաբուծության –121
3. Պարենամթերքի տեխնոլոգիաներ-263
4. Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտ-105
5. Հիդրոմել., հողաշին. և հողային կադաստր-79
6. Տնտեսագիտական ֆակուլտետ-54
7. Ագրոբիզնես և շուկայաբանություն-43

Հուլիսի 15-20 ընկած ժամանակահատվածում Հայաստանի հանրապետության կառավարության որոշման (12.07.16թN 01/06.2/8313-16.) հիման վրա կատարվել է 3-րդ փուլի ընդու-նելություն:

ՀԱԱՀ դիմել են թվով 170 դիմորդ հետևյալ մասնագիտություններում՝

1.Ագրոնոմիական-26
2. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծական- 20
3. Պարենամթերքի տեխնոլոգիաների – 55
4. Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտ-24
5. Հիդրոմել. , հողաշին. և հողային կադաստր-32
6 .Տնտեսագիտական -12
7. Ագրոբիզնեսի և շուկայաբանության-1

9-րդ աղյուսակում բերված են անվճար և վճարովի ԱՏ համակարգում հատկացված տեղերը և փաստացի ընդունված ուսանողների թվաքանակը ըստ մասնագիտությունների:

Ագրոնոմիական ֆակուլտետ է ընդունվել 142 ուսանող, Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծական ֆակուլտետ՝ 141 ուսանող, Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ՝ 318, Տնտեսագիտական ֆակուլտետ՝ 64 ուսանող, Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ՝ 44 ուսանող, Հիդրոմելիորացիա, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ՝ 111 ուսանող, Գյուղ. մեքենայացման և տրանսպորտային փոխադրումների ֆակուլտետ՝ 129 ուսանող: Այսպիսով, ՀԱԱՀ-ում նախատեսված 1342 ուսանողի փոխարեն (123 անվճար, 1219 վճարովի ԱՏ(1-ին կուրս են ընդունվել 951 ուսանող: Փաստացի անվճար համակարգում սովորում են 129, իսկ վճարովի համակարգում՝ 822 ուսանողներ:

Վերլուծելով 2016թ.-ի ընդունելության արդյունքները ընդունող հանձնաժողովն անում է հետևյալ առաջարկությունները.

1. Հաջորդ ընդունելության ընթացքում տարբերակված մոտեցում ցուցաբերել այն մասնագիտությունների համար, որտեղ 2016-2017 ուս. տարում առաջացել են թափուր տեղեր:

2. Պարբերաբար հանրապետության տարբեր մարզեր գործուղել համալսարանի դասախոսներին՝ դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով: Հատուկ ուշադրություն դարձնել այն մարզերի վրա, որտեղից դիմորդների թվաքանակը քիչ է՝ կապ ստեղծելով հենակետային վարժարանի հոսքային դասարանների հետ:

3. Հատուկ ուշադրություն դարձնել նպատակային ընդունելությանը՝առավել ուշադրություն դարձնելով գյուղատնտեսական ուղվածության մարզերի և սահմանամերձ ու բարձր լեռնային գոտիների երիտասարդների ներգրավման հարցերի վրա:

2016թ.-ին ՀԱԱՀ–ում անցկացվել են ընդունելության բանավոր քննություններ. “Ռուսաց լեզու”, “Գերմաներեն”, “Ֆրանսերեն”, “Իսպաներեն” և “Իտալերեն” առարկաներից:

ՀԱԱՀ-ում քննությունները սկսվել են հունիսի 27-ին և ավարտվել հուլիսի 7-ին: Քննություն են հանձնել դիմորդ, որից ռուսաց լեզվից՝ 78, գերմաներենից՝ 49, ֆրանսերենից՝ 52, իսպաներենից՝ 6 և իտալերենից՝ 2 դիմորդներ:

Ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս համալսարանը ամեն ինչ արեց քննությունները բարձր մակարդակով անցկացնելու համար:

Աղյուսակ 9

ՀԱՅԱՍՏԱՆԻԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 2016-2017ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ ԵՎ ՓԱՍՏԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Մասնագիտության ծածկագիրը	*ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	*Հատկացված տեղ*			*Ընդունված*						*Հեռավեր*
		անվճար	*վճարովի*	*ընդամենը*	*անվճար*	*վճարովի*	*Զորակոչվել են բանակ*	*Ստեփա-նակերտ*		*Սկիզբը (կվ)*	
								անվճար	*վճարովի*		
ԱԳՐՈԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
01	Ագրոէկոլոգիա	5	25	30	5	29				1	35
02	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	10	50	60	11	24					35
03	Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա	4	21	25	4	21					25
04	Բույսերի պաշտպանություն	6	24	30	6	26					32
05	Անտառայինտնտեսություն և բնակավայրերի կանաչապատում	4	26	30	4	11					15
ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ - ԲԺՇԿԱԳԻՏՈՒԹՅԱՆԵՎԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
06	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	5	20	25	6	35					41
07	Անասնաբուժություն	7	53	60	7	61				2	
08	Գյուղ. կենդանիների սելեկցիա, գենետիկաևկեն սատեխնոլոգիա	6	24	30	6	24					30
ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔԻՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
09	Գյուղատնտեսական նպարենային արտադրանքի փաթեթավորման տեխնոլոգիանդիզայն	2	23	25	2	25					27
10	Գյուղա, հումքիև պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում	4	31	35	4	33				2	39
11	Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն	5	50	55	5	51					56
12	Կաթ, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա	8	62	70	8	60				1	69
13	Կաշվիևմորթուարտադրանքիտեխնոլոգիա	3	27	30	3	13					16
14	Հացի, հրուշակեղենիևմակարոնիարտադրանքիտեխնոլոգիա	4	31	35	4	34					38
15	Զկանևձկնամթերքներիտեխնոլոգիա	3	32	35	3	4					7
16	Մսիևմսամթերքիտեխնոլոգիա	4	31	35	5	34					39
17	Պահածյացման և սննդախտանյութերի տեխնոլոգիա	4	31	35	5	22					27

	ա) ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
18	Ագրոբիզնես	3	47	50	3	10				1	14
19	Ապահովագրականգործ	1	39	40	1						1
20	Հաշվապահականհաշվառումևհարկում	1	49	50	1	8					9
21	Ֆինանսներ	1	59	60	1	8				7	16
	բ) ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
22	Ագրարայինքաղաքականություն, խորհրդատվությունևտեղեկատվություն	4	66	70	4	10					14
23	Ագրոէկոնոմիկաևսննդարդյունաբերությանէկոնոմիկա	2	98	100	2	37					39
24	Ապրանքագիտություն	1	39	40	2	13					15
	ա)ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
25	Հողաշինարարությունևհողայինկադաստր	3	47	50	3	13					16
26	Փոխադրումների, ճանապարհայիներթևեկությանկազմակերպումևկառավարում	5	65	70	5	11					16
	բ)ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ										
27	Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիա և ավտոմատացում	2	28	30	2	41					43
28	Գյուղատնտեսությանմեքենայացում, մեքենաներևսարքավորումներ	5	59	65	6	63				1	70
29	Կենսագործունեության անվտանգություն	3	27	30	3	40					43
30	Հողաբարելավում, հողայինևջրայինպաշարներիօգտագործում, հիդրոկառուցվածքներ	5	35	40	6	46					52
	ՊՆ										
31	Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա	2			2						2
	ԸՆԴԱՄԵՆԸ	**123**	**1219**	**1342**	**129**	**807**				**15**	**951**

1.2.ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հեռակա ուսուցման ռազմավարական նպատակն է աշխատաշուկայի պահանջներին բավարարող կրթությամբ մասնագետների պատրաստումը և ագրարային ոլորտում կիրառական, կրթական, գիտական և ինտելեկտուալ ուղղություններով առաջատար դիրքերի նվաճումը: Հեռակա ուսուցման դեպարտամենտում անհրաժեշտ է նպատակային դարձնել անհատական ինքնուրույն աշխատանքների և քննությունների կազմակերպումը: Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմաները տրվում են նախօրոք՝ կիսամյակի սկզբում:

2016-2017 ուստարում հեռակա ուսուցման դեպարտամենտի բոլոր մասնագիտությունների ուսանողների համար ներդրվել է գիտելիքների ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգը:

Այս հարցն ավելի է կարևորվում, եթե նկատի ունենաք, որ ուսանողներին թեմայի հետ միասին տրվում է նաև կուրսային նախագծի (աշխատանքի) կատարման համար մեթոդական ցուցումները, սակայն պետք է նշել, որ ոչ բոլոր առարկաների գծով է մեթոդական ցուցումները կազմված պատշաճ մակարդակով, որը դժվարացնում է կուրսային աշխատանքների ժամանակին կատարումը և պաշտպանությունը:

2015թ. և 2016թ. ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման ընդունելության գործընթացը կազմակերպվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված համալսարանի կանոնակարգերով ու ժամանակացույցով:

Սահմանված 26 մասնագիտություններից 18 մասնագիտությունների գծով դիմորդը կարող է ընդունվել առանց ընդունելության քննություններ հանձնելու՝ որպես մրցութային առարկաների գնահատականներ հայտագրելով ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի նշված առարկաների քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մնացած 6 մասնագիտությունների գծով դիմորդը հանձնում է պարտադիր մեկից մինչև երեք ընդունելության քննություն: Առանց ընդունելության քննությունների ընդունվածների թիվը՝2015թ. կազմում է 717,իսկ 2016թ. 676: Ընդունելության քննությունները հաջողությամբ հանձնել են 2015թ. 147, իսկ 2016թ.՝136 դիմորդ: Ընդունվել է հարցազրույցի արդյունքներով 2015թ. 5 սփյուռքահայ դիմորդ, 2016թ.՝ 1: Այսպիսով 2015թ ՀԱԱՀ-ի հեռակա ուսուցման համակարգի 1-ին կուրս ընդունվել են 864, իսկ 2016թ ՝813 ուսանող:

Հանրապետության տարբեր քոլեջներից, բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտներ տեղափոխվեցին համալսարանի հեռակա ուսուցման դեպարտամենտի համապատասխան կուրսեր 2015թ. 72, իսկ 2016թ ՝68:

Հեռակա ուսուցման բակալավրային կրթական աստիճանում 2015թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ուսանողների թվաքանակը 4478: 2016թ դեկտեմբերի 31-ի դրությամբ հեռակա ուսուցման ուսանողների թվաքանակը 5133, 437-ը ձևակերպել են ակադեմիական արձակուրդ զին. ծառայության մեկնելու կապակցությամբ, 20 ուսանողներին ձևակերպվել է ակադեմիական արձակուրդ առողջական վիճակի պատճառով (աղ. 10):

2015թ սեպտեմբերի 1-ից հեռակա ուսուցման համակարգից հեռացվել են 1203ուսանող:

Այսպիսով 2016թ դեկտեմբերի 31-ի դրությամբ հեռակա ուսուցման համակարգում գործող ուսանողների թվաքանակը 4676 է:

Գերազանց և լավ գնահատականներով սովորում են 42 ուսանող: 2015-2016 ուստարում 52 ուսանող օգտվել են վարձավճարի զեղչի արտոնությունից: 2015-2016 ուստարում 38 ուսանողի վարձավճարը փոխանցվել է պետական նպաստի ձևով, օրենքով սահմանված կարգով, իսկ 2016-2017 ուստարում ՝22:

Օգտվել են վարձավճարի 50% զեղչից քառօրյա պատերազմում մասնակցած 55 ուսանող:

Ուսումնադաստիարակչական աշխատանքները տարվում են ռեկտորատի, ամբիոնների և դեպարտամենտի կողմից նախատեսված աշխատանքային պլանների համաձայն:

2015-2016 ուս տարվա ընթացքում ուսանողության համար կազմակերպվել են կուրսերում տարբեր բնույթի խորհրդատվություններ դասախոսների, դեպարտամենտի աշխատակիցների մասնակցությամբ: Հաշվի առնելով հեռակա ուսուցման առանձնահատկու-թյունները՝ մասնավորապես ուսանող-դասախոս լասարանային շփման սահմանափակ հնարավորությանը, դեպարտամենտի և ամբիոնների կողմից ստեղծվել են հնարավոր բոլոր պայմանները՝ ուսանողների ինքնուրույն և խորհրդատվությունների միջոցով անհատական աշխատանքների ծավալների մեծացման համար: Դեպարտամենտը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում աշխատանքային, ուսումնական և կատարողական կարգապահության հարցը: Մեր առաջնային խնդիրներից մեկը հանդիսանում է ուսանողների դասընթացներին հաճախումների նկատմամբ և դասընթացների լիարժեք կատարման հսկողությունը:

Դեպարտամենտում և ամբիոններում դասընթացների կազմակերպման և իրականացման վերաբերյալ մշտապես տարվում են օպերատիվ հաշվառումներ: Դեպարտամենտի կողմից ամենօրյա ստուգման արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման գործում առանձին ամբիոններում տեղ են գտել որոշ թերացումներ ու բացթողումներ:Այդ ամբիոններում դասավանդող դասախոսի փոխարինումը տեղի է ունեցել դեպարտամենտին նախապես տեղյակ չպահելով, իսկ որոշ դեպքերում դասաձախողում գրանցելու պահին:Նման դեպքում, երբ փոքր ժամաքանակով առարկաները լիարժեք չեն կատարվում, անշուշտ բացասական ազդեցություն են թողնում ուսանողների առաջադիմության վրա: Տարվա ընթացքում այն ուսանողների հարցը, ովքեր ունեցել են մեծ թվով բացակայություններ (հիմնականում մասնավոր ձեռնարկություններում աշխատող ուսանողների մոտ) քննարկվել են դեպարտամենտի նիստերում: Դեպարտամենտը մեծ ուշադրություն է դարձրել ուսանողության և ամբիոնների կոլեկտիվի աշխատանքային կարգապահության բարձրացմանը: Ձեռնարկված միջոցառումների շնորհիվ համեմատաբար կրճատվել են անհարգելի բացակայությունները:Այդ ուղղությամբ ամբիոններում դեռևս զգալի աշխատանք պետք է կատարել բարձրացնելու դասախոսի, օժանդակ անձնակազմի աշխատողի պատասխանատվությունը և ուսանողի կարգապահությունը:

Ուսանողների առաջադիմության մակարդակը կախված է նաև ուսանողների հաճախումներից, այդ առումով վերջին տարիներին հեռակա ուսուցման կազմակերպման և իրականացման գործընթացում առաջանում են դժվարություններ մասնավորապես, մասնավոր ձեռնարկություններում աշխատող և արտագնա աշխատանքի մեկնող ուսանողների հաճախումների ցածր մակարդակը:

Հեռակա ուսուցման դեպարտամենտի և ամբիոնների հրատապ խնդիրներից մեկն է հանդիսանում ուսանողների առաջադիմության բարձրացումը: Այդ նպատակին հասնելու համար մեթոդական և գիտական խորհուրդներում պարբերաբար քննարկվում են ուսումնամեթոդական մայրենի լեզվով գրականությամբ, դասախոսների տեքստերով և քննական առարկաների հարցաշարերով ամբիոնների ապահովվածությունը:

Համալսարանի գրեթե բոլոր ամբիոններում հեռակա ուսուցման ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման համար մեթոդական ցուցումները առկա են , բայց նրանցից մի մասը դեռևս մեթոդական խորհրդի կողմից հաստատված չեն: Կան նաև հնացած և նորացման կարիք ունեցող մեթոդական ցուցումներ: Այսպիսով համալսարանի 46 ամբիոններից 10 ամբիոններում ընդամենը 15 առարկայի գծով անհրաժեշտություն կա առաջատար դասախոսների ուժերով մշակել, նորացնել և հրատարակման ներկայացնել մեթոդական ցուցումները:

Աղյուսակ 10

ՏՎՅԱԼՆԵՐ
ՀԱԱՀ-Ի ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ՇԱՐԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ուսանողների թիվը 01.09.2015թ. դրությամբ	4478
Ընդունելության արդյունքներով 1-ինկուրս ընդունվածներ	1677
Փոխադրվել են մասնաճյուղից հեռակա ուսուցման դեպարտամենտ	-
Փոխադրվել են այլ բուհերից, քոլեջից	140
Փոխադրվել են ՀԱԱՀ-ի ներսում՝ ցերեկային ուսուցումից հեռակա ուսուցում	370
Վերականգնվել են նախկին ուսանողներ	284
Փոխադրվել են այլ բուհեր	-
Փոխադրվել են մասնաճյուղեր հեռակա ուսուցման դեպարտամենտից	8
Փոխադրվել են ՀԱԱՀ-ի ներսում՝ հեռակա ուսուցումից ցերեկային ուսուցում	26
Շրջանավարտներ	579
Հեռացվել են	1203
Գործող ուսանողների թիվը 31.12.2016թ. դրությամբ	4676
Ուսանողների թիվը 31.12.2016թ. դրությամբ	5133
Գտնվում են ակադեմիական արձակուրդում, զին. ծառ. կապակցությամբ	437
Գտնվում են ակադեմիական արձակուրդում առողջական վիճակի պատճառով	20
Գերազանց և լավ գնահատականներով սովորում են	42
Օգտվել են վարձավճարի զեղչից 2015-2016 ուստարում (այդ թվում սոց. անապահով)	47+5
Օգտվել են վարձավճարի զեղչից 2016-2017 ուստարում պետության կողմից, սոց.անապահով	4
Օգտվել են վարձավճարի 50% զեղչից քառօրյա պատերազմին մասնակցած	55
Ազատվել են վարձավճարից օրենսդրության սահմանված կարգով 2015-2016 ուստարում	38
Ազատվել են վարձավճարից օրենսդրության սահմանված կարգով 2016-2017 ուստարում	22

Մասնագետների պատրաստման համար շատ կարևոր է լսարան – արտադրություն կապը, որն այսօր լիարժեք չենք օգտագործում: Ագրարային համալսարանը արտադրական պրակտիկաները անցկացնելու համար համապատասխան կազմակերպությունների հետ ունի մի շարք պայմանագրեր, կարիք կա ընդլայնել ձեռնարկությունների ցանկը, որոնց հետ պետք է կնքել նոր պայամանագրեր, խնդրելով սեզոնային շխատանքային տեղեր հատկացնել ուսանողներին, որը հնարավորություն կտա նրանց գործնական հմտություն ձեռք բերելուն:

2016թ. հեռակա ուսուցման դեպարտամենտի 24 մասնագիտությունների գծով ըստ հաստատված գրաֆիկների կազմակերպվել են պետական համալիր առարկաների քննությունն և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանություններ ապրիլի 11-ից մինչև հունիսի 22-ը:

Վերը նշված 24 մասնագիտություններից 6-ը՝ <<Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն>>, <<Ֆինանսների կառավարում>>, <<Հաշվապահական հաշվառում և աուդիտ>>, <<Ապահովագրական գործ>>, <<Ագրոբիզնես և շուկայաբանություն>>, <<Հողագույքային հարաբերույթուններ>> մասնագիտությունների համար, որպես որակակորման ձև սահմանվել է 2 պետական քննություններ, իսկ մնացած մասնագիտությունների համար 1 պետական քննություն և դիպլոմային աշխատանքի պաշտպանություն:

2015-2016 ուսումնական տարվա 24 մասնագիտությունների ավարտական 6-րդ կուրսի գործող ուսանողների թիվը կազմել 686 ուսանող, որոնցից տեսական կուրսն ավարտել են 650-ը, որոնք թույլատրվել են պետական քննություններին, իսկ 7 ուսանող տեսական կուրսն ավարտել են նախատեսված ժամկետից ուշ և պաշտպանության են թույլատրվել հաջորդ ուսումնական տարվա շրջանավարտների հետ, 36 ուսանող հեռացվել են:

Կրթական բարեփոխումների տրամաբանության և Բոլոնիայի գործընթացի դրույթների պահանջներին համապատասխան, այժմ անհարաժեշտ է ավելի մեծ ուշադրություն հատկացնե լուսանողներին ոչ միայն մուտքային ցուցանիշներին այլ նաև ելքային արդյունքների վրա: Այդ իսկ տեսակետից կարևորում է ուսումնառության ընթացքում ուսանողների բավարար գիտելիքներով ապահովելը և ավարտակա նպետական քննություններին ու դիպլոմային աշխատանքների կատարմանն ու պաշտպանությանը նախապատրաստելը:

Հեռակա ուսուցման դեպարտամենտում ընդգրկված մասնագիտու-թյուններով մասնագետների պատրաստումը բավարարելու համար անհրաժեշտ է՝

1.Ամբիոններում ուշադրություն դարձնել ուսումնադիտակտիկ նյութերի թարմացման, լաբորատորիաների կահավորման և ուսումնամեթոդական նյութերով ուսանողությանը ինքնուրույն աշխատանքների համար տրամադրելուն:

2. Ամբիոնների հետ համատեղ ձեռնարկել միջոցներ ուսանողների

անհատական առաջադիմությունը բարձրացնելու ուղղությամբ և ակտիվացնել, ուսանողների ընդգրկումը գիտական խմբակներում հետագայում ուսանողական գիտաժողովներին մասնակցելու համար:3.Ամբիոնների հետ ամենօրյա աշխատանք տանել 2015-2016 ուս.տարվա պարտք ունեցող ուսանողների թվաքանակը նվազեցնելու ուղղությամբ և դեկտեմբերի վերջին արդյունքները ներկայացնել քննարկման:

4. Ուժեղացնել վերահսկողությունը հեռակա ուսուցման ուսանողների հաճախումների, ստուգողական և կուրսային առաջադրանքների հանձնարարման և դրանց կատարման ընթացքի վերաբերյալ:

5. Հաճախակի կազմակերպել դասալսումներ և արդյունքները քննարկել հեռակա ուսուցման դեպարտամենտի գիտական խորհրդում՝ ներկայացնելով հիմնավոր առաջարկություններ:

6. ՀԱԱՀ տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի հետ համատեղ մինչև 2017 թ. ապրիլ ամիսը մշակել և հեռակա ուսուցման դեպարտամենտում ներդնել հեռակա ուսուցման աշխատանքների առանձնահատկություններին համապատասխան համակարգչային ծրագրեր, ինչպես նաև մշակել պլան-ժամանակացույց և մինչև հուլիս ամիսը իրականացնել հեռակա ուսուցման դեպարտամենտի աշխատակիցների համակարգչային գիտելիքների ստուգում և համակարգչային գիտելիքների ուսուցում:

7. Մինչև 2017 թ. փետրվար ամիսը վերանայել կուրսային աշխատանքների թեմատիկան, ստուգողական աշխատանքները և քննական հարցաշարերը:

8. Խստորեն հետևել հեռակա ուսուցման ուսանողների հետ ուսումնական տարվա առաջին հանդիպման ժամանակ ստուգողական և կուրսային առաջադրանքների հանձնարարման, այնուհետև սահմանված կարգով դրանց կատարման և ժամանակին հանձնման աշխատանքների ընթացքին:

9. Ուսանողների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպումներ, արագ արձագանքել առաջացած հարցերին և տալ լուծումներ:

1.3. ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բարձրագույն կրթություն իրականացնելիս 2016-2017 ուս. տարվա Ի-ի կիսամյակի ընթացքում, ուսանողների տեսական գիտելիքների ձեռքբերմանը զուգընթաց, կարևորվում է նրանց գործնական ու կիրառական հմտությունների և կարողությունների ձևավորումն ու զարգացումը: Այս տեսակետից, կրթական բարեփոխումների պահանջներին համապատասխան, համալսարանը ուսումնական պլաններում ուսանողի ուսումնական ծանրաբեռնվածության մեջ ծանրության կենտրոնը տեսական ուսուցումից տեղափոխում է դեպի ուսանողների պրակտիկ կարողությունների զարգացմանը: Ներկայումս մենք պետք է ուսումնասիրենք և արագ արձագանքենք այն խնդիրներին, որոնք համահունչ են ապագա մասնագետների գործնական գիտելիքների, ունակությունների և հմտությունների զարգացմանը:

Ուսանողների ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաները կազմակերպելու և իրականացնելու նպատակով համալսարանը, բացի մեր երկու ուսում-նափորձնական և երեք գիտական կենտրոններից ու տնտեսություններից, համագործակցում է նաև արտադրական ձեռնարկությունների, գյուղացիական տնտեսությունների, ֆերմերային տնտեսությունների, գիտական կենտրոնների, մարզային և տարածքային անասնաբուժական կայանների, բանկերի, պետական ու մասնավոր միջազգային կազմակերպությունների և այլ առաջատար տնտեսությունների հետ:

2016-2021թթ. ֆակուլտետների բոլոր մասնագիտությունները գրեթե ապահովված են ուսումնաարտադրական բազաներով:

Հեռակա ուսուցման դեպարտամենտի, մագիստրատուրայի և քոլեջի ուսանողները նույնպես ուսումնաարտադրական պրակտիկաները անցկացնում են այն բազաներում, որոնց հետ կնքված են պայմանագրեր:

Համալսարանը հանրապետության 10 մարզերում և Երևան քաղաքում համապատասխանմասնագիտությունների գծով կազմակերպությունների հետ ունի կնքված պայմանգրեր մինչև 2021թ.:

2016-2017 ուս. տարվա առաջին կիսամյակի ընթացքում վերակնքվել են ժամկետն անց պայմանագրերը և կնքվել են նոր պայմանագրեր՝

1. ՀՀ Գյուղատնտեսության նախարարության Երկրագործության գիտական կենտրոն ՊՈԱԿ - 11.10.2016թ. - 31.12.2018թ.
2. «Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա» ՍՊԸ – 2016 – 2020թթ.
3. «Տոնուս-Լե» ՍՊԸ - 25.08.2016թ. - 25.08.2017թ.
4. Համակցված կերերի գործարան – 2016 – 2018թթ.
5. «Ֆան-Ֆան» ՍՊԸ – 2016 – 2017թթ.
6. «ՇԻՐԱՌ» ՍՊԸ – 2016 – 2018թթ.
7. «Աշտարակ ձու» ՍՊԸ – 2016 – 2018թթ.
8. «Դավիթ երթուղային տաքսի» ՓԲԸ – 2016 – 2021թթ.
9. «Տատնի հանքային ջրերի գործարան» ՍՊԸ – 2016 – 2020թթ
10. «Ֆարինի» ՍՊԸ - 02.11.2016թ. - 02.11.2017թ.
11. «Բեկոն Պրոդուկտ» ՍՊԸ - 02.11.2016թ. - 02.11.2017թ.
12. «Թամարա և Անի» ՍՊԸ – 2016 – 2018թթ.
13. «ՎՎՎ Գրուպ» ՍՊԸ – 2016 – 2019թթ.
14. «Իջևանի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ – 2016 – 2018թթ.

15. <<Գոլդեն Գրեյպ ԱրմԱս>> ՍՊԸ – 2016 – 2019թթ.
16. <<Արարատի գինու գործարան>> ՍՊԸ – 2016 – 2021թթ.
17. <<Ռոքարմ>> ՍՊԸ - 03.11.2016թ. - 30.12.2017թ.
18. <<Արտաշտի պահածոների գործարան>> ԲԲԸ – 2016 – 2019թթ.
19. <<Վանսեվան>> ՍՊԸ – 2016 – 2020թթ.
20. <<Մաքս ֆիշ>> ՍՊԸ - 07.11.2016թ. - 31.12.2018թ.
21. <<Վայք Գրուպ>> ՓԲԸ – 2016 – 2020թթ.
22. <<Արմենիա Վայն>> Գործարան ՍՊԸ – 2016 – 2018թթ.
23. <<Թամարա Ֆրուիթ>> ՓԲԸ – 2016 – 2018թթ.
24. <<Վան Արդի>> ՍՊԸ – 2016 – 2020թթ.
25. <<Մուլտի Ագրո>> գիտաարտադրական կենտրոն ՍՊԸ – 2016 – 2021թթ.
26. <<Աթենք մսամթերք>> ՍՊԸ - 21.11.2016թ. - 31.12.2017թ.
27. <<Երևանի Արարատ կոնյակի-գինու-օղու կոմբինատ>> (ՆՈՅ) ՓԲԸ -2016 – 2021թթ.
28. <<Ռոսգոսստրախ Արմենիա>> ԱՓԲԸ - 29.11.2016թ. - 31.12.2017թ.
29. <<ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ>> Ապահովագրական ընկերություն - 29.11.2016թ.-29.09.2017թ.
30. <<ԱԿԶ>> Արարատի կոնյակի գործարան ՍՊԸ – 2016 – 2020թթ.
31. Արարատի <<Աբրիկոն>> ՍՊԸ – 2016 – 2021թթ.

Արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների համար ժամանակին կատարվել են նախապատրաստական աշխատանքներ, ճշտվել են պայմանգրերի կնքման ժամկետներն ու ձեռնարկությունների հնարավորությունները, որից հետո միայն ուսանողները գործուղվել են համապատասխան կազմակերպություններ: Ելնելով գյուղատնտեսական արտադրանք մթերող կազմակերպությունների աշխատանքների սեզոնային բնույթից՝ որոշ մասնագիտությունների ուսանողների ուսումնական պրակտիկայի անցկացման համար կազմվել են սահուն գրաֆիկներ:

Ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպումը միշտ գտնվել և գտնվում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտորի, ուսումնաարտադրական պրակտիկաների համա-կարգողի, պրակտիկաների ղեկավարների, դեկանատների և ամբիոնների ուշադրության կենտրոնում:

Արտադրական պրակտիկա մեկնող ուսանողներին տրամադրվել է օրագրեր, ըստ հրամանների ամեն մի ուսանող ստացել է ուղեգիր տվյալ վայր մեկնելու համար:

2016-2017 ուս.տարվա առաջին կիսամյակում ըստ ֆակուլտետների ուսումնական պրակտիկաներին ուսանողների մասնակցությունը կազմել է.

1. Անասնաբուժական բժշկագիտություն և անասնաբուծության – 82,9%
2. Ագրոնոմիական – 81,5%
3. Տնտեսագիտական – 91,2%
4. Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի – 77,7%
5. Պարենամթերքի տեխնոլոգիաների - 82,7%
6. Քոլեջ - 86,7%

Ընդամենը համալսարանում - 82,4%

Ուսանողների ուսումնական պրակտիկաների հաճախումների արդյունքները 2016-2017 ուս. տարվա առաջին կիսամյակում

Ագրոնոմիական ֆակուլտետ

Հ/հ	Մասնագիտությունը	Կուրսը	ՈՒս. թիվը	Ներկա	%	Բացակա	%
1	Ագրոնոմիա	2	36	29	80,5	7	19,5
2	Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	1	116	94	81	22	19
3	Բույսերի պաշտպանություն	1	63	53	84,1	10	15,9
		2	60	42	70	18	30
4	Գյուղ. մշակ, սելեկցիա և գենետիկա	2	24	23	95,8	1	4,2
5	Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա	1	80	63	78,7	17	21,3
6	Ագրոէկոլոգիա	1	90	76	84,4	14	15,6
		2	78	63	80,8	15	19,2
7	Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում	1	56	44	78,6	12	21,4
		2	5	4	80	1	20
Ընդամենը ըստ կուրսերի		1	405	330	81,5	75	18,5
		2	203	161	79,3	42	20,7
Ընդամենը ֆակուլտետում			**608**	**491**	**80,7**	**117**	**19,3**

Տնտեսագիտական Ֆակուլտետ

Հ/հ	Մասնագիտությունը	Կուրսը	ՈՒս. թիվը	Ներկա	%	Բացակա	%
1	Ագրոարդյունաբերության էկոնոմիկա և կառավարում	2	32	31	96,8	1	3,2
2	Ագրո, համակարգի հհ կաուդիտ	2	80	72	90	8	10
3	Ագրոպարենային համակարգի Ֆինանսերի կառավարում	2	39	33	84,6	6	15,4
4	Սննդարդ, էկոնոմիկա և կառավարում	2	19	19	100	-	-
Ընդամենը ըստ կուրսերի		2	170	155	91,2	15	8,8
Ընդամենը ֆակուլտետում			**170**	**155**	**91,2**	**15**	**8,8**

Անասնաբուժական բժշկագիտություն և անասնաբուծության

Հ/հ	**Մասնագիտությունը**	**Կուրսը**	**ՈՒս.թիվը**	**Ներկա**	**%**	**Բացակա**	**%**
1	Անասնաբուժություն	1	132	107	81	25	19
		2	24	20	83,3	4	16,7
		3	34	29	85,3	5	14,7
		4	21	17	80,9	4	19,1
2	Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն	1	76	73	96	3	4
		2	22	20	90,9	2	9,1
		3	78	61	78,2	17	21,8
		4	48	40	83,3	8	16,7
3	Անասնաբուծություն	1	44	29	65,9	15	34,1
		2	25	22	88	3	12
Ընդամենը ըստ կուրսերի		1	252	209	83	43	17
		2	71	62	87,3	9	12,7
		3	112	90	80,3	22	19,7
		4	69	57	82,6	12	17,4
Ընդամենը ֆակուլտետում			**504**	**418**	**82,9**	**86**	**17,1**

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ

Հ/հ	Մասնագիտությունը	Կուրսը	ՈՒս.թիվը	Ներկա	%	Բացակա	%
1	Խմորման արտադրության տեխն և գինեգործություն	1	210	180	85,7	30	14,3
		2	88	68	77,3	20	22,7
2	Հացի, հրուշ, և մակարոնի արտադրության տեխնոլոգիա	1	124	103	83	21	17
		2	150	120	80	30	20
3	Պահածոյացման և սննդ, տեխնոլոգիա	1	100	84	84	16	16
		2	21	18	85,7	3	14,3
Ընդամենը ըստ կուրսերի		1	434	367	84,6	67	15,4
		2	259	206	79,5	53	20.5
Ընդամենը ֆակուլտետում			**693**	**573**	**82,7**	**120**	**17,3**

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ

Հ/հ	Մասնագիտությունը	Կուրսը	ՈՒս. թիվը	Ներկա	%	Բացակա	%
1	Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկականկառուցվածքներ	2	57	42	73,7	15	26,3
		3	30	22	73,3	8	26,4
		4	48	46	95,8	2	4,2
2	Հողաշինարարություն, հողային կադաստր	2	50	45	90	5	10
3	Կենսագործունեության անվտանգություն	1	70	43	61,4	27	38,6
Ընդամենը ըստ կուրսերի		1	70	43	61,4	27	38,6
		2	107	87	81,3	20	18,7
		3	30	22	73,3	8	26,4
		4	48	46	95,8	2	4,2
Ընդամենը ֆակուլտետում			**255**	**198**	**77,7**	**57**	**22,3**

ՀԱԱՀ քոլեջ

Հ/հ	Մասնագիտությունը	Կուրսը	ՈՒս. թիվը	Ներկա	%	Բացակա	%
1	Խմորման արտադր, տեխն. և գինեգործ.	2	30	26	86,7	4	13,3
Ընդամենը ըստ կուրսերի		2	30	26	86,7	4	13,3
Ընդամենը քոլեջում			**30**	**26**	**86,7**	**4**	**13,3**

Ամփոփ տվյալներ ուսումնական պրակտիկային ուսանողների մասնակցության վերաբերյալ

Կուրսը	**ՈՒսանողների թիվը**	**մասնակցել են**		**չեն մասնակցել**	
		ուս. թիվը	**%**	**ուս. թիվը**	**%**
1	1161	949	81,7	212	18,3
2	840	697	83	143	17
3	142	112	78,9	30	21,1
4	117	103	88	14	12
Ընդամենը ՀԱԱՀ-ում	2260	1861	82,4	399	17,6

2016-2017 ուս. տարվա առաջին կիսամյակում ըստ ֆակուլտետների արտադրական և նախադիպլոմային պրակտիկայի են մեկնել՝

1. Ագրոնոմիական ֆակուլտետի 3-4-րդ կուրսերից արտադրական պրակտիկա՝ 73 ուսանող, 5-րդ կուրսերից նախադիպլոմային պրակտիկա՝ 34 ուսանող,

2. Անասնաբուժական բժշկագիտություն և անասնաբուծության ֆակուլտետի 5-րդ կուրսերից արտադրական պրակտիկա՝ 31 ուսանող,

3. Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի 5-րդ կուրսերից նախադիպլոմային պրակտիկա՝ 38 ուսանող,

4. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի 3-4-րդ կուրսերից արտադրական պրակտիկա՝ 58 ուսանող,

5. Գյուղ. մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետի 5-րդ կուրսերից նախադիպլոմային պրակտիկա՝ 25 ուսանող,

6. Քոլեջ 2-4-րդ կուրսերից արտադրական պրակտիկա՝ 81 ուսանող,

Հեռակա ուսուցման դեպարտամենտից՝ 1322 ուսանող որից՝ արտադրական պրակտիկա՝ 805 ուսանող,նախադիպլոմային պրակտիա՝– 517 ուսանող:

1.4. ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առկա ուսուցման համակարգի 2015-2016 ուստարվա պետական քննությունների և դիպլոմային նախագծերի պաշտպանությունն սկսվել է 2016թ.ապրիլին և ավարտվել մայիսին:

2015-2016 ուստարվա սկզբին համալսարանի ավարտական կուրսերի 157 ուսանողների թույլատրվել է մասնակցելու պետական համալիր քննություններին և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը:

Շրջանավարտներից հանձնել են բոլոր պետական քննությունները և պաշտպանել դիպլոմային աշխատանքները դրական գնահատականներով (առանց նախորդ տարիների շրջանավարտների) 149 ուսանող (9.9%), որից՝ միայն «5»գնահատականով հանձնել է 32 ուսանող (21.2%), «4» և «5»գնահատականներով՝ 43 ուսանող (28.8%), իսկ 6-ը (4%) ստացել է անբավարար գնահատական, 2-ը՝ (1.3%) անհարգելի պատճառով չի ներկայացել քննություններին (աղ. 11):

Պետական քննական հանձնաժողովների որոշմամբ 4 ուսանող ստացել է գերազանցու-թյան դիպլոմ (2,7%):

Դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը մասնակցել է 51 շրջանավարտ, որից «5» գնահատական է ստացել 13 ուսանող (25.5%), «3»գնահատական՝ 21-ը (41.2%): Առկա համակարգում նախորդ տարիների շրջանավարտներից պետական ավարտական քննություններին և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությանը մասնակցել է 3 ուսանող: Այսպիսով, առկա ուսուցման համակարգից այս ուստարի բուհն ավարտել է 152 շրջանավարտ:

2016թ. հեռակա ուսուցման դեպարտամենտի 24 մասնագիտությունների գծով կազմակերպվել են պետական համալիր քննություններ և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանություններ:

2015-2016 ուստարում ավարտական գործող ուսանողների թիվը կազմել է 686, որից թույլատրվել են պետական քննություններին 650-ը (94.7%), որոնցից բուհն ավարտել են 579-ը (նախորդ տարիներից ևս 35-ը) (աղ. 12):

2015-2016 ուստարում բակալավրի ուսուցման առկա և հեռակա համկարգում համալսարանն ավարտել է 766 ուսանող (152 (առկա) + 579 (հեռակա) + 35 (հեռակա նախորդ տարիներից)):

Համալսարանի պետական քոլեջում պետական քննությունների և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 173 ուսանողներից 172-ը մասնակցել է պետական քննություններին, իսկ 1 ուսանող չի ներկայացել:

172 շրջանավարտներն էլ հաջողությամբ հանձնել են պետական քննություններն ու դիպլոմային նախագծերը, որոնցից 17-ը (9,9%) արժանացել է գերազանցության դիպլոմի:

Աղյուսակ 11

Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

2015-2016 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱԱՌԿԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Հ/հ	Ֆակուլտետները	Ավարտական կուրսերի ուսանող-ների թիվը ուս.տարվա սկզբին	Ավարտական կուրսերի ուսանողնե-րի թիվը մինչև պետ. քննութ. սկսվելը	Դրացից թույլատրվ. են մասնակ-ցելու պետ.քննութ. և դիպլոմային նախագծերի (աշխատ.) պաշտպ.	Հանձնել են բոլոր պետական քննությունները և պաշտպանել են դիպլոմային աշխատանքները դրական գնահ-ով (երկուսը միասին) առանց նախորդ տարիների շրջանավարտների									Պաշտպանել են դիպլոմային նախագիծ (աշխատանք)					Նախ.տարիների շրջանավարտներից թույլատրվել են մասնակց. պետ. քնն.-ին կամ դիպլ. աշխատ. պաշտ. 2-րդ անգամ		Ավարտել են բուհը և ստացել են դիպլոմ ընդամենը (պտմամ 6+21)	
					Ընդամենը պտմամ 8+9+10+11)	%-ը 6-րդ պտմամի թվից	այդ թվում				Ստացել են ՝2՝ գնահատական	Չեն ներկայացել ան-հարգելի պատճառով	Ստացել են գերազանցության դիպլոմ	Ընդամենը	դրանցից ստացել են գնահատականներ				Ընդամենը	Դրանցից դրա- կան գնահատա-կան են ստացել		
							Միայն ՝5՝ գնա-հատականով	՝4՝ ու ՝5՝ և միայն ՝4՝ գնահատական.	Միայն ՝3՝ գնա-հատականով	Խառը գնահա-տականներով					՝5՝	՝4՝	՝3՝	՝2՝				
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23
1	Ագրոնոմիական ընդ.	5	5	5	5	100	0	2	2	1	0	0	0	5	0	2	3	0	2	2	7	02.05.16
	Անվճար	5	5	5	5	100		2	2	1				5		2	3				5	
	Վճարովի			0	0	####								0					2	2	2	
2	Տնտեսագիտական ընդ.	55	52	52	50	96,2	7	10	24	9	2	0	3	10	2	6	2	0	0	0	50	28.04.-02.05.16
	Անվճար	7	7	7	7	100	5	2					2	2	1	1					7	
	Վճարովի	48	45	45	43	95,6	2	8	24	9	2		1	8	1	5	2				43	
3	Գյուղ. մեք. և ՏՓ ընդ.	7	7	7	7	100	0	3	4	0	0	0	0	7	0	3	4	0	0	0	7	29.04.16
	Անվճար	4	4	4	4	100		2	2					4		2	2				4	
	Վճարովի	3	3	3	3	100		1	2					3		1	2				3	
4	Պարենամթ.տեխնոլոգ. ընդ.	8	8	8	8	100	4	1	3	0	0	0	0	8	5	0	3	0	0	0	8	21.04. 2016
	Անվճար	2	2	2	2	100	2							2	2						2	
	Վճարովի	6	6	6	6	100	2	1	3					6	3		3				6	

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23
5	Անասնաբուժ.-բժշկ. և բուծ. ընդ.	8	8	8	8	100	3	4	1	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	8	27.05. 2016
	Անվճար	7	7	7	7	100	3	4						0							7	
	Վճարովի	1	1	1	1	100			1					0							1	
6	ՄՋ և ՀՇ ընդ.	12	12	12	11	91,7	4	4	2	1	1	0	0	11	6	3	2	0	0	0	11	04.05.16
	Անվճար	8	8	8	8	100	4	4						7	5	1	1				8	
	Վճարովի	4	4	4	3	75			2	1	1			4	1	2	1				3	
7	Ագրոբիզնես և շուկ. ընդ.	37	37	39	34	87,2	5	6	16	7	3	2	0	10	0	3	7	0	1	1	35	19.04+ 28.04.16
	Անվճար	7	7	7	7	100	4	2		1				2		2					7	
	Վճարովի	30	30	32	27	84,4	1	4	16	6	3	2		8		1	7		1	1	28	
8	Ագրոբիզնեսի դեպ. ընդ.	28	26	26	26	100	9	13	1	3	0	0	1	0	0	0	0	0	0	0	26	23.05.16
	/ անգլ./ Անվճար			0	0	####								0							0	
	Վճարովի	28	26	26	26	100	9	13	1	3			1	0							26	
	Հ Ա Ա Հ ընդ.	160	155	157	149	94,9	32	43	53	21	6	2	4	51	13	17	21	0	3	3	152	
	Անվճար	40	40	40	40	100	18	16	4	2	0	0	2	22	8	8	6	0	0	0	40	
	Վճարովի	120	115	117	109	93,2	14	27	49	19	6	2	2	29	5	9	15	0	3	3	112	

Աղյուսակ 12

Տվյալներ
2015-2016թ. ուսումնական տարվա շրջանավարտների
1-ին և 2-րդ պետական քննությունների մասին

N	Մասնագիտության անվանումը	տես. կուր. ավարտ ուս. թիվը	1-ին պետական քննության գնահատականները					միջին բալը	ուս. թիվը	2-րդ պետական քննության գնահատականները					միջին բալը
			2	3	4	5	չն.			2	3	4	5	չն.	
1	Ագրոնոմիա	24	-	14	6	1	3	3.38							
2	Անտ. տնտ և բն. կանաչ.	16	-	11	3	1	1	3.33		4 նախորդ տարվանից					
3	Ագրոէկոլոգիա	6	-	4	2	-	-	3.33							
4	Ան.բուժ.սան.փորձ.	36	-	18	8	6	4	3.6	36	-	21	8	3	4	3.43
5	Կաթի և կաթն. տեխն.	14	-	8	4	-	2	3.33		7 նախորդ տարվանից					
6	Խմոր. արտ. տեխ. և գինեգործություն	36	-	13	12	8	3	3.84		2 ցերեկայինից 1 Ղարաբաղից					
7	Հացի, հրուշակ. և մակար. արտ. տեխ	7	-	7	-	-	-	3.0							
8	Գյուղ. հումք. և պարեն. փորձ.	32	-	28	3	1	-	3.15		3 Վանաձորի մասն. 1 նախորդ տարվանից					
9	Գյուղ. մեքենայացում	33	-	26	7	-	-	3.21		2 ցերեկայինից 3 նախորդ տարվանից					
10	Փոխ. և ճան. երթ. կազմ.և կառավարում	90	17	62	9	-	2	2.9							
11	Հողաբարելավում	16	-	9	3	1	3	3.38		5 նախորդ տարվանից					
12	Հող. և հող. կադաստր	34	-	18	9	5	2	3.59		1 նախորդ տարվանից					
13	Գյուղ.էլ.և ավտոմատ.	18	-	9	5	3	1	3.64							
14	Մսի և մսամթ. տեխն.	11	-	4	2	4	1	4							
15	Բույսերի պաշտպ.	7	-	6	-	1	-	3.28							
16	Կաշվի և մորթու տեխն.	4	-	2	2	-	-	3.5							
	Ընդամենը	384	17	239	75	31	22		36	-	21	8	3	4	

Տվյալներ
2015-2016 ուսումնական տարվա դիպլոմայի նաշխատանքների (նախագծերի) պաշտպանության մասին

	Մասնագիտության անվանումը	տես. կուրսն ավարտած ուս. թիվը	Դիպլոմայինաշխատանքների (նախագծերի) պաշտպանությունգնահատականը					միջին բալը	շնորհել դիպլոմ
			2	3	4	5	Չ/Ն		
1	Ագրոնոմիա	24	-	7	12	2	3	3.76	21
2	Անտ. տնտ և բնակ. կանաչ.	16	-	6	5	3	2	3.78	14
3	Ագրոէկոլոգիա	6	-	3	2	1	-	3.66	6
4	Կաթի և կաթնամթերքի տեխ.	14	-	7	5	-	2	3.41	12
5	Խմորմ. արտ. տեխ. և գինեգ.	36	-	11	12	10	3	3.96	33
6	Հացի և հրուշ. և մակ. արտ. տեխ	7	-	7	-	-	-	3.0	7
7	Գյուղ. հումք և պարեն. փորձ., ստ. և սերտ.	32	-	13	11	5	3	3.72	29
8	Բույսերի պաշտպ.	7	-	3	3	1	-	3.71	7
9	Մսի և մսամթերքի տեխնոլոգիա	11	-	3	2	5	1	4.2	10
10	Կաշվի և մորթու տեխն.	4	-	2	1	-	1	3.33	3
11	Հողաշին. և հողային կադաստր	34	-	17	3	8	6	3.67	28
12	Գյուղ. մեքենայացում	33	-	25	6	1	1	3.25	32
13	Փոխ. և ճան. երթ. կազմ.և կառավարում	90	-	63	13	-	14	3.17	64
14	Հողաբարելավում	16	-	8	3	1	4	3.41	12
15	Գյուղ.էլ.և ավտոմատացում	18	-	7	4	3	4	3.71	14
16	Անաս.սան. փորձ.	-	-	-	-	-	-	-	32
	Ընդամենը	**348**	**-**	**182**	**82**	**40**	**44**		**324**

Տվյալներ
2016թ. ուսումնական տարվա շրջանավարտների 1-ին, 2-րդ պետական
քննությունների և դիպլոմային աշխատ. պաշտպանության մասին

N	Մասնագիտության անվանումը	տես. կարգն ավարտած ուս. թիվը	1-ին պետական քննության գնահատականները					միջին բալը	ուս. թիվը	2-րդ պետական քննության գնահատականները					միջին բալը	ճախող տար-ից	ցերեկ.-ից	շնորհել դիպլոմ
			2	3	4	5	չն.		չն.	2	3	4	5	չն.				
1	Ապահովագրական գործ	20	1	10	8	1	-	3,45	20	-	11	7	1	1	3,47	4	-	19
2	Ֆինանսների կառավ.	62	-	38	14	8	1	3,50	61	-	35	14	10	2	3,58	3	-	59
3	Հողազույքային հարաբերություններ	26	-	24	2	-	-	3,08	26	-	17	9	-	-	3,35	-	-	26
4	Հաշվ. հաշվառում և աուդիտ	67	-	28	18	21	-	3,86	67	-	24	20	23	-	3,99	1	1	67
5	Ագրոբիզնես և շուկայաբանություն	25	3	16	3	3	-	3,24	25	-	15	6	3	1	3,50	3	2	22
	Ընդհամենը	**200**	**4**	**116**	**45**	**33**	**1**	**3,43**	**199**	**-**	**102**	**56**	**37**	**4**	**3,58**	**11**	**3**	**193**
											Դիպլոմային աշխ. պաշտպանություն							
6	Ագրար. քաղաք. և տարած.զարգ.	10	-	7	2	1	-	3,40	10	-	6	3	1	-	3,50	-	-	10
7	Սննդարդ էկոն. և կառավարում	28	-	20	7	-	1	3.26	26	-	18	7	1	-	3,35	1	1	26
8	Ագրարայինարտ. էկոն. ևկառավ.	28	-	20	8	-	-	3,29	26	-	16	10	-	-	3,39	2	3	26
	Ընդհամենը	**66**		**47**	**17**	**1**	**1**	**3,12**	**62**	**-**	**40**	**20**	**2**	**-**	**3,41**	**3**	**4**	**255**

1.5. ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի դեպարտամենտը, շարունակում է հաջողություններ արձանագրել: Դեպարտամենտի՝ որպես արդիական տարածաշրջանային կրթական և հետազոտական կենտրոնի, դերակատարությունը հաշվետու ժամանակաշրջանում առավել ճանաչելի է ՀՀ բարձրագույն կրթության համակարգում:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում չորրորդ ավարտական կուրսի ուսանողների թիվը կազմել է 30, որոնցից 1-ը Վրաստանի Հանրապետությունից է, իսկ 3-ն ունեն ազատ ունկնդրի կարգավիճակ:

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում երրորդ կուրսի ուսանողների թիվը կազմում է 34, որոնցից 3-ը Վրաստանի Հանրապետությունից են, իսկ 2-ն ունեն ազատ ունկնդրի կարգավիճակ: Երրորդ կուրսի ուսանողներից երկուսը սովորում են անվճար համակարգում: Երրորդ կուրսի երկրորդ կիսամյակից 2 ուսանողներ՝ Սուրեն Ադամյանը և Հայկ Կարապետյանը, «Էրասմուս+» ծրագրի K107 նախագծի շրջանակում գործուղվել են Բուլղարիայի Վառնայի մենեջմենտի համալսարան՝ ուսումը 3,5 ամիս ժամկետով շարունակելու նպատակով: Ուսումն ավարտած վերոնշյալ ուսանողներին թույլատրվել է շարունակել ուսումը Ագրոբիզնեսի դեպարտամենտի Ագրոբիզնես և շուկայաբանություն մասնագիտության 3-րդ կուրսում, վճարովի համակարգում՝ Բուլղարիայի Վառնայի մենեջմենտի համալսարանից ստացած կրեդիտային միավորները փոխանցելով Ագրոբիզնեսի դեպարտամենտ: Գարնանային քննաշրջանում բոլոր ուսանողները ստացել են դրական գնահատականներ: Անհարգելի բացակայություններ չեն գրանցվել:

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում, Ագրոբիզնեսի դեպարտամենտի երաշխավորությամբ, 4-րդ կուրսի 7 և 3-րդ կուրսի 14 ուսանողներ ստացել են կրթաթոշակ Հիրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից, համապատասխանաբար 185.000-ական և 200.000-ական դրամի չափով:

2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակ են տեղափոխվել չորրորդ ավարտական կուրսի 33 ուսանողները, որոնցից 1-ը ունի ազատ ունկնդրի կարգավիճակ: Ազատ ունկնդրի կարգավիճակ ունեցող ուսանողներից մեկը և 3 վրացի ուսանողները ցածր առաջադիմության պատճառով չեն տեղափոխվել 4-րդ կուրս: Բոլոր ուսանողները սովորել են վճարովի համակարգում: Առողջական խնդիրների պատճառով տարկետման մեջ գտնվող Արթուր Մնացականյանի ուսանողական իրավունքները վերականգնելուց հետո նրան թույլատրվել է ուսումը շարունակել 2016-17 ուսումնական տարվա 4-րդ կուրսում:

Էրասմուս Մունդուս գործողություն-2 ծրագրի շրջանակում եվրոպական համալսարաններում 10 ամիս ժամկետով ուսումն ավարտած 4-րդ կուրսի 2 ուսանողների (Ինեսսա Ավագյան՝ Չեխիայի Զլինի Թոմաս Բատա համալսարան և Նադեժդա Մկրտչյան՝ Պորտուգալիայի Վիանա Դո Կաշտելոյի Պոլիտեխնիկ համալսարան) թույլատրվել է ուսումը շարունակել 2016-2017 ուստարվա 4-րդ կուրսում, վճարովի համակարգում:

Չորրորդ կուրսի առաջին կիսամյակից 3 ուսանողներ Էրասմուս Մունդուս ծրագրի շրջանակում գործուղվել են եվրոպական համալսարաններ՝ ուսումը շարունակելու նպատակով Հասմիկ Զաքեյան՝ Լիտվայի Վիլնյուս համալսարան (10 ամիս ժամկետով), Արթուր Մնացականյան՝ Պորտուգալիայի Վիանա Դո Կաշտելոյի Պոլիտեխնիկ համալսարան (10 ամիս ժամկետով) և Էլիտա Ադոնց՝ Իսպանիայի Ալմերիայի համալսարան (6 ամիս ժամկետով):

2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում երրորդ կուրսի ուսանողների թիվը կազմում է 31, որոնցից 3-ը Վրաստանի Հանրապետությունից են, իսկ 1-ը ունի ազատ ունկնդրի կարգավիճակ: Երրորդ կուրսի ուսանողներից երկուսը սովորում են անվճար համակարգում:

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍ

2016թ. մայիսի 5-6-ին և 19-20-ին ավարտական կուրսի 26 ուսանողներ հանձնեցին երկու պետական համալիր (ամփոփիչ) քննություններ համապատասխանաբար Ֆինանսների վերլուծություն, Մարկետինգի վերլուծություն, Ռազմավարական կառավարում և Միկրոտնտեսագիտություն, Մակրոտնտեսագիտություն, Համաշխարհային էկոնոմիկա, Բնական ռեսուրսների էկոնոմիկա առարկաներից:

Առաջին պետական համալիր (ամփոփիչ) քննությանը մասնակցել են կուրսի 26 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 88,46 տոկոսը կազմել են գերազանց և լավ գնահատականները: Երկրորդ պետական համալիր (ամփոփիչ) քննությանը մասնակցել են կուրսի 26 ուսանողներ, որոնց ստացած նիշերի 92,3 տոկոսը կազմել են ,գերազանցե և ,լավե գնահատականները:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետական քննական հանձնաժողովի 20.05.2016թ. որոշման համաձայն, դեպարտամենտի Ագրոբիզնես և շուկայաբանություն մասնագիտության 26 շրջանավարտներին շնորհվել է տնտեսագետ-շուկայագետի որակավորում: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից ուսանողուհի Լիաննա Գրիգորի Հովհաննիսյանին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2016թ. հունիսի 1-ին, որին ներկա էին ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար Ռոբերտ Մակարյանը, ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Քլարք Փրայսը, ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Մաթիաս Քիսլերը, ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սամվել Սարգսյանը, Տեխասի A&M համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքըլզը, Գայզենհայմի համալսարանի պրոֆեսոր Յոն Հանֆը և պաշտոնատար այլ անձինք:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

2016թ. մարտի 25-ին դեպարտամենտում հայտարարվեց Բաց դռների օր ՀԱԱՀ ագրոբիզնեսի և շուկայաբանության և տնտեսագիտական ֆակուլտետների երկրորդ կուրսի ուսանողների համար, ովքեր ծանոթացան դեպարտամենտի ընդունելության ընթացակարգերին, ուսանողական կյանքին, ուսումնառության միջավայրին, շրջանավարտների զբաղվածության ցուցանիշներին և այլն:

2016թ. մայիսին դեպարտամենտում անցկացվեցին բակալավրիատի 2016-2017 ուսումնական տարվա ընդունելության քննությունները: Առաջին փուլում դիմորդները հանձնեցին գրավոր թեստ տնտեսագիտությունից, մաթեմատիկայից և անգլերենից, իսկ երկրորդ փուլում՝ բանավոր հարցազրույց: Ընդունելության արդյունքներով 32 ուսանողներ, որոնցից 2-ը՝ Վրաստանի հանրապետությունից, մասնակցել են ամառային նախապատրաստական դասընթացներին և հանձնել քննություններ Գյուղատնտեսական տնտեսագիտության ներածություն, Գործարար անգլերեն, Համակարգիչների կիրառում և Հռետորական արվեստ առարկաներից, որոնց արդյունքների հիման վրա ընտրված 31 ուսանողները սովորում են Ագրոբիզնեսի դեպարտամենտի երրորդ կուրսում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում դեպարտամենտի ուսանողները ուսումնա-ճանաչողական այցելություններ են ունեցել հետևյալ ձեռնարկությունները. Նիկոլա Ինթերնեշնլ ընկերություն, որը հայտնի է պահածոյացված բանջարեղենի և ձիթապտղի արտադրությամբ, Կոկա կոլա հելլենիկ բոթլինգ քամփնի ՓԲԸ, Վան 777 գինեգործարան, Գրինհաուզ ՍՊԸ ջերմատնային ընկերություն, Պռոշյանի գինու-կոնյակի գործարան, Ուրբան լոջիստիքս սերվիսիս ընկերություն, որը Հայաստանում միակ լոգիստիկ օպերատորն է, Հայ-հոլանդական Ամստեր ֆլաուերս ընկերություն, որը իր Բիգա ապրանքանիշով հայտնի է որպես բարձրորակ բանջարեղենի արտադրող, Արարատի մարզի Ջրառատ համայնքում գտնվող ջայլամաբուծական տնտեսություն, Հովսեփյանների միս-պահածոների գործարան (ՕՄԿ), Տաշիրի Դուստր Մելանյա պանրագործարան, Արմենիա Վայն գինեգործարան, Նատֆուդ մսամթերքի գործարան, ՍԱՋ Ագրո ջերմատուն, Մասիս ձուկ ընկերություն, Ռոյալ Արմենիա ՍՊԸ սուրճի վերամշակման և փաթեթավորման ընկերություն, էյչ-էս-Բի-Սի բանկ Հայաստան; Բարի Սամարացի մսամթերքի վերամշակման ձեռնարկություն, Թամարա Ֆրութ մրգերի և բանջարեղենի վերամշակման գործարան, Արկոլադ ընկերություն:

Ուսանողները ծանոթացել են այցելած ընկերությունների արտադրական հոսքագծերին, մարկետինգային գործիքներին, կառավարման և բաշխման համակարգերին, ներմուծման և արտահանման իրավիճակին և առաջիկա ծրագրերին: Ճանաչողական այս այցերը ագրոբիզնեսի ձեռնարկություններ գործնական փորձ են հաղորդում ուսանողներին:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

2016թ. հունիսի 14-ից կազմակերպվել է երրորդ կուրսի 32 ուսանողների ամառային արտադրական պրակտիկան հինգ շաբաթ տևողությամբ: Պրակտիկան անցկացվում է Հայաստանի ագրոբիզնեսի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում, ինչպես օրինակ՝ Ուրբան լոջիստիքս սերվիսիս, Կոկա կոլա ՀԲՔ, Բեկոն ՍՊԸ, Արմենիա Վայն ՍՊԸ, Գոլդեն Գրեյպ ԱրմԱս ՍՊԸ, Պեպսի կոլա բոթլերս Ջերմուկ Ինթերնեյշնլ, Հայկական բերքի առաջնղման կենտրոն ՓԲԸ, Երևանի գարեջուր ՓԲԸ, Նատֆուդ ՓԲԸ, Արարատ սննդի կոմբինատ ՓԲԸ, Սիս նատուրալ ՍՊԸ, Պռոշյանի կոնյակի գործարան, Թամարա ՍՊԸ, ՔԱՐԴ հիմնադրամ, Ֆարմ կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ, ՍԷՖ Ինթրնեյշնլ ՍՊԸ, Նիկոլա Ինթերնեյշնլ Արմենիա ՍՊԸ, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, Ավստրիական զարգացման գործակալություն, և այլն:

Պրակտիկայի արդյունքները ամփոփվել են պրակտիկայի հաշվետվության համաժողովի ժամանակ, որտեղ ուսանողները ներկայացրել են աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները:

ՍԵՄԻՆԱՐՆԵՐ, ՄՈԴՈՒԼՆԵՐ

Հաշվետու տարվա ընթացքում դեպարտամենտի բակալավրիատի ուսանողների համար մասնագիտական սեմինարներ կազմակերպվեցին՝ ներգրավելով ոլորտի առաջնակարգ մասնագետների Հայաստանից և արտերկրից:

Հաշվետու ժամանակահատվածում հրավիրյալ դասախոսների ուժերով դեպարտամենտում անցկացվել են հետևյալ մոդուլները. Օրգանական գյուղատնտեսություն մոդուլների դասախոսություններն անցկացրել է ՀՀ գյուղատնտեսության փոխնախարար, դեպարտամենտի շրջանավարտ Արմեն Հարությունյանը: Գյուղատնտեսական ֆինանսներ և վարկեր մոդուլն ացկացրել են Ֆարմ Կրեդիտ Արմենիա վարկային կազմակերպության տնօրենի տեղակալ Հրանտ Եղիազարյանը և դեպարտամենտի պետ, Վարդան Ուռուտյանը, Ագրոբիզնեսի արժեշղթայի կառավարում մոդուլը՝ ICARE հիմնադրամի հետազոտական ծրագրերի ղեկավար Աննա Երիցյանը, Գերմանական միջազգային համագործակցության ընկերակցության արտահանման գծով ավագ փորձագետ Արամ Բաբայանը դասավանդեց Արտահանումների խթանում մոդուլը: Յուրաքանչյուր մոդուլի ավարտին ուսանողները ուսումնաճանաչողական այցելություններ են ունեցել ագրոբիզնեսի համապատասխան ձեռնարկություններ:

Ուսանողների համար դասախոսություններ են կարդացել նաև՝

- Հայաստանում Արժույթի միջազգային հիմնադրամի մշտական ներկայացուցիչ Թերեզա Դաբան Սանչեսը՝ ներկայացնելով տարածաշրջանային և համաշխարհային տնտեսական ցնցումների համատեքստում Հայաստանի քաղաքականության մարտահրավերները:
- Պրահայի CERGE-EI համալսարանի ասպիրանտուրայի ուսանողուհի Գեղեցիկ Աֆունցը՝ ավագ կուրսի ուսանողներին ծանոթացնելով Պրահայի CERGE-EI համալսարանի մագիստրատուրայում և ասպիրանտուրայում սովորելու հնարավորություններին, առավելություններին և ընդունելության ընթացակարգերին:
- Էյ-Սի-Սի Ասոշիեյթս մարկետինգային, բրենդավորման և գովազդային ընկերության սեփականատեր Աստղիկ Չապլինը՝ Իմիջի խորհրդատվություն թեմայով:
- Չաք Սպեկտը, ով 13 տարի (մինչև 2006թ.) աշխատել է Հայաստանում՝ ներկայացնելով ԱՄՆ պետական աջակցության ծրագրի շրջանակում իրականացված գյուղատնտեսության զարգացման ծրագրերը:
- Vistaa Plus կազմակերպության Ֆերմերը ֆերմերին ծրագրի հրավիրյալ դասախոս, ԱՄՆ Քլեմսոնի համալսարանի գործակցային գիտասփյուռ ծառայության նահանգային ավագ գործակալ Մարկ Արենան՝ օրգանական բուսաբուծություն թեմայով: Պրն Արենան խոսեց օրգանական գյուղատնտեսության, օրգանական մթերքի և կենսամթերքի ու բնական մթերքի տարբերությունների, որորտում առկա մարտահրավերների ու զարգացման հիմնական միտումների մասին, ինչպես նաև ներկայացրեց Քլեմսոնի համալսարանի օրգանական ֆերմերային տնտեսությունը:
- DAAD (Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայություն) երևանյան տեղեկատվական կենտրոնի ղեկավար Սիլվիա Շմիդտը և ծրագրային խորհրդական Շուշան Թադևոսյանը՝ ներկայացնելով DAAD կրթաթոշակային ծրագրերը Գերմանիայում, մասնավորապես միջազգայնորեն ճանաչված կրթական աստիճաններ տվող կրթական ծրագրերի համար կրթաթոշակ ստանալու՝ DAAD-ի կողմից տրամադրվող հնարավորությունները:
- Ամերիա բանկի զարգացման գծով տնօրեն, տնտեսագետ Տիգրան Ջրբաշյանը՝ Գյուղատնտեսական ապահովագրություն առարկայի շրջանակում դեպարտամենտի ուսանողներին հաղորդակից դարձրեց Հայաստանի գյուղատնտեսության զարգացման իր տեսլականին, շեշտադրելով գյուղոլորտի զարգացումն իրականացնելու անհրաժեշտությունը՝ լավագույնս օգտագործելով երկրի մրցակցային առավելությունները:
- Դեպարտամենտի 2008թ. շրջանավարտ, պետեկամուտների կոմիտեի ավագ հարկային տեսուչ, ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնի դասախոս Ասանեթ Ալոյանը բակալավրիատի ավագ կուրսի համար սեմինար անցկացրեց ,Հարկումը և գործարար որոշումներրե թեմայով: Ներկայացրած թեմայի շրջանակում Ասանեթն անդրադարձավ բիզնեսի հետագա զարգացման առումով կարևորվող այն գործոններին, որոնք ազդում են հարկման վերաբերյալ որոշումների ընդունման վրա:
- Դեպարտամենտի 2009թ. շրջանավարտ, Բիզնեսի աջակցության կենտրոնի աշխատակից Վիկտորյա Այվազյանը՝ Գյուղատնտեսական կոոպերատիվներ առարկայի շրջանակում ներկայացրեց կոոպերատիվների զարգմացման վերաբերյալ իր ունեցած միջազգային փորձը Իսպանիայում և Սերբիայում:
- Դեպարտամենտի 2008թ. շրջանավարտ Սարգիս Մկրտչյանը, որը ներկայումս գյուղատնտեսական կոոպերատիվների գծով փորձագետ է ՄԱԿ-ի ՊԳԿ-ի Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման (ENPARD) ծրագրում՝

Գյուղատնտեսական կոոպերատիվների դասի շրջանակում, ավագ կուրսեցիներին ներկայացրեց ENPARD ծրագիրը և կոոպերատիվների զարգացմանն ուղղված աշխատանքները:

- Դեպարտամենտի 2008թ. շրջանավարտ, HSBC Բանկ Հայաստանի քարտային սպասարկման գծով ավագ մասնագետ Աննա Խաչատրյանը՝ ծանոթացնելով բանկային քարտերի ու հաշիվների անվտանգությանը, հնարավոր կեղծումներին ու դրանց դեմ նախազգուշական քայլերին:
- Դեպարտամենտի 2006թ. շրջանավարտ, Հայաստանի գոլֆի ազգային ֆեդերացիայի նախագահ Կարեն Հովհաննիսյանը, ով սեմինար անցկացրեց ,Գոլֆ մարզածևի մարկետինգ թեմայով:
- ՎՁԵԲ (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ) փորձագետ Խուան Գամեչոն դեպարտամենտի մագիստրատուրայի Ձեռնարկատիրական գործունեություն առարկայի շրջանակում 2-րդ կուրսի մագիստրանտների համար սեմինար անցկացրեց ՓՄՁ ոլորտում ռիսկերի կառավարման թեմայով:

<u>ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ</u>

2016թ. մայիսին անգլերենի յոթամսյա խորացված դասընթացին մասնակցած ՀԱԱՀ առաջին և երկրորդ կուրսերի առավել առաջադիմած ուսանողները ստացան ավարտական հավաստագրեր: Մասնակիցները հիմնականում ՀԱԱՀ ԱՇ և տնտեսագիտական ֆակուլտետների կրտսեր կուրսերի ուսանողներ են: Դասընթացը վարում էր դեպարտամենտի դասախոս Սթիվեն Դոնաթելը: 2016թ.-ի հոկտեմբերին սկսվեց անգլերենի վեցամսյա խորացված դասընթացը, որին մասնակցում են ՀԱԱՀ առաջին և երկրորդ կուրսերի 16 ուսանողներ:

<u>ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (MAB)</u>

2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրում սովորել են ավարտական կուրսի 10 և առաջին կուրսի 18 ուսանողներ: Առաջին կուրսի նշված 18 ուսանողներից Հովհաննես Մնացականյանը անձնական դիմումի համաձայն ազատվել է, իսկ Վահե Մանուչարյանը հեռացվել Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայից:

2016թ. մայիսի 20-ին ավարտական կուրսի 10 ուսանողներ հաջողությամբ պաշտպա-նեցին մագիստրոսական ավարտական աշխատանքները՝ ստանալով երեք գերազանց, վեց լավ և մեկ բավարար գնահատականներ: Ավարտական արարողությունը տեղի ունեցավ 2016թ. հունիսի 1-ին: 10 շրջանավարտներին շնորհվեց տնտեսագիտության մագիստրոսի որակա-վորում՝ շնորհելով ՀԱԱՀ դիպլոմներ և Տեխասի A&M համալսարանի հավաստագրեր: Պետական որակավորման հանձնաժողովի կողմից ուսանողուհի Գայանե Սամվելի Պետրոսյանին շնորհվել է գերազանցության դիպլոմ:

2016-2017 ուսումնական տարվա դիմորդների համար դեպարտամենտում կազմակերպվեց Բաց դռների օր Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի ընդունելության պայմաններին ծանոթանալու համար: 2016-2017 ուսումնական տարվա 34 դիմորդների համար հունիսի 11-ից օգոստոսի 15-ը կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ մակրոտնտեսագիտություն և վիճակագրություն առարկաներից, որի ավարտին նրանք մասնակցել են ընդունելության վճարովի տեղերի մրցույթին՝ հանձնելով համապատասխան քննություններ: Այս տարվա ընդունելությանը դիմել են Վրաստանի 6 քաղաքացիներ:

2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում 2-րդ կուրս են փոխադրվել 17 ուսանողներ, որոնցից 3-ը սովորում են անվճար համակարգում:

Անվճար համակարգի 2-րդ կուրսի մագիստրանտ Արտաշես Ալեքսանյանը «Էրասմուս Մունդուս Գործողություն-2» ծրագրի շրջանակում 10 ամիս ժամկետով գործուղվել է Լեհաստանի Լոձի համալսարան՝ ուսումը շարունակելու նպատակով: Սևիլյա Մարտիրոսյանը և Գևորգ Բաբայանը «Էրասմուս Մունդուս Գործողություն-2» ծրագրի շրջանակում 10 ամիս ժամկետով գործուղվել են Չեխիայի Թոմաս Բատա համալսարան՝ ուսումը շարունակելու նպատակով: Ուսումն ավարտած վերոնշյալ մագիստրանտներից Սևիլյա Մարտիրոսյանին թույլատրվել է շարունակել ուսումը Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայի 2-րդ կուրսում, վճարովի համակարգում՝ Չեխիայի Թոմաս Բատա համալսարան համալսարանից ստացած կրեդիտային միավորները փոխանցելով Ագրոբիզնեսի դեպարտամենտ: Արտաշես Ալեքսանյանը և Գևորգ Բաբայանը անձնական դիմումի համաձայն ազատվել են Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայից: Արսեն Խաչատրյանը տեղափոխվել է ՀԱԱՀ Մագիստրատուրայի 2015-16 ուս. տարվա Տնտեսագիտության մագիստրոսի որակավորման Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ մասնագիտության 2-րդ կուրս:

2015-2016 ուսումնական տարվա անվճար համակարգի 2-րդ կուրսի մագիստրանտ Մերի Մելքոնյանը 2016թ. մարտի 14-17-ը մասնակցել է Տիմիրյազևի անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարանում կազմակերպված 68-րդ միջազգային ուսանողական գիտապրակտիկ համաժողովին:

2016-2017 ուստարում Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագիրը համալրվեց առաջին կուրսի 25 ուսանողներով, որոնցից 6-ը Վրաստանի Հանրապետությունից են, իսկ 9-ը դեպարտամենտի 2016թ. շրջանավարտներ են: Ուսանողներից 3-ը սովորում են անվճար համակարգում: Նշված 25 մագիստրանտներից Նոնա Այվազյանը տեղափոխվել է ՀԱԱՀ Մագիստրատուրայի 2016-17 ուս. տարվա Տնտեսագիտության մագիստրոսի որակավորման Ագրոբիզնես և շուկայաբունություն մասնագիտության 1-ին կուրս: Շուշանիկ Մկրտչյանը ցածր առաջադիմության և վատ հաճախումների պատճառով հեռացվել է, իսկ Արփինե Քասարյանը անձնական դիմումի համաձայն ազատվել է Ագրոբիզնեսի դեպարտամենտի մագիստրատուրայից:

2016թ. հունիսի 7-ից կազմակերպվել է Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի 17 ուսանողների ամառային արտադրական պրակտիկան տասը շաբաթ տևողությամբ: Պրակտիկան անցկացվում է Հայաստանի ագրոբիզնեսի ձեռնարկություններում, բանկերում և միջազգային կազմակերպություններում, ինչպես օրինակ՝ Մանչո գրուպ ՍՊԸ, Ֆիխտներ ուոթեր ընդ տրանսփորթեյշն ՍՊԸ, Ֆարմ կրեդիտ Արմենիա ՈՒՎԿ, Ջի Այ Զեթ (GIZ), ՔԱՐԴ ագրոսերվիս ՍՊԸ, Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ, ԱՄՔՈՐ-ի հայկական մասնաճյուղ, Լայթ սոֆթ ՍՊԸ, Ի-Վի Քոնսալթինգ ՍՊԸ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ և այլն:

Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի վրացի ուսանողներ Խաթունա Կոնցելիձեն, Ռաթի Ֆուտկարաձեն և Կոբա Բերիձեն իրենց ուսումնաարտադրական պրակտիկան անցկացրել են ԱՀԿՄԿ (ICARE) հիմնադրամի հետազոտական բաժնում՝ ուսումնասիրելով Նոյան հյութերի գործարանի արտադրանքը վրաստանյան շուկա արտահանելու հետ կապված պոտենցիալ հնարավորությունները:

Պրակտիկայի ավարտին ուսանողները ներկայացրել են գրավոր հաշվետվություն: Աշխատանքի ընթացքում ձեռք բերած փորձն ու գիտելիքները գնահատվել են՝ հաշվի առնելով նաև արտադրությունում պրակտիայի ղեկավարի գնահատականը:

Ագրոբիզնեսի դեպարտամենտի երաշխավորությամբ 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում մագիստրատուրայի 1-ին կուրսի 4, իսկ 2016- 2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում 1 ուսանողներ ստացել են կրթաթոշակ Հիրայր և Աննա Հովնանյան հիմնադրամից, համապատասխանաբար 410.000-ական դրամի չափով:

<u>ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՐԹԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ</u>

2016թ. ապրիլի 20-22-ը դեպարտամենտը մասնակցել է Երևանի էքսպո կենտրոնում անցկացված ,Կրթություն և կարիերաե մասնագիտացված ցուցահանդեսին՝ ներկայացնելով Ագրոբիզնեսի մագիստրոսական (MAB) ծրագիրը:

<u>ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ</u>

Հաշվետու ժամանակաշրջանում Ագրոբիզնեսի դեպարտամենտը և ICARE հիմնադրամը GIZ GmbH-ի հետ համատեղ (որը ֆինանսավորվում է ԵՄ Թիրախային նախաձեռնություն Հայաստանի համար նախագծից) կազմակերպել է վերապատրաստման հետևյալ կարճաժամկետ դասընթացները.

- 2016թ. փետրվարի 15-ին մեկնարկեց ,Վարքագծային տնտեսագիտություն և բիզնեսի օգուտներե թեմայով 4-օրյա ուսումնատվական ծրագիրը, որը վարեց ԱՄՆ Կորնելի համալսարանի հետազոտող, ԱՈՒԿ-ի 2005թ. շրջանավարտ Գնել Գաբրիելյանը: Նպատակային լսարանը տարբեր ոլորտների ընկերությունների որոշում կայացնողներ ու մարկետինգի մասնագետներ են, ովքեր մեծապես շահադրդված են իմանալ հայաստանյան սպառողական շուկայի դեռևս չուսումնասիրված նախընտրությունները:
- Մարտի 14-17-ին Տեխասի A&M համալսարանի դասախոս դոկտ. Ռաֆաել Բախտավորյանը տեսակապի միջոցով անցկացրեց վերապատրաստման ծրագիր ,Գծային ծրագրավորում ագրոբիզնեսի ոլորտի ղեկավարների համարե թեմայով, որի նպատակն էր մասնակիցներին սովորեցնել գծային ծրագրավորման հիմունքները և տալ կիրառական հմտություններ:
- Հունիսի 2-3-ը և դեկտեմբերի 19-20-ը ընկած ժամանակահատվածում Տեխասի A&M համալսարանի դասախոս, դոկտ. Ռաֆաել Բախտավորյանը տեսակապի միջոցով անցկացրեց վերապատրաստում ,Տնտեսական հարցերի լուծման նպատակով էկոնոմետրիկ մոդելների կիրառումը STATA-ի օգտագործմամբե թեմայով:
- Հուլիսի 5-7-ը ընկած ժամանակահատվածում դեպարտամենտի նախկին դասախոս, ԱՄՆ Վայոմինգի համալսարանի գյուղատնտեսական և կիրառական տնտեսագիտության դասախոս Վարդգես Հովհաննիսյանն անցկացրեց վերապատրաստման երեքօրյա ծրագիր ,Շուկայի խոշորացումը և շուկայում ունեցած դիրքը սննդի արդյունաբերությունումե թեմայով:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

2016թ. մարտի 13-16-ին դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը մասնակցել է Հորդանանի մայրաքաղաք Ամմանում անցկացված ԱՄՆ ՄԶԳ Գործընկերություն հանուն հետազոտությունների մեջ ներգրավման (PEER) և Միջին Արևելքի հետազոտական գործակցություն (MERC) ծրագրերի համատեղ համաժողովին և ներկայացրել 2015թ. հոկտեմբերից ICARE հիմնադրամի կողմից իրականացվող ,Հարակայուն ձկնաբուծարաններ հանուն Հայաստանում ջրային ռեսուրսների բարելավմանե եռամյա նախագիծը:

Մարտի 22-24-ին Ջերմուկ քաղաքում կայացած ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն (ԱՐԴԻ) ծրագրի տարեկան համաժողովում դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը ներկայացրեց Գյուղատնտեսական կոոպերատվիների մասին ՀՀ օրենքը: Պարոն Ուռուտյանն իր ծանրակշիռ ներդրումն է ունեցել այս օրենքի մշակման գործում:

Եվրոպական Երիտասարդական պառլամենտի հայաստանյան ներկայացուցչության (EYP Armenia) գործակցությամբ ՀՀ կենտրոնական բանկի հայտարարած ,Իմ ֆինանսների ամիսե ծրագրի շրջանակում տեղի ունեցած քառօրյա ,Ֆինանսական նորարարություններ՝ միտված երկրի զարգացմանը խորագրով միջհամալսարանական համաժողովի ժամանակ անցկացված մրցույթին ՀԱԱՀ-ն ներկայացրել և մեծ առավելությամբ հաղթող են ճանաչվել Ագրոբիզնեսի դեպարտամենտի ուսանողները՝ ,Ֆ'ինանսական հասանելիությունը գյուղական համայնքներումե թեմայով: Մրցույթին մասնակցել են 6 բուհերի (Հայաստանի ամերիկյան համալսարան, Հայաստանում ֆրանսիական համալսարան, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան, Երևանի պետական համալսարան, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան և Հայաստանի ազգային ագրարային համալսարան) ավելի քան 80 ուսանողներ: Մրցույթն անցկացվել է անգլերենով:

2016թ. ապրիլին դեպարտամենի պետ Վարդան Ուռուտյանը պաշտոնական այց է ունեցել ԱՄՆ Ֆրեզնոյի նահանգային համալսարան՝ InnovATE ծրագրի շրջանակում գործակցության հնարավորությունները խորացնելու նպատակով:

2016թ. մայիսին Ի-Վի-էն գինու ակադեմիայի տնօրեն Զարուհի Մուրադյանը մասնակցել է Զարգացող երկրներից ներմուծման խթանման կենտրոնի (CBI) կազմակերպած աշխատաժողովին, որտեղ քննարկվել են հայաստանյան գինու արդյունաբերությանը ցուցաբերվելիք հետագա աջակցությանն առնչվող հարցեր:

2016թ. հունիսի 17-19-ին կայացած Հայկական տնտեսագիտական միության (ՀՏՄ) տարեկան համաժողովին զեկույցով հանդես են եկել Ագրոբիզնեսի մագիստրոսական ծրագրի ուսանող Հովհաննես Մնացականյանը՝ ,Հայաստանում ցորեն արտադրող փոքր տնտեսությունների արդյունավետության վրա ազդող գործոններըե և դեպարտամենտի շրջանավարտ Նարեկ Ավետիսյանը՝ ,Տնտեսության խոշորացման արդյունավետությունը Հայաստանի կաթնամթեքի ոլորտի օրինակովե թեմաներով: Դեպարտամենտի մագիստրոսական ծրագրի 2016թ. շրջանավարտ Գայանե Պետրոսյանը, երեք այլ երիտասարդ գիտնականների շարքում, արժանացել է Հայկական տնտեսագիտական միության գլխավոր մրցանակի՝ իր ,Հայաստանում գյուղատնտեսական կոոպերատիվների միջոցով հնդկաձավարի արտադրության իրագործելիության գնահատումե աշխատանքի համար, որը նա ներկայացրել էր ՀՏՄ ամենամյա գիտաժողովի ժամանակ: Զեկույցները ներկայացվել են անգլերենով:

Գիտաժողովի երկրորդ օրվա իրադարձությունները տեղի են ունեցել Ագրոբիզնեսի դեպարտամենտում, ,Գյուղատնտեսական տնտեսագիտությունե, ,Մակրոտնտեսագիտությունե և ,Ֆինանսներե թեմաների շրջանակում: ,Գյուղատնտեսական տնտեսագիտության թեմայով նիստերը համատեղ վարում էին ICARE-ը և Անցումային տնտեսություններում գյուղատնտեսության զարգացման Լայբնիցի ինստիտուտի (IAMO) փորձագետները: Գիտաժողովը հովանավորում էին Երևանի պետական համալսարանը, ICARE հիմնադրամը, Հայաստանի ամերիկյան համալսարանը և ՀՀ Կենտրոնական բանկը: Գիտաժողովին մասնակցել են դասախոսներ և հետազոտողներ Հայաստանից, Բելգիայից, Ֆրանսիայից, Վրաստանից, Գերմանիայից, Իտալիայից, Իսպանիայից, Միացյալ Թագավորությունից և Միացյալ Նահանգներից:

Ժողովուրդների զարգացման միջազգային կոմիտեի (CISP) ծրագրի շրջանակում դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը ս.թ. հունիսի 22-ին իրականացրեց գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման հեռանկարների վերաբերյալ դասընթաց Լոռու մարզի Արջուտ գյուղում՝ ներկայացնելով հարակայուն գյուղատնտեսության զարգացման գործում Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին ՀՀ օրենքի ընձեռած հնարավորությունները:

2016թ. հունիսին դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը և Ի-Վի-էն գինու ակադեմիայի ղեկավար Զարուհի Մուրադյանը Գերմանիայի միջազգային համագործակցության

ընկերության (GIZ) «Մասնավոր հատվածի զարգացում Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակում մասնակցել են Հայաստանում դուալ ուսուցման համակարգի ներդրման հնարավորություններին նվիրված քննարկմանը:

2016թ. նոյեմբերին դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը մասնակցել է Բրյուսելում կայացած AGRICISTRADE միջազգային հետազոտական ծրագրի ավարտական աշխատաժողովին:

2016թ. սեպտեմբերին ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը և Ագրոբիզնեսի դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը պաշտոնական այցով հյուրընկալվել են ԱՄՆ Վիրջինիա Թեք և Փենսիլվանիայի նահանգային համալսարաններում

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հաշվետու ժամանակաշրջանում դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը և (ICARE) հետազոտությունների գծով տնօրեն Աննա Երիցյանը գիտական զեկուցումներով հանդես են եկել միջազգային և տեղական մի շարք համաժողովների ժամանակ, հրատարակել իրենց աշխատությունները: Հոդվածները, մասնավորապես, վերաբերում են Հայաստանում գյուղատնտեսական մթերքների անտուրը խթանող քաղաքականությանը, Գյուղատնտեսական կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումներին, Հայաստանի գինու բիզնեսի օրինակով անցումային երկրներում ագրոբիզնեսի ոլորտի վրա արտաքին ուղղակի ներդրումների ազդեցությանը, ՀՀ-ում գինու բիզնեսի մրցունակության վերլուծությանը և այլն: Հետազոտական աշխատանքներին մասնակցել են նաև ՀՀ ագրոբիզնեսի ոլորտի ղեկավարներ և արտերկրի գործընկեր համալսարանների և այլ գիտակրթական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության հայաստանյան գրասենյակի ,Եվրոպական հարևանության գյուղատնտեսության և գյուղի զարգացմանե ծրագրի ֆինանսավորմամբ լույս է տեսել Վարդան Ուռուտյանի հեղինակած ,Գյուղատնտեսական կոոպերատիվներ. միասին աշխատելու օգուտն ու հմայքը գրքույկը և ,Կոոպերատիվ մարկետինգե տեղեկատվական թերթիկը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2016թ. մարտին պաշտոնական այցով հյուրընկալվել է ԱՄՆ Վիրջինիա Թեք համալսարանի ԻՆՆՈՎԵՅԹ Հայաստան ծրագրի ղեկավար Անջելա Նիլընը՝ ծրագրի ընթացքին ծանոթանալու նպատակով:

2016թ. հունիսին պաշտոնական այցով հյուրընկալվել է Տեխասի A&M համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքըլզը՝ Ագրոբիզնեսի դեպարտամենտի շրջանավարտների ավարտական արարողությանը մասնակցելու և դեպարտամենտի պրոֆեսորադասախոսական կազմի հետ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

2016թ. հունիսին պաշտոնական այցով հյուրընկալվել են Գայզենհայմի համալսարանի պրոֆեսոր, Գինու տնտեսագիտության ծրագրերի ղեկավար Յոն Հանֆը և նույն համալսարանի արտաքին կապերի համակարգող Սոնյա Թիլմանը՝ Ի-Վի-էն Գինու ակադեմիայի շրջանավարտների ավարտական արարողությանը մասնակցելու և դեպարտամենտի պրոֆեսորադասախոսական կազմի հետ խորհրդակցություններ անցկացնելու նպատակով:

2016թ. հունիսի 13-ին դեպարտամենտը և Գինու ակադեմիան հյուրընկալեցին իտալացի գինեգործների, գինու բիզնեսով զբաղվող մասնագետների և գինեգործության դասախոսների մեծ խմբի: Հյուրերը ծանոթացան դեպարտամենտի գործունեությանը, այցելեցին Գինու ակադեմիայի գինու քիմիայի լաբորատորիա և համտեսի սրահ, ինչպես նաև նրանց համար Հայաստանի գինեգործության պատմության և զարգացման հեռանկարների վերաբերյալ դասախոսություն կարդաց Ի-Վի-էն գինու ակադեմիայի համահիմնադիր Սեմինա Քոնսալթինգ ընկերության ղեկավար, գինեգործ Վահե Քուշգերյանը:

2016թ. հոկտեմբերի 17-ին դեպարտամենտը և Գինու ակադեմիան հյուրընկալեցին Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության Հարավարևելյան և Արևելյան Եվրոպայի և Հարավային Կովկասի վարչության պատասխանատու Յոհաննես Դոփֆելին, և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) հայաստանյան ծրագրի ղեկավար Աննե Կեմպային: Հյուրերը ծանոթացան ICARE/ԱՈՒԿ-ի և Ի-Վի-էն-ի կրթահետազոտական գործունեությանը և մասնավորապես Գինու ակադեմիայի նվաճումներին, որոնք հնարավոր են դարձել GIZ-ի և Գայզենհայմի համալսարանի աջակցությամբ:

2016թ. նոյեմբերին պաշտոնական այցով հյուրընկալվել է զարգացման խորհրդատու Դեյվիդ Քինգը: Այցի նպատակն էր ծանոթանալ հիմնադրամի գործունեությանը և հասկանալու հիմնադրամի հեռանկարային ծրագրերը և կարիքները: Վերոհիշյալ այցի ընթացքում պարոն Քինգին ուղեկցել է ԻՆՆՈՎԵՅԹ Հայաստան ծրագրի ղեկավար Անջելա Նիլընը: Պարոն Քինգը հյուրընկալվել էր նաև ԻՆՆՈՎԵՅԹ Հայաստան ծրագրի ընթացքին ծանոթանալու նպատակով:

2016թ. դեկտեմբերին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Վիրջինիա Թեք համալսարանի և ICARE հիմնադրամի միջև կնքված համագործակցության հուշագրի շրջանակում պաշտոնական այցով հյուրընկալվել է ԱՄՆ Վիրջինիա Թեք համալսարանի Փամփլին բիզնես քոլեջի միջազգային ծրագրերի տնօրեն Լենս Մաթեսոնը: Վերոհիշյալ այցի ընթացքում պարոն Մաթեսոնին ուղեկցել է ԻՆՆՈՎԵՅԹ Հայաստան ծրագրի ղեկավար Անջելա Նիլընը: Այցի նպատակն էր ծանոթանալ դեպարտամենտի գործունեությանը, ինչպես նաև մշակել ուսանողների փոխանակման ծրագրեր հետագա համագործակցության նպատակով: Նրանք նաև ճանաչողական այցեր կատարեցին համալսարանի և հիմնադրամի հետ գործացկող մի շարք ագրոբիզնեսի և հարակից ոլորտի ընկերություններ:

2016թ. դեկտեմբերին պաշտոնական այցով հյուրընկալվել են ԱՄՆ ԳԴ արտաքին գյուղատնտեսական ծառայության գյուղատնտեսական ծրագրերի համակարգող Քլեմեն Գեհլիարը և ԱՄՆ ԳԴ ազգային գյուղատնտեսական վիճակագրական ծառայության ավագ փորձագետ Մայքլ Ստայները՝ ԱՄՆ կառավարության օժանդակությամբ իրականացվող ծրագրերի ընթացքին ծանոթանալու նպատակով:

<u>ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

2016թ. մայիսի 6-ին տեղի ունեցավ Երևանի (Ի-Վի-էն) գինու ակադեմիայի գինու լաբորատորիայի և համտեսի սրահի պաշտոնական բացումը: Լաբորատորիան և համտեսի սրահը համապատասխանում են միջազգային չափորոշիչներին և իրենց ուսումնական բնույթով եզակի են երկրում: Գինու լաբորատորիայի և համտեսի սրահի բացման գործում ՀԱԱՀ-ին և ICARE հիմնադրամին ֆինանսատեխնիկական աջակցություն են ցուցաբերել Գերմանական միջազգային համագործակցության ընկերությունը (GIZ) և ամերիկահայ Ջուդի Սարյան և Վիկտոր Ջառուգյան ամուսինները:

2016թ. մայիսի 31-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանը համագործակցության փոխըմբռնման հուշագիր ստորագրեց Գերմանիայի Գայզենհայմի համալսարանի հետ: Հայկական կողմից հուշագիրը ստորագրեցին ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը և դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը, իսկ գերմանական կողմից՝ Գայզենհայմի համալսարանի նախագահ, պրոֆ. Հանս Շուլցի ստորագրությանն ավելացվեց այդ համալսարանի գինու տնտեսագիտության ծրագրի ղեկավար, պրոֆ. Յոն Հանֆի ստորագրությունը: Հուշագրի ստորագրման արարողության մասնակիցների թվում էին Գայզենհայմի համալսարանի արտաքին կապերի բաժնի ղեկավար Սոնյա Թիլմանը և Տեխասի էյ ընդ էմ համալսարանի պրոֆեսոր Ջոն Նիքըլզը:

2016թ. հոկտեմբերին ,Dasarant կրթական ծրագրի ղեկավար, Ագրոբիզնեսի դեպարտամենտի 2005թ. շրջանավարտ Սուրեն Ալոյանի նախաձեռնությամբ, դեպարտամենտում ստորագրվեց հուշագիր ,Dasarant կրթական ծրագրի, ICARE հիմնադրամի և ԱրմԱս ընկերության միջև: Ըստ այդմ, ICARE-ը կստեղծի գյուղատնտեսության և ագրոբիզնեսի վերաբերյալ ուսումնական բովանդակություն, որը Dasaran-ի հարթակի միջոցով հասանելի կդառնա հայաստանցի դպրոցականներին: Երեխաների կողմից կրթական տեղակատվության գործնական յուրացման հարցում էլ կաջակցի ԱրմԱս ընկերությունը՝ այդ նպատակին ծառայեցնելով իր խաղողի և պտղատու այգիները, գինու արտադրական կարողությունները և ԱրմԱս-ում առկա ագրոտուրիզմի և ուսումնափորձնական այլ հնարավորությունները:

2016թ. հոկտեմբերին դեպարտամենտում նշվեց ավանդույթ դարձած Ծնողների օրը, որը լավագույն հնարավորություն է ծնողների համար՝ ծանոթանալու կրթական այն միջավայրին, որտեղ ուսանում են իրենց զավակները, դասախոսների հետ քննարկելու երեխաների ապագա աշխատանքային կարիերայի հնարավորությունները:

2016թ. հոկտեմբերի 16-ին կազմակերպվեց դեպարտամենտի շրջանավարտների վերահավաք և գործարար ցանցաստեղծման միջոցառում, որը տեղի ունեցավ Գոլդեն Գրայփ ԱրմԱս գինեգործարանի խաղողի այգիներում: Միջոցառմանը մասնակցեցին դեպարտամենտի շրջանավարտներ, դասախոսներ և աշխատակազմի ներկայացուցիչներ: Կարևորելով մեր շրջանավարտների և ագրոբիզնեսի ոլորտի միջև կապերի ամրապնդումը, այսուհետ շրջանավարտների վերահավաքի մեր բոլոր միջոցառումները կլինեն գործարար ցանցաստեղծման ձևաչափով:

2016թ. սեպտեմբերին ՀԱԱՀ ռեկտոր Արշալույս Թարվերդյանը և դեպարտամենտի պետ Վարդան Ուռուտյանը Փենսիլվանիայի նահանգային համալսարանում փոխըմբռնման հուշագիր ստորագրեցին դեպարտամենտում Սննդի անվտանգության համակարգերի կառավարում կրթական ծրագիրը իրականացնելու համար: Հուշագիրը նախատեսում է նաև ուսումնական պլանների մշակում, ուսանողների ու դասախոսների փոխանակում, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում: Ծրագիրը դեպարտամենտում կմեկնարկի 2017թ. հունվարից: 2016թ. դեկտեմբերին համանման հուշագիր ստորագրվեց նաև ԱՄՆ Ֆրեզնոյի նահանգային համալսարանի հետ:

Նույն այցի շրջանակում Վիրջինիա Թեք համալսարանի նախագահի հետ հանդիպման ժամանակ քննարկվել է Ագրոբիզնեսի մագիստրոսական կրկնակի դիպլոմավորում իրականացնելու հնարավորությունները Վիրջինիա Թեք համալսարանի հետ համատեղ:

ԱՊԱԳԱ ԾՐԱԳՐԵՐ

- Սննդի անվտանգության համակարգերի կառավարում կրթական ծրագրի իրականացում Փենսիլվանիայի նահանգային և Վիրջինիա Թեք համալսարանների հետ համատեղ (մեկնարկը 2017թ. հունվարին):
- Ագրոբիզնեսի մագիստրոսական կրկնակի դիպլոմավորում իրականացնելու հնարավորությունների գնահատում Վիրջինիա Թեք համալսարանի հետ համատեղ:
- Օրգանական գյուղատնտեսության մագիստրոսական ծրագրի մշակում Վիեննայի Բնական ռեսուրսների և կյանքի գիտությունների համալսարանի (BOKU) հետ համատեղ:
- Երևանի գինու ակադեմիայի Գինու մանրէաբանական լաբորատորիայի ստեղծում: Գինու քիմիայի լաբորատորիայի հզորացում:
- <<Dasaran>> կրթական ծրագրի, ԱրմԱս ընկերության և ICARE հիմնադրամի միջև կնքված հուշագրի հիման վրա իրականացնել գյուղական շրջանների դպրոցականների գյուղատնտեսական գործնական կրթության և մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ:
- Ագրոբիզնես մասնագիտության Ագրոբիզնեսի և սննդի արդյունաբերության կառավարում կրթական ծրագրի վերանայում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան:

1.6.«ԱԳՐԱՐԱՅԻՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2016թ-ին «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում կատարվել է ընդունելություն հունիս և սեպտեմբեր ամիսներին:

2016 թ-ի հունվարի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել են 30 մագիստրանտներ, որոնցից 12՝ գերմանալեզու առաջին կուրսում, 1՝ հայալեզու առաջին կուրսում, 7՝ գերմանալեզու երկրորդ կուրսում և 1՝ հայալեզու երկրորդ կուրսում: 9 մագիստրանտների նկատմամբ եղել է ուսման պրոցեսի դադարեցում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ:

2016թ-ի դեկտեմբերի դրությամբ «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրում սովորել են 27 մագիստրանտներ, որոնցից 7՝ գերմանալեզու առաջին կուրսում, 3՝ հայալեզու առաջին կուրսում, 8՝ գերմանալեզու երկրորդ կուրսում և 1՝ հայալեզու երկրորդ կուրսում: 10 մագիստրանտների նկատմամբ եղել է ուսման պրոցեսի դադարեցում՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում պրակտիկա անցնելու և ուսանելու կապակցությամբ:

Պետ.պատվեր ուսուցման համակարգում փաստացի մագիստրանտների թիվը կազմել է 18:

ԱՄՋ-մագիստրոսական ծրագրում ուսուցումն ունի եռակողմ ուղղվածություն՝

1. Լսարանային դասաժամերի անցկացում,
2. Գիտական հետազոտություններ,
3. Տուտորիումներ և սեմինարներ:

Մագիստրանտների լսարանային ծանրաբեռնվածությունը շաբաթական չի գերազանցում 20 ժամը:

ԱՄՋ գերմանալեզու մագիստրոսական կուրսում հիմնականում դասավանդում են գերմաներենի գերազանց իմացությամբ Վայհենշտեֆանի անվան կիրառական գիտությունների համալսարանի շրջանավարտները (ովքեր պարբերաբար վերապատրաստվում են ՎԿԳՀ-ում ՀԱԱՀ-ի և ՎԿԳՀ-ի միջև համագործակցության շրջանակներում), իսկ հայալեզվում դասավանդում են և(ՎԿԳՀ-ի շրջանավարտները, և(ՀԱԱՀ-ի համապատասխան ամբիոնների դասախոսները:

ՀԱԱՀ ռեկտորի հրամանով ստեղծված ատեստացիոն հանձնաժողովը յուրաքանչյուր ուս. տարվա ընթացքում երկու անգամ ատեստավորում է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2016-2017 ուս. տարում մագիստրանտների ավարտական գործընթացը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել են պետական որակավորման հանձնաժողովներ, որոնց ներկայությամբ, սահմանված ժամանակացույցի համաձայն 8

մագիստրանտները (7 գերմանալեզու և 1 հայալեզու) հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

Միջազգային և միջբուհական համագործակցությունների շրջանակներում ԱՄՁ-ի լավագույն մագիստրանտներից 10–ը (որից 4՝ առաջին 4՝ երկրորդ կուրսերում և 2՝ երկարացրել են իրենց ուսումը մագիստրոսական աշխատանքները ավարտելու կապակցությամբ) շարունակում են իրենց ուսումը ՎԿԳՀ-ում, 6-ը անցկացրել են գյուղատնտեսական պրակտիկա ՎԿԳՀ-ի ծրագրի շրջանակներում, 1 մագիստրանտ անցկացրել է գյուղատնտեսական պրակտիկա LOԳO-կազմակերպությունում և 2 մագիստրանտ անցկացրել է գյուղատնտեսական պրակտիկա GeTec Solution ծրագրի շրջանակներում և վերադառնալով, շարունակում են իրենց ուսումը ՀԱԱՀ-ի ԱՄՁ-մագիստրոսական ծրագրում::

ԱՄՁ-մասնագիտության բոլոր մագիստրանտները գիտաարտադրական պրակտիկան անցնում են հանրապետության առաջատար ֆերմերային տնտեսություններում, հումքի վերամշակման ձեռնարկություններում: Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում նմանատիպ տնտեսություններում և ձեռնարկություններում անցած պրակտիկան ճանաչվում է վավեր՝ հիմք ընդունելով համագործակցության պայմանագրերը և մագիստրանտի վկայականը պրակտիկայի վերաբերյալ:

DAAD-գերմանական փորձի փոխանակման ծառայության նյութական աջակցությամբ տեխնիկապես կահավորվել 1-346 համակարգչային լսարանը և գույքային՝ 2-417 լսարանը:

2014 թվականից սկսվեց ՎԿԳՀ-ի հետ համագործակցող 12 բուհերի, այդ թվում նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի “Ագրարային մենեջմենթ” միջազգային մագիստրոսական ծրագրի ծրագրային հավատարմագրման գործընթացը: Այն իրականացվեց ACQUIN հավատարմագրող կազմակերպության կողմից և ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագիրը, արժանանալով բարձր գնահատականի, 2016թ. -ի սեպտեմբերի 27-ին ստացավ միջազգային հավատարմագրում, որը վավեր է մինչև 2018թ.-ի մարտի 31-ը:

Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի հետ համագործակցող 12 բուհեր, այդ թվում Հայաստանի ազգային ագրարայիյն համալսարանի <<Ագրարային մենեջմենթ>> միջազգային մագիստրոսական կրթական ծրագիրը ACQU I N հավատարմագրող կազմակերպության կողմից արժանանալով բարձր գնահատականի՝ 2016թ-ի սեպտեմբերի 27-ի ստացավ միջազգային հավատարմագրում:

Հավատարմագրման հավաստագրի հանձնման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ 2016թ-ի հոկտեմբերի 14-ին ՀԱԱՀ-ում ՎԿԳՀ-ի “Ագրարային մենեջմենթ” միջազգային մագիստրոսական ծրագրի համակարգող դոկտոր պրոֆեսոր Յոհանես Հոլցների կողմից:

2015թ. ՀԱԱՀ այցելած արտասահմանյան դասախոսների, ուսանողների և շրջանավարտների ցուցակ

Հ/հ	Անուն ազգանուն,	Երկիրը	Նպատակը	Ժամկետը
1	Քրիստիան Շուհ	Գերմանիա, Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան	Ուսանողների գիտելիքների քննում	29.02.2016-01.03.2016
2	Մաքսիմիլիան Գյոտց	Գերմանիա, Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան	սեմինար «Բիզնես մենեջմենթ» և «Գյուղ. արտ. էկոնոմիկա» առարկաներից	05.10.2016-25.10.2016
3	Արամ Արիստակեսյան Յոհաննես Հոլցներ	Գերմանիա, Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան	ՎԿԳՀ-ի կողմից միջազգային հավատարմագրման հավաստագրի հանձնման և 2015–2016թթ. շրջանավարտներին դիպլոմների շնորհման արարողություն	13.10.2016-15.10.2016

2015թ. ՀԱԱՀ-ի ուսանողների, դասախոսների, անձնակազմի արտասահմանյան գործուղումների ցուցակ

Հ/հ	Անուն ազգանուն,	Երկիրը	Նպատակը	Ժամկետը
1	2	3	4	5
1	Նորվարդյան Հասմիկ Հովհաննիսյան Հովհաննես Ոսկանյան Վերմիկ Մարտիրոսյան Անահիտ	Գերմանիա	Պրակտիկա, այնուհետև ուսում Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան MBA	26.03.2016-ից
2	Հալաջյան Գևորգ Մուրադյան Քրիստինե Շահբազյան Անահիտ Կարապետյան Հայկ Մարգարյան Գոռ Բայաթյան Անդրանիկ	Գերմանիա	Պրակտիկա Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարան MBA	26.03.2016-30.09.2016 09.04.2016 – 30.09.2016
3	Սիհրանյան Ալբերտ	Գերմանիա	Պրակտիկա ԼՕԳՕ կազմակերպություն	29.04.2016-28.10.2016
4	Սարգսյան Կիմա Գրիգորյան Արթուր	Գերմանիա	Պրակտիկա Գեթեք Սոլութիոնս կազմակերպություն	13.05.2016 – 31.10.2016
5	Շահբազյան Անժելա	Գերմանիա	Համակարգողների գիտաժողով, մասնագիտական սեմինար, մասնագետների վերապատրաստում և շրջանավարտների հանդիպում	13.11.2016 – 27.11.2016

ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» մագիստրոսական ծրագրի թվակազմի վերաբերյալ (2016թ. դեկտեմբեր 1-ի դրությամբ) առկա ուսուցում

Հ/հ	Մասնագիտություն	Գործող						Ընդամենը	
		պետ. պատվեր			վճարովի				
		ընդունե-լություն	1-ին	2-րդ	ընդունե-լություն	1-ին	2-րդ	պ.պ	վճ.
1	Ագրարային մենեջմենթ գերմանալեզու	0	4	5	0	3	3	**9**	**6**
2	Ագրարային մենեջմենթ հայալեզու	0	2	1	0	1	0	**3**	**1**
Ընդամենը		**0**	**6**	**6**	**0**	**4**	**3**	**12**	**7**

Your intention. Our focus.

ACQUIN
Akkreditierungs-,
Certifizierungs- und
Qualitätssicherungs-
Institut

ACQUIN e.V. · Brandenburger Straße 2 · 95448 Bayreuth

To the
Rector of the
Armenian National Agrarian University
Prof. Dr. Arshaluys P. Tarverdyan
Teryan 74, 0009 Yerevan
Armenia

28. September 2016

Accreditation Certificate IMA

Dear Rector Tarverdyan,

On behalf of the accreditation agency ACQUIN I would like express our compliments on the successful accreditation of the study program **"International Agricultural Management"**.

Please find attached the accreditation certificates in German and English.

With kind regards

Dr. Stefan Handke
Head of International Department

ACQUIN e.V.
Brandenburger Straße 2
95448 Bayreuth
Fon +49 (0) 9 21 / 530 390-50
Fax +49 (0) 9 21 / 530 390-51
sekr@acquin.org
www.acquin.org

VORSTANDSVORSITZENDER
Prof. Dr.-Ing. Gerd Zimmermann

GESCHÄFTSFÜHRER
Thomas Reil

BANKVERBINDUNG
Commerzbank Bayreuth
Maximilianstraße 38
95444 Bayreuth
IBAN DE08 7734 0076 0151 8406 00
BIC (S.W.I.F.T.-Code) COBADEFF

USt-IdNr. DE 229145966

Vereinsregister 1323,
Amtsgericht Bayreuth

HOCHSCHULE
WEIHENSTEPHAN-TRIESDORF
UNIVERSITY OF APPLIED SCIENCES

Hochschule Weihenstephan-Triesdorf | D-91746 Weidenbach

Prof. Dr. Arshaluys P. Tarverdyan
Armenian National Agrarian University, Yerevan
Teryan 74, 0009 Yerevan, Armenia

Triesdorf, den 30.09.2016

Akkreditierung IMA

Sehr geehrter Rektor Prof. Dr. Arshaluys P. Tarverdyan,

ich freue mich sehr, dass ich Ihnen mitteilen kann, dass die Akkreditierung des Internationalen Masterstudiengangs Agrarmanagement sehr erfolgreich war!

Der Studiengang wurde sowohl bei uns als auch bei Ihnen und auch allen anderen Partnerhochschulen mit einer Auflage und Empfehlungen akkreditiert!! Auch Ihnen: Herzlichen Glückwunsch!!

Die Akkreditierung ist ein wichtiger Meilenstein auf unserem gemeinsamen Weg die Hochschulausbildung weiter zu entwickeln und Fachkräfte für unsere Landwirtschaft auszubilden.

Als nächste Schritte sehen wir wie bereits angesprochen das Thema Doppeldiplom und Forschungsnetz.

Wir würden den Anlass gerne nehmen um gemeinsam festlich zu begehen. Als Termin bietet sich aus unserer Sicht Donnerstag der 24. November an. Am Abend findet unser traditioneller Internationale Abend statt. Am Freitagvormittag könnten wir dann die weiteren Schritte besprechen.

Für die Veranstaltung würden wir gerne auch Vertreter Ihrer Botschaft in Deutschland und Vertreter unserer Ministerien und des DAAD einladen.

Bitte teilen Sie uns bis 07.10.2016 mit, ob Sie am 24.11. 2016 zur Feier der gemeinsamen Akkreditierung kommen können.

Noch einmal herzlichen Glückwunsch an Ihre Universität und Ihre Beteiligten Mitarbeiter! Die Arbeit hat sich gelohnt!

Mit besten Grüßen,

Ihr Ralf Schlauderer

HOCHSCHULE
WEIHENSTEPHAN-TRIESDORF
UNIVERSITY OF APPLIED SCIENCES
Steingruberstraße 2 | 91746 Weidenbach
Tel.: +49 (0)9826 654-0 | Fax: 654-4010
www.hswt.de

Fakultät: Landwirtschaft
Internationaler
Masterstudiengang
Agrarmanagement

Dekan
Prof. Dr.Dr. h.c.mult.
Ralf Schlauderer
+49 9826 654-218
+49 9826 654-4218
ralf.schlauderer@hswt.de

Ihre Nachricht vom

Ihr Zeichen

Unser Zeichen
<zeichen>

Hochschule
Weihenstephan-Triesdorf
Steingruberstr. 2
91746 Weidenbach
www.hswt.de

ACCREDITATION, CERTIFICATION AND
QUALITY ASSURANCE INSTITUTE

ACQUIN

AWARDS THE SEAL OF APPROVAL

akkreditiert durch

ACQUIN

Akkreditierungs-, Zertifizierungs- und Qualitätssicherungsinstitut

FOR THE STUDY PROGRAMME

INTERNATIONAL AGRICULTURAL MANAGEMENT

- MASTER OF BUSINESS ADMINISTRATION -

AT THE ARMENIAN NATIONAL AGRARIAN UNIVERSITY, YEREVAN

THE ACCREDITATION IS VALID UNTIL MARCH 31ST, 2018

BAYREUTH, SEPTEMBER 27TH, 2016

PROF. DR.-ING GERD ZIMMERMANN
CHAIRMAN OF THE BOARD

ACQUIN is member of the European Quality Assurance Register for Higher Education (EQAR) since 2009

DAS AKKREDITIERUNGS-, CERTIFIZIERUNGS- UND QUALITÄTSSICHERUNGS-INSTITUT

ACQUIN

VERLEIHT DAS GÜTESIEGEL

akkreditiert durch

ACQUIN

Akkreditierungs-, Certifizierungs- und Qualitätssicherungsinstitut

FÜR DEN STUDIENGANG

INTERNATIONALER MASTERSTUDIENGANG AGRARMANAGEMENT

- MASTER OF BUSINESS ADMINISTRATION -

AN DER NATIONALEN ARMENISCHEN AGRARUNIVERSITÄT
ERIWAN, ARMENIEN

DIE AKKREDITIERUNG GILT BIS ZUM 31. MÄRZ 2018.

BAYREUTH, 27. SEPTEMBER 2016

PROF. DR.-ING. GERD ZIMMERMANN
VORSTANDSVORSITZENDER

ACQUIN E.V. IST SEIT APRIL 2009 IM EUROPEAN QUALITY ASSURANCE REGISTER FOR HIGHER EDUCATION GELISTET.

1.7.ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2016 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԱԱՀ Մագիստրատուրայում 7 որակավորումների 36 մասնագիտություններում սովորել են 380 մագիստրանտներ, որոնցից 99-ը հեռակա ուսուցմամբ, 264-ը ցերեկային ուսուցման մագիստրատուրայում, 14-ը գտնվում են տարկետման, իսկ 2-ը՝ գործուղման մեջ: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 208, իսկ վճարովի համակարգում 172:

Մագիստրատուրայում ուսուցումն ունի երկկողմանի ուղղվածություն՝

1. Լսարանային դասաժամերի (դասախոսությունների, գործնական և լաբարատոր պարապմունքների) անցկացում:
2. Գիտական հետազոտություններ (մագիստրոսական ատենախոսության պատրաստում):

Մագիստրանտների լսարանային բեռնվածությունը շաբաթական չի գերազանցում 20 ժամը:

Մագիստրատուրայի բաժնի կողմից կատարվում է ուսումնական գործընթացի անընդհատության և հաճախումների համակարգված ստուգում:

ՀԱԱՀ Մագիստրատուրայում դասավանդում են 155 դասախոսներ, որոնցից 95-ը գիտությունների թեկնածու են, 37-ը՝ գիտությունների դոկտորներ:

Բոլոր մագիստրանտների գիտական ղեկավարները ունեն գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտ. աստիճան և դոցենտի կամ պրոֆեսորի կոչում:

2015-2016 ուս. տարվա ընթացքում ՀԱԱՀ Ռեկտորի հրամանով ստեղծված ատեստացիոն հանձնաժողովը 2 անգամ ատեստավորել է մագիստրանտների գիտական գործունեությունը:

2015-2016 ուս. տարվա արդյունքներով առկա մագիստրանտները անցել են դրական ատեստավորում և թույլատրվել է նրանց շարունակելու գիտ. աշխատանքը և մասնակցելու քննաշրջաններին: Ըստ քննաշրջանների արդյունքների 1-ին և 2-րդ կուրսերում սովորող մագիստրանտների 85 %-ը ստացել են «գերազանց» գնահատականներ:

Մագիստրանտների ավարտական գործընթացը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով ստեղծվել են Պետական Որակավորման Հանձնաժողովներ, որոնց ներկայությամբ սահմանված ժամանակացույցի համաձայն մագիստրանտները հրապարակայնորեն պաշտպանել են իրենց մագիստրոսական ատենախոսությունները:

2015-2016 ուս. տարում ՀԱԱՀ մագիստրատուրան ավարտել է 7 մասնագիտական որակավորումների 36 մասնագիտությունների 178 մագիստրոսներ՝ 43-ը հեռակա ուս համակարգի մագիստրանտներ, 135 ցերեկային ուս համակարգի մագիստրանտներ , որոնցից 65-ը Պետական որակավորման հանձնաժողովի որոշմամբ ստացել են գերազանցության դիպլոմներ:

2016-2017 ուս. տարում ՀԱԱՀ Մագիստրատուրա ընդունվել են 141 մագիստրանտներ, որոնցից պետ.պատվեր համակարգում 84, իսկ 57-ը վճարովի ուսուցման համակարգում:

2016-2017 ուս. տարում հեռակա ուսուցմամբ ՀԱԱՀ Մագիստրատուրա ընդունվելու նպատակով դիմել են 34 դիմորդներ:

2010-2011 ուս. տարվանից ՀԱԱՀ Մագիստրատուրայում գործում է Ագրոբիզնես դեպարտամենտի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» մասնագիտությամբ անգլերեն լեզվով միջազգային մագիստրոսական ուսուցում, որտեղ ուսումնառությունը կազմակերպվում է ՀԱԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանների կողմից հաստատված ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով: 40 մագիստրանտներ սովորում են նշված ծրագրով, որից 1-ին կուրսում 23, իսկ 2-րդ կուրսում՝17 մագիստրանտներ:

Շրջանավարտների հետ Մագիստրատուրայի բաժնի մշտական կապը ցույց է տալիս, որ ՀԱԱՀ Մագիստրատուրայի շրջանավարտների գերակշռող մասը աշխատանքի են անցել գյուղատնտեսության և հումքի վերամշակման ոլորտի առաջատար ձեռնարկություններում, բանկային համակարգում, ինչպես նաև մրցութային կարգով աշխատանքի են անցել պետ. ծառայության համակարգ:

Միջազգային և միջբուհական փոխանակային ծրագրերով լավագույն մագիստրանտները իրենց ուսումը, կարճաժամկետ կամ երկարաժամկետ, շարունակել և շարունակում են Տեխասի, Ֆրեզնոյի, Վաշինգտոնի (ԱՄՆ) համալսարաններում, «Տեմպուս» ծրագրի շրջանակներում՝ Հոլանդիայի և Գերմանիայի համալսարաններում, Հունաստանում, Գերմանիայի Վայնշտեֆանի համալսարանում:

Ուսանողների փոխանակային ծրագրերով ՀԱԱՀ Մագիստրատուրան ավարտել են Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաև նախատեսվում է այլ օտարերկյա քաղաքացիների ուսուցման կազմակերպումը ՀԱԱՀ Մագիստրատուրայում:

2011-2012 ուս. տարվանից TEMPUS միջազգային կրթական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ Մագիստրատուրայում իրականացվում է ուսուցում «Կիրառական կենսաբանություն» մագիստրոսական ծրագրով՝ «Գյուղատնտեսական կենսատեխնոլոգիա», «Բնապահպանական կենսատեխնոլոգիա», «Սննդի կենսատեխնոլոգիա» և «Առողջապահական կենսատեխնոլոգիա» մասնագիտացումներով:

Մագիստրանտների պրակտիկ գործունեության կազմակերպումը հանդիսանում է ուսումնական պրոցեսի կարևորագույն բաղադրիչներից մեկը, որը իրականացվում է գիտա-արտադրական և գիտա-մանկավարժական պրակտիկաների ձևով՝ Հանրապետության առաջատար ֆերմերային տնտեսությունների, հումքի վերամշակող ձեռնարկությունների, բանկային և հարկային դաշտի կազմակերպությունների հետ սերտ համագործակցության արդյունքում, որն էլ նպաստում է ՀԱԱՀ մագիստրատուրայի շրջանավարտների հետագա աշխատանքային գործունեությունը կազմակերպելուն:

Մագիստրատուրայում ուսումնագիտական գործընթացի կազմակերպման համար ստեղծված է նյութատեխնիկական և ինֆորմացիոն նոր տեխնոլոգիաներով հագեցված պայմաններ, ակտիվորեն օգտագործվում են ՀԱԱՀ Համակարգչային կենտրոնները, Լեզուների կենտրոնը և Գրադարանային ֆոնդը: DAAD-ի կողմից 2010 թ. աշնանը հաստատված ֆինանսական աջակցության շնորհիվ ՀԱԱՀ-ում կահավորվել են ժամանակակից տեխնիկական պահանջներին բավարարող 2 լսարան, իսկ TEMPUS-ի «Կիրառական կենսաբանություն» ծրագրի շրջանակներում կահավորվել է կենսատեխնոլոգիայի 1 լաբորատորիա: Գերմանական միջազգային համագործակցության (GTZ) կազմակերպության հետ համագործակցության ընթացքում ՀԱԱՀ գրադարանային ֆոնդը թարմացվել է ժամանակակից նոր գրականությամբ և նախատեսվում է ՀԱԱՀ Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում գործնական պարապունքների համար նախատեսված լսարանների կահավորում:

2013-2014 ուս տարվանից ՀԱԱՀ Մագիստրատուրայում բոլոր մասնագիտություններով ուսումնառությունը իրականացվում է կրեդիտային համակարգի պահանջներին համապատասխան ստեղծված անցումային շրջանի ուսումնական պլաններով, համաձայն որի ցերեկային ուսուցման համակարգում Մագիստրատուրայում ուսուցման տևողությունը կազմում է 2 տարի, իսկ հեռակա ուսուցման դեպքում 2,5 տարի:

Մագիստրատուրայում ամբողջ ուսումնառության համար նախատեսված է 120 կրեդիտ:

2013-2014 ուս տարում Մագիստրատուրայի առաջին կուրսն ավարտած մագիստրանտերի համար առաջին անգամ իրականացվել է անվճար – վճարովի ուս. համակարգերում շրջափոխում: Ըստ շրջափոխման արդյուքների ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերելու հետևանքով վճարովի ուս. համակարգից անվճար ուս. համակարգ է տեղափոխվել 1 մագիստրանտ և փոխարենը թվով 2-ը զիջել են իրենց անվճար տեղերը:

2016-2017 ուս.տարվանից ՀԱԱՀ Մագիստրատուրայում ուսուցումը իրականացվում է առկա համակարգում 1 տարի, իսկ հեռակա ուս.համակարգում՝ 1.5 տարի տևողությամբ՝ 16 որակավորումների 41 կրթական ծրագրերով: Բոլոր մասնագիտությունների ուսումնական պլաններում ընդգրկված առարկաների համար նոր չափորոշիչներին համապատասխան մշակվել են առարկայական ծրագրեր, որոնք կարծիքների և գրախոսման նպատակով ներկայացվել են այլ բուհերի համապատասխան գիտական գործունեությամբ զբաղվող անձանց:

ՀԱԱՀ Մագիստրատուրայում հաշվետու տարում զեղչվել է 28 մագիստրանտների վարձավճարներ, իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անվճար ուսուցման արտոնությունից օգտվող մագիստրանտների թվաքանակը կազմում է 3 հոգի, որոնցից 1-ը՝ ցերեկային, 2-ը հեռակա ուսուցման համակարգերում:

2017 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀԱԱՀ Մագիստրատուրայում 16 որակավորումների 41 կրթական ծրագրերով սովորում են 312 մագիստրանտներ, որոնցից 47-ը հեռակա ուսուցմամբ, 248-ը ցերեկային ուսուցման մագիստրատուրայում, 10-ը գտնվում են տարկետման, իսկ 7-ը ՝ գործուղման մեջ: Պետ.պատվերով ուսուցման համակարգում մագիստրանտների թիվը կազմել է 177, իսկ վճարովի համակարգում՝ 135:

01.01.2016 - 01.01 2017թթ ժամանակահատվածում մագիստրանտների շարժը ըստ եռամսյակների ներկայացվում է համապատասխան աղյուսակներով (աղ. 13):

Աղյուսակ 13

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	անվճար	վճ.
01.01.2016թ. դրությամբ	208	172
Ընդունված	-	14
Վերականգնվել են	-	2
Գործուղում , տարկետում	1գ+7տ	2գ +8տ
Տարկետում բանակ	4	1
Շրջանավարտներ	-	37
Հեռացվել են		4
<Տեղափոխվել է վճ. ուս. համ>պ լ բու հից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ.-ի ց	-	-
Տեղափոխվել է պետ.պատվեր -ից վճ. ուս. համ	-	-
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը	**208**	**147**
01. 04. 2016թ. դրությամբ		

ՄԱԳԻՍՏՐԱՆՏՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԻՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մագիստրանտների թիվը	ՑԵՐԵԿԱՅԻՆ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ	
	անվճար	վճ.
01.10.2016թ. դրությամբ	185	139
Ընդունված	-	8
Վերականգնվել են	-	-
Գործուղում , տարկետում	3տ+3գ	7տ+4գ
Տարկետում բանակ	2	-
Շրջանավարտներ	-	-
Հեռացվել են	7	13
<Տեղափոխվել է վճ. ուս. համ>պ լ բու հից	-	-
Տեղափոխվել է վճ. ուս. համ.-ի ց	-	0
Տեղափոխվել է պետ.պատվեր -ից վճ. ուս. համ	1	1
Նախապատրաստական	-	-
Մագիստրանտների թիվը		
01.01.2017թ. դրությամբ	**177,որից 3տ+3գ**	**135,որից 7տ+4գ**

1.8.ՀԱԱՀ-ի Ա.Ե. ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՔՈԼԵՋ

ՀԱԱՀ-ի Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջում գործում է առկա ձևը:

Առկա ուսուցման համակարգում 2015-2016 ուստարվա 1-ին կիսամյակում սովորել են 475 ուսանողներ (աղյուսակ 14):

ՀԱԱՀ-ի Ա. Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի սովորողների շարժը (01.01. 2016թ առ 01. 01. 2017թ):

Աղյուսակ 14

N	Ցուցանիշներ	Ցերեկային ուսուցում	
1	Ուսանողների թվաքանակը առ 01.01.2016թ.	ընդ.	475
		որից վճ.	338
2	Ուսանողների թվաքանակը առ 01.01.2017թ.	ընդ.	536
		որից վճ.	203
3	Շրջանավարտների թվաքանակը տարվա ընթացքում	ընդ.	172
		որից վճ.	139
4	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությամբ	ընդ.	2
		որից վճ.	2
5	Ուսանողների ընդունելությունը տարվա ընթացքում հիմնական ընդհանուր կրթությամբ (9-րդ դաս. հիմքով)	ընդ.	194
		որից վճ.	46
6	Հեռացումներ	ընդ.	71
		որից վճ.	44
7	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.16թ., որից զին. ծառ. կապակցությամբ	ընդ.	38
		որից վճ.	37
8	Գտնվում են ակադեմիական արձակուրդում առ 01.01.17թ., որից զին. ծառ. կապակցությամբ	ընդ.	22
		որից վճ.	19

9	Օգտվել են վարձավճարի զեղչից	15-16 ուս.տ II կիս.	16
		16-17 ուս.տ I կիս.	12
10	Ազատվել են վարձավճ. օրենսդ. սահմ. կարգ.	վճ. համ.	11
11	Գերազանց ուսանողների քանակը	ընդ.	43
		որից վճ.	1
12	Կրթաթոշակ ստացողներ	ընդ.	242

2015-2016 ուստարում քոլեջում դասավանդվող 45 ամբիոնների ուսումական ծանրաբեռնվածությունը կազմել է 42525 ժամ:

Առկա ուսուցման համակարգից 22 ուսանողների ՀՀ ազգային բանակ մեկնելու կապակցությամբ ձևակերպվել է տարկետում, 18 ուսանողներ առկա ուսուցման համակարգից վերադարձել են ակադեմիական արձակուրդից:

Պետական ավարտական քննություններին և դիպլոմային նախագծերի պաշտպանությանը թույլատրված 173 ուսանողներից վերոհիշյալին մասնակցեցին 172-ը:

Լավագույն ցուցանիշներով առանձնացավ առկա ուսուցման «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն» մասնագիտության 4-րդ կուրսը, որտեղ 11 շրջանավարտներից առաջին համալիր պետական ավարտական քննությանը «5» գնահատական ստացան 6 ուսանողներ, չորսը՝ «4», միջին բալը կազմեց 4,5 միավոր,առաջադիմությունը՝ 100%, երկրորդ համալիր պետական ավարտական քննությանը «5» գնահատական ստացան7 ուսանողներ, չորսը՝ ՝ «4», միջին բալը կազմեց 4,6 միավոր, առաջադիմությունը 100%:

Քոլեջի 172 շրջանավարտներից առկա ուսուցման տասնյոթ ուսանողներ արժանացել են գերազանցության դիպլոմների:

1.9.ՀԱԱՀ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2015-2016 ուստարում վարժարանում գործել են երեք 10-րդ (43 աշակերտ), չորս 11-րդ (69 աշակերտ) և վեց 12-րդ (107 աշակերտ), ընդամենը՝ 219 աշակերտ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին բոլոր դասարանների աշակերտները հաճախել են համալսարանի ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության ամբիոններ, կատարել մի շարք ծրագրային լաբորատոր փորձեր և ստացել մասնագիտական կողմնորոշում:

Վարժարանում հաճախակի կազմակերպվել են ռազմահայրենասիրական միջոցառում-ներ, որտեղ ներկա են եղել զինվորական զորամասերի սպաներ, որոնք ներկայացրել են զինվորական զորամասերի ծառայության վիճակը: Կազմակերպվել է այցելություն Երևան քաղաքի ռազմական զորամաս վարժարանի 10 և 11-րդ դասարանի աշակերտների համար:

Վարժարանի 12-րդ դասարանների համար հաճախակի կազմակերպվել են մասնագիտական կողմնորոշմանը նվիրված հանդիպումներ: Աշակերտներն այցելել են Ագրոբիզնես ուսումնական կենտրոն: Հանդիպումներ են եղել անասնաբուծականի դեկան Ա.Վարդանյանի, ագրոնոմիականի դեկան Գ.Սանթրոսյանի և տնտեսագիտականի դեկան է.Ղազարյանի հետ: Նրանք ներկայացրել են համալսարանի մի շարք առավելություններ համեմատած այլ բուհերի հետ:

Վարժարանի տնօրինության կողմից նույնպես հաճախակի կազմակերպվել են հանդիպումներ 12-րդ դասարանցիների հետ՝ մասնագիտական կողմնորոշման նպատակով:

2015-2016 ուստարում 120-200 ժամ բացակայություն ունեցող աշակերտներ չեն եղել: ԿԳՆ տեսչության կողմից կատարված ստուգումների արդյունքում վարժարանում գրանցվել են 93 % հաճախումներ:

2015-2016 ուսումնական տարում կազմակերպվել և անցկացվել են 10-11-րդ դասարանների փոխադրական քննություններ՝ «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» առարկաներից: 10-րդ դասարանում «Մաթեմատիկա» առարկայից վերաքննության են մնացել 53%-ը (23 աշակերտ), իսկ 11-րդ դասարանում՝ 44%-ը (31 աշակերտ):

2015-2016 ուստարում վարժարանն ավարտել են 107 աշակերտներ, և բոլորը երաշխավորվել են մասնակցելու պետական ավարտական և միասնական քննություններին: Միասնական քննություններից անբավարար գնահատական են ստացել 2 աշակերտ (մեկը՝ մաթեմատիկայից, մյուսը՝ անգլերենից), որոնք հուլիսի 7-ին վերահանձնել են այդ քննությունները և ստացել ատեստատ:

Ագրարային համալսարանի տարբեր ֆակուլտետներ է ընդունվել ավարտած աշա-կերտների 86%-ը:

2016-2017 ուստարում վարժարանում գործել են 14 դասարաններ՝ թվով 7 10-րդ դասարան (աշակերտների թիվը 119), 3 11-րդ դասարան (աշակերտների թիվը 44) և 4 12-րդ դասարան (աշակերտների թիվը 44), ընդամենը 237 աշակերտ:

2016 թվականի օգոստոսի 30-ին վարժարանում կայացել է մանկավարժական խորհրդի առաջին նիստը, որտեղ հաստատվել է ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանը, ուսումնական պլանը, դասաբաշխումը և դասարանների ըստ դասղեկների բաշխումը:

Սեպտեմբերի 1-ին վարժարանում իրականացվել է գիտելիքի օրվան նվիրված ցերեկույթ և մասնակցություն ՀԱԱՀ-ի նոր ուսումնական տարվա ողջույնի արարողությանը: 10-րդ դասարանի աշակարտները մասնակցել են նաև Վիկտոր Համբարձումյանի արձանի մոտ աշակերտական երդման արարողությանը:

Սեպտեմբերի 2-ին կազմակերպվել է 10 –րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգում մաթեմատիկա առարկայից, որից պարզվել է, որ աշակերտների միայն 20%-ն ունի մաթեմատիկա առարկայից գիտելիքներ:

Վիկտոր Համբարձումյանի 108 ամյակի առթիվ վարժարանում սեպտեմբերի 19-ին կազմակերպվել է ցերեկույթ՝ կինոդիտում:

Սեպտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում բոլոր դասարաններում կազմակերպվել են ծնողական ժողովներ, որոնց ժամանակ ընտրվել են ծնողական կոմիտեի և աշակերտական կոմիտեի նախագահներ:

Հոկտեմբեր ամսին կազմակերպվել է ուսուցչի օրվան նվիրված միջոցառում:

Հոկտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում ՀԱԱՀ մաթեմատիկայի ամբիոնի կողմից կազմակերպվել է 10-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգում, որի արդյունքում մոտ 30% -ը ստացել են դրական գնահատականներ:

Վարժարանի ագրարային հոսքի դասարանների աշակերտների համար կազմակերպվել է այցելություն ՀԱԱՀ –ի կենդանաբանակն թանգարան, ինչպես նաև 12-րդ դասարանի ագրարային հոսքում կազմակերպվել է բաց դաս կենսաբանություն առարկայից՝ անգլերեն լեզվով(ուսուցչուհի Ռ. Ասատրյան):

Ագրարային հոսքի դասարանի աշակերտների համար կազմակերպվել են նաև այցելություններ ՀԱԱՀ քիմիայի և կենսաբանության լաբորատորիաներ, որոնց ժամանակ աշակարտները ներկա են գտնվել տարբեր լաբորատոր փորձերի անցկացմանը:

Թվով 5 աշակերտներ մասնակցել են ԱՅԲ-ում կազմակերպված քիմիայի համամիութենական մրցույթին:

Վարժարանի լավ առաջադիմություն ունեցող աշակերտներին խրախուսելու նպատակով կազմակերպվել են այցելություններ նախագահի նստավայր և ՄԱԿ-ի գրասենյակ, ինչպես նաև Ագրոբիզնես ուսումնական կենտրոն:

12-րդ դասարանում մասնագիտական կողմնորոշում տալու նպատակով վարժարանի տնօրեն Սարգսյանը հաճախակի կազմակերպել է բաց քննարկումներ աշակերտների հետ, որտեղ ներկայացրել է ՀԱԱՀ-ի մասնագիտությունների առավելությունները և ուսուցման օգտակարությունը արտերկրում ուսումը շարունակելու նպատակով:

2016 թվականի հոկտեմբերի 23-ին կայացել է վարժարանի հերթական մանկավարժական խորհրդի նիստը, որտեղ քննարկվել են աշակերտների առաջադիմության և բացակայության հարցերը:

Վարժարանում 2016-2017 ուստարում յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը կազմակերպվել է բաց դռների օր, որի ժամանակ ծնողները հնարավորություն են ունեցել հանդիպել ուսուցիչների և տնօրինության հետ՝ քննարկելու երկուստեք հուզող հարցերը:

Համալսարանի հանրակրթական առարկաների ամբիոնի վարիչներն հաճախակի այցելել են վարժարան և կազմակերպել դասալսումներ: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ամբիոնի վարիչներն կազմակերպել են օլիմպիադաներ բոլոր առարկաներից:

2016թ.-ի դեկտեմբերի 23-ին կայացել է վարժարանի հերթական մանկավարժական խորհրդի նիստը, որտեղ քննարկվել են վարժարանի առաջադիմությանը և հաճախումներին վերաբերվող հարցերը, ինչպես նաև 2-րդ կիսամյակում կայանալիք ավարտական և միասնական քննությունների նախապատրաստական աշխատանքները:

Վարժարանում հաճախակի կազմակերպվել են կոլեկտիվի ընդհանուր ժողովներ, որտեղ քննարկվել են կարգապահական և առաջադիմությանը վերաբերող հարցեր:

Պետք է նշել, որ վարժարանում դեռևս առկա է ուսումնադաստիարակչական աշխատանքները կատարելագործելու անհրաժեշտություն, հատկապես ուսուցման որակի բարձրացման և ուսման հանդեպ աշակերտների հետաքրքրության ավելացման հարցերում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ

2.1.ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի արդյունավետ գործունեությունը պայմանավորված է կրթական ծրագրերով, ուսանողների թվաքանակով և տարեկան շարժով: Մասնաճյուղում ուսումնական գործընթացը պլանավորվել և կազմակերպվել են սահմանված ժամկետներում՝ ըստ ուսումնական պլանների և տարեկան աշխատանքային ժամանակացույցի:

Մասնաճյուղի դասախոսական կազմը բաղկացած է 85 հիմնական աշխատողներից, որոնցից 2-ը՝ պրոֆեսոր, 4-ը՝ դոկտոր, 13-ը գիտությունների թեկնածու, որից 11-ը՝ դոցենտ, մյուսները աշխատում են ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի տարակարգերով: Ժամավճարային հիմունքներով հրավիրվել է 13 դասախոս, որոնցից 3-ը՝ գիտությունների թեկնածու, 3-ը դոցենտ:

Մայր բուհի աջակցությամբ, շարունակում ենք որակյալ մասնագետներով համալրել մասնաճյուղի դասախոսական կազմը: ՀԱԱՀ-ի համապատասխան ամբիոններում ձևակերպված մասնաճյուղի 36 հայցորդներիկողմից հրատարակվել են տասնյակ գիտական հոդվածներ, ոմանք հանձնել են թեկնածուական մինիմումները և պատրաստվում են պաշտպանել ատենախոսությունը: Արդեն իսկ 8 հայցորդ պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը:

Մասնաճյուղի դասախոսների կողմից միայն 2015-2016թթ.-ի ընթացքում հրատարակվել են 50-ից ավելի գիտական աշխատություններ, այդ թվում՝ գրքեր, մեթոդական ձեռնարկներ և մենագրություններ: Մասնաճյուղի մասնագետները համապատասխան խորհրդատվություններ են իրականացնում ԼՂՀ կառավարության կողմից կազմակերպված գիտաարտադրական խորհրդակցություններում, մի խումբ դասախոսներ ընդգրկված են Արցախի գիտական կենտրոնում, ղեկավարում են տեղում իրականացվող գիտական թեմաներ:

Ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար նշված ժամանակաշրջանում անց է կացվել գիտամեթոդական խորհրդի 11 և տնօրենության խորհրդի 15 նիստեր, որոնցում համապատասխանաբար քննարկվել են տարաբնույթ 52 և 26 հարցեր, այդ թվում 48-ը կամ 61,5 %-ը՝ ուսումնագիտական գործընթացին վերաբերվող:

Տնօրենության և գիտամեթոդական խորհուրդների նիստերում պարբերաբար քննարկվել և ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ մասնաճյուղում ուսումնական գործընթացի պատշաճ մակարդակը ապահովելու ուղղությամբ: Որոշում է կայացվել նաև 2015-2016 ուստարվա 22 (4 ՄՄԿՕԿ և 18 բակալավր), 2016-2017 ուստարվա (6 ՄՄԿՕԿ և 16 բակալավր) սոցիալապես անապահով ուսանողների նկատմամբ 25%-ի չափով ուսման վճարի զեղչ կատարել:

Մասնաճյուղում գործում է բարձրագույն կրթության երկաստիճան ուսուցման համակարգ՝ բակալավրիատ և մագիստրատուրա, ունի նաև միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոն:

Ուսումնական գործընթացը իրականացվում է երկու ֆակուլտետների՝ ագրարային տնտեսագիտության («ԱՊՀ էկոնոմիկայի, ագրոբիզնեսի, հաշվապահական հաշվառման և աուդիտ», «Հումանիտար առարկաների, ֆիզիկական կուլտուրայի և ՆԶՊ», «Մաթեմատիկայի և ինֆորմատիկա» ամբիոններով) ու ագրոկենսաբանական, տեխնոլոգիական և ճարտարագիտական, («Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծություն», «Ագրոնոմիայի և ագրոէկոլոգիա», «Գյուղմեքենայացման, տրանսպորտային փոխադրումների, տեսական մեխանիկայի և ֆիզիկա», «Հողաշինարարության, հողային կադաստրի, պարենամթերքների տեխնոլոգիայի և ընդհանուր քիմիա» ամբիոններով) միջոցով:

2015-2016 ուստարվա ծանրաբեռնվածությունը մասնաճյուղում կազմել է 104247 ժամ, որից ագրարային տնտեսագիտության ֆակուլտետում՝ 52299 ժամ, ագրոկենսաբանական, տեխնոլոգիական և ճարտարագիտական ֆակուլտետում՝ 51948 ժամ: 2016-2017 ուստարվա ծանրաբեռնվածությունը կազմել է 78695 ժամ, որից ագրարային տնտեսագիտության ֆակուլտետում՝ 35564 ժամ, ագրոկենսաբանական, տեխնոլոգիական և ճարտարագիտական ֆակուլտետում՝ 43331 ժամ:

2016թ. սեպտեմբերի 01-ի դրությամբ մասնաճյուղում ուսանողների թիվը կազմել է 1097, (694-ը կամ 63,3%-ը վճարովի համակարգում), որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգում՝ 333 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 493, ՄՄԿՕԿ-ի առկա ուսուցման համակարգում 237 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 13, մագիստրատուրայում առկա ուսուցման համակարգում 21 մագիստրանտ:

Բակալավրիատի առկա ուսուցման համակարգում հեռացվել է 14, զինծառայության մեկնել՝ 2, հեռակա ուսուցման համակարգ է տեղափոխվել2 ուսանող: Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում զինծառայությունից վերադարձել՝ 12, հեռացվել՝ 2, տեղափոխվել են առկայից հեռակա՝ 2 ուսանող:

ՄՄԿԾԿ հեռակա ուսուցման համակարգում զինծառայությունից վերադարձելէ 13 ուսանող:

2016-2017 ուստարում թողարկվել է 348 շրջանավարտ, որից բակալավրի առկա ուսուցման համակարգում՝ 79, հեռակայում՝ 76, ՄՄԿԾԿ–ի առկա ուսուցման համակարգում՝ 142, հեռակայում՝ 30, իսկ մագիստրատուրայում առկա ուսուցման համակարգում՝ 21 մագիստրանտ:

2016թ. նոյեմբերի 30-ի դրությամբ մասնաճյուղում ուսանողների թիվը կազմել է 1120, (718-ը կամ 64,1%-ը վճարովի համակարգում), որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգում՝ 327 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 205, ՄՄԿԾԿ-ի առկա ուսուցման համակարգում՝ 237 ուսանող, հեռակա ուսուցման համակարգում՝ 30, մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում՝ 21 մագիստրանտ: Ուսանողների շարժի վերաբերյալ տվյալները ներկայացվում են աղյուսակ 15 -ում:

Աղյուսակ 15

Մասնաճյուղում ուսանողների շարժը

Ուսուցման համակարգերը	Ուսանողների թիվը առ 01.09.2015թ	Մուտք				Ելք				Ուսանողների թիվը առ 30.06.2016թ
		Ընդունվել են	այլ բուհերից	վերադարձել են բանակից	այլ	հեռացվածներ	մեկնել են բանակ	այլ	շրջանավարտներ	
Մագիստրատուրա										
Առկա	21	-	-	-	-	-	-	-	21	21
Բակալավրիատ										
Առկա	333	-	-	-	-	2	2	2	79	327
Հեռակա	493	-	-	12	2	2	-	-	76	505
ՄՄԿԾԿ										
Առկա	237	-	-	-	-	-	-	-	142	237
Հեռակա	13	-	-	17	-	-	-	-	30	30
Ընդամենը	1097	0	0	29	2	4	2	2	348	1120

Մասնաճյուղում 2016-2017 ուստարում ընդունելություն չի կազմակերպվել, քանի որ ԼՂՀ կառավարության 2015թ.-ի դեկտեմբերի 28-ի N 912-ն որոշման համաձայն հանվել է մասնաճյուղի կողմից ներկայացված մասնագիտությունների ցանկը:

2015-2016 ուստարում մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 4 խմբերում (56 ուսանող) անց է կացվել 30 քննություն, որի արդյունքներով գերազանց են ստացել 23, լավ՝ 49, բավարար՝ 57 և չներկայացած՝ 4 մագիստրանտ: Առաջադիմությունը կազմել է 100%, իսկ միջին միավորը՝ 4,3 բալ: 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակում 3 խմբերում անց են կացվել 4քննություն, որի արդյունքներով գերազանց են ստացել 12, լավ՝ 15, բավարար՝ 4 և չներկայացած՝ 1 մագիստրանտ:

2015-2016 ուստարվա բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 34 խմբերում (397 ուսանող) կազմակերպվել է 215 քննություն: Քննությունների արդյունքներով գերազանց են ստացել 754, լավ՝ 665, բավարար՝ 803, չներկայացած՝ 134 ուսանող: Առաջադիմությունը կազմել է 94,3%, իսկ միջին միավորը՝ 3,7 բալ: 2016-2017 ուստարվա բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 30 խմբերում (327 ուսանող) նախատեսված է կազմակերպվել124 քննություն: Առաջին կիսամյակի առաջին միջանկյալ քննությունների արդյունքում գերազանց գնահատականները կազմել են 146, լավը՝ 303, բավարարը՝ 793, չներկայացածը՝ 77:

2015-2016 ուստարում ՄՄԿԾԿ առկա ուսուցման համակարգի 25 խմբերում (367 ուսանող) կազմակերպվել է 114 քննություն: Քննությունների արդյունքներով գերազանց են ստացել 413, լավ՝ 519, բավարար՝ 584, չներկայացած՝ 64 ուսանող: Առաջադիմությունը կազմել է 98,2%, իսկ միջին միավորը՝ 3,6 բալ: 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակում նախատեսված է կազմակերպել 11 քննություն, 67 ստուգարք:

2015-2016 ուստարվա բակլավրիատի հեռակա ուսուցման համակարգի 42 խմբերում (544 ուսանող) կազմակերպվել է 388 քննություն: Քննությունների արդյունքներով գերազանց են ստացել 264, լավ՝ 720, բավարար՝ 851, չներկայացած և չթույլատրված 939 ուսանող, առաջադիմությունը կազմել է 96,5%, իսկ միջին միավորը՝ 3,6 բալ: 2016-2017 ուստարվա բակլավրիատի հեռակա ուսուցման համակարգի ավարտական 8 խմբերում (78 ուսանող) կազմակերպվել է 14 քննություն:

Քննությունների արդյունքներով գերազանց են ստացել 12, լավ՝ 62, բավարար՝ 64, չներկայացած և չթույլատրված 70 ուսանող:

ՄՄԿՕԿ հեռակա ուսուցման համակարգի 8 խմբերում (118 ուսանող) կազմակերպվել է 62 քննություն, որոնց արդյունքներով գրանցվել է 6 գերազանց, 99 լավ, 383 բավարար, 50 չներկայացած: Առաջադիմությունը կազմել է 97,5%, իսկ միջին միավորը՝ 3,4:

Մասնաճյուղը նախօրոք 26 կազմակերպությունների հետ՝ (մասնավորապես Արցախ Ֆրուտի, կաթի գործարանի, հանրապետական բանկերի, «Ստեփանակերտի ավտոկայան» ՓԲԸ-ն, Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի, ԼՂՀ գյուղ նախարարության, Բույսերի պաշտպանության լաբորատորիայի, Սերմաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանման կենտրոնի, «Տոհմային կայան» ՓԲԸ-ն, գինու և կոնյակի գործարանների, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայության և այլ պետական և մասնավոր հիմնարկ - ձեռնարկությունների) պայմանագրեր է կնքել՝ փորձուսուցումները անցկացնելու համար: Բոլոր փորձուսուցումների հաշվով համապատասխան դասախոս-ղեկավարների կողմից ներկայացվել են հաշվետվություններ, որոնց քննարկումները իրականացվել են ամբիոններում:

Կրթության որակի բարձրացման համար մասնաճյուղում կազմակերպվում է շարունակական ուսուցում և խորհրդատվությունների անցկացում՝ կապված Բոլոնիայի գործընթացի, մասնավորապես, կրեդիտային համակարգի առանձնահատկությունների, ելքային արդյունքների մշակման և ներդրման մեթոդաբանության հետ: Այս առումով մասնաճյուղում արձանագրվել է որոշակի առաջընթաց: Ուսումնադաստիարակչական աշխատանքների կարևորագույն սկզբունքներից է սովորողի ճիշտ և արդարացի գնահատումը:

2014-2015 ուստարվա առաջադիմության արդյունքներով, համաձայն գործող կարգի և որոշումների, առկա ուսուցման համակարգի բոլոր կուրսերում անց է կացվել ուսանողների շրջափոխման մրցույթ, որոնց արդյունքում մագիստրատուրայի 2, բակալավրիտի 17 և ՄՄԿՕԿ-ի 52 ուսանողներ ենթարկվել են շրջափոփման: 2015-2016 ուստարվա արդյունքներով շրջափոխման են ենթարկվել մագիստրատուրայի 6, բակալավրիտի 21 և ՄՄԿՕԿ-ի 9 ուսանողներ:

Ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների հարցը միշտ եղել և մնում է մասնաճյուղի գիտական խորհրդի, տնօրենության, ֆակուլտետների, ամբիոնների ամենօրյա ուշադրության կենտրոնում: Անհարգելի բացակայությունները բացառելու նպատակով կատարվում են հետևողական աշխատանքներ, հրավիրվել են ծնողական ժողովներ՝ հատկապես միջին մասնագիտական կրթական ծրագրերի կենտրոնում:

2015-2016 ուստարում մասնաճյուղի բակալավրիատի առկա ուսուցման համակարգում ուսանողների բաց թողած ժամերի ընդհանուր թիվը կազմել է 26746 ժամ, մեկ ուսանողի հաշվով բաց թողած ժամաքանակը կազմել է 90,5ժամ, ՄՄԿՕԿ-ում՝ համապատասխանաբար 11180, մեկ ուսանողի հաշվով բաց թողած ժամաքանակը կազմել է 41,7 ժամ, բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգի մեկ ուսանողի հաշվով բաց թողած ժամաքանակը կազմել է 11,2, իսկ ՄՄԿՕԿ-ում՝ 5,1: Մեր կողմից պարզաբանված տվյալներով երկու ֆակուլտետների քննություններին և ստուգարքներին ուսանողների չներկայանալու պատճառները հիմնականում կապված են եղել Ղարաբաղա-ադրբեջանական սահմանում տիրող լարված իրադրությամբ և ապրիլյան դեպքերով: 2016-2017 ուստարվա հաշվետու ժամանակաշրջանում ագրարային տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների կողմից բաց թողնված ժամաքանակը կազմել է 6280ժամ, մեկ ուսանողի հաշվով՝ 20,9ժամ, ագրոկենսաբանական, տեխնոլոգիական և ճարտարագիտական ֆակուլտետում՝ 7774 ժամ, մեկ ուսանողի հաշվով՝ 23,4ժամ,

Մասնաճյուղում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում դասալսումներին: Այդ նպատակով 2015-2016 ուստարում կազմակերպվել է 310 դասալսում, որոնց արդյունքները քննարկվել է համապատասխան ամբիոններում: 2016-2017 ուստարվա հաշվետու ժամանա-կաշրջանում կազմակերպվել են 112 դասալսում:

Կրթական ոլորտի բարեփոխումների, զարգացման ծրագրերի և որակյալ կրթություն ապահովելու հաջողությունն ու արդյունավետությունը միաժամանակ կախված է ուսանողների դաստիարակության, զարգացվածության աստիճանից, որին մասնաճյուղում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում: Այդ նպատակով մասնաճյուղի ուսանողական խորհրդի հետ համատեղ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ, մրցույթներ, փառատոներ, վիկտորինաներ, ինտելեկտուալ խաղեր, բարեգործական համերգներ, հանդիպում Ստեփանա-կերտում գործող մանկատան սաների, ԼՂՀ ՊԲ զինվորների հետ և այլն, որոնք դրական են անդրադարձել ուսումնական գործընթացին: Մեր ուսանողները մասնակցել են արտերկրում կազմակերպվող միջազգային սպորտային տարատեսակ մրցություններին և օլիմպիադաներին՝ գրավելով առաջնակարգ տեղեր և Եվրոպայի առաջնության գավաթներ:

Սակայն մասնաճյուղը այս ուղղությամբ էլ պետք է ընդարձակի պլանավորվող աշխատանքների ծավալը, մեծ տեղ հատկացնելով կազմակերպվող միջբուհական միջոցա-ռումներին մեր ուսանողների ներգրավածությանը:

Մասնաճյուղը ունիհարուստ գրադարան: Այս ուսումնական տարում գրադարանը համալրվել է ևս 232 կտոր նոր գրքերով ու մեթոդական ձեռնարկներով: Ներկայումս գրադարանում առկա է 17626

կտոր գիրք, որից 1643-ը՝ մեթոդական ձեռնարկ: Մասնաճյուղի գրադարանը սպասարկում է 600-ից ավելի ընթերցողի:

2016-2017 ուստարում մասնաճյուղում կազմակերպվել են գիտական ընթերցումներ:

2015-2016 ուստարվանից մասնաճյուղը տեղափոխվելով ք.Շուշիում կառուցված մասնաշենքերը լուծվել է շենքային անբարվոք պայմանների խնդիրը, սակայն դեռևս չլուծված է մնում նրա հետագա գործունեության հարցը:

2.2.ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաշվետու ժամանակահատվածում ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում կատարվել են աշխատանքներ ուսումնական գործընթացը համալսարանի ռեկտորիկողմից հաստատված ժամանակացույցին համապատասխան և բավարար մակարդակով կազմակերպելու, ուսուց-ման որակն ապահովելու, ուսումնական բազան լաբորատոր սարքավորումներով և նյութերով համալրելու ուղղությամբ: Մասնաճյուղում ուսումնական գործընթացը ամբողջությամբ կազմա-կերպվում է մայր բուհ-ի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատասխան:

2016թ. դեկտեմբերի 23-ի դրությամբ մասնաճյուղի ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 447 ուսանող, որից36-ը գտնվում են զինվորական ծառայության մեջ: Տարվա ընթացքում մայր բուհ-ից մասնաճյուղ են տեղափոխվել 3 ուսանող, մասնաճյուղից հեռացվել են 36 ուսանող: 2016թ-ին հեռակա ուսուցմամբ մասնաճյուղի առաջին կուրս են ընդունվել 78 ուսանող:

Ստորև ներկայացվում է մասնաճյուղի հեռակա ուսուցման կուրսերի ուսանողների շարժի վերաբերյալ համառոտ տվյալները 23.12.2016թ. դրությամբ.

- Ուսանողների ընդհանուր թիվը 01.01.2016թ. դրությամբ	- 469
- Փոխադրվել են այլ բուհ-երից	- 0
- Փոխադրվել են ՀԱԱՀ-ից	- 3
- Վերականգնվել են նախկին ուսանողներ	- 4
- Փոխադրվել են ՀԱԱՀ	- 0
- Հեռացվել են	- 36
- Շրջանավարտներ	- 71
- Ընդունելություն	- 78
- Գտնվում են զին. ծառայության մեջ	- 36
- Գործող ուսանողների թիվը	- 411
- Ուսանողների ընդհանուր թիվը 23.12.2016թ. դրությամբ	- 447

Մասնաճյուղի հեռակա ուսուցման «Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում», «Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն», «Հողաշի-նարարություն և հողային կադաստր», «Հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Գյուղատնտեսության մեքենա-յացում», «Գյուղատնտեսական հումքի և պարենամթերքի փորձաքննություն, ստանդարտացում և սերտիֆիկացում»մասնագիտությունների գծով 33 կուրսերում ուսումնական գործընթացը կազմակեր-պվել է մայր բուհի հեռակա ուսուցման դեպարտամենտի կրթական չափորոշիչներին համապատաս-խան:

Առարկայական ծրագրերին համապատասխան ստուգողական և կուրսային աշխատանք-ների նախապատրաստման համար ուսանողներն ակտիվորեն օգտվել են մասնաճյուղի կահավորված գրադարան-ընթերցասրահից: Գրադարանում առկա է շուրջ3785կտոր մասնագիտական գրականու-թյուն, որը հիմնականում մասնաճյուղին է տրամադրվել ՀԱԱՀ-ի գիտական գրադարանի կողմից՝ համալսարանի ռեկտոր Ա.Պ. Թարվերդյանի հանձնարարա-կանին համապատասխան, իսկ մի մասն էլ ձեռք է բերվել գրախանութներից, կամ ստացվել են նվիրատվության կարգով: 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղում ժամավճարային հիմունքներով դասավանդել են 77 դասախոս, որոնցից40-ը Վանաձոր են գործուղվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, 6-ը մասնաճյուղի հաստիքային աշխատողներ են, իսկ 31-ը Վանաձոր քաղաքում գործող պետական բուհերից, հանրակրթական դպրոցներից և այլ կազմակերպություններից հրավիրված մասնագետներ: Դասավանդող 77 դասախոսներից 44-ը ունեն գիտական կոչումներ և աստիճաններ, որը կազմում է 57,14 % :

Ուսումնական գործընթացում առկա են եղել նաև թերություններ և բացթողումներ, այդ թվում նաև դասաձախողման փաստեր, որոնք ունեցել են օբեկտիվ և սուբեկտիվ պատճառներ:

Ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ ընթացքում մասնաճյուղն ստացել է բազմակողմանի աջակցություն և օժանդակություն համալսարանի ռեկտորատի, ուսումնական մասի,

հեռակա ուսուցման դեպարտամենտի և ամբիոնների կողմից: Ամենօրյա ուշադրության կենտրոնում է պահվել կրթության որակի ապահովման և վերահսկողության իրականացման, երիտասարդ դասախոսական կադրերի վերապատրաստման հարցերը: Անցած ուստարում թվով 4 երիտասարդ ասիստենտներ ՀԱԱՀ-ում մասնակցել են որակավորման բարձրացման դասընթացներին և ստացել համապատասխան հավաստագրեր:

Մասնաճյուղի բոլորկուրսերում փոխադրական քննություններն անց են կացվել կազմակերպված և թափանցիկ: Քննություններն կազմակերպվել են մասնաճյուղի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցին համապատասխան: Քննությունների անցկացման ընթացքը մշտապես գտնվել է մասնաճյուղի տնօրինության ուշադրության կենտրոնում: Անհատական զրույցների, ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվող միջոցառումների և ուսումնական գործընթացին առընչվող հարցերի քննարկումների ժամա-նակ ուսանողները հայտնել են իրենց գոհունակությունը փոխադրական քննությունների ճիշտ կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

Մասնաճյուղի տնօրենի, փոխտնօրենի, մեթոդիստի և երկու առարկայական բաժինների վարիչների կողմից կատարվել են դասալսումներ բակալավրիատի բոլոր խմբերում: Յուրաքանչյուր դասալսումից հետո անց է կացվել քննարկում և կատարվել վերլուծություն, տրվել են կոնկրետ ցուցումներ: Տարվա ընթացքում մասնաճյուղի դասախոսների կողմից կազմվել և տպագրվել են 2 մեթոդական ցուցումներ: Հայաստանի Հանրապետությունում և հանրապետությունից դուրս տարբեր ամսագրերում և շաբաթաթերթերում տպագրվել են երկու մասնագիտական հոդվածներ և արվել են առաջարկություններ առաջավոր փորձի ներդրման վերաբերյալ :

Բարձրագույն կրթական ծրագրերի իրականացմանը համընթաց մասնաճյուղում քայլեր են արվել նաև առանձին թեմաներով գիտական հետազոտությունների իրականացման ուղղու-թյամբ: Կատարվում են հետազոտական աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են Լոռու մարզի և Հանրապետության հյուսիսային տարածաշրջանի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվտնտեսություններում առաջավոր փորձի տեղայնացմանը, ժամանա-կակից տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության արդյունավետության բարձրացմանը և շրջակա միջավայրի պահպանության խնդիրներին: Ուսումնական և արտադրական պրակտիկաների մի մասը հաջողությամբ անց է կացվում համալսարանի Սպիտակի ուսումնա-փորձնական տնտեսությունում:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարությանկողմից հաստատված կանոնակարգի, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին մասնաճյուղում դիմորդներից կատարվել են փաստաթղթերի ընդունելություն հեռակա ուսուցման համակարգում: Արդյունքում՝ ըստ մասնագիտությունների մասնաճյուղ ընդունվող դիմորդների թվաքանակը հետևյալն է (աղ. 16)

Աղյուսակ 16

	Մասնագիտությունը	Ընդունելության քննություններով		Առանց ընդունելության քննությունների		Ընդամենը	
		Դիմորդների թիվը	Ընդունվել են մասնաճյուղ	Դիմորդների թիվը	Ընդունվել են մասնաճյուղ	Դիմորդների թիվը	Ընդունվել են մասնաճյուղ
1	Անասն. սան. փորձ.	-	-	9	9	9	9
2	Անտ. տնտ. և բնակ. կան.	-	-	18	18	18	18
3	Գյուղ. հումքի նպար. փորձ.,ստանդ. նսերտ.	-	-	12	12	12	12
4	Գյուղատնտ. մեքենայացում	-	-	13	13	13	13
5	Հաշվապ. հաշվառ. նատուդիտ	17	17	-	-	17	17
6	Հողաշին. նհող. կադաստր	10	9	-	-	10	9
	Ընդամենը՝	27	26	52	52	79	78

Մասնաճյուղի տնօրինության և կոլեկտիվիկողմից հնարավոր ամեն ինչ կարվի 2016-2017 ուսումնական տարին հաջողությամբ սկսելու և ուսումնական գործընթացը մայր բուհ-ի կրթական չափորոշիչներին համապատասխան կազմակերպելու համար:

2.3.ՍԻՍԻԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Սիսիանի մասնաճյուղում հաշվետու տարում իրականացվել են աշխատանքներ՝ որոնք միտված դիմորդների հոսքի և ուսանողական համակազմի կայունացման, կրթության որակական աճի, նյութատեխնիկական բազայի

արդիականացման, տեղեկատվական համալիր ապահովվածության և մայր բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ համագործակցության ուղղություններով:

Մասնաճյուղում իրականացվող կրթական գործընթացների հիմնական ուղղություններն են՝

ա/ ուսման որակի բարելավում և կատարելագործում

բ/ ուսանողների տեսական ու փորձնական գիտելիքների զուգակցում և ամրապնդում

գ/ ուսանողակենտրոն ուսուցում

դ/Հայաստանի հանրապետության ագրոպարենային համակարգին բարձրակարգ մասնագետներով ապահովում:

Մասնաճյուղում բակալավրային համակարգում գործում է ուսուցման հեռակա ձևը՝ հետևյալ մասնագիտությունների ցանկով՝

- <<Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում>> - I, II, III, IV, V, VI կուրսեր
- <<Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ>> - IV, VI կուրսեր
- <<Հողաշինարարություն և հողային կադաստր>> - III, IV, V, VI կուրսեր
- <<Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա>> - II կուրս
- <<Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն>> - I, II, III, IV, VI կուրսեր
- <<Ագրոնոմիա>> - I, II, IV, V, VI կուրսեր

Սույն հաշվետվությունը կազմվել է բաժինների հաշվետվությունների հիման վրա:

ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրթական ծրագիր, ուսուցման ձև	Մասնագիտությունը	Դասիչը
Բակալավրի կրթական ծրագիր, հեռակա ուսուցում	<<Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում>>	311101
	<<Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ>>	311103
	<<Հողաշինարարություն և հողային կադաստր>>	310901
	<<Ագրոնոմիա>>	310102
	<<Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն>>	310301
	<<Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա>>	310709
	<<Անասնաբուծություն>>	310201

ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԸ

Բաժնի անվանումը	Լաբորատորիաներ
Բնագիտական և կենսաբանական առարկաներ	Անասնաբուժական սանիտարական փորձաքննության լաբորատորիա-լսարան
Ագրոկենսաբանական և տեխնոլոգիական առարկաներ	Երկրագործության և ագրոքիմիայի ընդհանուր լաբորատորիա
Ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական առարկաներ	Ինֆորմացիոն տեխնոլոգիաների և համակարգչային լաբորատորիա-լսարան

*- մասնաճյուղը ևս երեք լաբորատորիայից օգտվում է պայմանագրային կարգով :

2016-2017 ուս. տարում մասնաճյուղ են ընդունվել 46 ուսանող՝ 3 մասնագիտությունների գծով. <<Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա>>՝ 13, <<Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն>>՝19, <<Ագրոնոմիա,սելեկցիա և գենետիկա>>՝ 14 ուսանող: Թեև ընդունելության պայմանները բավականին դյուրացվել էին, սակայն տարբերպատճառ-ներով նախորդ տարվա համեմատությամբ ընդունելությունը առաջին կուրսեր չի ավելացել:

2016-2017 ուս. տարում մասնագիտությունները վերանվանվել են, ընդլայնվել է դրանց մասնագիտացման շրջանակը: Հանձինս <<Ագրարային արտադրության էկոնոմիկա և կառավարում>> մասնագիտությունը վերանվանվել է <<Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա>>, <<Ագրոնոմիա>> մասնագիտությունը՝ <<Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա>>:

ՀԱԱՀ 2016-2017 ուս. տարվա ընդունելության արդյունավետ կազմակերպման նպատակով բավարար աշխատանք է կատարվել դիմորդների մասնագիտական կողմնորոշման, ընդունելության գովազդարշավի ընդլայնման ուղղությամբ՝ առավելագույնս ներգրավելով այդ գործընթացում

մասնաճյուղի գիտամեթոդական խորհրդին, դասախոսական կազմին, ուսանո-ղական խորհրդին, հիմնական գործընկեր ձեռնարկություններին ու այլ շահագրգիռ կազմակերպություններին:

Աշխատանքները համակարգելու նպատակով մասնաճյուղում կազմվել էր 2016 թվականի ընդունելության գործընթացի նախապատրաստման և կազմակերպման միջոցառումների պլան և բոլոր աշխատանքներն իրականացվել են ըստ ժամանակացույցի: Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ են իրականացվել Սյունիքի մարզի, առավելապես Սիսիանի, Քաջարանի, Մեղրիի, Ագարակի և մյուս համայնքների հանրա-կրթական և ավագ դպրոցներում: Ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը և հայտարարությունը գովազդային տեսահոլովակի տեսքով մինչև փաստաթղթերի ընդունե-լության ավարտը պարբերաբար հայտարարվել է Սյունիքի մարզի ողջ տարածքով հեռարձակվող <<ՍՈՍԻ>> հեռուստաալիքով:

2016 թվականին ստեղծվել է <<Հայաստանի ազգային ագրարային համալսարան Սիսիանի մասնաճյուղ>> ֆեյսբուքյան էջը, ուր անընդհատ թարմացվել և տեղադրվել են զանազան նյութեր և նկարներ՝ ուսանողների լաբորատոր աշխատանքների և հատկապես արտադրական պրակտիկաների կատարման ուղղությամբ: Սահմանված կարգով կազմա-վորվել է մասնաճյուղի դիմորդների փաստա-թղթերն ընդունող հանձնաժողով:

Մասնագիտությունը	Ընդունելության պլանային տեղերը	Դիմորդների թիվը
<<Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա>>	20	14
<<Հաշվապահական հաշվառում և հարկում>>	20	0
<<Հողաշինարարություն և հողային կադաստր>>	20	0
<<Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա>>	20	13
<<Կաթի և կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա >>	20	0
<<Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն>>	20	19
<<Անասնաբուծություն>>	20	0
Ընդամենը	**140**	**46**

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղի հեռակա ուսուցման 2016թ. ընդունելության պլանային 140 տեղի համար դիմել են 46 դիմորդ, որից ընդունվել են 46-ը: Ընդունելության արդյունքներն ըստ մասնագիտությունների բերված է աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17

Հ/Հ	Մասնագիտություն	Ընդունելության պլանային տեղերը	Դիմում-հայտերի թիվը	Ընդունված դիմորդների թիվը
1.	<<Ագրոէկոնոմիկա և սննդարդ էկոնոմիկա>>	20	14	14
2.	<<Հաշվապահական հաշվառում և հարկում>>	20	0	0
3.	<<Հողաշինարարություն և հողային կադաստր>>	20	0	0
4.	<<Ագրոնոմիա,սելեկցիա և գենետիկա>>	20	13	13
5.	<<Կաթի և կաթնամթ, մանկ. և ֆունկց սննդի տեխն >>	20	0	0
6.	<<Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն>>	20	19	19
7.	<<Անասնաբուծություն>>	20	0	0
ԸՆԴԱՄԵՆԸ		**140**	**46**	**46**

ՀԱԱՀ Սիսիանի մասնաճյուղ դիմած հեռակա ուսուցման 46 դիմորդներից ընդունվել են 46-ը (100 %):

Մասնաճյուղի հեռակա ուսուցման համակարգում սովորում է 254 ուսանող:

Աղյուսակ 18-ում բերված է ուսանողական համակազմը 2015-2016 ուսումնական տարում /30.12.2016 թ. դրությամբ/:

Աղյուսակ 18

Հ/Հ	Մասնագիտություն	Դասիչ	Ուսուցման ձև	Ուսանողների թիվ
1.	<<Ագրարային արտադր էկոնոմիկա և կառավարում>>	311101	հեռակա	80
2.	<<Ագրոպարենային համակարգի հաշվապահական հաշվառում և աուդիտ>>	311103	հեռակա	9
3.	<<Հողաշինարարություն և հողային կադաստր>>	310901	հեռակա	44
4.	<<Ագրոնոմիա>>	310102	հեռակա	58
5.	<<Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա>>	310709	հեռակա	5
6.	<<Անասնաբուժ. սանիտարական փորձաքննություն>>	310301	հեռակա	57
ԸՆԴԱՄԵՆԸ				254

2.4. «ՇԻՐԱԿԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Մ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

<<ՀԱԱՀ Շիրակի գյուղատնտեսական քոլեջ>> մասնաճյուղում գործում են ուսուցման առկա և հեռակա ձևերը:

Քոլեջում գործող մասնագիտությունների ցանկը հետևյալն է.

- <<1041 – Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (Ավտոտրանսպորտում)>>
- <<2708 – Մսի և մսամթերքի տեխնոլոգիա>>
- <<2819-02 – Պարենային ապրանքների որակի փորձաքննություն>>
- <<0421 - Իրավագիտություն>>
- <<0411 – Հաշվապահական հաշվառում>>
- <<0413 – Մենեջմենթ / Կառավարում /(Ագրարային համակարգում)>>
- <<0612 – Ապրանքագիտություն>>

2015-2016 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մասնագիտություն	Առկա ուսուցման				Հեռակա ուսուցման	
	Ընդունելության տեղերի թիվը		Փաստացի ընդունված		Ընդունելության տեղերի թիվը	Փաստացի ընդունված
	անվճար	վճարովի	անվճար	վճարովի	վճարովի	վճարովի
0411	6	9	7	0	15	0
0413	6	9	10	0	-	-
0612	6	9	6	0	15	0
1041	6	9	6	0	15	0
1041*	20	10	25	0	-	-
2708	6	9	6	0	-	-
2819-02	0	15	6	0	-	-
0421	0	15	0	7	15	0
Ընդամենը	**50**	**85**	**66**	**7**	**90**	**0**

* - հիմնական ընդհանուր կրթությամբ

2016-2017 ուստարում քոլեջի անվճար ուսուցման համակարգով դիմորդների թիվը գերազանցում էր նախատեսված սահմանային տեղերը 16 ուսանողի թվաքանակով: Համաձայն ՀՀ ԿԳՆ հրաման № 894-Ա/2 19.09.2016թ. փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո 1-ին կուրս վճարովի համակարգով ընդունված 16 ուսանողների համար հատկացվել են անվճար տեղեր:

Առկա ուսուցման համակարգում 2016թ. հունվարի դրությամբ սովորել է 144 ուսանող, որից 10-ը վճարովի համակարգում, իսկ հեռակա ուսուցման համակարգում 2016թ. հունվարի դրությամբ սովորել է 14 ուսանող:

Առկա ուսուցման համակարգում հաշվետու ժամանակահատվածում վերականգնվել է 6 ուսանող առկա բաժնում և հեռակա բաժնում պետական ամփոփիչ ատեստավորմանը մասնակցելու նպատակով վերականգնվել է 1 ուսանող: 6 ուսանող առկա ուսուցման համակարգից տեղափոխվել է հեռակա ուսուցման համակարգ:

2016թ-ի հունվարից մինչև 2016թ. դեկտեմբեր ավարտել և ստացել են որակավորում 28 ուսանող առկա ուսուցմամբ: Զորակոչվել են բանակ 4 ուսանող, որից 4-ը անվճար համակարգից, իսկ 4 ուսանող վերադարձել են բանակից:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐԺԸ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ

	Ցերեկային ուսուցում / որից պետպատվեր	Հեռակա ուսուցում
Ուսանողների թիվը 01.01.2016թ. դրությամբ	**144 / 134**	**14**
Ընդունելություն	73 / 66	
Փոխադրվել ենքոլեջիցերեկայինբաժնիցհեռակաբաժին	6 / 5	+6
Փոխադրվել են քոլեջի ներսում՝ վճարովի ուսուցումից անվճար ուսուցում	- / 1	
Փոխադրվել են քոլեջի ներսում՝ անվճար ուսուցումից վճարովի ուսուցում	- / 3	
Փոխադրվել են այլ բուհից /կամ վերամասնագիտացում/	1 / 0	
Վերականգնվել է	6 / -	1
Հեռացվել են	30 / 28	7
Վճարովի համակարգից տեղափոխվել են անվճար	7 / 7	
Շրջանավարտներ	28 / 26	
Զորակոչվել են բանակ	4 / 4	2
Վերադարձեալ էբանակից	4 / 3	
Ուսանողների թիվ 31.12.2016թ. դրությամբ	**160 / 145**	**12**

Քոլեջը ունեցել է առկա բաժնում 73 դիմորդ անվճար համակարգի և 7 դիմորդ վճարովի համակարգի, իսկ հեռակա բաժնում դիմորդներ չի ունեցել:

2016թ. ցերեկային ուսուցմամբ ունեցել ենք 28 շրջանավարտներ «Մենեջմենթ», «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ», «Մսի և մսամթերքի տեխնոլոգիա», «Պարենային ապրանքների որակի փորձաքննություն», «Ապրանքագիտություն», «Փոխադրում-ների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությունների գծով: 28 շրջանավարտներից չեն ներկայացել պետական քննությանը 5-ը, 4 ուսանողներ ավարտել են գերազանցության դիպլոմով:

3. ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ, ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՈՐԱԿԻ ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ

Բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման ներկայացվող պահանջները ձևավորվում և պայմանավորված են ագրարային ոլորտի առկա վիճակով ու ցուցանիշներով, զարգացման միտումներով ու հեռանկարային ծրագրերով: Ակնհայտ է, որ ծրագրային դրույթների իրականացումը և առաջիկայում գյուղատնտեսության արտադրության ինտեսի-վացումը հնարավոր է միայն բարձր որակավորմամբ մասնագետների առկայության պայմաններում, ինչն ինքնին ենթադրում է ագրարային կրթական, գիտական ու խորհրդատվական համակարգերի բարելավում:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ՀՀ կրթության զարգացման պետա-կան ծրագրին, համալսարանի զարգացման ռազմավարական պլանի դրույթներին, համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման պլանժամանակացույցի պահանջներին և իր առաքելությանը համապատասխան շարունակում է կրթական, գիտական, խորհրդատվական ու նյութատեխնիկական բազայի համալրման բնագավառների բարելավում-ները:

Կրթական ոլորտի բարեփոխումները նպաստելու են համալսարանին իր գործունե-ությանը համապատասխանեցնելու երկրում ձևավորվող գիտելիքահեն տնտեսության և ագրարային բնագավառի աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին, բարձրացնելու իր արտաքին գրավչությանն ու մրցունակությանը և ընդլայնելու համալսարանի սոցիալական առաքելությանը:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար շարունակում է մնալ ռազմավա-րական զարգացման գլխավոր ուղղություններից մեկը: Համալսարանում շարունակվում են աշխատանքներ տանել ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի լիարժեք ներդրման, արմատական ծրագրային բարեփոխումների իրականացման, ուսանողների և դասախոսների անարգել ակադեմիական շարժունության խթանման, որակի ապահովման ու գնահատման եվրոպական չափանիշների արմատավորման, շարունակական կրթության համակարգի ձևավորման, կրթության կազմակերպման և կառավարման գործընթացներում ուսանողների դերի ու ազդեցության բարձրացման, համալսարանում կրթական ծրագրերի

իրականացման համար անհրաժեշտ մարդկային ու նյութատեխնիկական ռեսուրսների ապահովման ուղղություններով:

Համալսարանում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում համալսարանի արդյունավետ գործող կառավարման համակարգի ստեղծման, համալսարանի կառույցների և ստորաբաժանումների թվաքանակի օպտիմալացման, դրանց գործունեության փոխադարձ ներդաշնակեցման, տեղեկատվության հավաքման ու տարածման արդյունավետ համակարգի ստեղծման, փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգի ներդրման և կրթական նոր տեխնոլոգիաների դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրման ուղղություններով:

Համալսարանի արձանագրված ձեռքբերումներն ակնհայտ են, սակայն կրթության համակարգը իր առաքելության լիարժեք իրականացման, այս ոլորտում մշտապես առաջ եկող նոր խնդիրների ու մարտահրավերների հաղթահարման, բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման գործում համալսարանի մրցունակության ապահովման, ագրարային ոլորտում կիրառական նշանակության արժեքավոր գիտահետազոտական աշխատանքների կատարման, արտադրությունում դրանց արդյունքների ներդրման և խորհրդատվական ու տեղեկատվական համակարգի բարելավման ոլորտներում դեռևս շատ անելիքներ կան:

3.1. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Բոլոնիայի գործընթացի վերջին զարգացումներին համապատասխան՝ համալսարանի զարգացման ռազմավարության մեջ կարևորվում է բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների առաջնայնությունը:

Որակի ընդհանուր եվրոպական չափանիշների և չափորոշիչների ներմուծման, որակի ապահովման ասպարեզում համագործակցության հաստատման և երկրից երկիր ու բուհից բուհ ուսանողների ու դասախոսների անարգել ակադեմիական շարժունության հիմնական գրավականը համալսարանում որակի համընդհանուր մշակույթի զարգացումն է, քանի որ հենց համալսարանն է առաջնային պատասխանատվություն կրում կրթության որակի համար, իսկ որակի ներքին ապահովումը բուհի կարևորագույն պարտավորություններից մեկն է:

Այս առումով համալսարանի հիմնական ուշադրությունը կառուցվածքային բարեփոխումներից արդեն պետք է տեղափոխվի դեպի ուսուցման որակի բարելավումը և ներդաշնակեցումը եվրոպական չափանիշներին:

Բարձրագույն կրթության որակի ընդհանուր կառավորումը ենթադրում է կրթության որակի ապահովման գործուն և ամբողջական ներքին համակարգի ստեղծման, որակի վերահսկողության, ինքնավերլուծության ու ինքնագնահատման, արտաքին հավատարմագրման և որակի մշակույթի ձևավորման ու տարածման գործընթացների իրականացում, որոնց շրջանակներում փուլ առ փուլ պետք է մշակվեն ու գործարկվեն համակարգի բոլոր հենքային բաղադրիչները, ինչը պահանջում է հետևողականորեն զարգացնել որակի ներքին ապահովման ինստիտուցիոնալ կարողությունները և ստեղծել արդյունավետ գործող համակարգ:

Համալսարանում 2016 թ.-ին մշակվել, հաստատվել և գործողության մեջ են դրվել կրթության որակի ապահովմանն ուղղված հետևյալ փաստաթղթերը.

- *Գիտահետազոտական գործունության և ուսումնական գործընթացի փոխկապակցման քաղաքականություն և ընթացակարգ:*
- *Համալսարանի ակադեմիական աշխատակազմի ներգրավման և կայունության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ:*
- *ՀԱԱՀ շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում (ինքնավերլուծություն):*
- *Ուսանողների ուսումնառության գնահատման ռուբրիկների մշակման կարգ:*
- *Համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեթոդներ և գործիքներ (ուղեցույց):*
- *ՀԱԱՀ կրթական գործունեության գնահատման կարգ:*
- *Համալսարանի առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականություն և ընթացակարգ:*
- *ՀԱԱՀ զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման և վերանայման քաղաքականություն:*
- *ՀԱԱՀ կադրային քաղաքականություն:*
- *Համալսարանի ներքին և արտաքին տեղեկատվության ապահովման ընթացակարգ:*
- *Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման և գնահատման ընթացակարգ:*
- *ՀԱԱՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ:*
- *Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ (ՀԱԱՀ):*

- *ՀԱԱՀ էթիկայի կանոնագիրք:*
- *Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականություն և ընթացակարգ:*

Համալսարանում որակի մշակույթի տարածման նպատակով վերջին տարիներին դասախոսական կազմի, ուսանողության, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների, ամբիոնի վարիչների, որակի ապահովման պատասխանատուների, ինչպես նաև համալսարանի մասնաճյուղերի աշխատակիցների համար ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմակերպվել և իրականացվե լ են բազմաթիվ սեմինարներ ու թրեյնինգներ:

Իրականացվող կրթական բարեփոխումների, որակի ապահովմանն ուղղված գործընթացների, անհրաժեշտ նորմատիվային փաստաթղթերի վերաբերյալ համալսարանական հանրության պատշաճ իրազեկվածության ու տեղեկացվածության ապահովման գործում մեծ նշանա կություն ունի համալսարանի պաշտոնական կայքում ստեղծված <<Որակի ապահովում>> էջը, որը պարբերաբար վերանայվում ու թարմացվում է ուսումնամեթոդական կենտրոնի կողմից:

Համալսարանի 2018-2022թթ. զարգացման ռազմավարական պլանի ու ծրագրի մշակման և հաստատման աշխատանքները համակարգելու նպատակով համալսարանում ստեղծվեց հանձնախումբ և արդեն ձեռնարկվել են ռազմավարական պլանի մշակման աշխատանքները:

3.2. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ (ՄԿԾ) ՎԵՐԱՆԱՅՄԱՆ, ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Այսօր, երբ կառուցվածքային բարեփոխումներն արդեն որոշակի չափով իրականացվել են, կարևոր մարտահրավեր է դարձել անցումը կրթական ծրագրերի կառուցվածքային փոփոխություններից խորքային բովանդակային փոփոխությունների:

Նոր սերնդի կրթական ծրագրերի նախագծման, վերանայման, բարելավման ու իրականացման համար մեկնակետ պետք է հանդիսանան շրջանավարտների ակնկալվող կրթական վերջնարդյունքների հիման վրա ձևակերպված ծրագրերի իրականացումը, որը հնարավարություն կտա կրթական ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանեցնելու աշխատաշուկայի պահանջներին, ինչը կարևորագույն նախադրյալ է շրջանավարտների ծառայունակության, մրցունակության և կարիերայի հնարավորությունների բարձրացման համար:

Այս առումով վերջին տարիներին համալսարանում մեծածավալ աշխատանքներ են տարվում ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման, ոլորտը կարգավորող անհրաժեշտ փաստաթղթային հենքի ստեղծման, ինչպես նաև համալսարանական հանրության շրջանում նոր մոտեցումներին իրազեկվածության ապահով-ման ուղղություններով:

Այդ առումով մշակվեցին մասնագիտությունների կրթական ծրագրերի արտոնմանը, մշակմանը, մշտադիտարկմանը և վերանայմանը ուղղված նորմատիվային փաստաթղթեր, մասնավորապես՝

- Կրթական ծրագրերի որակի գնահատման քաղաքականություն:
- Մասնագիտությունների կրթական ծրագրերի հաստատման և պարբերաբար վերանայման քաղաքականություն:
- Կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների վերանայման քաղաքականություն:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն:
- Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման քաղաքականություն:
- ՄԿԾ-ների և որակավորումների արտոնման, հաստատման, մոնիթորինգի և պարբերական վերանայման կանոնակարգ:
- Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ընթացակարգ:
- Դասավանդման և ուսումնառության ռեսուրսների արդիականացման ընթացակարգ:
- Կրթական ծրագրերի որակի գնահատման կարգ:
- Առարկայական ուսումնական ծրագրերի մշակման ուղեցույց:

Նշված փաստաթղթերը քննարկվել են, հաստատվել համալսարանի գիտական խորհրդի կողմից և ներդրվել են գործածության մեջ:

Tempus Armenqa դրամաշնորհային ծրագրի շրջանակներում համալսարանի կողմից իրականացվել են գործուղումներ եվրոպական երկրների առաջավոր համալսարաններ՝ կրթական ոլորտում փորձ ձեռք բերելու և փորձի փոխանակման նպատակով, որոնք արդյունքում իրականացվել է փորձի ներդրում համալսարանի շրջանակներում՝ կրթական ծրագրերի կառուցվածքի և բովանդակության բարելավման նպատակով:

Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են հարցումներ Մասնագիտական կրթական ծրագրերի բաղադրիչների գնահատման և շահակից կողմերի կարիքների բացահայտման նպատակով:

Մասնավորապես իրականացվում է՝

- դիմորդների կարիքների ու առաջարկների բացահայտում և վերլուծություն, ուսանողների բավարարվածության գնահատում դասավանդման գործընթացից և գնահատման համակարգից, կրթական ծառայությունների որակից, համալսարանի կողմից տրամադրվող այլ ծառայություններից, գիտահետազոտական աշխատանքներում ներգրավման աստիճանից, ռեսուրսային բազայից, վարչական կազմի կողմից տրված ծառայություններից,
- պրոֆեսորադասախոսական կազմի բավարարվածության գնահատում դասավանդման համար նախատեսված ռեսուրսային ապահովվածությունից, համալսարանի ընդհանուր միջավայրից, մասնագիտական ուսումնամեթոդական բազայից, գիտահետազոտական գործունեության համար նախատեսված ռեսուրսային ապահովվածությունից,
- շրջանավարտների բավարարվածության գնահատում համալսարանում ստացված գիտելիքների և ունակությունների բավարար լինելուց՝ մասնագիտական աշխատանքում կիրառելու համար, մասնագիտությունների կրթական ծրագրերի բովանդակությունից և որակից, համալսարանի կողմից տրամադրված կրթական ծառայությունների որակից,
- գործատուների բավարարվածության գնահատումը մասնագիտությունների կրթական ծրագրերի որակից և բովանդակությունից, համալսարանի շրջանավարտների գիտելիքների և կարողությունների մակարդակից:

Համալսարանն ակտիվ մասնակցություն ունեցավ ՀՀ Որակավորումների ազգային շրջանակի մշակման աշխատանքներին և բացի այդ ՏԵՊՄՈՒՍ ԱՐՄԵՆՔԱ ծրագրի շրջանակներում համալսարանի կողմից Որակավորումների եվրոպական և ազգային շրջանակների պահանջներին համապատասխան մշակվեց <<Որակավորումների գյուղատնտեսական շրջանակը>>, որը հետագայում արժանացավ նաև եվրոպական փորձագետների հավանությունը:

Փորձաքննություն անցնելուց հետո <<Գյուղատնտեսական ոլորտային շրջանակը>>ներկայացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարություն, որտեղ հավանության արժանանալուց հետո կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

Tempus Govern և Tempus Armenqa դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում 2015 և 2016թթ. իրականացվեցին բազմաթիվ սեմինարներ մասնագիտությունների կրթական ծրագրերի և դրանց բաղադրիչների արդյունավետ ձևավորման նպատակով:

2016 թ.-ի նոյեմբերի 24-25-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կազմակերպվեց և իրականացվեց դասախոսական կազմի վերապատրաստմանը նվիրված աշխատաժողով, որի աշխատանքներին մասնակցում էր Գերմանիայի Օսնաբրուկի կիրառական գիտությունների համալսարանի դոկտոր Դիետեր Թրաուզը:

Դասախոսական կազմին ներկայացվեցին ՀՀ բարձրագույն կրթության Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակները և դրանց համադրումը:

Աշխատաժողովի շրջանակներում ներկայացվել են դասընթացների համար կրթական վերջնարդյունքների ձևակերպման վրա դրվող պահանջները և սկզբունքները, ՄԿՕ-ի նպատակի և կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնախնդիրները և այլ առանցքային հարցեր:

<<Օրագրի բովանդակությունը, դասավանդման և ուսումնասռության մեթոդները, ԿՓԵՀ>> թեմայի շրջանակներում պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվեցկրթական վերջնարդյունքներին համապատասխան արդյունավետ դասավանդման և ուսումնառության ձևերն ու մեթոդները:

<<Ուսանողների գնահատումը սահմանված չափանիշների օգնությամբ>>թեմայով զեկուցման ընթացքում ունկընդիրներին ներկայացվեցին արդյունավետ գնահատման սկզբունքները, ձևակերպվեցին գնահատման չափանիշներ՝ տրված ԿՎ-ների համար, բացատրվել են ԿՎ-ներին համարժեք գնահատման ձևերն ու մեթոդները, սահմանվել են գնահատման չափորոշիչներ, որոնք կնպաստեն ուսանողների գիտելիքների և կարողությունների արժանահավատ գնահատմանը:

Աշխատաժողովի ընթացքում կազմակերպվեցին նաև գործնական պարապմունքներ մասնագիտությունների կրթական ծրագրերի և դասընթացների համար կրթական վերջնարդյունքների ձևակերպման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ճիշտ ընտրության թեմաների շրջանակներում:

Ելույթով հանդես է եկավ նաև Դիետեր Թրաուզը, ով բարձր է գնահատեց աշխատաժողովն ինչպես կազմակերպչական, դասախոսական կազմի ընդգրկվածության ու ակտիվ մասնակցության, այնպես էլ բովանդակային առումով:

Արդյունքում վերապատրաստվեցին շուրջ 60 դասավանդող, ծրագրերի պատասխանատուներ և վարչական աշխատողներ:

2016թ-ի ընթացքում վերանայվեցին և արմատապես բարելավվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլանները:

Հաշվի առնելով նախորդ տարիների փորձը և մագիստրանտների առաջարկները՝ մագիստրոսական կրթական ծրագրի տևողությունը 2 տարուց փոխվեց մեկ տարվա:

Այդ աշխատանքներին զուգահեռ մշակվեցին և ներկայացվեցին բակալավրային և մագիստրոսական կրթական բոլոր ծրագրերի կրթական վերջնարդյունքները, որոնց հիման վրա հետագայում կմշակվեն ՄԿՕ-ների փաթեթները:

<<Առարկայական ուսումնական ծրագրերի մշակման ուղեցույց>>-ին համապատասխան մշակվում են բոլոր մասնագիտությունների գծով առարկայական ծրագրերը՝ հիմնված կրթական վերջնարդյունքների վրա:

Համալսարանի ֆակուլտետների կողմից ՄԿՕ-երի ստեղծման համար մշակված ձևաչափին համապատասխան 2016թ-ի ընթացքում կրթական վերջնարդյունքների հիման վրա մշակվեցին հետևյալ մասնագիտությունների կրթական ծրագրերի փաթեթները՝

- Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
- Բույսերի պաշտպանություն
- Ագրոէկոլոգիա
- Պաշտպանված գրունտի տեխնոլոգիա
- Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում
- Ագրոբիզնես,
- Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա,
- Խմորման արտադրությունների տեխնոլոգիա և գինեգործություն,
- Հողաշինարարություն, հողային կադաստր,
- Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ,
- Անասնաբուժություն:

Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի, ուսում-նական պլանների, առարկայական ծրագրերի և պրակտիկաների կազմակերպման գործըն-թացի վերաբերյալ ագրոպարենային ոլորտի հիմնական գործատուների, ընկերությունների և կազմակերպությունների ղեկավարների ու առաջատար մասնագետների մասնակցությամբ 2016թ-ի նոյեմբերի 10-ից 15-ը համալսարանում կազմակերպվեցին խորհրդակցություններ, որոնց ժամանակ քննարկման ներկայացվեցին հետևյալ հարցերը.

1*. Հայաստանի ազգային ագրարային համալսրանի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի, ոլորտին վերաբերող մասում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորում:*

2. Ոլորտի գործող մասնագիտությունների ուսումնական պլանների, մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ցանկի և առարկայական ծրագրերի վերլուծություն, գնահատում և առաջարկությունների ներկայացում:

3. Ապագա մասնագետների գործնական հմտությունների ձևավորման գործող հա-մակարգի (լաբորատոր և գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպում) վերլուծություն և առաջարկու-թյունների ներկայացում:

4. Արտադրությունում աշխատող մասնագետների, ֆերմերների վերապատրաստման և վերարտակավորման գործող համակարգի վերլուծություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների քննարկում:

5. Ոլորտը որակյալ մասնագետներով ապահովմանն ուղղված գործատուների այլ առա-ջարկությունների քննարկում:

Քննարկումների արդյունքում գործատուների կողմից կարևոր առաջարկություններ ներկայացվեցին մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ծրագրերի և հատկացված ժամաքանակների վերանայման, ամբիոնների լաբորատոր բազան տեխնիկական և տեխնոլոգիական ժամանակակից միջոցներով համալրման, պրակտիկաների արդյունավետ կազմակերպման, հանրապետության մարզերում համալսարանի դասախոսների կողմից մասնագետների ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպ-ման վերաբերյալ:

Դասավանոդվող առարկաների առարկայական ծրագրերի վերանայման ու բարելավման նպատակով, համապատասխան ոլորտների գործատուների մասնակցությամբ ստեղծվեցին փորձագիտական խմբեր և 2016թ. նոյեմբեր-դեկտեմբեր ա միսներին ագրարային ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան, ուսանողների և համալսարանի մյուս շահակիցների սպասելիքներին համահունչ արմատապես վերանայվեցին և բարելավվեցին բակալավրային, մագիստրոսական կրթական ծրագրերի առարկայական ծրագրերը, ինչը ոչ միայն հնարավորություն կտա բարելավելու համալսարանում իրականացվող մասնագիտու-թյան

կրթական ծրագրերի որակը, այլ նաև լուրջ նախադրյալներ կստեղծի առաջիկա ծրագրային հավատարմագրումը բարեհաջող իրականացնելու համար:

3.3. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՉԱՓ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՑՆԵՐ

Բոլոնիայի գործընթացի վերջին տասնամյա գործունեության ուղղություններից մեկը թափանցիկության բազմաչափ գործիքների ներդրումն է և տվյալների հավաքագրման արդյունավետության ու թափանցիկության բարձրացումը:
Թափանցիկության ապահովման կարևորագույն գործիքներից է համալսարանների վարկանիշավորումը, որը համադրելի և բաց տեղեկատվություն է տրամադրում տարբեր բուհերի վերաբերյալ:

Վերջին երեք տարիներին ՀՀ ԿԳ նախարարության կողմից՝ Բուհերի ազգային վարկանիշավորման համակարգի՝ շրջանակներում համալսարանի գործունեության տարբեր ոլորտների ցուցանիշների վերաբերյալ իրականացվում է վարկանիշավորման գործընթաց, որի արդյունքում հանրապետության 12 առաջատար համալսարանների խմբում Հայաստանի ազգային ագրարային համալսարանը 2013թ-ին գրավեց 1-ին, իսկ 2014թ-ին՝ 3-րդ տեղը:

ՀԱԱՀ-ն իր գործունեության թափանցիկության ապահովման նպատակով իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- Ֆակուլտետային մակարդակի վրա իրականացվող գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում,
- Համալսարանի գիտակրթական գործունեության իրականացման վերաբերյալ հաշվետվողականության ապահովում համալսարանի գիտական խորհրդի նիստերին,
- Համալսարանի կառուցվածքային ստորաբանումների ներքին աուդիտների անցկացման արդյունքների ներկայացում,
- Համալսարանի գործունեությանը վերաբող հաշվետվության ներկայացում համալսարանի գիտական խորհրդի նիստին և հրապարակում ՀԱԱ Հ կայքի «հաշվետվություններ» բաժնում:
- Համալսարանի ֆինանսական գործունեության արտաքին աուդիտի արդյունքների հրապարակում www. azdarar.am կայքում:
- Համալսարանի գիտական հրապարակումների ներկայացում համալսարանի կայքէջում (http://anau.am/hy/science/science-pub):
- Շրջանավարտների կարիքների հետազոտության անցկացման արդյունքների ներկայացում համալսարանի կայք էջում (http://anau.am/hen-gear/):
- Համալսարանի դասախոսական կազմի գործունեությանը վերաբերող տեղեկատվության հրապարակում համալսարանի կայք էջում (person.anau.am) և այլն:

Համալսարանի կայք էջում զետեղված են նաև տեղեկատվություն տարբեր շահակիցների համար.

- Դիմորդներ (http://anau.am/hy/2011-10-24-07-02-23),
- Ուսանողներ (http://anau.am/hy/component/content/article/483),
- Պրոֆեսորդասախոսական կազմ (http://anau.am/hy/2011-11-07-07-27-03),
- Շրջանավարտներ (http://anau.am/hy/2011-11-07-07-19-59),
- Գործատուներ (http://anau.am/hy/2011-11-07-07-48-51):

Համալսարանը կայքի միջոցով (www.anau.am) ներքին և արտաքին շահակիցներին լիարժեք տեղեկատվություն է տրամադրվում և ապահովում իրականացվող գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի կայք էջում տեղադրված է տեղեկատվություն նաև առկա մասնագիտությունների, գործող կրթական ծրագրերի, նորմատիվային փաստաթղթերի, ընդունված որոշումների, նորությունների և այլնի մասին:

Կայքում համակարգված ներկայացված է տեղեկատվություն ՀԱԱՀ-ի պատմության, կրթական, գիտական և տեղեկատվական գործունեության և ձեռքբերումների, միջազգային կապերի, ուսանողական կյանքի, մասնաճյուղերի և կառուցվածքային ստորաբաժանումների, «ՀԱՍԿ» պաշտոնաթերթի հերթական համարների, գիտական աշխատաժողովների Տեղեկագրերի և այլ տեղեկություններ:

ՀԱԱՀ-ն իր գործունեության և նվաճումներին վերաբերող տեղեկատվությունը հրապարակում է նաև ռեկտորի տարեկան հաշվետվության միջոցով, որը տեղադրված կայքի հաշվետվություններ բաժնում՝ նպատակ ունենալով ապահովելու տեղեկատվության իրականացվող գործընթացների թափանցիկությունը:

Համալսարանի կայքը պարբերաբար թարմացնում է ինֆորմացիայիով, մասնավորապես համալսարանում տեղի ունեցող իրադարձություններով (միջազգային հանդիպումներ, աշխատաժողովներ, սեմինարներ ուսանողների և դասախոսական կազմի շրջանում և այլն):

Համալսարանի շահակից կողմերը հնարավորություն ունեն իրենց կարծիքն արտահայտել համալսարանի կայք էջում (www.anau.am) առկա հետադարձ կապի գործիքի միջոցով, որը առկա է բոլոր կառուցվածքային ստորաբանումների էջում, ինչպես նաև համալսարանի ֆեյսբուքյան էջում (www.facebook.com/Armenian-National-Agrarian-University-ՀԱԱՀ-363415383766092/):

Հարկ է նշել, որ Համալսարանի կայքում առանձին Որակի ապահովման էջով տեղեկատվություն է ներկայացվում ՀԱԱՀ-ի կրթության որակի ոլորտում համալսարանի քաղաքականության, որակի ապահովման ներքին համակարգի կառուցվածքի մասին և այլն (http://anau.am/hy/asau/2012-03-22-08-44-44):

2016 թ.-ին իրականացվել են համալսարանի պաշտոնական կայքում ստեղծված "Որակի ապահովում" էջի ընթացիկ թարմացումներ, մասնավորապես՝

- «Համալսարանի շահակիցներ»և «Որակի ապահովման գործընթացներ» բաժինների ավելացում,
- նորմատիվային փաստաթղթային բազայի և այլ ենթաբաժինների ընթացիկ թարմացում:

2016 թ.-ին թարմացվել է Ուսումնամեթոդական կենտրոնի կայք էջը ըստ բոլոր ենթաբաժինների (http://anau.am/hy/study-prosecc/learning-center)

Համալսարանը ունի էլեկտրոնային այլ հարթակներ, որտեղ ներկայացվում է տեղեկատվություն համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության, կարիերայի վերաբերող տեղեկատվություն, շրջանավատրների շրջանում իրականացված հարցումների և այլնի մասին:

Համալսարանի ներքին և արտաքին շահակիցները որակի ապահովման գործընթացների մասին ոչ միայն ստանում են տեղեկատվություն, այլև հաճախ իրենք ևս ընդգրկվում և մասնակցում են այդ գործընթացին՝ միաժամանակ ապահովելով վերջինիս տրամադրման թափանցիկությունը (այդ տեղեկատվությունը անմիջականորեն փոխանցում են այլ ներքին ու արտաքին շահակիցներին):

2016 թ.-ուսումնամեթոդական կենտրոնի կողմից կազմակերպվել և իրականացվել է Համալսարանի կողմից սահմանված գործունեության առանցքային ցուցանիշների հավաքագրում ըստ համալսարանի գործունեության յոթ ուղղությունների՝

- Ընդունելություն և ուսանողական համակազմ,
- Ուսումնական գործընթաց,
- Ռեսուրսներ և կառավարում,
- Ենթակառուցվածք,
- Գիտություն և ինովացիա,
- Տեղեկատվական տեխնոլոգիաներ,
- Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:
- ԳԱՑ-երի հավաքագրումը և վերլուծությունը հիմք է հանդիսանում համալսարանի գործունեության քանակական վերլուծության համար և դրանք պետք է հրապարակվեն համալսարանի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով:

3.4. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

2016 թ.-ի մարտից մայիս ամիսներին Ուսումնամեթոդական կենտրոնը իրականացրել է համալսարանի շահակիցների շրջանում կարիքների բացահայտման գործընթաց: Կարիքների բացահայտումը իրականացվել է նախապես մշակված և վալիդացված անկետաների միջոցով:

Հարցմանը մասնակցել են՝ ՀՀ տարածաշրջանների տարբեր դպրոցների ավարտական դասարանների շուրջ 80 աշակերտներ, համալսարանի 2-ից 4-րդ կուրսի շուրջ 810 ուսանող, 405 պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ և 71 շրջանավարտ:

Հարցումների արդյունքները մուտքագրվել և մշակվել են SPSS սոցիոլոգիական վիճակագրական ծրագրի միջոցով:

Դիմորդների շրջանում հարցման նպատակն էր բացահայտել, գնահատել և վերլուծել ավարտական դասարանների աշակերտների (դիմորդների) կարիքները:

Դիմորդների շրջանում անցկացված հարցումների արդյունքները թույլ են տալիս հաստատել, որ համալսարանի կողմից մասնագիտական կողմնորոշման և տեղեկատվության ապահովման մեծածավալ աշխատանքներ են ՀՀ շրջանների դպրոցներում: Նկատելի դեր է խաղում համալսարանի կայք էջի հագեցվածությունը՝ դիմորդին անհրաժեշտ տեղեկատվությամբ, պահովելու առումով:

2016 թ.-ին ուսանողների շրջանում կազմակերպված կարիքների բացահայտման հարցմանը մասնակցել են 2-ից 4-րդ կուրսի շուրջ **810** ուսանող:

Հարցման նպատակն էր գնահատել ուսանողների բավարարվածության մակարդակը համալսարանի՝ ռեսուրսային բազայից, կրթական ծառայությունների որակից, վարչական կազմի աշխատանքից և հետազոտական գործունեության մեջ ներգրավումից:

Անցկացված հետազոտության արդյունքները թույլ են տալիս փաստել, որ ՀԱԱՀ ուսանողների մեծ մասը բավարարված են կրթական գործընթացի կազմակերպման որակից:
Ուսանողները ավելի շուտ բավարարված չեն՝ լսարանային տեխնիկական ապահովումից և լաբորատոր պարապմունքների անցկացման համար նյութատեխնիկական հագեցվածությունից, ուսանողների գիտելիքների գնահատման համակարգից, պրակտիկաների անցկացման պայմաններից, ինտերնետից օգտվելու հնարավորություններից (դասին և դասից դուրս), սանհանգույցների վիճակից և մարզադահլիճների վիճակից:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անցկացված հարցմանը մասնակցել են 405 ներկայա ցուցիչներ: Հարցումների նպատակն էր.

1. Գնահատել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կարիքները,
2. Գնահատել դասախոսի վերաբերմունքը համալսարանում կատարվող փոփոխությունների նկատմամբ,
3. Բացահայտել այն գործոնները, որոնք կնպաստեն դասախոսներին ավելի արդյունավետ աշխատելուն:

Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում անցկացված հարցումների պարզվել է, որ ավելի շուտ բավարարված են աշխատանքային միջավայրից, տեղեկացվածության և խոսքի ազատության մակարդակից, կառավարումից (մեծ մասը գնահատել են “լավ”):
Սակայն ոչ բավարար է են գնահատել դասավանդման գործընթացում լսարանների ապահովվածությունը համակարգչային միջոցներով:

Բաց հարցերում դասախոսական կազմի կողմից կատարվել են հետևյալ հիմնական դատողությունները՝ մասնավորապես՝

- թարմացնել լաբորատոր սարքավորումները և նյութատեխնիկական բազան,
- թարմացնել լսարանային գույքը,
- վերանայել և բարելավել ուսանողների գիտելիքների գնահատման համակարգը,
- բարելավել ուսումնաարտադրական պրակտիկաների անցկացման պայմանները,
- փոփոխել և թարմացնել առարկայական ծրագրերը,
- ժամանակակից պահանջներին համապատասխան ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները,
- ապահովել բժշկական ապահովագրություն:

Շրջանավարտների շրջանում կազմակերպված հարցմանը մասնակցել է 7 մասնագիտությունների 71 շրջանավարտ:

Շրջանավարտների հարցման արդյունքում պարզվել է, որ նրանք հիմնականում բավարարված են՝

- ստացված կրթությունից,կրթական ծրագրերի իրականացումից, ստացված տեսական գիտելիքների արդիականության մակարդակից և ստացված ինքնակազմակերպման հմտություններից:

Վերը նշված բոլոր շահակիցների շրջանում կատարված հարցման արդյունքները ամբողջությամբ նեկայացված են,ՀԱԱՀ շահակիցների բավարարվածության մակարդակի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ հաշվետվությանե մեջ:

Շահակիցների անկետավորման բաց հարցերի արդյունքների համադրման վրա կատարվել են հետևյալ եզրակացությունները.

- համակարգչային լսարանները քիչ են կամ հանգեցված չեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներով,
- ուսանողներիգիտելիքների գնահատման համակարգը անհրաժետ է վերանայել և վերափոխել,
- դասախոսական կազմին անհրաժեշտ է պարբերաբար ուղարկել վերապատրաստումների,
- պրակտիկաները անհրաժեշտ է կազմակերպել ավելի արդյունավետ,
- անհրաժեշտ է ուշադրություն դարձնել լսարանային գույքին և լաբորատոր լսարանների նյութատեխնիկական հագեցվածությանը,
- բարելավել ուսանողներին և այլ շահակից կողմերին տեղեկատվության ապահովման գործընթացը:

3.5. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԶԱՐԳԱՑՄՈՒՄ

Որակյալ կադրեր պատրաստելու համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան պայմաններ ու նյութատեխնիկական բազա, կահավորված լաբորատորիաներ ու կաբինետներ, տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ ու համակողմանի օգտագործման հնարավորություն, ուսումնափորձնական տնտեսություններ, որտեղ հիմնականում ձևավորվում են ապագա մասնագետների կիրառական ու գործնական հմտությունները:

Ագրարային կրթությունն ունի կարևոր առանձնահատկություն այն առումով, որ համալսարանի բոլոր մասնագիտությունները կիրառական բնույթի են, և լավ մասնագետի պատրաստման կարևոր գրավականը տեսական գիտելիքների ամրապնդումն է պրակտիկ կարողություններով:

Դա է պատճառը, որ Ագրարային համալսարանը հետևողականորեն նորացնում ու ամրապնդում է իր նյութատեխնիկական բազան:

Համալսարանի Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսության բնականոն գործունեության ապահովման և հետագա զարգացման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցավ խորքային ջրհորի գործարկումը, որը տնտեսության համար ապահովեց բավարար ջրամատակարարում և հնարավորություն ստեղծեց Ոսկեհատի տնտեսությունը դարձնելու օրինակելի բազա ուսումնական և արտադրական պրակտիկաներն արդյունավետ կազմակերպելու համար:

Երիտասարդ հետազոտողների գիտահետազոտական աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու առումով կարևոր նշանակություն ունեցավ համալսարանում ժամանակակից սարքավորումներով հագեցած Կենսաբանական հետազոտությունների լաբորատորիայի ստեղծումը, որտեղ ուսումնասիրություններ են կատարվում Հայաստանում բուծվող գյուղատնտեսական կենդանիների արժեքավոր ցեղերի և մշակաբույսերի տարբեր սորտերի, ինչպես նաև անհետացման եզրին գտնվող էնդեմիկ տեսակների գենոտիպերի ու ալելոֆոնդերի վերաբերյալ:

Այս լաբորատորիան նաև հնարավորություն է տալիս միջազգային չափանիշներին համապատասխան սննդամթերքում ախտորոշել հիվանդածին բակտերիաները, վիտամիններն ու տոքսինները, հակաբիոտիկներն ու հակաօքսիդները և սպիտակուցային մնացորդներն ու սննդային ալերգենները:

3.6.ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ

ՀԱԱՀ-ն ակտիվորեն շարունակում է մասնակցել տարաբնույթ միջազգային ծրագրերին, ինչպես նաև ընդլայնել համագործակցության աշխարհագրությունն ու միջազգային գործընկերների քանակը: Ներկայումս համալսարանում կան գործող Տեմպուս, Էրազմուս Մունդուս, Էրազմուս+ ծրագրեր:

2015 թվականին ավարտվեցին Տեմպուսի 2 ծրագրեր: Դրանցից առաջինը <<Բարձրագույն կրթության փոփոխության նախաձեռնումն ու կառավարումը>> LaManche ծրագիրն է, որի շրջանակներում համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվել են մի շարք թրեյնինգներ՝ ղեկավարման հմտությունների զարգացման ոլորտում, մշակվել են բարձրագույն կրթության փոփոխություններին միտված ուղեցույցներ, ստեղծվել է արտաքին շահառուների բազա և վիրտուալ փորձագիտական պորտալ: Մյուսը ,Կայուն զբոսաշրջության կառավարման միջազգային բակալավրիական և մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակումե SuToMa ծրագիրն է, որի շրջանակներում մշակվել է նոր մոդուլ՝ ,Ագրոտուրիզմի կառավարումե նոր մագիստրոսական դասընթացի համար, ինչպես նաև ձեռք են բերվել նյութատեխնիկական սարքավորումներ՝ վերոհիշյալ դասընթացի անցկացման լսարանի կահավորման համար:

Ներկայումս ընթացքի մեջ են Տեմպուսի մի քանի նախագծեր՝ LeAGUe, GOVERN, ARMENQA:

LeAGUe <<Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանց>> ծրագրի հիմնական նպատակը ցկյանս ուսուցման մոտեցումների և մեթոդաբանության մշակումն ու համապատասխան կենտրոնների ստեղծումը: Նախագծի շրջանակներում ստեղծվել է ցկյանաս ուսուցման փորձագիտական պորտալ, ՀԱԱՀ-ում կահավորվել է համապա-տասխան լսարան և նախատեսվում է կազմակերպել պիլոտային դասընթացներ:

ARMENQA <<Հայաստանում ազգային և սեկտորալ որակավորման շրջանակների ամրապնդում>> ծրագրի նպատակը Հայաստանի որակավորման ազգային շրջանակի գնահատումն ու նորի մշակումն է, ինչպես նաև որակավորումների ոլորտային շրջանակի ստեղծումը: Ծրագրի շրջանակներում վերջնական մշակում են ստացել ՀՀ ԲԿ Որակավորումների ազգային շրջանակը, որակավորումների ոլորտային (գյուղատնտեսություն) շրջանակը, մշակվել են ագրոնոմիա,

սելեկցիա, գենետիկա մասնագիտության որակավորումների բնութագրիչները՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես անև կատարվել են բազմաթիվ վերապատրաստումներ ու դասընթացներ:

GOVERN <<Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակով>> ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում Բոլոնիայի չափանիշներին համապատասխան ժամանակակից կառավարման համակարգի կատարելագործումն է և բուհի ինքնավարության և պատասխանատվության ամրապնդումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ, աշխատաժողովներ ու վերապատրաստումներ:

Բացի Տեմպուսի ծրագրերից, համալսարանն ընդգրկված է նաև էրազմուս Մունդուս ծրագրին: Ներկայումս ՀԱԱՀ-ում գործում են էրասմուս-Մունդուս 3 ծրագրեր:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 ELECTRA <<Արևելյան գործընկերության երկրներում ուսուցման որակի բարձրացում մաքուր տեխնոլոգիաների և հետազոտական գործընթացների միջոցով>> ծրագրի նպատակն է Եվրոպական և 3-րդ գործընկեր երկրների միջև ձևավորել առավել սերտ հարաբերություններ, որպեսզի մեծացվի հետազոտության և արտադրության ազդեցությունը այն ոլորտներում, որոնք կապված են մաքուր էներգիաների, բնապահպանության և կայուն զարգացման հետ:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 EMBER <<Կրթական հնարավորությունների ընդլայնում>> ծրագրի նպատակն է նպաստել բուհերի միջև համագործակցությանը՝ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ուսանողներին, ինչպես նաև վարչական աշխատակազմին նոր կրթական հնարավորություններ տալով:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 EFFORT <<Կրթական ուժ՝ միտված ԵՄ-Արևելյան եվրոպական համագործակցության համար շարժունության խթանմանը>> ծրագրի հիմնական նպատակն է խթանել համակարգված ակադեմիական համագործակցությունը եվրոպական և արևելյան երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև, ընդլայնել գիտական հորիզոնները կոնսորցիումի անդամ հաստատությունների միջև լավագույն փորձի փոխանակման միջոցով, հավասար հնարավորություններ տրամադրել հաշվանդամ ուսանող-ներին և այլն:

Համալսարանը մասնակցում է Erasmus+ Հիմնական գործողություն 1 միջազգային կրեդիտային շարժունության ծրագրին և դրա շրջանակներում ներկայումս կան համագոր-ծակցության ծրագրեր տարբեր հալասրանների հետ՝ Գայզենհայմի համալսարան, Վառնայի մենեջմենթի համալսարան, Ալմերիայի համալսարան, Յագիելոնյան համալսարան, Մինյո համալսարան, Անգել Կանչեվ համալսարան, Բանատի գյուղատնտեսական և անասնաբուժ. բժշկ. համալսարան, Լիֆի էստոնական համալսարան:

Ներկայումս Համալսարանն ունի շուրջ 71 կնքված պայմանագրեր եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ: Այդ շրջանակներում Համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի և կազմակերպությունների հետ:

2015 թ.-ի սեպտեմբերից մինչև այժմ կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության 28 հուշագրեր և պայմանագրեր:

ՀԱԱՀ-ի համար կարևոր և գործուն կոնսորցիումներ են ԱՊՀ առաջատար ագրարային բուհերի ռեկտորների խորհուրդը, ինչպես նաև Եվրոմիության Տեմպուս և էրազմուս ցանցային ծրագրերի բուհերը:

2015 թվականի սեպտեմբերից մինչև այժմ սովորելու կամ հետազոտական աշխատանք կատարելու նպատակով արտերկիր են մեկնել 50 ուսանողներ, իսկ վերապատրաստման ու հետազոտական աշխատանք կատարելու նպատակով՝ 40 աշխատակիցներ:

Համալսարանի համար համագործակցության վերսկսման հնարավորություններ են բացվել նաև ամերիկյան մի շարք հաստատությունների, մասնավորապես՝ Վիջինիայի, Ֆրեզնոյի և Փենսիլվանիայի համալսարաննի հետ:

3.7 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ, ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱ ՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Կրթության որակի վերահսկման և ապահովման հանձնախումբը առաջնորդվելով 2015-2016 ուստարվա աշխատանքային պլան-ժամանակացույցի առաջադրանքներով, որոշակի աշխատանք է կատարել, որը նպաստել է ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված աշխատանքների բարելավմանը, դասընթացներին ուսանողների հաճախումների տոկոսի բարձրացմանը, ուսման առաջադիմության և պատրաստվող մասնագիտությունների մակարդակի բարձրացմանը:

2015-2016 ուստարում ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման ընթացքի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար կրթության որակի վերահսկման և ապահովման հանձնախմբին կից գործել է համալսարանի ռեկտորի կողմից հաստատված 32 գիտությունների դոկտորներից և դոցենտներից բաղկացած խումբ: Հանձնախմբի կողմից, սկսած 2015 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2016 թ. հուլիսի 15-ը, մեծածավալ աշխատանքներ են տարվել կրթության որակի վերահսկման և ապահովման ուղղությամբ, որոնք նպաստել են ուսանողների կողմից դասընթացներին հաճախումների մակարդակի բարձրացմանը, անհարգելի բացակայությունների և ուշացումների նվազեցմանը և ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձևացմանը: Հաշվետու տարվա ամբողջ ընթացքում ուսումնական պարապմունքների իրականացման գործընթացի նկատմամբ սահմանվել է վերահսկողություն և համալսարանի ղեկավարությանը պարբերաբար ներկայացվել տեղեկատվություն: Կրթության որակի վերահսկման և ապահովման հանձնա-խումբը ուսումնական գործընթացի կազմակերպման ամբողջ ընթացքում հատուկ ուշադրություն է դարձրել ուսանողների կողմից դասախոսություններին, լաբորատոր և գործնական պարապ-մունքներին պարտադիր մասնակցությանը, բաց թողումների նվազեցմանը և դրանց ժամանակին ու լիարժեք ձևով լրացմանը: Ուսումնական գործընթացի կազմակերպման, գործող կանոնակարգի ու նորմատիվային այլ փաստաթղթերի պահանջներին դրա համապատասխա-նության նկատմամբ սահմանվել է վերահսկողություն: Հանձնախմբի կողմից մի շարք ամբիոններում (էկոնոմիկայի, ֆինանսների և վարկի, ապրանքագիտության և մարկետինգի, ագրոբիզնեսի կազմակերպման, տնտեսագիտության տեսության, հաշվապահական հաշվառման) ուսումնասիրվել են ուսումնական գրականությամբ, գիտամեթոդական նյութերով ապահովվածությունը, ստուգողական առաջադրանքների, կուրսային նախագծերի (աշխա-տանքների) թեմատիկայի արդիականությունը, հանձնարարման, կատարման, դիպլոմային աշխատանքների գրախոսման, պաշտպանության կազմակերպման գործընթացներ, միջանկյալ և ամփոփ քննությունների (գրավոր աշխատանքների) ստուգման և արդյունքների գնահատման օբյեկտիվության մակարդակը և այլն: Միաժամանակ մի շարք ամբիոններում (բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների, գյուղատնտեսական մեքենաների, գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման և այլն) ուսումնասիրվել է առարկայական ծրագրերի և օրացուցային պլանների համապատասխանությունը, դրանք պարբերաբար ենթարկվել են փորձաքննությունների, դրանց կատարելագործման և շարունակական բարելավման համար մշակվել են համապատասխան առաջարկություններ և ներկայացվել ամբիոնների վարիչներին: Ուսումնասիրվել և վերլուծության են ենթարկվել առարկայական ծրագրերին համապատասխան ուսումնամեթոդական, օժանդակ նյութերով և այլ ռեսուրսներով ամբիոններում ապահովվածությանը, դրանց նպատակային ու արդյունավետ օգտագործմանն առնչվող հարցերը և մշակվել անհրաժեշտ միջոցառումներ: Հաշվետու ժամանակահատվածի ամբողջ ընթացքում հանձնախմբի կողմից վերահսկողություն է իրակա-նացվել ուսումնական գործընթացում առարկաների դասավանդման որակի և լաբորատոր ու գործնական պարապմունքների անհրաժեշտ մակարդակով կազմակերպման, կանոնա-կարգերին և հաստատված չափորոշիչներին համապատասխան ուսանողների պատրաստվա-ծության ու գիտելիքների գնահատման գործընթացների նկատմամբ: Հանձնախումբն ուսումնասիրել և վերլուծության է ենթարկել նաև ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերով և նյութատեխնիկական միջոցներով ամբիոնների ապահովվածության մակարդակը, լաբորատոր սարքավորումների ու տեխնի-կական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործմանն առնչվող հարցերը: Վերա-հսկողության գործընթացում հատուկ ուշադրություն է դարձվել ուսանողների առաջադիմության ռեյտինգային գնահատմանը, կրեդիտային բաղադրիչների կուտակմանը, որակական միջին գնահատականների համակարգերի ձևավորմանը, ներդրմանը և առաջադիմության բարձրացմանը: Կրթության որակի վերահսկման և ապահովման հանձնախումբը վերահսկո-ղություն է իրականացրել նաև ստուգարքների, միջանկյալ և ամփոփ քննությունների կազմա-կերպման ընթացքի նկատմամբ, պարբերաբար հավաքագրել օպերատիվ տեղեկատվություն, մշակել ու ներկայացրել

համապատասխան ֆակուլտետների դեկանատներ և համալսարանի ղեկավարությանը: Ուսումնական տարվա սկզբից մինչև 2016 թ. մայիսի 20-ը պարբերաբար կազմակերպվել են դասախոսությունների, գործնական ու լաբորատոր պարապմունքների դասալսումներ, քննարկումներ, նշվել թերություններն ու վրիպումները, տրվել է վերջնական գնահատական, ամփոփվել են արդյունքներն ու եզրակացությունները, ձևակերպվել է արձանագրության ձևը: 2015 թ. սեպտեմբերից մինչև 2016 թ. մայիսը հանձնախումբը համալսարանի 68 դասախոսի մոտ կազմակերպել է դասալսումներ, մանրամասն քննարկվել են արդյունքները, տրվել է համապատասխան գնահատական, ձևավորվել ներկայացվել: Վերահսկման հանձնախումբը դասալսումների արդյունքների հիման վրա առաջարկել է կազմակերպել դասախոսների վերապատրաստման, կատարելագործման և որակավորման բարձրացման կուրսեր ինչպես հանրապետության բուհերում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

Կրթության որակի վերահսկման հանձնախումբը 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի գնահատման և բարելավման նպատակով ուսումնասիրություններ իրականացրել.

1. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի դեկանատում ու դրա կազմում գտնվող 5 ամբիոններում,

2. Գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետի դեկանատում ու դրա կազմում գտնվող 7 ամբիոններում,

3. Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանատում և դրա կազմում ընդգրկված 4 ամբիոններում,

4. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի դեկանատում և դրա կազմում ընդգրկված 5 ամբիոններում,

5. Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետի դեկանատում և դրա կազմում ընդգրկված 5 ամբիոններում:

2015-2016 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում կրթության որակի վերահսկման հանձնախումբը ուսումնասիրություններ է կազմակերպել.

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետի դեկանատում և դրա կազմում ընդգրկված 5 ամբիոններում, նվիրված ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի վերլուծության, գնահատման և բարելավման հիմնախնդիրներին:

Հանձնախումբը ընտրական կարգով համալսարանի ստորաբաժանումում ուսումնասիրել է գիտական խորհրդի վերջին երկու ուսումնական տարիների և հանձնարարականների կատարման ընթացքը: Ըստ ուսումնասիրությունների՝ հիմնականում գիտական խորհրդի որոշումները բոլոր ստորաբաժինների կողմից մեծապես կատարվում են, սակայն առանձին դեպքերում տեղ գտած վրիպումների մասին կատարվել են զգուշացումներ և անհապաղ հաշվի առնվել:

Կրթության որակի վերահսկման հանձնախումբը ամենօրյա վերահսկողություն է իրականացրել ուսումնական բոլոր տեսակի պարապմունքներին ուսանողների հաճախումների նկատմամբ, որպեսզի նվազագույնի հասցվեն բոլոր տեսակի ուշացումները, անհարգելի բացակայությունները, դասաձախողումները: Հանձնախումբը, ուսումնասիրելով հաճախումների իրական վիճակը, վերահսկողություն է իրականացրել նաև բացթողումների ժամանակին և լիարժեք լրացման նկատմամբ, վերահսկելով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքը՝ վերլուծել է ստեղծված մակարդակը և գնահատել ըստ գործող օրենսդրության սկզբունքների, կանոնակարգերի և նորմատիվային այլ փաստաթղթերի: Հանձնախումբն ուշադրության կենտրոնում է պահել նաև ամբիոններում ուսումնական, ուսումնադաստիարակչական, հայրենասիրական, ինչպես նաև կուրսերում կուրսատորների և համակարգողների ընտրության, նրանց կուրսերին կցման և արդյունավետ գործունեության հետ կապված աշխատանքների ուսումնասիրության հարցերը, ինչպես և ուսումնասիրել է կանոնակարգով սահման-ված, գործող չափորոշիչներին համապատասխան ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպման և անցկացման գործընթացները, հաշվետվությունների կազմման, ներկայացման, գրախոսման և պաշտպանության կազմակերպ-

ման ու գնահատման վերահսկողությունը: Համալսարանի 18 ամբիոններում մանրամասն ուսումնասիրվել են կուրսային նախագծերի (աշխատանքների) և դիպլոմային աշխատանքների թեմատիկան, թեմաների հրատապությունը (արդիականությունը), հանձնարարման, սահմանված ժամանակացույցի համապատասխան և պահանջվող որակով կատարման, օբյեկտիվ գրախոսման և պաշտպանության կազմակերպման ու գնահատման ամբողջ ընթացքը: Առանձին առարկաների գծով ուսումնասիրվել են ուսանողների առաջադիմության կրեդիտների կուտակման ռեյտինգային գնահատման և միջին որակական գնահատականի համակարգի ներդրման գործընթացները, ինչպես նաև, ըստ կիսամյակների, ուսանողների միջանկյալ և կիսամյակային ամփոփ քննությունների հանձման ու առաջադիմության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, մշակման, նախապատրաստման ժամանակին ներկայացման խնդիրները: Վերջին տարիների ընթացքում համալսարանում ուսանողների ուսման առաջադիմության բարձրացման, ուսումնական գործընթացի կազմակերպման մակարդակի բարելավման և պատրաստվող մասնագետների որակի բարձրացման համար կատարվել է տեխնիկական վերազինում, ներդրվել բավականին միջոցներ, լաբորատորիաները համալրվել անհրաժեշտ սարքավորում-ներով, համակարգչային տեխնիկայով, գրադարանը անհրաժեշտ գրականությամբ և ուսումնական գործընթացի կազմակերպման համար ստեղծվել ավելի բարենպաստ պայմաններ: Սակայն ուսումնական գործընթացը դրան համարժեք ու անհրաժեշտ մակարդա-կով դեռևս չի կազմակերպվում, ուսումնական կաբինետները, լաբորատոր սարքավորումները, գրադարանային ֆոնդը, մյուս նյութատեխնիկական բազան արդյունավետ չի օգտագործվում, համարժեք ձևով չի բարձրանում ուսումնական գործընթացում ձևավորվող գիտելիքների մակարդակն ու արդյունավետությունը: Մի շարք ամբիոններում (գյուղ.մեքենայացման, էլեկտրիֆիկացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի և այլն) ուսումնասիրությունների և ստուգումների ընթացքում որոշակի թերություններ են արձանագրվել դիպլոմային աշխատանքների, կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմաների հրատապության, ընտրության, հանձնարարման, համապատասխան մակարդակով կատարման, գրախոսման և պաշտպանության կազմակերպման գործընթացներում: Ուսումնասիրությունների ընթացքում մի շարք ամբիոններում որոշակի թերություններ են արձանագրել ուսանողների առաջադիմության կրեդիտային համակարգով գնահատման, կրեդիտների կուտակման ու առաջադիմության միջին որակական գնահատականի ձևավորման գործընթացում: Ուսումնասիրությունների ընթացքում հանձնաժողովները կատարված դրական աշխատանքների հետ մեկտեղ բոլոր ամբիոններում արձանագրել են որոշ վրիպումներ, թերություններ, որոնք 2016-2017 և հետագա ուսումնական տարիներին պետք է լինի բոլոր դասախոսների և ամբիոնի վարիչների ուշադրության կենտրոնում: Որոշ ամբիոններում աշխատանքային և կատարողական կարգապահության հարցերը համապատասխան մակարդակի վրա չէին (Ագրոպարենային համակարգի էկոնոմիկա, էլեկտրիֆիկացիա և այլն), գործավարությունը բարելավման կարիք ունի: Մի շարք ամբիոններում համակարգված չէր պահպանվող փաստաթղթերի անվանացանկը, ցածր մակարդակի վրա է գործավարության դրվածքը (ինֆորմատիկայի և մաթ. մեթոդների, ընդհանուր քիմիայի, հողաշինարարության և հողային կադաստրի): Ուսումնական գործընթացի կազմակերպման հետ կապված հարցերի քննարկման համար աշխատանքային պլանով նախատեսված օրակարգով ամբիոնի նիստեր չեն կազմակերպվում, երբեմն նիստերը կրում են ձևական բնույթ, քննարկվում են երկրորդական հարցեր, արձանագրությունների մատյանը լրացնում անիմաստ ու անորակ ձևակերպումներով: Ամբիոնի ծանրաբեռնվածությունը դասախոսների միջև բաշխման ընթացքում հաշվի չի առնվում դասախոսների պատրաստվածության մակարդակը տվյալ առարկայի գծով, համամասնություն չի պահպանվում լսարանային և ոչ լսարանային, ցերեկային և հեռակա ժամերի միջև, երբեմն բաշխումը չի համապատասխանում չափորոշիչներին, որը ամբիոնի կոլեկտիվի մեջ առաջացնում է դժգոհություններ՝ բացասական հետևանքներով: Որոշ դասախոսների մոտ լուրջ վերաբերմունք չկա օրացույցային պլանները առարկայական ծրագրերին համապատասխան կազմման և իրականացման նկատմամբ (ինֆորմատիկայի և մաթ.մեթոդների, Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի և այլ ամբիոններ):

Ուսումնասիրությունների արդյունքները, հատկապես արձանագրված թերությունները, բացթողումներն ու վրիպումները հանձնաժողովները քննարկել են համապատասխան ամբիոններում:

2015-2016 ուս.տարվա կիսամյակների քննաշրջանի ընթացքում կրթության որակի ապահովման և վերահսկման հանձնախումբը պարբերաբար վերահսկողություն է սահմանել միջանկյալ քննությունների, իսկ կիսամյակների վերջում վերջնական ամփոփ քննությունների կազմակերպման ընթացքի նկատմամբ:

Դասախոսների, ամբիոնի վարիչների և դեկանների հետ համագործակցման շնորհիվ բավականին նվազել է բացակայությունների և բարձրացել դասընթացներին ուսանողների հաճախումների տոկոսը: Հաճախումների տոկոսի բարձրացման շնորհիվ ակնհայտ դրական տեղաշարժ է նկատվում միջանկյալ քննությունների արդյունքներում և 2016թ. նոյեմբերից սկսած սեսիոն (ամփոփ) քննությունների արդյունքներում:

Ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժինը 2016թ. սեպտեմբերից ուսումնասիրություններ է կատարել նվիրված 2015-2016 ուսումնական տարում համալսարանի գիտական խորհրդի հանձնարարականների կատարման ընթացքը և վիճակը պարզելու և հարցը նախապատրաստելու ու գիտական խորհրդում քննարկման ներկայացնելու համար: Ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել էր, որ 2015-2016 ուստարում տեղի էր ունեցել գիտական խորհրդի 11 նիստ, որոնց ընթացքում տրվել են շուրջ 155 հանձնարարականներ, այդ թվում 22-ը հասցեագրված են եղել համալսարանի ռեկտորին, 55-ը պրոռեկտորներին, 14-ը կրթության որակի վերահսկման հանձնախմբին (Բ. Շահնազարյան), 32-ը դեկաններին և ամբիոնի վարիչներին և 14-ը միայն ամբիոնի վարիչներին, մյուսները քոլեջի տնօրենին, գիտական կենտրոնների և մասնաճյուղերի տնօրեններին:

Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ բոլոր հանձնարարականները հիմնա-կանում կատարվել են:

Հարցը նախապատրաստվել է և 2016թ. հոկտեմբերին զեկուցվել համալսարանի գիտական խորհրդում:

Այնուհետ ուսումնաիսրություններ է կազմակերպվել Ագրոնոմիական ֆակուլտետի դեկանատում և նրա կազմում 8 ամբիոններում նվիրված ուսումնական գործընթացի կազմակերպման և բարելավման հիմնախնդիրներին:

Ուսումնասիրություններն ավարտվ ելուց հետո արդյունքները մանրամասն քննարկվել են ֆակուլտետի դեկանատում, համապատասխան ամբիոններում, վերլուծության ենթարկվել, վեր հանվել տեղ գտած թերություններն ու վրիպումները և ժամկետ սահմանվել դրանց վերացման նկատմամբ: Սակայն պետք է նշել, որ որոշ թերություններ շտկվում էին հենց ուսումնասիրությունների ընթացքում:

Ուսումնասիրություններին զուգահեռ ֆակուլտետի 46 դասախոսների մոտ կազմակերպ-վել է նաև դասալսումներ ամբիոնի վարիչների մասնակցությամբ, որից հետո ամբիոնի վարիչի և դասախոսի մասնակցությամբ կազմակերպել քննարկումներ, վեր հանվել թերությունները կապված օրացուցային ն պլանների, նյութի ճիշտ մատուցման, հաճախումների, ուշացումների, առաջադեմ մեթոդների և այլնի հետ և ամբիոնի վարիչների կողմից հանձնա-րարականներ տրվել սեղմ ժամկետում դրանց վերացման համար: Այնուհետև նյութերը քննարկվել են կրթության վերահսկման բաժնում, ամփոփվել և նախապատրաստվել համալսարանի գիտական խորհրդում քննարկման համար: Ամփոփ արդյունքները ներկայաց-վել են համալսարանի գիտական խորհուրդ, զեկուցվել 2016թ. դեկտեմբեր 9-ին և ընդունվել համապատասխան որոշում:

3.8. ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ կառավարության 01.11.2016 թվականի №02/02.17/[377630]-16 նիստի 6-րդ կետի հանձնարարականների կատարման կապակցությամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ագրոպարենային համակարգի համար թողարկվող մասնագիտությունների որակի բարձրացման, մասնավորապես ոլորտի գործատուների կողմից շրջանավարտների կիրառական ու գործնական հմտությունների վերաբերյալ ներկայացվող պահանջների բարելավման նպատակով 2016թ.-ի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին քննարկվել, նախա-

պատրաստվել, իրականացվել են երեք խոշորամասշտաբ ծրագրեր և սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ կառավարությանը, ՀՀ Կրթության և գիտության ու ՀՀ գյուղատնտեսության նախարարություններին:

1. Համալսարանում իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի գծով բարձր որոկավորմամբ մասնագետների պատրաստման հիմնախնդիրների քննարկման և առաջարկությունների ներկայացման նպատակով ագրոպարենային ոլորտի հիմնական գործատուների, ընկերությունների և կազմակերպությունների ղեկավարների ու արտադրության առաջատար մասնագետների մասնակցությամբ 2016 թ.-ի նոյեմբերի 10-ից 15-ը համալսարանում ըստ ոլորտների ուղղվածության կազմակերպվեցին հինգ խորհրդակցություններ, որոնց ժամանակ քննարկվեցին հետևյալ հարցերը.

1) Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկի քննարկում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հիմնավորում:

2) Մասնագիտություններիկրթական ծրագրերի ուսումնական պլանների, ընդհանուր մասնագիտական ու թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ցանկի և առարկայական ծրագրերի վերլուծություն, գնահատում և առաջարկությունների ներկայացում:

3) Թողարկվող մասնագետների գործնական հմտությունների ձևավորման գործող համակարգի (լաբորատոր և գործնական պարապմունքների,ուսումնական, արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների կազմակերպում) վերլուծություն և առաջարկությունների ներկայացում:

4) Արտադրությունում աշխատող մասնագետների, ֆերմերների վերապատրաստման և վերարակավորման գործող համակարգի վերլուծություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների քննարկում:

5) Ոլորտը որակյալ մասնագետներով ապահովմանն ուղղված գործատուների այլ առաջարկությունների քննարկում:

Քննարկումների արդյունքում գործատուների կողմից կարևոր առաջարկություններ ներկայացվեցին մասնագիտական և թողարկող ամբիոններում դասավանդվող առարկաների ծրագրերի ու հատկացված ժամաքանակների վերանայման, ամբիոնների լաբորատոր բազան տեխնիկական ու տեխնոլոգիական ժամանակակից միջոցներով համալրման, պրակտիկաների արդյուանվետ կազմակերպման և հանրապետության մարզերում համալսարանի դասախոսների կողմից գյուղատնտեսության ոլորտի մասնագետների ուսուցողական և վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

2. Համալսարանի հետ համատեղ Կրթական գործընթացների արդյունավետության քննարկման և ուսումնասիրման կապակցությամբ ՀՀ ԿԳ նախարարությանը տրված ՀՀ կառավարության հանձնարարականների հետ կապված, հիմք ընդունելով նաև մարզպետարանների կողմից համապատասխան մարզերում մասնագիտությունների պահանջարկի մասով իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, համալսարանում մշակվեցին ծրագրեր մասնագիտական գիտելիքների կատարելագործման (կրթական ծրագրերում ավելացնելով գործնական աշխատանքների ժամաքանակները) և արդյունավետ կիրառման համար:

Բոլոր մասնագիտությունների գծով վերանայվեց ,,Գյուղատնտեսական արտադրության կազմակերպում'' առարկայի ծրագիրը, այն էականորեն փոխվեց և վերանվանվեց ,, Ֆերմերային տնտեսությունների կազմակերպում և կառավարում'', անվանումով, որը 2017 թվականից սկսած գործողության մեջ կդրվի համալսարանի բոլոր մասնագիտություններում:

Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում նշանակալի դեր ունեն ճկուն գործելաոճով, մրցակցությանը դիմակայելու հմտություններ ունեցող ոլորտի ոչ միայն բարձրագույն, այլ նախնական (արհեստագործական), բանվորական և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների (մասնագիտացումների) համապատասխան որակավորմամբ կադրերը: Հիմք ընդունելով նաև այս առումով մարզպետարանների, գործատուների և արտադրության աշխատողների առաջարկությունները, 2017 թ.-ից սկսած բակալավրային կրթական ծրագրերին համահունչ, շուրջ 34 բանվորական մասնագիտություն-

ների գծով, համալսարանի ուսանողների և գյուղատնտեսական արտադրության աշխատողների համար համալսարանի կողմից կկազմակերպվեն արհեստագործական և լրացուցիչ (բանվորական) կարճաժամկետ դասընթացներ:

3. Ուսանողների կիրառական հմտությունների բարելավման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեցավ Ագրարային համալսարանի Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում կաթի վերամշակման արտադրամասի գործարկումը, որտեղ ոլորտի ապագա մասնագետները անմիջապես ծանոթանում են կաթի վերամշակման ու կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիաներին:

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի ծրագրերի շրջանակներում՝ «Կրթական ծրագրերի կենտրոն» ՕԻԳ-ի աջակցությամբ, 2015 թվականին համալսարանում ստեղծվեց «Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնը», որի համար ձեռք բերվեց գյուղատնտեսական տեխնիկայի ամբողջ լրակազմը՝ մոտ 70 մլն դրամ արժողությամբ:

2016 թվականից համալսարանում իրականացվում է «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» ծրագիրը՝ 150.0 մլն դրամ արժողությամբ, որի հիմնական նպատակը գինեգործական բարձրորակ կրթության համար նյութատեխնիկական լիարժեք բազայի ստեղծումն է, ինչպես նաև համալսարանին պատկանող տարբեր ստորաբաժանումների գիտական և նյութական ռեսուրսները մեկ միասնական համակարգի մեջ միավորելը:

Համալսարանում (հատկապես վերջին 4 տարիներին) հետևողական աշխատանքներ են տարվում առկա 74 լաբորատորիաների և 2 ուսումնափորձնական տնտեսությունների նյութատեխնիկական բազան ամրապնդելու ուղղությամբ: Նորացվել են գործող լաբորատորիաների սարքավորումները, ստեղծվել է 8 նոր մասնագիտացված լաբորատորիա: Բարելավվել են համալսարանի տնտեսությունների վարելահողերը, խոտհարքները և արոտավայրերը, հիմնվել են խաղողի ու պտղատու նոր այգիներ: Ոսկեհատի ուսումնափորձնական տնտեսությունում 2015 թվականին շահագործման հանձնվեց խորքային ջրհորը, ինչը հնարավորություն ընձեռեց ընդարձակելու ուսումնագիտաարտադրական բազան:

Միաժամանակ, Ագրարային համալսարանը մշակել է ծրագրեր՝ ուղղված սեփական բազայի զարգացմանը և ուսումնափորձնական տնտեսությունների հզորացմանը, որոնք հիմք կհանդիսանան բոլոր մասնագիտությունների համար ձեռքբերելու գործնական գիտելիքներ ու հմտություններ:

Մշակվել է 18 ծրագիր, ուղղված պահածոյացման և սննդախտանյութերի, մսի և մսամթերքի տեխնոլոգիաների, բուսաբուծության, պտղաբուծության և խողողագործության, ջերմատնային տնտեսության, մշակաբույսերի ոռոգման, ոչխարաբուծության, տոհմային այծաբուծության, տոհմային տավարաբուծության, խոզաբուծության, երկրատեղեկատվական համակարգերի և հեռավար զոնդավորման տեխնոլոգիաների և այլ բաղադրիչների զարգացմանը:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կազմում՝ որպես կառուցվածքային ստորաբաժանումներ, գործում է երկու գիտահետազոտական ինստիտուտ, մեկ հետազոտական կենտրոն, հինգ գիտական պրոբլեմային լաբորատորիա: 2012 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կազմից միացվեց Ագրարային համալսարանին մասնաճյուղի կարգավիճակով երեք գիտական կենտրոն:

Ագրարային համալսարանի կազմում՝ կենտրոնացնելով գիտական կենտրոնների ներուժն ու ռեսուրսները, հնարավորություն ընձեռվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանին նպատակաուղղված գործընթացներ իրականացնել՝ համալսարանը Արևմտյան տիպի հետազոտական համալսարան դարձնելու ուղղությամբ:

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Համալսարանում վերջին տարիներին պլանավորվել և բարձրագույն կրթության ոլորտում ներդրվել են համակողմանի բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են կոռուպցիոն երևույթների և ռիսկերի նվազեցմանը, սուբյեկտիվ երևույթների կանխարգելմանը, կրթության որակի բարելավմանը, կառավարման արդյունավետության բարձրացմանը, ինչպես նաև հրապարակայնության և թափանցիկության ապահովմանը:

Այս տեսանկյունից կարևոր խնդիր է համարվում կոռուպցիոն ռիսկերի գնահատման և դրսևորման կանխարգելման տեսանկյունից համալսարանում կրթության ոլորտի կանոնակարգերի, ընթացակարգերի վերանայումը: Հաշվետու ժամանակահատվածում վերանայվել են համալսարանում կրթության կազմակերպման և իրականացման վերաբերյալ կանոնակարգերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության և ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան իրավական և նորմատիվային ակտերը, ինչպես նաև ուսանողության և այլ շահառուների (ծնողների, գործատուների) առաջարկությունները:

Կրթության ոլորտի թափանցիկության ապահովման նպատակով համալսարանում 2010 թվականին ստեղծվել է տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը և համալսարանի կայքը (anau.am), որտեղ տեղադրված են համալսարանի գործունեությանը վերաբերող բոլոր կարգերը, որոնցում մանրամասն լուսաբանված են ուսանողների իրավունքները և պարտականությունները, ինչը էապես բարձրացրել է համալսարանում հրապարակայնության և վերահսկողության արդյունավետությունը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը իր մեջ ներառում է՝ գիտական գրադարանը, տեղեկատվական համակարգերի կառավարման բաժինը, տեղեկատվական համակարգերի սպասարկման բաժինը, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժինը, ինչպես նաև էլեկտրոնային ուսուցման և ինտերնետ կապի համակարգչային կաբինետները:

Համալսարանի ուսանողները ունեն ռեկտորի հետ ազատ շփվելու լիակատար հնարավորություն:

Թափանցիկության և հրապարակայնության կարևոր գործոններից է բուհի հոգաբարձու-ների խորհրդում ուսանողության, ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ կառավարության կողմից նշանակված ներկայացուցիչների ներգրավվածությունը:

Հակակոռուպցիոն աշխատանքների ողջ համակարգում իր կարևոր տեղն ունի կրթության իրականացումը բազմագործոնային համակարգով, երբ ուսանողը գնահատվում է ամբողջ կիսամյակում տարբեր գործոններից կուտակած արդյունքների հաշվեկշռային միավորով:

Համալսարանի համար առավել կարևորվում է թափանցիկության ապահովումը քննությունների ու գիտելիքների ատեստավորման ու գնահատման տարբեր մակարդակներում և օբյեկտիվության ապահովումը: Այս նպատակով համալսարանում մշակվել և ներդրվել է ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգման, ստուգարքների և քննությունների անցկացման և գնահատման կանոնակարգ:

Բուհում ընդունված և ներդրված հատուկ կարգ, որի համաձայն կիսամյակային ամփոփիչ բոլոր քննությունները անխտիր կազմակերպվում են գրավոր, ռեկտորատի, դեկանատի, կրթության որակի վերահսկողության բաժնի, ամբիոնի վարիչի և դասախոսի մասնակցությամբ: Բոլոր գրավոր աշխատանքները ստորագրվում են հանձնաժողովի պատասխանատու անդամի կողմից և տրամադրվում է ամբիոնին ստուգման: Ուսանողների իրավունքների պաշտպա-նության և բողոքարկման հնարավորության ընձեռման տեսանկյունից իրականացվում են հետևյալ աշխատանքները. գրավոր քննության արդյունքները անմիջապես տեղեկագիր չեն անցկացվում, այն քննարկվում է տվյալ խմբի (հոսքի, կուրսի) ուսանողների հետ, բոլոր ուսանողների ներկայությամբ, քննարկվում են բողոքները (առկայության դեպքում), որից հետո արդյունքները գրանցվում են համապատասխան տեղեկագրում: Այս մեթոդի ներդրումը խիստ հավանության է արժանացել ուսանողության շրջանում: 2010-2011 և 2011-2012 ուստարիների ընթացքում նույն սկզբունքը ներդրվել է հեռական ուսուցման համակարգում, որտեղ ստուգողական, կուրսային աշխատանքների ընդունումը և սեսիոն քննությունները իրակա-նացվում են հանձնաժողովների ներկայությամբ: Սկսած 2011-2012 ուստարվանից՝ արմատա-պես վերանայվել են ուսանողների

ավարտական պետական ատեստավորման աշխատանք-ները: Բոլոր մասնագիտությունների գծով պետական ատեստավորման հանձնաժողովների անդամների 50%-ից ավելին արտադրության, վերամշակող կազմակերպությունների, բանկային, ապահովագրական, ֆերմերային տնտեսությունների և համապատասխան ոլորտների գերատեսչություններից ներգրավված մասնագետներ են, ովքեր կարևոր դերակատարություն ունեն ոչ միայն ավարտական ատեստավորման աշխատանքների հրապակայնության, գիտելիքների գնահատման գործընթացում, այլ նաև իրենց առաջարկություններով նպաստում են առարկաների ծրագրերի բարելավման, կիրառական հմտությունների ձեռքբերման և ընդհանրապես կրթության որակի ապահովման առաջընթացին: Այս համակարգի դրական երևույթներից է նաև այն, որ տարբեր կազմակերպությունների ներկայացուցիչները շահագրգիռ են լավագույն շրջանավարտներին ընտրելու և իրենց մոտ աշխատանքի ընդունելու, ինչպես նաև համալսարանի հետ ակտիվ համագործակցելու տեսանկյունից:

Սկսած 2011-2012 ուստարվա երկրորդ կիսամյակից պետական ատեստավորման ողջ գործընթացը ձայնագրվում է, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին բողոքարկելու գնահատման արդյունքները:

Ուսանողների գիտելիքների գնահատման ողջ գործընթացում կոռուպցիոն դրսևորման երևույթների կանխարգելման լավագույն օրինակներից մեկը, որը համալսարանը ներդնում է սկսած 2009 թվականից, գնահատման բազմագործոնային համակարգն է: Այս համակարգի ներդրումը նվազեցնում է դասախոսի դերը ամփոփիչ քննության /գիտելիքների ամփոփիչ ստուգումների/ ժամանակ, քանի որ ուսանողը ամբողջ կիսամյակի ընթացքում կուտակում է միավորներ, իսկ գիտելիքների ամփոփիչ ստուգումը ընդամենը մի բաղադրիչ է:

Համալսարանում ապահովված է կրթական բարեփոխումների հրապարակայնությունը, թափանցիկությունը և հասանելիությունը բոլոր ուսանողներին: Կանոնակարգերը կամ դրանց հիմնական դրույթները իրենց արտացոլումն են գտնում համալսարանի կայքում, «Հասկ» թերթում, ուսանողների համար հրատարակվող բուկլետներում, կազմակերպվող սեմինար-ներում:

Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման և կանխարգելման առավել արդյունավետ մեթոդը, որը վերջին տարիներին սիստեմատիկ կիրառվում է համալսարանում, յուրաքանչյուր կիսամյակում ռեկտորի պարբերաբար հանդիպումներն են ուսանողական խորհրդի և բոլոր կուրսերի ուսանողների, անհրաժեշտության դեպքում նաև ծնողների հետ: Այս հանդիպումներում բացահայտված բոլոր թերությունները, որոնք ուսանողները ներկայացնում են ռեկտորին շատ ազատ և անկաշկանդ, անմիջապես, օպերատիվ քննարկվում են ռեկտորատի նիստերում և ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ սկսած սանիտարա-հիգիենիկ պայմաններիկց մինչև կրթության որակի բարելավման և ապահովման խնդիրները, և տարբեր տիպի դրսևորումները, այդ թվում նաև կոռուպցիոն ռիսկերը:

Հակակոռուպցիոն միջոցառումների շարքին են պատկանում վերջին տարիներին համալսարանում ներդրված կրթության շարունակության ապահովման գործընթացում գիտելիքների ստուգման (քննությունների) բաղադրիչի վերացումը, ինչպես օրինակ՝ միջնակարգ մասնագիտական կրթության ծրագիրը բարձր գնահատականներով ավարտած շրջանավարտների կրթության շարունակումը բակալավրիատում, բակալավրիայի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրայում և երկրորդ մասնագիտության ձեռքբերման հնարավորությունները նախորդ կրթության դիպլոմի միջուկի գնահատականների արդյունքներով: Թվարկած բոլոր կրթական հաջորդական մակարդակների անցումը իրականացվում է դրան նախորդող կրթական ծրագրի ընթացքում ձեռք բերած գիտելիքների միջին ցուցանիշների հիման վրա, մրցութային կարգով, ըստ սահմանված տեղերի և կարգի, որը զերծ է կոռուպցիոն ռիսկից:

Ակնհայտ է, որ կրթական համակարգում կոռուպցիոն ռիսկերը հիմնականում առաջանում են այն ուսանողների (կամ նրանց հովանավորները) մոտ, ովքեր վատ են մասնակցում ուսումնական գործընթացին: Նման ռիսկը բացառելու կամ հիմնականում մեղմելու նպատակով համալսարանում մշակվել է կանոնակարգ և ներդրվել է ուսանողների հաճախումների խիստ վերահսկողություն: Համալսարանի ուսումնամեթոդական կենտրոնում ստեղծված է աշխատանքային հատուկ խումբ, որը յուրաքանչյուր օր և յուրաքանչյուր ժամ ստուգում է ուսումնական

պարապմունքների կայացման, ուսանողների հաճախումների վիճակը ամբողջ համալսարանում և յուրաքանչյուր օրվա ընթացքում համալսարանի ղեկավարությունը ստանում է բոլոր տվյալները հաճախումների վերաբերյալ: Ստացված արդյունքների վերլուծության արդյունքում ձեռնարկվում են օպերատիվ միջոցառումներ համապատասխան ֆակուլտետների, ամբիոնների և դասախոսների ու ուսանողների հետ: Անհրաժեշտության դեպքում ֆակուլտետ-ների դեկանները, իսկ առանձին դեպքերում համալսարանի ռեկտորը կազմակերպում են հանդիպումներ սիստեմատիկ բացակայող ուսանողների ծնողների հետ: Ուսանողների հաճախումների հարցը մշտապես գտնվում է համալսարանի ռեկտորատի ուշադրության կենտրոնում, յուրաքանչյուր ամիս քննարկվում է նախորդ ամսվա հաճախումների արդյունքները և ձեռնարկվում անհրաժեշտ միջոցառումներ: Համալսարանում ներդրված նման համակողմանի աշխատանքների շնորհիվ ուսանողների հաճախելիության մակարդակը կազմում է 90-93%-ի: Նման արդյունքների համալսարանը հասել է ուսանողական խորհրդի և ուսանողության հետ սիստեմատիկ, հետևողական բաց և հրապարակային աշխատանքների շնորհիվ, բայց և այնպես այս գործընթացն առավել բարելավման կարիք ունի, մասնավորապես ուսանողության շրջանում ինքնագիտակցության մակարդակի բարձրացման տեսանկյունից:

Համալսարանում ուսանողների ներքին և արտաքին շարժունությունը ապահովելու և տարբեր տեսակի ռիսկերը բացառելու նպատակով ստեղծված են հանձնաժողովներ: Մասնավորապես «Էրասմուս-Մունդուս», «Ագրարային մենեջմենտ» ծրագրերի շրջանակներում համալսարանը համագործակցում է Հունաստանի, Գերմանիայի, Պորտուգալիայի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հոլանդիայի, Էստոնիայի, Լիտվայի և այլ երկրների ագրարային համալսարանների հետ, որի արդյունքում իրականացվում է ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների և դասախոսների փոխադարձ շարժունություն: Մրցութային կարգով նման գործընթացի իրականացման և շարժունությանը մասնակցող երիտասարդության հետ համակողմանի աշխատանքների արդյունքում, ծրագրերի արտասահմանյան ղեկավարները բազմիցս նշել են ագրարային համալսարանում ստեղծված նպաստավոր պայմանները, թեկնածուների օբյեկտիվ ընտրությունը և ծրագրերի պատշաճ իրականացումը ու հրապարակայնության ապահովումը: Բոլոր ծրագրերի վերաբերյալ տեղեկությունը տարածվում է համալսարանի կայքի, «Հասկ» թերթի և հայտարարությունների միջոցով:

ՀՀ Կրթության և գիտության նախարարության համապատասխան կարգի և հանձնարա-րականի հիման վրա համալսարանում մշակվել և ներդրվել է ուսումնական տարվա առաջադիմության արդյունքով ուսանողների շրջափոխման գործընթացը: Այս կարգը համալսարանում ներդրված է շուրջ 8 տարի, որի համար համալսարանում ստեղծված է մանդատային հանձնաժողով, մշակված է կանոնակարգ, որը 2 անգամ վերանայվել և վերահրատարակվել է: Սույն կարգը տեղադրված է համալսարանի և հրատարակվել է «Հասկ» թերթում: Ուսանողների առաջադիմության արդյունքները բազմագործոնային համակարգով քննարկվում են բոլոր մասնագիտությունների 2-րդ և բարձր բոլոր կուրսերում, ուսանողական խորհրդում, մանդատային (շրջափոխման) հանձնաժողովում և ռեկտորատում: Վերջնական արդյունքները մասսայականացվում են ուսանողության շրջանում: Քննարկումները բաց են բոլոր ուսանողների համար և կոռուպցիոն ռիսկը այս գործընթացում բացառված է, դրա մասին են վկայում այն հանգամանքը, որ յոթ տարիների ընթացքում շրջափոխման նկատմամբ որևէ բողոք չի արձանագրվել, իսկ եթե որևէ հարց ուսանողի կողմից առաջարկվում է, ապա օպերատիվ քննարկվում է և ըստ գործող կարգի տրվում է համապատասխան լուծում:

Համալսարանում մշակված են անհրաժեշտ կանոնակարգեր դասախոսական կազմի ընտրության, նշանակման, առաջխաղացման և աշխատանքային հարաբերությունների կարգավորման թափանցիկության և հրապարակայնության օրինականությունն ապահովելու ուղղությամբ: Համալսարանում խիստ կարևորվում են պրոֆեսորադասախոսական կազմի բնականոն սերնդափոխության խնդիրները: Մի շարք ամբիոններում դասախոսների միջին տարիքը 60 և ավելի է, սահմանվում են ստաժոր-դասախոսի հաստիք: Այդ էր պատճառը, որ համալսարանում հիմնվեց «Ստաժորի» ինստիտուտ: Այս առումով որևէ ռիսկ բացառելու

տեսանկյունից ամբիոնում և ֆակուլտետում քննարկվում և ռեկտորին է ներկայացվում մագիստրատուրան և ասպիրանտուրան հաջող ավարտած երիտասարդ մասնագետների թեկնածությունը ստաժորի տարակարգում ընդգրկելու համար, միաժամանակ ամբիոնը պարտավորվում է ստաժորի դասընթացը ավարտելուց հետո տվյալ երիտասարդին սահմանված կարգով ընդգրկել դասախոսական կազմում: Պրոֆեսորադասախոսական կազմի համալրման նման եղանակի կիրառման արդյունքում վերջին տարիներին ամբիոնները հիմնականում համալրվել են երիտասարդ դասախոսներով : Միայն վերջին 5 տարիների ընթացքում ամբիոնները համալրվել են շուրջ 90 երիտասարդ դասախոսներով:

Կոռուպցիոն դրսևորումների բացահայտման և կանխարգելման տեսանկյունից համալսարանում յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո կազմակերպվում են ուսանողների կողմից դասախոսների գնահատման անանուն հարցման աշխատանքները, որը իրականացվում է ուսումնամեթոդական կենտրոնի, համապատասխան ֆակուլտետի դեկանատի և ուսանողական խորհրդի անդամների մասնակցությամբ՝ ըստ սահմանված կարգի և հարցաթերթիկի:

Հարցաթերթիկը բաղկացած է 2 բաժնից, յուրաքանչյուրը 6-ական հարցից: Ստացված արդյունքները մշակվում են ըստ դասախոսների, ամբիոնների և ֆակուլտետների: Դասախոսների գնահատումը կատարվում է 5 բալային սանդղակով: Այն դասախոսները, ովքեր ուսանողների կողմից գնահատվում են 3-ից ցածր միավորով, նրանց հետ տեղի է ունենում անհատական քննարկում ռեկտորի, պրոռեկտորի, ֆակուլտետի դեկանի կամ ամբիոնի վարիչի կողմից բացահայտելու այն թերությունները, որոնք նշել են ուսանողները և նախանշել միջոցառումները, որոնք պետք է նպաստեն թերությունների վերացմանը:

- Հակակոռուպցիոն աշխատանքները հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով սկսած 2011 թվականից սեմինար պարապմունքներ է իրականացրել տարբեր կուրսերի ուսանողության շրջանում «Մարդու իրավունքների ինտեգրումը, հակակոռուպցիոն օրակարգ. մարտահրավերները, հնարավորություններն և կարողությունները» ծրագրով:

Սեմինարների նպատակն է.

-Բարձրացնել իրազեկվածությունը և ծավալել քննարկումներ կոռուպցիայի մասին

-Ներգրավել ուսանողների թափանցիկության խթանման և կոռուպցիոն դեպքերի դիտարկման խնդիրներին

-Խթանել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացին:

Այդուհանդերձ, վերը իրականացված բոլոր աշխատանքները այս կարևոր խնդրի լուծման սկզբնական քայլերն են, որը պետք է ունենա շարունակական բնույթ: Հակակոռուպցիոն ծրագրի ամբողջ համատեքստում առավելագույնս կարևորվում են կրթության որակի ապահովման հիմնախնդիրները: Ներկայումս համալսարանը կրթության որակի գնահատման ու բարելավման համակարգում որոշիչ քայլեր է կատարում՝ ելնելով Բոլոնիայի գործընթացի և այն խնդիրներից, որոնք դրված են բարձրագույն կրթության համակարգի առջև:

Այս տեսանկյունից համալսարանը կարևորել է նախ և առաջ կրթական ոլորտի համապատասխան կառույցի և քաղաքականության մշակումը՝ ներառելով այն համալսարանի ռազմավարական ծրագրում:

Ակնհայտ է, որ համալսարանում իրականացվող կրթական բարեփոխումները, կրթական ծրագրերի մերձեցումը եվրոպական ընդհանուր չափանիշներին, կհանգեցնի համալսարանի միջազգային մրցակցության և գրավչության բարձրացմանը, պատրաստվող մասնագետների որակի բարելավմանը:

2009-2010 ուսումնական տարում համալսարանում ստեղծվել են կրթության որակի վերահսկման և ապահովման մշտական գործող ներբուհական կառույց ու հանձնաժողով:

Ներքին գնահատման առավել արդյունավետ եղանակների ներդրման՝ ինքնավերլուծության և ինքնագնահատման նպատակով մշակվել և ներդրվում են.

-2009 թվականին գիտական խորհրդում հաստատվել է Կրթության որակի վերահսկման և ապահովման մշտական գործող հանձնախմբի ժամանակավոր կանոնակարգ (27.10.2009թ., արձ. N2):

- Մշակվել է ՀԱԱՀ-ի «Կրթության որակը և կառավարման ռազմավարությունը» :

- «Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կրթության որակի վերահսկման ապահովման» ուղեցույցը:

- «Ուսումնական գործընթացի որակի գնահատման ինտելեկտուալ համակարգը» ուղեցույցը:

- «Կրթության որակի վերահսկումը ՀԱԱՀ-ում» (համակարգվածությունը և հակասությունները):

-2013 թվականից գործում է նաև ուսանողների գնահատման բողոքարկման ընթացակարգը, որի համար հիմք են հանդիսացել ՀՀ ԿԳ նախարարության «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգը»:

-«Որակի ներհամալսարանական վերահսկողության ու կառավարման մեթոդաբանությունը»:

-«Ուսուցման որակի մոնիտորինգի դիագրամայի» կառուցման մեթոդով ՀԱԱՀ-ում ինքնավերլուծության գործընթացի իրականացման ուղեցույց:

-«Ատեստավորման և կրթության որակի վերահսկողության անկախ համակարգը»:

- «Ուսումնական գործընթացի որակի վերահսկողություն և ապահովում» ժամանակավոր ուղեցույց:

-Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կրթության որակի վերահսկման և ապահովման հայեցակարգ (2010-2015 թթ.):

2012 թվականին համալսարանի կոլեկտիվը իրականացրել է գործունեության ինքնավերլուծությունը և հոկտեմբերի 2-ին ամբողջ փաթեթը (շուրջ 3500 էջ) ներկայացվել է ՀՀ մասնագիտական Կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամին: Մշակվեց և հաստատվեց կրթության որակի վերահսկման և կառավարման ներհամալսարանական ռազմավարությունը:

2013թ. համալսարանը ստացել է հավատարմագրման հանձնաժողովի դրական կարծիքը և առաջարկությունները ուսումնական գործընթացի վերաբերյալ և շարունակում է իրականացնել այդ փուլում բացթողումների վերացման ուղղությամբ:

Ինքնավերլուծության արդյունքների հիման վրա, ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող և դրանց մասնացիտությունների հավա տարմագրման կարգի» համաձայն Հայաստանի ազգային ագրարային համալսարանը ձեռնամուխ է եղել այդ բարդ և պատասխանատու գործընթացին:

Ելնելով համալսարանի հավատարմագրման հանձնաժողովի առաջարկություններից՝ ներկայումս համալսարանում մշակվում են կրթության որակի բարելավման, նյութատեխնիկական բազայի հարստացման, կառավարման, աշխատակիցների և ուսանողների բողոքարկման, բուհի արդյունավետության բարձրացման և այլ հիմնահարցերի քաղաքականություն և կանոնակարգեր:

Կրթական համակարգում ակադեմիական անազնվության դրսևորումները նվազեցնում են ինչպես ակադեմիական միջավայրի ուղղակի շահառուների գործունեության, այնպես էլ ուսումնական գործընթացի ու ակադեմիական ողջ համակարգի արդյունավետությունը և համակարգի նկատմամբ հասարակայնության վստահությունը:

Կրթության ու գիտության համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի միջոցառումների համալիր ծրագրի շրջանակներում համալսարանում իրականացվեցին մի շարք գործընթացներ:

Ակադեմիական միջավայրում անազնիվ դրսևորումների կանխարգելման ու բացառման համար կրթական գործընթացների անհրաժեշտ կանոնակարգման և վերահսկման օբյեկտիվ մեխանիզմների ներդրման ու հետևողական կիրառման նպատակով մշակվեց և գործողության մեջ

դրվեց <<Ակադեմիական ազնվության ապահովման քաղաքականությունը և ընթացակարգը>> և ոլորտը կարգավորող մի շարք այլ փաստաթղթեր:

Ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացում ակադեմիական ազնվության սուբյեկտիվ դրսևորումների կանխարգելման նպատակով համալսարանում հստակեցվեցին գնահատման չափանիշները և քննության ձևերի ընտրությունը: Վերջին տարիներին համալսարանում թե՝ առկա, թե՝ հեռակա ուսուցման համակարգում կիսամյակային ավարտական քննությունները կազմակերպվում և իրականացվում են կենտրոնացված կարգով, գրավորբանավոր սկզբունքով՝ ռեկտորատի, դեկանատի և ամբիոնի ներկայացուցիչների հսկողությամբ:

Քննությունների անցկացման այս ձևն արդյունավետ է և՝ գնահատման օբյեկտիվության, և՝ թափանցիկության, և՝ պատշաճ վերահսկողության ապահովման առումներով:

Կրթական գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և ակադեմիական ազնվության ապահովման գործընթացների շրջանակներում Կրթության որակի վերահսկման հանձնախմբի և տարբեր հանձնաժողովների ներկայացմամբ 2016թ-ի ընթացքում համալսարանի Գիտական խորհրդի նիստերում լսվել, քննարկվել և որոշումներ են կայացվել առանձին ֆակուլտետներում, ամբիոններում և այլ ստորաբաժանումներում տեղ գտած թերությունների ու բացթողումների վերացման ու բացառման կապակցությամբ:

Գիտական խորհրդում կայացած որոշումները վերաբերվում են ուսումնական գործընթացի բարելավմանը, ուսանողների հաճախումների պատշաճ մակարդակի ապահովմանը, դասավանդման որակի բարձրացմանը, ուսանողների գիտելիքների օբյեկտիվ ու թափանցիկ գնահատման գործընթացի ապահովմանը, ներբուհական վերահսկողական մեխանիզմների կատարելագործմանը և մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայմանն ու բարելավմանը:

2016թ-ի ընթացքում համալսարանի ռեկտորատի նիստերում նույնպես քննարկվել և որոշումներ են կայացվել առկա և հատկապես հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման, ինչպես նաև գնահատման գործընթացներում կոռուպցիոն ռսիկերի նվազեցման ու բացառման կապակցությամբ:

Հակակոռուպցիոն գործընթացների շրջանակներում համալսարանում վերջին տարիներին աշխատակազմի գործունեությունը հիմնականում միտված է այս ուղղությամբ ուսանողության հետ տարվող աշխատանքների ինտենսիվացմանը:

Այս առումով ռեկտորի, պրոռեկտորների, հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի և դեկանների կողմից բազմաթիվ հանդիպումներ են կազմակերպվում թե՛ առկա, և թե՛ հատկապես հեռակա ուսուցման համակարգի ուսանողների հետ ակադեմիական ազնվության պահպանման, տարբեր կարգի ռիսկերի նվազեցման և քննական գործընթացների օբյեկտիվ ու թափանցիկ անցկացման հարցերով:

Հանդիպումների ժամանակ ուսանողների կողմից բարձրացված բոլոր հարցերը, մտահոգությունները և առաջարկությունները քննարկվում են և դրանց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ:

Ուսանողների առաջարկությունների և համապատասխան քննարկումների արդյունքների հիման վրա 2016թ-ի ընթացքում համալսարանի որոշ ամբիոնների վարիչներ ու մի շարք դասախոսներ ստացել են կարգապահական տույժեր:

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2016 Թ. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կազմում, որպես կառուցվածքային ստորաբաժանումներ գործում է երկու գիտահետազոտական ինստիտուտ (ԳՀԻ)՝ «Գյուղատնտեսության մեքենայացման, էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների», «Պարենամթերքի տեխնոլոգիաների, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների», «Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության» հետազոտական կենտրոնը, ինչպես նաև հինգ պրոբլեմային լաբորատորիա՝ «Պեստիցիդների և բույսերի պաշտպանության», «Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի», «էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության», «Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության», «Գյուղատնտեսական կենդանիների սելեկցիայի, գենետիկայի և կերակրման» և՝ մասնաճյուղի կարգավիճակով երեք գիտական կենտրոն՝ «Հրանտ Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն»-ը (ՀԱՄԳԿ), «Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն»-ը (ԽՊԳԳԿ) և «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն»-ը:

Աղյուսակ 19

ՀՀ պետական բյուջեից ՀԱԱՀ-ում «Գիտական, գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բաղադրիչով 2016 թ. ֆինանսավորման ծավալների բաշխվածությունը

Գիտական կառուցվածքի անվանումը	Հաստիքների քանակը	Աշխատակիցների քանակը	Ֆինանսավորման ծավալը, հազար դրամ
Գյուղ. մեքենայացման, էլեկտր. և ավտ. փոխադր. ԳՀԻ	17	31	16832.3
Պարեն. տեխն, սննդի անվտ. և կենսատեխ. ԳՀԻ	18	28	17822.3
Գյուղ.կենդանի. սելեկց., գեն. և կերակր. պրոբլ. լաբ.	7	15	6830.9
Պեստիցիդների և բույս. պաշտպ. լաբորատորիա	10	11	3901.3
Գիտական կենտրոնի պահպանում և զարգացում	8	10	7467.0
Բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիա	7	9	6930.9
էկոլոգիայի և օրգանական գյուղ. պրոբլ. լաբ.	5	11	4950.7
Անասնաբուժության և անասնաբուժական սան փորձաքննության պրոբլեմային լաբորատորիա	14	32	13861.9
Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոն	6	17	6863.6
Խաղողապտղագինեգործության գիտական կենտրոն	34	34	40256.9
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն	23	24	26508.7
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն	80	86	95715.0
Ընդամենը	**229**	**308**	**253041.5**

Համալսարանում իրականացվող գիտահետազոտական ծրագրերի ֆինանսավորման աղբյուրը 2016 թ. (ինչպես նախորդ տարիներին) հանրապետության պետական բյուջեն է, որից «Գիտական, գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» բազային բաղադրիչով ֆինանսավորումը կազմել է 253,042 միլիոն դրամ (աղյու. 19), ինչպես նաև գիտական աստիճանների համար հավելավճար՝ 29,78 միլիոն դրամ ծավալով:

Պետական բյուջեից տրամադրված ֆինանսական միջոցներից աշխատավարձի ֆոնդը կազմել է մոտ 89,29 %:

Գիտական կենտրոններում, ԳՀԻ-ներում, գիտական պրոբլեմային լաբորատորիաներում տարվա ընթացքում ընդգրկվել են 308 աշխատակիցներ, այդ թվում՝ վարչատնտեսական աշխատողներ 58, լաբորատորիայի կամ բաժնի վարիչ՝ 22, գլխավոր գիտաշխատող՝ 9, առաջատար գիտաշխատող՝ 33, ավագ գիտաշխատող՝ 50, գիտաշխատող՝ 70, կրտսեր գիտաշխատող՝ 29 և լաբորանտ՝ 35: Գիտական կենտրոններում, ԳՀԻ-ներում և պրոբլեմային լաբորատորիաներում աշխատում են գիտությունների 40 դոկտոր և 127 թեկնածու (աղյուսակ 20):

Աղյուսակ 20

Գիտական ստորաբաժանումներում աշխատակիցների կազմն ըստ տարակարգերի

Գիտական ստորաբաժանում	Վարչատնտեսական աշխատակիցներ	Լաբ. կամ բաժնի վարիչ	Գլխ. գիտ. աշխ.	Առաջ. գիտ. աշխ.	Ավագ գիտ. աշխ.	Գիտ. աշխ.	Կրտսեր գիտ. աշխ.	Օժանդակ անձնակազմ (լաբ.)	Ընդամենը
Խաղողապտղ. գիտական կենտրոն	14	3	-	3	6	4	2	2	34
Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտ.կենտրոն	34	6	-	1	12	8	5	21	87
Ագրոկենսատեխնոլոգիայի գիտ. կենտրոն	10	-	-	-	5	4	1	4	24
ՀԱԱՀ-ի գիտական կառույցներ	-	13	9	29	27	54	21	8	161
Ընդամենը	***58***	***22***	***9***	***33***	***50***	***70***	29	35	308

Համալսարանում 2016 թ. իրականացվել է նաև ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվող տասնմեկ դրամաշնորհային ծրագիր՝ 80.46 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, 54 հաստիքներով:

Դրամաշնորհային ծրագրերն են՝

- «Պտղատու այգիների միջբնային գոտու մշակության մեքենա», գիտական ղեկավար Ա. Թարվերդյան:
- «Տեղական ծագման բույսերի վտանգված սորտերի և հազվագյուտ տեսակների in vitro վերականգնում և պահպանություն», գիտական ղեկավար Գ.Մելյան:
- «Թույլ աղակալած-ալկալիացած հողերի բարելավումը ամոնիում սուլֆատի կիրառմամբ» գիտական ղեկավար Վ. Պապինյան:
- «Բնական կերահանդակների բարելավման հիմնախնդիրները արդի պայմաններում», գիտական ղեկավար Ա. Մարկոսյան:
- «Ուսումնասիրել Արարատյան հարթավայրի հողերի մելիորատիվ վիճակի վատթարացման գործընթացները, կապված գրունտային ջրերի մակարդակի իջեցման հետ», գիտական ղեկավար Ս. Սահակյան:
- «Գյուղատնտեսական կենդանիների բրուցելյոզի մոնիթորինգի անցկացումը Հայաստանի Հանրապետությունում պայքարի միջոցառումների կազմակերպումը», գիտական ղեկավար Ս. Գրիգորյան:
- «Հայաստանի քաղաքների շրջակա միջավայրի օբյեկտների ուսումնասիրությունը կենդանիների և մարդու առողջության համար վտանգավոր մակաբույծներով վարակվածության նկատմամբ», գիտական ղեկավար Հ.Նաղաշյան:
- «Տեղանքային/տերուարային/գինիների արտադրության հեռանկարների ուսումնասիրումը Հայաստանում», գիտական ղեկավար Գ.Սամվելյան:
- «ՀՀ լանդշաֆտների դեգրադացման գործընթացները և կանխարգելման միջոցառումների մշակումը անապատացման պայմաններում», գիտական ղեկավար Ա. Մկրտչյան:
- «Հայաստանի մշակովի և վայրի խաղողի կենսաբազմազանության նշանակությունը բնապահպանական հաշվեկշռում», գիտական ղեկավար Գ. Մելյան:
- «Մաթեմատիկական ֆիզիկայում ծագող որոշ դասերի ոչ գծային ինտեգրալ հավասարումների լուծելիության հարցեր», գիտական ղեկավար Ա. Խաչատրյան:

2016 թ. ՀՀ պետական բյուջեից գիտական բոլոր ծրագրերի և թեմաների ֆինանսավորումը կազմել է 363.263 միլիոն դրամ:

2016 թ. համալսարանի երկու աշխատակից պաշտպանել են դոկտորական, 37 աշխատակից և ասպիրանտ թեկնածուական ատենախոսություն, որոնցից 12-ը համալսարանի հեռակա ուսուցման ասպիրանտ՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ: Ատենախոսությունների պաշտպանություններն ըստ մասնագիտությունների ունեն հետևյալ պատկերը՝

ագրոնոմիական՝ 11 թեկնածուական, տնտեսագիտական՝ 15 թեկնածուական, գյուղատնտեսության մեքենայացում՝ 3 թեկնածուական, անասնաբուժական՝ մեկ դոկտորական և 2 թեկնածուական, տեխնոլոգիական՝ 2, հողաշինարարություն՝ մեկ դոկտորական, 1 թեկնածուական ատեխանոսություններ, ատենախոսական թեկնածուական պաշտպանողներից երեքը ագրարային համալսարանի Շուշիիի մասնաճյուղից են:

2016 թ. հոկտեմբերի 20-21-ը Հայաստանի ազգային ագրարային համալսարանը կազմակերպվեց «Սննդամթերքի անվտանգության և որակի ապահովման հիմնախնդիրները» միջազգային գիտաժողով՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 25-ամյակին, որին մասնակցել են ՀՀ տարբեր գիտակրթական կառույցների և արտերկրի ագրարային համալսարանի ներկայացուցիչներ, գիտաժողովի 10 բաժանմունքներում կարդացվել է 163 զեկուցումներ:

2003 թ. ագրարային համալսարանը ռուսերեն և անգլերեն լեզուներով գունավոր տպագրությամբ հրատարակում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարանի տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը: 2016 թ. հրատարակվել է 80 հոդված, բացի ՀԱԱՀ-ից հոդվածներ են ներկայացվել հանրապետության տարբեր բուհերից, գիտական կենտրոններից և արտերկրից: Արտերկրի հոդվածների թիվը կազմում է 7:

2016 թ. ագրարային համալսարանը տպագրել է հայերեն և ռուսերեն լեզուներով ժողովածու, որում ընդգրկվել է 2016 թ. միջազգային գիտաժողովի 77 զեկուցում:

2003 թ. Հայաստանի ազգային ագարարային համալսարանը Թբիլիսիում Վրաստանի, Ադրբեջանի ագրարային համալսարանների և Գերմանիայի Դաշնության բնապահպանության գործակալության հետ համատեղ տպագրում է «Ագրարային գիտությունների տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը, որի համահրատարակիչներն են նաև Վիեննայի բնապահպանական ռեսուրսների և կյանքի մասին գիտության համալսարանը, Գերմանիայի հողերի գնահատման բյուրոն, Իտալիայի հողերի Եվրոպական ցանցի բյուրոն, Ռուսաստանի Վ. Դոկուչաևի անվան հողագիտության ինստիտուտը, Ռուսաստանի ազգային ակադեմիայի հողագիտության ինստիտուտը, ինչպես նաև Վրաստանի տարբեր գիտակրթական կառույցներ: 2016 թ. գիտական պարբերականում տպագրվել է ՀՀ գիտնականների 7 հոդված:

2016 թ. հունվար ամսից «Ագրարարային գիության տեղեկագիր» գիտական միջազգային պարբերականը ընդգրկվել է միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական պարբերականի Scopus շտեմարանում:

2016 թ. ընթացքում հրատարակչական-խմբագրական բաժինը տպագրության է հանձնել հետևյալ նյութերը.

1. Մեթոդական ցուցումներ՝ 67 անվանում՝ 149,25 տպ. մամուլ ընդհանուր ծավալով:

2. Գիտական պարբերական (5 համար) և գիտական աշխատությունների ժողովածու՝ 117,75 տպ. մամուլ:

3. Հաշվետվություններ, տարեկան զեկույց, ծրագրեր և այլ նյութեր՝ 175,6 տպ. մամուլ:

2016 թ. ընթացքում հրատարակված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 442,6 տպագրական մամուլ:

2016 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ագրարային համալսարանի դոկտորանտների, ասպիրանտների և հայցորդների թիվը կազմում է 100, այդ թվում ասպիրանտուրայի առկա անվճար ուսուցման համակարգում 21, հեռակա 20, որից Հայաստանի Հանրապետությունից 19, 19-ն էլ անվճար համակարգում, 1-ը Իրանի Իսլամական Հանրապետությունից, որպես հայցորդներ ձևակերպված են 58-ը, որից 17-ը ԼՂՀ-ից, 1 դոկտորանտ՝ Ձ.01.01 Ընդհանուր երկարագործություն, հողագիտություն և ագրոքիմիա մասնագիտությամբ (աղյուսակ):

ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից հաստատված և ագրարային համալսարանում 7 մասնագիտությունների գծով ասպիրանտների ղեկավարումն իրականացնում են գիտությունների 15 դոկտորներ և 9 թեկնածուներ:

Առկա ուսուցման ասպիրանտուրան 2016 թ. ավարտել են 5 ասպիրանտ, որոնցից թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել են 4-ը, իսկ 1-ը պաշտպանության փուլում է:

ՀԱԱՀ ասպիրանտուրայի շարժը առ 01.01.2017թ
ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ

	I		II		III		IV		Ընդա-մենը
	առկա	հեռակա	առկա	հեռակա	առկա	հեռակա	առկա	հեռակա	
Ագրոնոմիական		1/0		0/1	1/0				
Տնտեսագիտական		3/0	2/0	2/0	3/0	3/0	2/0	3/0	
Ագրոբիզնես				1/0	1/0		1/0		
Տեխնոլոգիական			2/0		1/0	1/0	2/0	1/0	
Ճարտարագիտական		1/0					2/0	2/0	
Անասնաբուժական					1/0				
Հիդրոմելիորացիա		1/0	2/0				1/0		
Ընդամենը		**6**	**6**	**4**	**7**	**4**	**8**	**6**	**41**
Այդ թվում արտերկրից			**-**	**1**	**-**			**-**	***1***

* Հայաստանից/Իրանի Իսլամական Հանրապետությունից

Ընդհանուր 41 ասպիրանտ, որից

Առկա՝ 21 ասպիրանտ

Հեռակա 20 ասպիրանտ

Հայսատանի Հանրապետությունից 19 ասպիրանտ

Իրանի Իսլամական Հանրապետությունից 1 ասպիրանտ

Ավարտած՝ ***11 ասպիրանտ Հայաստանի Հանրապետությունից***

5 ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետությունից

Հայցորդներ ***58, որից 17-ը ԼՂՀ-ից, 41-ը ՀՀ-ից***

Հեռացված՝ ***9 ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետությունից***

Ավարտած՝ ***12 ասպիրանտ Հայաստանի Հանրապետությունից***

5 ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետությունից

Հայցորդներ ***73, որից 24-ը ԼՂՀ-ից, 49-ը ՀՀ-ից***

2016 Թ. ՄՇԱԿՎԵԼ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

5.1. ԿԱՐՏՈՖԻԼԻ ՎԻՐՈՒՍԱԶԵՐԾ ՏՆԿԱՆՅՈՒԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ - Գիտական ղեկավար՝ Սահակյան Ա.Ջ.

Կարտոֆիլը Հայաստանի Հանրապետությունում մշակվող գլխավոր գյուղատնտեսական մշակաբույսերից է: Ակնհայտ է, որ կարտոֆիլի բարձր բերք ստանալու ամենակարևոր պայմաններից է առողջ տնկանյութի օգտագործումը: Հայաստանում հողի սեփականաշնորհումից հետո պետական տնտեսությունները, որոնք արտադրում էին բարձրորակ սերմացու, դադարեցրին իրենց գործունեությունը և այժմ կարտոֆիլի տնկանյութ հանրապետություն է ներկրվում հիմնականում արտերկրից, որոնց որակը երբեմն չի համապատասխանում միջազգային չափանիշներին, իսկ արժեքը մատչելի չէ ֆերմերային տնտեսությունների մեծամասնության համար: Այս փաստը անհրաժեշտություն է առաջացնում կազմակերպել կարտոֆիլի շրջանացված և հեռանկարային սորտերի առողջ էլիտային տնկանյութի արտադրություն Հայաստանի Հանրապետությունում:

Վերարտադրության ընթացքում կարտոֆիլի այլասերման հիմնական պատճառը վիրուսային հիվանդություններն են: Վերարտադրության տարիների ավելացմանը զուգահեռ մեծանում է տնկանյութի այլասերման աստիճանը:

Աերոպոնիկ եղանակով կարտոֆիլի վիրուսազերծ էլիտային տնկանյութի արտադրությունը գործնական լայն կիրառություն է գտնում աշխարհի բազմաթիվ երկրներում: Հայաստանում սերմացու կարտոֆիլի նկատմամբ տարեկան պահանջը 120-130 հազ. տոննա է: Արտերկրից հանրապետություն է ներկրվում տարեկան շուրջ 6-7 հազ. տոննա կարտոֆիլի տնկանյութ: Արտերկրից ներկրված կարտոֆիլի տնկանյութի 1 կգ-ի արժեքը տատանվում է 400-500 դրամ: Հայաստանի ազգային ագրարային համալսարանի <<Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն>> մասնաճյուղում իրականացվել են գիտական ծրագրեր, որոնք ներառել են կենսատեխնոլոգիական եղանակով կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի ստացման լաբորատոր և ջերմատնային փուլերը: Մշակվել են կարտոֆիլի մինի պալարների արտադրության աերոպոնիկ տեխնոլոգիաներ:

Ներկայումս գիտական կենտրոնը պոտենցիալ հնարավորություն ունի աերոպոնիկայի մեթոդի կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացնել կարտոֆիլի տնկանյութի վիրուսազերծ սերմնաբուծության արտադրության գործընթացը, ինչը խթան կհանդիսանա կարտոֆիլաբուծության զարգացման համար:

Ծրագրի նպատակն է նպաստել հանրապետությունում կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրության ծավալների մեծացմանը և բերքատվության բարձրացմանը, օժանդակել ֆերմերների եկամուտների ավելացմանը:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել է հետևյալ խնդիրները.

-ստանալ կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութ՝ օգտագործելով արտադրության արդի տեխնոլոգիաներ,

-կարտոֆիլի վիրուսազերծ տնկանյութի արտադրություն աերոպոնիկ եղանակով,

-կրճատել կարտոֆիլի տնկանյութի ներկրման կախվածությունը, արտադրելով բարձրորակ և մրցունակ տնկանյութ,

-նվազեցնել կարտոֆիլի տնկանյութի արտադրության ժամկետները,

-սերմնաբուծությամբ զբաղվող ֆերմերներին մատչելի գնով մատակարարել կարտոֆիլի էլիտային տնկանյութ:

5.2. «ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԻՋԲՆԱՅԻՆ - ՄԵՐՁԲՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Շ.Մ. Գրիգորյան

Այգեգործությունը ՀՀ գյուղատնտեսական արտադրության արդյունավետ, սակայն աշխատատար ճյուղերից է: Աշխատատարության բարձր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝

- պտղատու այգիների սորտայնությամբ՝ բազմազանությամբ, ըստ սաղարթի չափերի՝ տրամագծի, գետնից ունեցած հեռավորության, եզրաչափերի,
- հողային ծանր պայմաններով՝ ավազակավային- կավավազային- կավային,
- ոռոգման ցանցի առկայությամբ,
- տեխնոլոգիական գործընթացների կատարման ագրոտեխնիկական սեղմ ժամկետներով,
- այգիների, հատկապես հողամշակման տեխնոլոգիական գործընթացներին ներկայացվող ագրոտեխնիկական պահանջներով, տեխնիկական պահանջների ոչ լիարժեք բավարարությամբ:

Տարիներ առաջ ՀՀ ներկրված, այգիների միջբնային տարածությունների մշակման, պասիվ և ակտիվ բանող օրգաններով մեքենաները (կՕկ-0.6, այգեգործական ֆրեզներ ՊԻ-0.6) չօգտագործվեցին, հատկապես տեխնոլոգիական թերությունների պատճառով:

Մինչ օրս գիտատեխնիկական առաջընթացի պայմաններում պտղատու այգիների միջբնային և մերձբնային տարածությունների մշակումը (այգեփոր) կատարվում է ձեռքով, բնականաբար ցածր տեխնոլոգիական որակով, 12 մարդ-օր/հա աշխատածախսումներով:

Հաշվի առնելով այգեգործության համալիր մեքենայացման կարևորությունը, հատկապես արտադրության պահանջները, նախորդ դարի վերջերից բնագավառի հատուկ կոնստրուկտորագիտական կենտրոնները՝ ձեռնամուխ եղան և մեկը մյուսից անկախ մշակեցին սկզբունքորեն նոր գործողության մեքենաներ՝ բանող օրգանների հարթահատ թաթերը, ինչպես նաև հորիզոնական պտտման առանցքով ֆրեզները փոխարինվեցին ուղղաձիգ պտտման առանցքով ֆրեզներով: Արդյունքները զգալի են, սակայն ԱՊՀ և արտասահմանյան երկրների մեքենաների մի շարք թերություններ մնացին անփոփոխ, այդ թվում՝

- անփոփոխ մնաց բանող օրգանները շարք մտցնող և դուրս հանող բարդ հիդրոմեխանիկական համակարգը: Հիդրոհամակարգի շարժաբերումը կատարվում է հանրահայտ մեխանիկական շոշափոցի ազդանշանով, ինչի հետևանքով ծառի բունը շրջանցելիս ֆրեզը թողնում է չմշակված տարածք, որը պարտադիր մշակվում է ձեռքիուժով,
- շոշափոցը, շատ հաճախ ստանալով կեղծ ազդանշան, ժամանակից շուտ մշակման գոտուց դուրս է բերում բանող օրգանը՝ ֆրեզը, բնի շուրջը թողնելով ավելի մեծ չմշակված տարածք:

Հաշվի առնելով այդ ամենը՝ ՀԱԱՀ գիտական կենտրոնի աշխատակիցները հիմնախնդիրը լուծեցին այլ սկզբունքով. նոր այգեփոր մեքենայի վրա բարդ հիդրոմեխանիկական համակարգը փոխարինվեց ոչ ստիպողական սկզբունքով աշխատող, ծառի բունը պատճենող մեխանիզմով, որը բաղկացած է ֆրեզի սռնու վրա ազատ պտտվող – տարվող ռետինապատ օղագոտուց: Գործնականում ծառաշարք հողատարածքը մշակվում է առանց բացակի:

5.3. «ԽԱՂՈՂԻ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԻՋՎԱԶԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Շ.Մ. Գրիգորյան

Խաղողագործությունը ՀՀ գյուղատնտեսական արտադրության առավել արդյունավետ և աշխատատար ճյուղերից է: Աշխատատարության բարձր մակարդակը պայմանավորված է մի շարք գործոններով.

- խաղողի առանձնահատուկ բազմասորտայնությամբ,
-խաղողագործության տարածքային գոտիների բնակլիմայական առանձնահատկություններով՝ սաստիկ շոգերով և մինչև -30 0C հասնող ցրտաշունչ ձմեռներով, որոնց պատճառով տարածքի զգալի մասը պարտադիր թաղովի է, որով պայմանավորված է.
- վազերի միակողմանի ձևավորումը,
- վազի բունը գետնի մակերևույթից որոշակի բարձրությունից ճյուղավորելու պարտադիր անհրաժեշտությունը,
- հողային ծանր պայմանները,
- վեգետացիայի ընթացքում կատարվող աշխատանքների ագրոտեխնիկական սեղմ ժամկետները,
- ոռոգման ցանցի առկայությանը,
- խաղողի այգիների մշակման համալիր մեքենայացման տեխիկական միջոցների ագրոպահանջներին բացարձակ անհամապատասխանությանը:

Խաղողի այգիների մշակման մեքենայացման համակարգում ամենաաշխատատար տեխնոլոգիական գործընթացը միջվազային տարածությունների մշակումն է, որը ՀՀ-ում դեռևս կատարվում է ձեռքի ուժով՝ 20-25 մարդ-օր/հա աշխատածախսումներով (80-100 հազար դրամ/հա-ին հավասարազոր:

Հաշվի առնելով գոյություն ունեցող մեքենաների և հարմարանքների տեխնոլոգակառուցվածքային լուրջ թերությունները՝ սկսած նախորդ դարի վերջից համաշխարհային խաղողագործության բնագավառի կոնստրուկտորագիտական աշխատողները, անկախ մեկը մյուսից, մշակեցին սկզբունքորեն նոր գործողության բանող օրգաններ՝հարթահատ թաթերը փոխարինվեցին ուղղաձիգ առանցքով պտտման ֆրեզներով: Սակայն տեխնոլոգիական տեսանկյունից դեռևս առկա թերությունները մնացին անոփոփոխ:

Դրանք են՝

- *Բանող օրգանների շարք մտցնելը և դուրս բերելը կատարվում է բարդ հիդրոմեխանիկական համակարգով՝ բաղկացած հիդրոգլանից, մղակից, շոշափոցից (քցտ):*

- *Նշված հիդրոհամակարգի պատճառով վազի բունը շրջանցելիս ֆրեզը թողնում է չմշակված տարածություն, ինչի հետևանքով դրա մշակումը կատարվում է ձեռքով:*
- *Շոշափոցը պարբերաբար վազի ներքևի ճյուղերից ստանում է կեղծ ազդանշան, բանող օրգանը ժամանակից շուտ դուրս է բերվում միջվազային տարածությունից՝ բնի շուրջն ամբողջությամբ թողնելով անմշակ:*

Շարադրվածի առումով ՀԱԱՀ-ի գիտաշխատողների մշակած մեքենան զերծ է գոյություն ունեցող բոլոր մեքենաների թերություններից: Բացակայում է հիդրոմեխանիկական բարդ համակարգը, որը փոխարինված է ոչ ստիպողական սկզբունքով աշխատող, բունը պատճենող մեխանիզմով՝ բաղկացած ֆրեզի առանցքի վրա ազատ նստած տարվող ռետինապատ օղագոտուց: Գործնականում վազաշարքի հողատարածքը մշակվում է առանց խարակի և բունը վնասելու:

Խաղողի այգիների միջվազային տարածությունների մշակման մեքենայի արտադրության կազմակերպման դեպքում կլուծվի նշված հիմնախնդիրը:

Ներկայումս ՀՀ խաղողագործության բնագավառի ֆերմերային տնտեսությունները, ըստ արտադրական հզորության, դասակարգված են երկու դասի՝ հզոր, որտեղ այգիների տարածքը կազմում է 25 հա-ից ավելի և միջին ու փոքր հզորության, որոնք մշակում են մինչև 25 հա խաղողի այգի:

Հաշվի առնելով այգիների տարածքների զգալի տարբերությունը՝ ֆերմերների առաջարկությամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի կողմից ստեղծվեցին մինչև 25 հա և դրանից մեծ տարածքով այգիների մշակման ագրեգատի մեկ ընթացքով, համապատասխանաբար կես շարք և մեկ շարք մշակող խաղողի այգեփոր մեքենաներ՝ԽԱՄ-1, ԽԱՄ-2: Նշված մեքենաները ենթարկվել են լաբորատոր-դաշտային և արտադրական փորձարկումների, որոնց արդյունքների մշակմամբ կազմվել են մեքենաների արտադրության կազմակերպման համար բոլոր անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերը: Այսօր արտադրության պատրաստ են շարքի միակողմ և երկկողմ մշակման երկու ագրեգատներ:

5.4. «ՈՉ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԷԼԵԿՏՐԱՄԵԼԻՈՐԱՑՄԱՄԲ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԻ ԱՂՈՒՏ-ԱԼԿԱԼԻ ՀՈՂԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ» - Գիտ. ղեկավար՝ Հ.Ղ. Ղազարյան

Երկրագնդի բնակչության աննախադեպ աճը, հատկապես տնտեսապես թույլ զարգացած երկրներում, ստիպում է գյուղատնտեսական շրջանառության մեջ մտցնել նոր ոռոգելի հողատարածություններ, ինչն ուղեկցվում է հողերի աղակալման, ալկալիացման և ճահճացման երևույթներով: Հողերի անապատացման գործընթացներն առավել ինտենսիվ բնույթ են կրում երկրագնդի ընդհանուր ջերմացման և մարդու հաճախակի անհեռատես արտադրական գործունեության արդյունքում, ինչի հետևանքով հողերը կորցնում են բերրիությունը ու դուրս են մնում գյուղատնտեսական շրջանառությունից: Այս բացասական երևույթների արդյունքում աշխարհի ավելի քան 80 երկրներ ներկայումս ունեն հողերի աղակալման և ալկալիացման հիմնախդիրներ, որոնց ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 360 մլն հա (Szabolcs, 1995):

Այդ բացասական ազդեցություններից անմասն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, հատկապես Արարատյան հարթավայրը, որտեղ հողերի մելիորատիվ-էկոլոգիական վիճակի վատթարացումը և դրանց բերրիության անկումը պայմանավորված են ինչպես մի շարք բնական պայմանների փոփոխությամբ, այնպես էլ անթրոպոգեն գործոններով, այդ թվում՝ հողերի խոնավահագեցման գործակցի նվազման միտում, օդի ջերմաստիճանի տատանումների աճ, տեղումների քանակի կրճատում, հողառաջացման պայմանների փոփոխություն, ինչպես նաև անթրոպոգեն գործոններով պայմանավորված հողում հումուսի և սննդատարրերի կրճատում, հողերի աղակալում և ալկալիացում:

Արարատյան հարթավայրում աղուտ-ալկալի հողերի յուրացումը հնարավորություն կտա լուծել տարածաշրջանի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական շատ խնդիրներ՝ միաժամանակ ավելացնելով հանրապետությունում պարենային մթերքի արտադրությունը:

Ծրագրի նպատակն է ներդնել մշակված ոչ կոնտակտային էլեկտրոմելիորացման նոր տեխնոլոգիան Արարատյան հարթավայրի աղուտ-ալկալի հողերի բարելավման ոլորտում, որը թույլ

կտա զգալիորեն կրճատել մելիորացման համար պահանջվող ֆինանսական ներդրումները՝ միաժամանակ լուծելով բնապահպանական հիմնախնդիրներ:

Ծրագրով նախատեսվում է լուծել հետևյալ խնդիրները.

1. Նախագծել և պատրաստել հանքային ջրերի անընդհատ հոսքի էլեկտրամշակման ապարատ՝ 2լ/վ արտադրողականությամբ:

2. Փորձարկել սարքավորումը աղուտ ալկալի հողի լոկալ տարածքում՝ քիմիական մելիորացման համար:

3. Հաշվարկել տարբեր էներգառեսուրսներով՝ էլեկտրական հոսանքի սնուցում ցանցից, բենզինային էլեկտրագեներատոր, արևային մարտկոցների կիրառման տնտեսական արդյունավետությունը՝ կապիտալ ներդրումներ, շահագործման ծախսեր, շահութաբերություն:

4. Ներկայացնել հրահանգ Արարատյան հարթավայրի սոդային աղուտ-ալկալի հողերի լոկալ քիմիական մելիորացման տեխնոլոգիայի վերաբերյալ՝ օգտագործելով 2 լ/վ արտադրողականությամբ հանքային ջրերի էլեկտրամշակաման ապարատը:

5.5. ԱՆՋՐԴԻ ԵՎ ՉՈՐԱՅԻՆ ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀԱՑԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ (ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆ, ԳԱՐՆԱՆԱՑԱՆ ԳԱՐԻ) ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՆԵՐԴՐՄԱՆ - Գիտական ղեկավար՝ Ս.Կ. Երիցյան

Հացահատիկի արտադրությունը յուրաքանչյուր երկրի գյուղատնտեսության կարևոր ճյուղերից է և վճռական դեր է կատարում բնակչության պարենային անվտանգության ապահովման գործում:

ՀՀ Կառավարությունը պարբերաբար որոշումներ է ընդունում հանրապետությունում հացահատիկի արտադրությունն ավելացնելու վերաբերյալ: Սակայն հատկապես անջրդի (չորային) և խոնավությամբ պակաս ապահովված վայրերում, որտեղ էլ բաշխված է աշնանացան ցորենի և գարնանացան գարու ցանքատարածությունների զգալի մասը, դեռևս ցածր է բերքատվությունը: Հիմնական պատճառներն են խոնավության պակասը և մշակության այնպիսի տեխնոլոգիաների բացակայությունը, որոնց ներդրմամբ հնարավոր կլինի տեղումներից առաջացած խոնավությունը կուտակել հողում, էապես նվազեցնել միավոր բերքի ստացման համար ծախսված ջրի քանակը՝ միաժամանակ բարձրացնելով սերմի, ապա բույսի (նաև արմատային համակարգի) կենսունակությունը: Նոր տեխնոլոգիան ընդգրկում է նաև հողի պարարտացման արդյունավետ համակարգի մշակում և ներդրում: Այս ամենի արդյունքում հնարավոր է լինում տվյալ պայմաններում ստանալ տնտեսապես արդարացված բերք: Առաջարկվող տեխնոլոգիան կիրառելի է նաև օրգանական երկրագործությունում, քանի որ վերանում է մրիկների դեմ պայքարի պատրաստուկների օգտագործման անհրաժեշտությունը:

Ծրագրի նպատակը և խնդիրները: Նախագծի նպատակն է անջրդի և չորային երկրագործության պայմանների համար առաջարկել աշնանացան ցորենի և գարնանացան գարու բերքատվության բարձրացման նոր տեխնոլոգիա, որի դեպքում բույսերը վեգետացիայի ընթացքում ավելի արդյունավետ են օգտագործում, տեղումներից առաջացած խոնավությունը բարձրանում է սերմերի, ապա նաև բույսերի կենսունակությունը, նվազում է միավոր բերք ստանալու համար ծախսվող ջրի քանակը: Ծրագրի խնդիրներն են՝

1. Սինթեզել պարարտանյութ (վերամշակված դացիտային տուֆ), որը, ունենալով ջուր կլանելու բարձր ունակություն (500 % և ավելի), հողում կուտակում է տեղումներից առաջացած խոնավությունը, որը հետագայում բույսերը աստիճանաբար օգտագործում են: Բացի այդ՝ վերամշակված դացիտային տուֆը պարունակում է բույսերի համար անհրաժեշտ սննդատարրեր՝ K, Ca, Mg, P, Fe, և ընդունակ միջավայրից փախանակային կլանել ազոտ և այլ սննդատարրեր՝ կանխելով է ազոտի կորուստը հողից:

2. Սինթեզել պարարտանյութ (կոմպլեքսոն), որը բարձրացնում է սերմերի, ապա նաև բույսերի կենսունակությունը, նվազում է միավոր բերք ստանալու համար պահանջվող ջրի ծախսը, վերանում է մրիկների դեմ պայքարի համար պատրաստուկների կիրառման անհրաժեշտությունը: Կոմպլեքսոնը (հեղինակ՝ Ս.Կ. Երիցյան) ջրալույծ համակցված պարարտանյութ է, պարունակում է բույսերին

անհրաժեշտ բազմաթիվ սննդատարրեր և կենսակտիվ նյութեր: 1 հեկտարի հաշվով կիրառվում է 1,5-2,5 կգ չափաքանակով և ապահովում է բարձր արդյունավետություն:

3. Հողի անալիզի միջոցով որոշել բերրիության վիճակը, սահմանել կիրառվող պարարտանյութերի (հանքային, օրգանական կամ դրանք միասին) քանակները:

4. Ցուցադրական փորձերի միջոցով ֆերմերներին ներկայացնել առաջարկվող տեխնոլոգիայի բարձր արդյունավետությունը: Փորձեր իրականացնել չոր տափաստանային ու տափաստանային գոտիների անջրդի պայմաններում, ապա նաև Արարատյան դաշտի ջրովի պայմաններում:

5.6. «ՌՈԿՖՈՐ ՊԱՆՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ ԹԱԼԻՆԻ «ԲՈՆԻԼԱՏ» ՍՊԸ-ՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Ռ.Ա. Բեգլարյան

Հանրապետության ազգաբնակչությանը բարձրորակ, ցածր ինքնարժեքով, էկոլոգիապես մաքուր սննդամթերքներով ապահովումն ունի կարևոր ժողովրդա-տնտեսական և ռազմավարական նշանակություն: Այս ուղղությամբ առկա խնդիրները հնարավոր է հաղթահարել, կենսատեխնոլոգիայի ֆիզիկա-տեխնիկական մեթոդների կիրառման, գիտության և արտադրության, արտադրող և վերամշակող ոլորտների կապի սերտացման և արդյունավետության բարձրացման միջոցով:

Հանրապետության բնակլիմայական, արտադրական, սոցիալ-տնտեսական, կերի և կաթնային հումքի բազայի հետազոտությունների ու դիտարկումների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ թթու կաթնամթերքի, «Ռոկֆոր», «Լոռի», «Չանախ» պանիրների արտադրության համար առկա են որոշակի նպաստավոր և խոչընդոտող գործոնները:

Նպաստավոր գործոններ

- Էկոլոգիապես մաքուր անարատ մթերքների արտադրության հնարավորություն,
- տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ զբաղվող, կաթ վերամշակող տնտեսավարող սուբյեկտների շահագրգռվածություն,
- տարածաշրջանի գյուղական բնակավայրերում աշխատուժով ապահովվածություն:

Խոչընդոտող գործոններ

- Կաթ արտադրող և վերամշակող ձեռնարկությունների համար անհրաժեշտ ֆինանսական և այլ միջոցների բացակայություն,
- կենդանիների մթերատվության, արտադրության ծավալների ավելացման, տոհմային և արհեստական սերմնավորման աշխատանքների պասիվ գործելակերպ,
- տնտեսավարող սուբյեկտների կոոպերացման պասիվություն և համապատասխան առարկայական ծրագրերի բացակայություն և այլն:

Ծրագրի նպատակն է՝

- վերականգնել և կատարելագործել «Ռոկֆոր» պանրի արտադրությունը,
- կաթնային հումքն օգտագործել անթափոն եղանակով՝ ներդնելով նոր տեխնոլոգիական միջոցներ, կենսատեխնոլոգիական պարամետրեր և այլն:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է՝

- որոշել տարբեր բնակլիմայական շրջանների կաթնամթերքներից և այլ սննդարար միջավայրերից առանձնացված կաթնաթթվային մանրէների ֆիզիոլոգիա-մորֆոլոգիական, կենսատեխնոլոգիական, կենսաքիմիական հատկությունները, ընտրել պրոտեոլիտիկ և լիպոլիտիկ ակտիվ շտամներ, մակարդներ, ֆերմենտներ, բորբոսասնկեր, նոր տեխնիկական միջոցներ և տեխնոլոգիաներ, ուսումնասիրել դրանց ազդեցությունը «Ռոկֆոր» պանրի արտադրության կենսատեխնոլոգիական, կենսաքիմիական գործընթացների և որակի վրա՝ դրանով իսկ կանխելով արտասահմանից ներկրվող անհայտ, միանվագ օգտագործման մակարդները, ֆերմենտները, բորբոսասնկերը:

5.7. «ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՐԴ ԽԱՂՈՂԻ ՄԱՄԼՎԱԾՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ ԶԱՆԳՎԱԾԻՑ ՍԵՐՄԵՐԻ ԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՂԻ ՍՏԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ » - Գիտական ղեկավար՝ Վ.Ն. Յավրույան

Վերջին տարիներին սպառվող հումքային ռեսուրսների վերականգնումը երկրորդային հումքատեսակներով դարձել է պետական կարևորություն ունեցող խնդիր ինչպես զարգացող, այնպես էլ առաջատար, տնտեսապես զարգացած երկրներում: Երկրորդային հումքի նկատմամբ նման աճող ուշադրությունը կարելի է բացատրել նախ օգտակար հանածոների պաշարների նվազումով, ապա՝ սննդարդյունաբերության հիմք հանդիսացող գյուղատնտեսական արտադրության համախառն բերքի ծավալների անընդհատ նվազումով:

Բացի այդ՝ սննդարդյունաբերության երկրորդային հումքի օգտահանումը մեծ կարևորություն է ձեռք բերում նաև այն պարզ պատճառով, որ թույլ է տալիս միանգամից լուծել երեք կարևորագույն հիմնախնդիր. սոցիալական՝ ի հաշիվ նոր աշխատատեղերի տեղերի ստեղծման, տնտեսական՝ ի հաշիվ արտահանվող արտադրանքի ծավալների զգալի մեծացման, և էկոլոգիական՝ ի հաշիվ սննդարդյունաբերության թափոններով շրջակա միջավայրի աղտոտման բացառման:

Այս առումով լավագույն օրինակ կարող է ծառայել հանրապետության սննդարդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը՝ գինեգործությունը, որի գործունեության արդյունքում առաջացող երկրորդային հումքում՝ խաղողի մամլվածքում առկա է խաղողի սերմերի այնպիսի քանակություն, որը, հաշվարկների համաձայն, կարող է ապահովել միջազգային շուկայում մեծ պահանջարկ ունեցող շուրջ հինգ-վեց հարյուր տոննա խաղողի յուղի ստացում՝ մինչև 500 մլն մաքուր եկամուտով:

Այսպիսով՝ գիտահետազոտական այն աշխատանքները, որոնք նվիրված են խաղողի մամլվածքի վերամշակման տեխնոլոգիայի և տեխնիկական միջոցների կատարելագործմանը՝ զանգվածից սերմերի անջատման և խաղողի յուղի ստացման նպատակով, արդիական են ու բխում են գյուղատնտեսական արտադրության և սննդարդյունաբերության գիտատեխնիկական զարգացման ժամանակակից պահանջներից:

5.8. «ՏՈՀՄԱՅԻՆ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ»-Գիտական ղեկավար՝ Վ.Ա. Աբրահամյան

Տավարաբուծությունը հանրապետության գյուղատնտեսության ամենաառաջատար ճյուղերից է: Այն վարվում է բոլոր մարզերում՝ ներառելով գյուղական համայնքների ավելի քան 99 %-ը, շուրջ 200 հազար տավարաբուծությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններ, այլ տնտեսվարողներ և նպաստում է բնա-տնտեսական ռեսուրսները նպատակամետ օգտագործելուն, կենդանական ծագման մթերքով բնակչության պարենային պաշտպանվածության խնդիրները լուծելուն, գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման նախապայմաններն ապահովելուն:

Անասնագլխաքանակի մասնավորեցումից ի վեր զգալի փոփոխությունների ենթարկվեց հանրապետության տավարաբուծությունը՝ մասնավորապես կրճատվեցին անասնա-գլխաքանակն ու մթերքների արտադրության ծավալները, խիստ սահմանափակվեցին ճյուղի վարման առաջընթացի և ինտենսիվացման հնարավորությունները: Նկատելի դժվարություններ առաջացրեցին նաև վերջին երկու տարիների ֆինանսատնտեսական ճգնաժամը և ճյուղի առաջընթացին խոչընդոտող պայմանները, որոնցից հատկապես մատնանշելի են անասնագլխաքանակի շարունակվող մասնատվածությունը և դրա կարգաբերման ուղղությամբ ոչ արդյունավետ ձեռնարկումները:

Այժմ հանարապետությունում տավարաբուծությամբ զբաղվող մեկ գյուղացիական տնտեսության հաշվարկով տավարի միջին գլխաքանակը կազմում է ընդամենը՝ 3,1 գլուխ, այդ թվում՝ 1,4 կով: Մինչդեռ ներկա պայմաններում տավարաբուծական մթերքներ արտադրող սուբյեկտի համար երաշխավորելի է 25-30 գլխից բաղկացած նախիր: Առաջատար տավարաբուծական երկրների նախիրներում օպտիմալ գլխաքանակ է 165 գլուխը:

Շուրջ 20-25 տարի ընդհատված է տոհմային աշխատանքների վերականգնումն ու նախիրների որակական վերարտադրությունը: Անհրաժեշտ է հատկապես սեղմ ժամկետներում ներդնել կովերի արհեստական սերմնավորման մեթոդը, բացառել անհայտ ծագմամբ ցուլերի օգտագործումը:

Ստեղծված վիճակի կարգավորման խնդիրները պահանջում են ինչպես օրենսդրական, այնպես էլ արտադրատեխնոլոգիական բնույթի նախագծումներ և ձեռնարկումներ:

Հանրապետությունում մշակվել, հաստատվել և իրականացվում է համաշխարհային լավագույն բուծարանային ցեղերի, տոհմային միջոցների ներկրման ու շրջանացված ցեղերի բարելավման ծրագիր: Պահանջվում է զբաղվել ներկրված ցեղերի օգտագործման արտադրատեխնոլոգիական խնդիրներով: Ներկրված կենդանիներից ստացված ցուլիկները պետք է աճեցվեն արտադրողների կազմը համալրելու նպատակով:

ՀՀ –ում տավարաբուծության վարման առանձնահատկությունները

Տավարաբուծությանը վերաբերող ցանկացած ծրագրային նախագիծ պահանջում է առաջին հերթին բացահայտել ճյուղի վարման ելակետային նախապայմանները՝ կողմնորոշվելով, ինչպես ուժեղ՝ նպաստավոր, այնպես էլ թույլ՝ խոչընդոտող գործոններով:

Նպաստավոր նախապայմաններ

Տավարաբուծությունը՝

- Որպես տարածաշրջանի բնատնտեսական ռեսուրսների նպատակամետ օգտագործման և գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտ:
- Կենդանական ծագման մթերքի արտադրության և պարենային պաշտպանվածության հուսալի ու անփոխարինելի հնարավորություն:
- Բնական կերահանդակների, ռեսուրսների օգտագործման միջոց:
- Ագրարային ոլորտի ճյուղերի հետ համատեղ և համակարգված վարման առաջատար ճյուղ:
- Գյուղի առջև ծառացած խնդիրների լուծման միջոց:
- Կենդանական ծագման մթերքի ներկրումների և արտահանումների կարգավորման հնարավորություն:
- Ճյուղի առաջատար վարմամբ համաշխարհային շուկային ինտեգրվելու հնարավորություն:
- Գիտատեխնիկական նվաճումների գործնական կիրառման ոլորտ և մթերքների արտադրության ինտենսիվացման հիմնավորվածություն:

Խոչընդոտող նախապայմաններ

- Նախիրներում կենդանիների պահվածքի, բուծման և որակական բարելավման ժամանակակից նվաճումների և հնարքների կիրառման անտեսումները:
- Նորոգման մատղաշի ստացման և աճեցման, ինչպես նաև նախիրների վերարտադրության տեխնոլոգիական խախտումները:
- Նախիրներում անասնաբուծական հաշվառման և տոհմային աշխատանքների ընդհատվածությունը:
- Կենդանիների գնահատման, ընտրության և զուգընտրության աշխատանքների բարձիթողի վիճակը :
- Անհայտ ծագմամբ արտադրող ցուլերի օգտագործումը:
- Ցուլերի նպատակային աճեցման և ըստ սերնդի՝ որակի ստուգման աշխատանքների բացակայությունը:
- Կովերի արհեստական սերմնավորման և ձեռնաքաշ զուգավորման աշխատաքների ընդհատվածությունը:
- Նախիրներում անապահով կերի բազայի, կենդանիների թերկերակրման և ոչ նպաստավոր պահվածքի պայմանները:
- Կենդանիների ցածր մթերատվությունը և սերնդատվությունը:
- Ֆերմայի աշխատատար պրոցեսների մեքենայացվածության ցածր մակարդակը:
- Տնտեսություններում անասնաբույծ - սելեկցիոներ մասնագետների բացակայությունը:
- Շրջանացված տավարի կովկասյան գորշ ցեղի հետագա բարելավման անորոշ վիճակը:
- Տոհմային համակարգի կառուցվածքային անկատարությունը:

5.9. «ԿԱԹՆԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԼԻԱՌԱՑԻՈՆ ԿԵՐԱԽԱՌՆՈՒՐԴՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԵՐ ՆԱԽԱԳԾՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Ս.Ե. Մարգարյան

Անասնապահությունում կերերի արդյունավետ օգտագործման և կենդանիների մթերատվության բարձրացման նպատակով կերախառնուրդների պատրաստման արտադրամասերի նախագծերի մշակումն ու ներդրումն արդիական խնդիրներ են:

Ելնելով իրավիճակից՝ առաջարկվում է ծրագիր, որի նպատակն է կաթնապրանքային ֆերմաներում ներդնել լիառացիոն կերախառնուրդների պատրաստման արտադրամասեր 20-100 կովի հաշվով: Մինչև 20 կովի համար առաջարկվում են պարզագույն տեխնոլոգիաներ և մեքենասարքավորումներ:

Առաջարկությունն իրականացնելու համար լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրվել են հանրապետության տարբեր մարզերում կերային բազայի առկայությունը և կերերի օգտագործման եղանակները,
- հաշվառվել են տնտեսություններում կեր մշակող մեքենաների առկայությունը և շահագործման վիճակը,
- հիմնավորվել է կերախառնուրդների պատրաստման նախագծվող, տարբեր արտադրողականությամբ արտադրամասերի դասակարգումն ըստ կենդանիների գլխաքանակի և օգտագործվող կերաբաժինների,
- նախագծերում հիմնականում նախատեսվել են մեր կողմից երկարատև աշխատանքի արդյունքում ստեղծված և փորձարկված, ներկայումս էլ մշակվող մեքենաներն ու օժանդակ սարքավորումները,
- ունիֆիկացվել են արտադրամասերի տեխնոլոգիական գծերը,
- տրվել է կերախառնուրդների պատրաստման առաջարկվող արտադրամասերի տեխնիկատնտեսական հիմնավորումը:

5.10. «Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանն աջակցող ռեսուրսապահովվածության գույքագրում երկրատեղեկատվական (GIS) և հեռահար զոնդավորման (RC) տեխնոլոգիաների կիրառմամբ Վայոց Ձորի մարզի օրինակով» - Գիտ. ղեկավար՝ Գ. Մ. Եղիազարյան

Ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետության գյուղատնտեսության ոլորտի հզորացման և կարողությունների զարգացմանը և ուժեղացմանը՝ պայմաններ ստեղծելով գյուղատնտեսության ոլորտի խոցելիության ռիսկերը՝ կախված բնական, տնտեսական և մարդկային գործունեության տարբեր ազդեցություններից, նվազեցնելու համար: Ծրագիրը հնարավորություն կտա մշակել կոնկրետ միջոցառումներ, որոնք նպատակամղված կլինեն աջակցել, ինչպես գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ գյուղատնտեսության ոլորտում պետական և ներդրումային տարբեր ծրագրերի արդյունավետության կայուն բարձրացմանը:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտում աշխարհագրական տեղեկատվական համակարգի մշակումը և ներդրումը հնարավորություն կտա կատարել գյուղատնտեսական արտադրության կազմակերպման պահանջվող ռեսուրսների (այդ թվում՝ հողային, ջրային, անտառային և այլն) քանակական ու որակական տարածական այնպիսի հաշվառում, որոնք զերծ են սուբյեկտիվ, արհեստական, անհիմն կոպիտ սխալներից և բաց թողումներից:

Հանրապետության տարածքի օդատիեզերական լուսնկարների վերծանման ճանապարհով առաջարկվող համապարփակ տեղեկատվական համակարգը իր մեջ ներառելու է հետևյալ գործողությունները.

1. Հանրապետության, մասնավորապես՝ Վայոց Ձորի մարզի ագրոկլիմայական ռեսուրսների թվային քարտեզագրում, վերլուծություններ և գնահատումներ:
2. Հողային ֆոնդի հաշվեկշռի փոփոխության հայտնաբերում՝ կապված հողօգտագործման և հողասեփականատերերի տնտեսական գործունեության հետ:

3. Գյուղատնտեսական հողատեսքերի քանակական հաշվառում ըստ մշակաբույսերի, ըստ սեփականատերերի, ըստ հողերի գնահատման խմբերի, մելիորատիվ վիճակի, հողակլիմայական պայմանների, դրանց հիման վրա թեմատիկ քարտեզների ստեղծում երկրատեղեկատվական (GIS) և հեռահար զոնդավորման (RC) տեխնոլոգիաների կիրառմամբ:

4. Գյուղատնտեսական ռիսկերի հայտնաբերում՝ կապված արդյունավետ հողօգտագործման կազմակերպման խոչընդոտների, կլիմայի գլոբալ փոփոխության ռիսկերի, դրանց վերլուծության, վտանգավոր և բացասական հետևանքների կանխատեսման և դրանք մեղմելու գիտականորեն հիմնավորված միջոցառումների մշակում:

5. Առկա իրավիճակի և հեռանկարային ծրագրերի մասին հետադարձ կապի ստեղծում, դրանցում առկա խնդիրների լուծման հնարավորությունների և մասնակցային ծրագրերի մասին հասարակության լայն շերտերի տեղեկացում:

6. Ագրոպարենային անվտանգության, շուկայի վերլուծության, գյուղատնտեսական ցանքատարածքների օպտիմալ կառուցվածքի, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և համախառն բերքի կանխատեսում և պլանավորում:

Ծրագրի նպատակն է աջակցել հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացմանը ԵՏՀ (GIS) և հեահար զոնդավորման (RC) տեխնոլոգիաների կիրառմամբ ռեսուրսաապահովվածության, գյուղատնտեսական արտադրության, հողօգտագործողների, հողային և ջրային պաշարների առկա իրավիճակի դինամիկ հաշվառման և գնահատման համապարփակ համակարգի մշակման և ներդրման ճանապարհով: Ծրագրի իրականացումը թույլ կտա ապահովել պետական և դրամաշնորհային ներդրումային տարբեր ծրագրերի իրականացման իրատեսական և կայուն արդյունավետություն:

5.11. «ԳՈՄԱՂԲԻ ԱՆԱԵՐՈԲ ՄՇԱԿՄԱՆ ԿԵՆՍԱԳԱԶԱՅԻՆ ՏԵՂԱԿԱՅԱՆՔԻ ԵՎ ՀԻԴՐՈՊՈՆԻԿ ՋԵՐՄՈՑԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՂ ՀԱՄԱԿԱՐԳ»- Գիտական ղեկավար՝ Ս.Ե. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Առաջարկվող տեխնոլոգիան նվիրված է կոմբինացված համակարգում գոմաղբի անաերոբ մշակման կենսագազային տեղակայանքի և հիդրոպոնիկ եղանակով գործող ջերմոցի համատեղ ու արդյունավետ աշխատանքի իրականացմանը, որը կապահովի էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքների արտադրություն, միաժամանակ կնպաստի օրգանական գյուղատնտեսության զարգացմանը:

Առաջարկվող կոմբինացված համակարգը բաղկացած է երկու՝ իրարից անջատ, միաժամանակ համատեղ գործող առանձին կենսագազային տեղակայանքից և հիդրոպոնիկ եղանակով գործող ջերմոցից:

Մեր նպատակն է հանրապետությունում կազմակերպել առաջարկվող համակարգի արտադրություն, ներդնել տնտեսություններում՝ ակնկալելով շահույթ:

Առաջարկվող տեխնոլոգիան նպաստում է ջերմատների տաքացման համար օգտագործվող վառելիքը փոխարինել տնտեսությունում այլընտրանքային եղանակով արտադրվող կենսագազով, իսկ քիմիական նյութերից պատրաստվող սննդարար լուծույթը՝ կենսագազային տեղակայանքից ստացվող ֆերմենտացված ջրիկ օրգանական պարարտանյութով: Արդյունքում ստացվում է նվազագույն ինքնարժեքով էկոլոգիապես մաքուր մթերք:

Գոյություն ունեն առանձին գործող ջերմատներ և կենսագազային տեղակայանքներ: Առաջարկվում է դրանց համատեղ և արդյունավետ գործող համակարգ: Ջերմատների օգտագործման հիմնական խոչընդոտը տաքացման համար օգտագործվող օրեցօր թանկացող վառելիքի և քիմիական պարարտանյութերի ծախսերն են:

Առաջարկվող տեխնոլոգիան հնարավորություն է տալիս կարճ ժամկետում արտադրել նվազագույն ինքնարժեքով էկոլոգիապես մաքուր մթերք: Այդ դեպքում գյուղացին կձգտի իր տնտեսությունում ունենալ այդպիսի համակարգ:

5.12. «ՏՈՀՄԱՅԻՆ ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ և ԱՅԾԻ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» - Գիտական ղեկավար՝ Յու. Գ. Մարմարյան

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում կարևորվում է անասնաբուծության զարգացումը, որի համար առկա են նպաստավոր բնատնտեսական պայմաններ: Ներկա պայմաններում անհրաժեշտ է նպատակային և արդյունավետ օգտագործել այն ռեսուրսները, որոնց պոտենցիալը մինչ այժմ լիովին բացահայտված և օգտագործված չէ:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին առկա է անասնաբուծական մթերքների արտադրության և անասնագլխաքանակի կայուն աճի միտում: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հանրապետության բնակլիմայական պայմանները, բնակչության ավանդույթները և հողային ռեսուրսների պոտենցիալը, հնարավոր է մի քանի անգամ ավելացնել ինչպես անասնագլխաքանակը (մասնավորապես զարգացնելով տոհմային անասնաբուծությունը), այնպես էլ բարձրացնել արոտավայրերի օգտագործման արդյունավետությունը:

Այծաբուծությամբ նախկինում զբաղվել են գրեթե բոլոր տարածաշրջանները, առավելապես Վայոց ձորի, Սյունիքի, հյուսիս-արևելքի (Նոյեմբերյան, Իջևան, Շամշադին), Արագածոտնի տնտեսությունները:

Անցյալ հարյուրամյակում այծերի գլխաքանակը կտրուկ տատանվել է, ինչը պայմանավորված էր հանրապետության սոցիալ-տնտեսական, սեփականատիրական և այլ առանձնահատկություններով ու պատճառներով: Հանրապետությունում այծերի առավելագույն գլխաքանակ արձանագրվել է 1929 թ. (347,7 հազար գլուխ), նվազագույնը՝ 1991 թ. (14,1 հազար գլուխ), այսինքն՝ այն կրճատվել է շուրջ 96 %-ով: Սակայն վերջին երկու տասնամյակներում այծերի գլխաքանակը դինամիկ աճում է, ինչը համահունչ է աշխարհում այծաբուծության զարգացման և առավել արժևորման գործընթացներին:

Սույն ծրագրի հիմնական նպատակը հանրապետությունում տոհմային այծաբուծության ստեղծումն ու զարգացումն է, այծի կաթի արտադրության ավելացումը, ֆերմերային տնտեսություններին տոհմային մատղաշով ապահովումն է:

Հայաստանում ավանդաբար բուծել են այծեր, սակայն, մինչև 2000 թվականը, կաթնատու այծաբուծության ստեղծման և գիտականորեն հիմնավորված տոհմասելեկցիոն աշխատանքներ երբևէ չեն իրականացվել: Մինչդեռ այն լիովին իրատեսական է և խիստ այժմեական, քանի որ կնպաստի առկա պարենային անվտանգության ապահովմանը, լիարժեք կոգտագործվեն երկրի հնարավորությունները և համայնքներում կստեղծվեն նոր աշխատատեղեր:

5.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ ՑԱՆՔԵՐՈՒՄ «ԵՐԱՍԽԱՀՈՒՆ» ՊԱՏՐԱՍՏՈՒԿՈՎ ԿՈՄՊՈՍՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ -

Գիտ. ղեկավար՝ Հ.Ղ. Ղազարյան

Ավանդական երկրագործությունից (հանքային պարար-տանյութերի կիրառություն) օրգանականին անցումը ժամանակակից երկրագործության հիմքն է: Սակայն այն լիարժեք կիրառելու համար անհրաժեշտ քանակությամբ օրգանական պարարտանյութ (գոմաղբ, թռչնաղբ) չի արտադրվում, ուստի այլընտրանքային օրգանական պարարտանյութերի պատրաստումն ու կիրառումը կարևոր տնտեսական նշանակություն ունի: Դրանցից է <<Երասխահուն>> պատրաստուկի միջոցով կոմպոստի ստացումը:

«Երասխահուն»-ը կաթնաթթվային, ֆոտոսինթեզող, ազոտ ֆիքսող մանրէների դրոժների ու սնկերի շտամների համալիր է, որոնք նպաստում են հողի կենսացենոզի վերականգնմանը:

«Երասխահուն» պատրաստուկի կիրառման արեալները բավականին լայն են. բուսաբուծություն, անասնաբուծություն, բժշկություն, սննդի արդյունաբերություն և այլն: Բուսաբուծության ոլորտում այն օգտագործվում է՝

ա) կոմպոստի պատրաստման,

բ) սերմերի նախացանքային մշակման,

գ) բույսերի արտաարմատային սրսկման,

դ) անմիջապես հող մտցնելու ձևերով:

Հաշվի առնելով, որ «Երասխահուն» պատրաստուկի օգտագործման լավագույն ձևը կոմպոստի պատրաստումն ու կիրառումն է: Հ. Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոնի գիտ.աշխատողների կողմից 2004-2014 թթ. ընթացքում կատարվել են «Երասխահուն» պատրաստուկի միջոցով կոմպոստի ստացման և վաղահաս կարտոֆիլի, լոլիկի ու տաքդեղի ցանքերում դրա արդյունավետության պարզաբանման աշխատանքներ:

5.14. **ՀԱԱՀ ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԳԱՐՈՒ, ՑՈՐԵՆԱՇՈՐԱՅԻ, ՍՈԽԻ ԵՎ ՍԽՏՈՐԻ ՆՈՐ ՍԵԼԵԿՑԻՈՆ ՍՈՐՏԱՆՄՈՒՇՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ -** Գիտական ղեկավար՝ Ա.Շ. Մելիքյան

Ծրագրի նպատակն է արտադրության մեջ ներդնել ստացված դաշտային (գարի, ցորենաշորա) և բանջարային (սոխ, սխտոր) մշակաբույսերի նոր հեռանկարային սորտերը, որոնք կարող են մինչ այժմ ՀՀ-ում շրջանացված սորտերի համեմատ լինել առավել բարձրարդյունավետ:

Խնդիրները: Արտադրությունում գտնել վերոհիշյալ մշակաբույսերի նկատմամբ շահագրգիռ կողմերի, կազմակերպել սերմնաբուծական աշխատանքները և իրականացնել մշակություն ըստ առաջարկվող տեխնոլոգիաների:

ՀԱԱՀ բույսերի գենոֆոնդի լաբորատորիայում ստացված գարու ,Մարինաե և «Հայկ 1», ցորենաշորայի «Սիս 2», սոխի «Արմավիրի» և սխտորի «Ձյունիկ» սորտանմուշները իրենց արժեքավոր հատկանիշներով ու հատկություններով խիստ հեռանկարային են և կարող են ապահովել բարձր ու որակյալ բերք՝ տալով լրացուցիչ շահույթ ֆերմերային տնտեսություններին: Իսկ «Մարինա» սորտանմուշը հեռանկարային է նաև տեխնոլոգիական նպատակներով օգտագործելու համար:

Սոխի և սխտորի սորտանմուշները նախատեսված են մշակելու ՀՀ նախալեռնային գոտու և Արարատյան հարթավայրի, իսկ հացազգիներինը (գարի, ցորենաշորա)՝ նախալեռնային գոտու պայմաններում:

Արդիականությունը: ՀԱԱՀ բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի լաբորատորիայում (ԲԳԼ) ստացվել են աշնանացան գարու «Մարինա» և «Հայկ 1», ցորենաշորայի «Սիս 2», սոխի «Արմավիրի» և սխտորի «Ձյունիկ» սորտանմուշները, որոնք իրենց հատկություններով և հատկանիշներով գերազանցում են ՀՀ-ում արդեն իսկ մշակվող սորտերին:

5.15. «ՎԱՐՍԱԿԻ ԱԼՅՈՒՐՈՎ ԵՎ ՏԱՐԵԿԱՆԻ ՍՆՆԴԱՅԻՆ ԹԵՓՈՎ ԱՄՈՔԱՅԻՆ ԹԽՎԱԾՔԱԲԼԻԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՄ» - Գիտ. ղեկավար՝ Ա.Ի. Նազարյան

Վերջին տասնամյակում շուկայում ավելանում է ցածր հացաթխման հատկություններով ալյուրի քանակը և լուրջ փորձեր են կատարվում ապացուցելու դրա պիտանիությունը բարձրակարգ հացի արտադրության համար: Ցորենի, ալյուրի և հացի որակի խնդիրները գոյություն ունեն և դրա հետ համաձայն են բոլորը: Դրանք մշտապես քննարկվում են պետական և հասարակական տարբեր մակարդակներում:

Սննդային մանրաթելերով նոր մթերքների տեխնոլոգիաներ մշակող տեխնոլոգների առջև դրված հիմնական խնդիրն է պահպանել սննդային մանրաթելերում, որպես ֆունկցիոնալ բաղադրիչի, մարդու օրգանիզմի պահանջարկի բավարարման և ավանդական որակի հարստացված մթերքի պահպանման միջև հավասարակշռությունը:

Սննդային մանրաթելերի աղբյուր են տարբեր հացահատիկային մշակաբույսերը, մրգերը, բանջարեղենը և այլ բուսական նյութեր:

Վարսակի ալյուրն իր բարձր սննդարար և կենսաբանական արժեքների շնորհիվ բնութագրվում է որպես ֆունկցիոնալ հումք: Վարսակի ալյուրի մեջ սպիտակուցների քանակը 12 %-ով

ավել է, քան ցորենի ալյուրում, իսկ օսլան 15 %-ով քիչ է: Ցորենի հացաթխման առաջին տեսակի ալյուրի հետ համեմատած վարսակի ալյուրում մոնո և դիսախարիդները 6,5 անգամ շատ են:

Վարսակի լուծվող բջջանյութը կարգավորում է ստամոքսի աշխատանքը, կանխարգելում է շաքարային դիաբետի զարգացումը: Բացի այդ՝ վարսակը հակաօքսիդանտների հարուստ աղբյուր է, որը կանխարգելում է քաղցկեղը:

Վարսակն օգտագործում են տարբեր տեսակի մթերքների արտադրության համար, որոնք միմյանցից տարբերվում են ինչպես բաղադրությամբ և համով, այնպես էլ իրենց տեխնոլոգիական բնութագրերով՝ դիետիկ հացի և հրուշակեղենի արտադրության մեջ՝ ձավարեղենի, ալյուրի, ինչպես նաև սպիրտի գործարաններում՝ ածիկի պատրաստման համար:

5.16. «ՍՈՅԱՅԻ ԵՎ ՈԼՈՌԻ ՄԵԿՈՒՍԱՆՅՈՒԹՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԱՄՈՔԱՅԻՆ ԹԽՎԱԾՔԱԲԼԻԹՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» - Գիտական ղեկավար՝ Ա.Ի. Նազարյան

Մարդու սննդի հիմնական բաղկացուցիչ մասը կազմում է բուսական և կենդանական ծագման սպիտակուցը:

Կախված մարդու տարիքից՝ սպիտակուցի հանդեպ օրգանիզմի պահանջը փոփոխվում է:

Բուսական ծագման սպիտակուցների շարքում կարևոր տեղ է զբաղեցնում սոյայի սպիտակուցը: Սոյայից ստանում են երեք տեսակի մթերք՝ սոյայի ալյուր, որը ստացվում է սոյայի հատիկի աղումից, սոյայի խտանյութ, որն իրենից ներկայացնում է ածխաջրերից և բուսական անազոտ նյութերից մաքրված սպիտակուցային մթերք, և սոյայի սննդային սպիտակուց, որը ստացվում է սոյայի քուսպից:

Ոլոռի մեջ կա գրեթե այնքան սպիտակուց, որքան տավարի մսի մեջ, սակայն ի տարբերություն մսային սպիտակուցի՝ ավելի դյուրամարս է: Ոլոռը հանդիսանում է դեֆիցիտ ամինաթթուներից լիզինի աղբյուրն է, անհրաժեշտ է յուրաքանչյուր ֆունկցիոնալ նշանակության սննդակարգում: Այն պարունակում է պիրիդոքսին, որը մասնակցում է ամինաթթուների ճեղքմանը և սինթեզին:

Ոլոռի սպիտակուցը դյուրամարս է, քանի որ դրա արտադրության ընթացքում բոլոր դժվարամարս բաղադրիչները դուրս են գալիս: Շնորհիվ իր չեզոք համի և ֆունկցիոնալ առավելության՝ ոլոռի սպիտակուցը կարելի է օգտագործել տարբեր սննդամթերքների արդադրության ժամանակ: Այն լիովին համապատասխանում է սպառողների այնպիսի պահանջներին, ինչպիսիք են անվտանգությունը, բարենպաստ ազդեցությունն առողջության վրա և լավ համային հատկանիշները: Միաժամանակ շնորհիվ ֆունկցիոնալ բնույթի՝ այն բավարարում է արտադրողներին ըստ գործնական և տնտեսական ցուցանիշների:

Ոլոռի սպիտակուցի օգտագործումը նպաստում է մթերքի ելքի ավելացմանը, բարելավում է կազմվածքը և հատկապես թխվածքաբլիթների արտադրության դեպքում մակերեսին տալիս է հաճելի երանգավորում:

5.17. «ՍԵՎԻՈՋԻԴՈՎ ԱՄՈՔԱՅԻՆ ԹԽՎԱԾՔԱԲԼԻԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ» - Գիտական ղեկավար՝ Ա.Ի. Նազարյան

Դեռևս անցյալ դարի վերջին տասնամյակից սկսած՝ համաճարակաբանական հետազոտությունների մեթոդաբանության կատարելագործումը, սննդի կենսաբանորեն ակտիվ բաղադրամասերի դերի որոշումը, առաջադրված քիմիական կազմով և ֆունկցիոնալ հատկություններով նոր սննդամթերքի արտադրության մշակումը:

Այսօր բազմաթիվ համաճարակաբանական հետազոտությունների արդյունքում ապացուցված է սնման և սրտանոթային հիվանդությունների զարգացման, շաքարախտի, ճարպակալման և օստեոպորոզի միջև կապը:

Համաշխարհային պրակտիկայում վերջերս արտադրությունում բուժականխարգելիչ նպատակով օգտագործվում են ստևիա բույսի վերամշակմամբ ստացված մթերքներ: Դրանցից է ստևիոզիդը, որն ինտենսիվ տիպի բնական քաղցրացուցիչ է, սախարոզից քաղցր է մինչև 300 անգամ և ամբողջությամբ անվտանգ է օրգանիզմի համար: Այն նպաստում է արյան մեջ գլյուկոզի կոնցենտրացիայի նորմալացմանը և խախտված նյութափոխանակության վերականգնմանը:

Ըստ առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների՝ աշխարհում այժմ գրանցված է մոտ 150 միլիոն շաքարախտով հիվանդ (դիաբետիկներ), իսկ մինչև 2025 թվականը նրանց քանակը կրկնակի կաճի: Այդ նույն կազմակերպության տվյալների համաձայն, շաքարախտով հիվանդների թվով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է առաջին տեղը, իսկ պաշտոնական տվյալներով Հայաստանում շաքարախտով տառապում է մոտ 56 հազար մարդ, ընդ որում՝ նրանցից մոտ 400-ը մինչև 18 տարեկան երեխաներ են:

Նախագծի նպատակն է սննդամթերքի նոր տեսակների մշակումը, որոնցում շաքարը փոխարինված է ստևիոզիդով:

Մտահոգությունները պատճառ հանդիսացան սախարոզին փոխարինող նյութերի, ինչպես բնական, այնպես էլ սինթետիկ ինտենսիվ քաղցրացուցիչների արտադրության ընդլայնմանը: Դրանք ունեն երբեմն նույն քաղցրությունը, ավելի ինտենսիվ են երբեմն սախարոզից տարբերվում են քաղցրությամբ: Կարող են հաջողությամբ օգտագործվել շաքարախտով հիվանդների համար նախատեսված սննդամթերքի և շաքարին փոխարինող նյութերի արտադրությունում: Քաղցրության բարձր գործակիցը թույլ է տալիս կիրառել նաև հեշտ յուրացվող ածխաջրերից լրիվ կամ մասամբ զրկված դիետիկ մթերք արտադրելիս:

5.18. «ՀՀ ՄՇԱԿՈՎԻ ԵՎ ՎԱՅՐԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՒՄՔԻՑ ԵԹԵՐԱՅՈՒՂԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» - Գիտ. ղեկավար՝ Ժ. Գ. Աղաջանյան

Հայաստանում տարածված մշակովի և վայրի եթերայուղատու բույսերի թիվն անցնում է 50-ից այդ թվում՝ 10-ից ավելի մշակովի տեսակներ կամ արտադրական նշանակություն ունեցող քանակներով տարածված վայրիներ: Մշակովի եթերայուղատու բույսեր են թարխունը, ռեհանը, սամիթը, համեմը և այլն, վայրիներից՝ ուրցը, դաղձը, դառը, կիտրոնային և սովորական օշինդրները, կենսածառը, գիհին և այլն:

Նշված հումքատեսակներից ստացվող եթերայուղերն օգտագործվում են սննդի, պարֆումերիայի, կոսմետիկայի արտադրություններում և առողջապահությունում:

ՀՀ-ում եթերայուղերի արտադրման համար որպես հումք կարող են օգտագործվել մշակովի և վայրի եթերայուղատու կուլտուրաները:

Մշակովի կուլտուրաներից առավել մեծ արտադրական նշանակություն ունի թարխունը: Բույսի կանաչ ընձյուղները վաղ գարնանը և աշնանը օգտագործվում են որպես համեմունքային կանաչի, որը մեծ քանակներով սպառվում է ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ Վրաստանում, որոշ չափով նաև Ռուսաստանում:

Սննդի մեջ մատղաշ ընձյուղներն օգտագործելուց հետո մայիսի վերջերից թարխունի բազմամյա բույսը մեծանում է և պարզապես հնձվում է ու թափվում: Այն որպես անասնկեր չի կարող ծառայել, քանի որ եթերայուղերի մեծ պարունակության պատճառով կենդանիներն այն չեն ուտում:

Եթերայուղերի արտադրության համար Արարատյան հարթավայրի պայմաններում թարխունը հնարավոր է հնձել 2 անգամ՝ մայիս-հունիս (մոտ 35 օր) և հոկտեմբեր-դեկտեմբեր (45 օր) ամիսներին՝ երկու դեպքում էլ ծաղկման շրջանում, եթերայուղերի մեծ ելքի և լավ որակի ապահովումով:

5.19. «ԴԴՈՒՄԻ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ» - Գիտ. ղեկավար՝ Ժ. Գ. Աղաջանյան

ՀՀ սակավահողության պատճառով կարևոր է կայուն և բարձր բերքատվություն ունեցող հիվանդությունների և վնասատուների նկատմամբ դիմացկուն հումքատեսակի մշակումը: Գյուղատնտեսության և պահածոների արտադրության համար դդումի մշակում, վերամշակումը կարող է արժևորվել մի շարք հանգամանքներով՝

- պահունակություն, ինչի շնորհիվ հնարավոր է վերամշակումն իրականացնել նաև հետսեզոնային ժամանակահատվածում,
- ՀՀ ցանկացած շրջանում աճելու ունակություն, ինչը երաշխավորում է հումքի պահանջվող քանակ,
- հողատարածքների եզրերի օգտագործման հնարավորություն,

- բարձր բերքատվություն (500 g/հա),
- համտեսային լավագույն ցուցանիշներ,
- կենսաքիմիական հարուստ կազմ,
- պահածոների գործարաններում լրացուցիչ տեխնիկական և տեխնոլոգիական խնդիրներ չառաջացնելու առավելություն:

Ներկայումս ՀՀ պահածոների գործարաններում տարբեր տեսակի պահածոներ արտադրելու համար մեծ քանակությամբ վերամշակվում են տոմատ, բադրիջան, գազար և ծիրան հումքատեսակները: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այդ հումքատեսակների և դդումի կենսաքիմիական ցուցանիշների համեմատական գնահատումը:

5.20. ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ԼԱՍՈՍԱՅԻՆ ԵՎ ԹԱՌԱՓԱՅԻՆ ՁԿՆԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՁԿՆԱԿՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ - Գիտ. ղեկավար՝ Ժ.Գ. Աղաջանյան

Հայաստանում ներկայումս տարեկան արտադրվում է մինչև 15000 տ լասոսային և թառափային ձկնատեսակ:

Ըստ ձկնաբուծությամբ զբաղվող մասնագետների մոտավոր հաշվարկների՝ Արարատյան հարթավայրի արտեզյան ջրերի և լեռնային գետերի հնարավորությունների օգտագործմամբ հանրապետությունում հնարավոր է տարեկան արտադրել 50 հազար տոննայից ավելի, ձուկ (սահմանագիծ), որին հնարավոր է հասնել 4-5 տարվա ընթացքում:

Այժմ հանրապետությունում ձկնատեսակների արտադրության ծավալների աճի բացակայության պատճառներից մեկը ձկնակերի արտադրության բացակայությունն է: Այն ներկրվում է արտերկրից, հաճախ կասկածելի է դրանց որակը: Արդյունքում տեղի է ունենում ինքնարժեքի բարձրացում, առաջացնելով իրացման խնդիրների բարդություններ: Առաջարկվող ծրագրի նպատակն է լուծել այդ խնդիրը:

Բարձրորակ ձկնակերի արտադրությունը պայմանավորված է բաղադրատոմս ներմուծվող բաղադրիչների կազմով, որոնց սննդարժեքը կապահովի անհրաժեշտ էներգետիկ հոսք: Լավագույն կերը պետք է ապահովի ոչ միայն պահանջվող էներգետիկ բալանսը, այլ նաև հեշտ մարսելիությունը, ձկների արագ աճը, պակասեցնի ջրի պղտորությունը, բարձրացնի ձկների սննդարժեքը:

Այդ իմաստով անհրաժեշտ է ընտրել ոչ միայն ելանյութային հումքատեսակների ծագումը, այլ նաև դրանց ճշգրիտ համակցումը:

Ձկնակերում պրոտեինների ընդհանուր քանակի 50 և ավելի տոկոսը պետք է ապահովեն կենդանական ծագման ելանյութերը, ճարպերից ցանկալի է հագեցած և ոչ հագեցած ճարպաթթուների առկայությունը: Հիմնական բաղադրիչներից բացի ցանկալի է ձկնակերում օգտագործել բնական հավելանյութեր, մասնավորապես՝ յոդով հարստացնելու նպատակով ընկույզի կանաչ պտղակեղև և բադրիջանի պտղակեղև, որպես գրավչանյութ՝ բնական եթերայուղեր, վիտամինների քանակական և տեսակային կազմն ապահովելու համար՝ խաղողի սերմեր, մասուր և դրանցից ստացված բուսայուղեր:

Հայտնի է, որ ՀՀ Նոյեմբերյանի տարածաշրջանի ցիոլիտը կիրառվում է տարբեր կենդանիների կերակրացանկում որպես առողջությունը կարգավորող, սննդի յուրացմանը նպաստող, անհրաժեշտ հանքային տարրերով ապահովող միջոց: ՈՒստի ակնհայտ է դառնում նաև ձկնակերում դրա ներմուծման անհրաժեշտությունը:

Լասոսային և թառափային ձկնակերերը պետք է պարունակեն այնպիսի բաղադրիչներ, որոնք կապահովեն պահանջվող սննդարժեքը.

1. Պրոտեին - 44 – 52 %
2. Ճարպ - 15 – 22 %
3. Ածխաջրեր - 13 – 22 %
4. Թաղանթանյութ - 0,7 – 2,2 %
5. Մոխիր - 7,7 – 10,2 %
6. Ֆոսֆոր - 0,7 – 1,0 %

Նման բաղադրությամբ տարբերակներ հնարավոր է ստանալ ձկնարդյունաբերության մնացորդների, կենդանիների ոսկորների և բուսական հումքատեսակների արտադրական մնացորդների օգտագործմամբ:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական կենտրոններում գիտահետազոտական ինստիտուտներում, գիտական պրոբլեմային լաբորատորիաներում 2016 թ. իրականացված հետազոտական աշխատանքների համառոտ բնութագիրը

5.21. "Հ.Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի և մելիորացիայի գիտական կենտրոն"

2016 թ. հաշվետու տարում Հավաքագրվել է Արարատյան հարթավայրի կլիմայական, երկրաբանական, հողառաջացման, հողատիպերի վերաբերյալ մանրազննին տեղեկատվություն: Բերվել է տարածաշրջանի հողերի մելիորատիվ վիճակի՝ հողերի աղակալման և ալկալիացման գործընթացների, գերխոնավ հողերի տարածքների դինամիկայի, երկրորդային աղակալված հողերի բերրիության ցուցանիշների՝ աղակալման և ալակալիացման աստիճանի, աղերի և կարբոնատների պարունակության, էլեկտրահաղորդության /EC/, փոխանակային նատրիումի հարաբերական պարունակության /ESP/, հումուսի, սննդատարրերի, գրունտային ջրերի մակարդակի տատանումների և դրանց հանքայնացման ցուցանիշները: Ուսումնասիրվել են նաև մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց բերքի ցուցանիշները, տարածքների բնապահպանական, ինչպես նաև ազգաբնակչության սոցիալ - տնտեսական վիճակի հետ կապված որոշակի խնդիրներ:

Ուումնասրվել է գրունտային ջրերի մակարդակի դինամիկան Մասիսի և էջմիածնի տարածաշջաններում, ինչպես նաև Արմավիրի փորձամելիորատիվ կայանի մելիորացված հողերի արդի վիճակը: Նմանատիպ ուսումնասիրություններ են տարվել ,Ոսկեհատիե տնտեսությունում:

Կոնյակի գործարանների կողմից, գինու թորման ընթացքում ստացվող թափոնը՝ բարդան, օգտագործվել է գյուղատնտեսության մեջ որպես մելիորանտ /մելիորացվել է սոդային աղուտ-ալկալի հողերի 0,5 հա /:

Ընթացիկ տարում իրականացվել են հետազոտություններ էրոզացված և էրոզավտանգ կերային հանդակներում, հակաէրոզային համալիր մարգագետնամելիորատիվ միջոցառումների կիրառման արդյունավետությունը բացահայտելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել պարզելու հանքային և օրգանական պարարտանյութերի համեմատական արդյունավետությունը բանջարեղենի /լոլիկ, տաքդեղ/ ցանքերում:

Անապատացման արդի պայմաններում ՀՀ լանդշաֆտների էկոլոգիական վիճակի գնահատման, դեգրադացվածության աստիճանի բացահայտման, կենսաբազմազանության փոփոխման, հողի օրգանական նյութերի /հումուս/ և հիմնական սննդատարրերի /N, P_2O_5, K_2O/ ընդհանուր և մատչելի ձևերի դինամիկան ու դրանց միգրացիան ուսումնասիրելվել են Վարդենիսի, Գեղամա լեռնաշղթաների, Արագածի լեռնազանգվածի տարբեր բարձրություններում /2100,2500,2800, 3190 մ/ և անտառային ու տափաստանային բնահողային գոտիներում:

Մարդկային գործոնի և գլոբալ կլիմայական փոփոխությունների պայմաններում հետազոտվել են հանրապետության խոշոր քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր, Գավառ, Հրազդան, Դիլիջան, Գորիս, Կապան) շրջակա միջավայրի օբեկտների վարակվածությունը կենդանիների և մարդու առողջության համար վտանգավոր մակաբույծների ձվերով, թրթուրներով և սաղմնապարկերով և տրվել դրանց անասնաբուժասանիտարական գնահատականը:

Գիտական կենտրոն մասնաճյուղի լաբորատորիաները 2016թ-ին հագեցվել են նոր սարքավորումներով

- Ուլտրամանուշակագույն սպեկտրաֆոտոմետր "5300BI"մակնիշի 1 հատ
- Հողի խոնավաչափ-ջերմաչափ "TR-46908" մակնիշի 1 հատ
- Հողի խտաչափ (պենետրոմետր) Wile soil 1

- Դյուրակիր անալիզատոր (pH-մետր, էլեկտրոհաղորդականության, ջերմաչափ և ընդհանուր աղերի որոշում) MI 1 հատ
- Նիտրատաչափ դյուրակիր 1 հատ
- Ջրի թորման սարք 5 լ GT-DZ5Z 1 հատ

Չորացնող պահարան 50 լ WON-50 1 հատ

5.22. ԱԳՐՈԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Գիտական կենտրոնը իր աշխատանքները իրականցրել է երկու ուղղությամբ՝

- կենսատեխնոլոգիական մեթոդների կիրառմամբ գյուղատնտեսական և դեկորատիվ մշակաբույսերի առողջ տնկանյութի ստացում և բազմացում

- մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների ձեռք բերում, ռեգեներացիա, բնութագրում և պահպանում:

Կենսատեխնոլոգիական մեթոդներով մշակաբույսերի բազմացման բաժին

Աշխատանքներ են տարվել հյուսվածքային կուլտուրայի եղանակով մշակաբույսերի, դեկորատիվ և դեղատու բույսերի բազմացման տեխնոլոգիաներ մշակելու ուղղությամբ: Կարտոֆիլի որոշ հեռանկարային սորտերի (Կրասավչիկ, ֆիալետովի, Վասիլյոկ, Նիկուլինսկի, Գոլուբիզնա) համար մշակվել են վիրուսազերծ ռեգեներատների ստացման, միկրոբազմացման և ադապտացման արդյունավետ տեխնոլոգիաներ:

Աէրոպոնիկ համակարգում տնկվել է in vitro աճեցված, վիրուսազերծ բույսեր, որից ստացված մինիպալարները տնկվել են Ստեփանավանի փորձարարական տնտեսությունում և էջմիածնի ջերմատանը:

Կարտոֆիլի 25 սորտերի բույսերի ռեգեներացիան իրականացվել է նաև կալուսային կուլտուրայի օգտագործմամբ, նպատակ ունենալով հետագայում դրանցից կազմավորված բույսերից ընտրել աղակայուն գծեր (ԴՆԹ-ի անջատմամբ): Մշակվել է Ելակի Ռուսական սորտի ´Первый поцелуй´ միկրոբազմացման արդյունավետ տեխնոլոգիա:

Մշակվել է գետնատանձի 5 սորտի in vitro աճեցման տեխնոլոգիա:

Կատարվել է խաղողի բարձր համային հատկանիշներ ունեցող, ´Ռուսկիյ Կոնկորդ´ սորտի in vitro բազմացման տեխնոլոգիայի մշակման ուղղությամբ աշխատանքներ, որոնք կարիք ունեն շարունակման:

Բարելավվել է Կիվիի in vitro արմատակալման տեխնոլոգիան:

Ծիրանենու կլոնային պատվաստակալների արմատագոյացման տարբերակների ընտրության ուղղությամբ ևս իրականացվել են աշխատանքներ, սակայն դրանք կարիք ունեն շարունակման:

Մշակվել է քրիզանթեմայի՝ սորտ ,Լարիսաե միկրոբազմացման ամբողջական տեխնոլոգիա:

Ուսումնասիրվել է կարտոֆիլի (Solanum tuberosum L.) Կուրաժ սորտի in vitro պալարագոյացման առանձնահատկությունները:

Իրականացվել են գաճաճ ընկույզի ռեգեներացման ուղղությամբ աշխա-տանքներ, որոնք դեռևս ավարտված չեն և կարիք ունեն բարելավման:

Շարունակվել են աշխատանքները նաև շուշանի, էուստոմայի, միրտի, գարտենզիայի, մեղրախոտի միկրոբազմացման տեխնոլոգիաների բարելավման ուղղությամբ :

Մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենբանկ

Բույսերի գենբանկում շարունակվել են իրականացվել տեղական ծագման գյուղատնտեսական մշակաբույսերի և դրանց վայրի ազգակիցների գենետիկական ռեսուրսների ձեռք բերման, ռեգեներացման, բնութագրման, փաստաթղթավորման և պահպանման աշխատանքները: In vitro պայմաններում պահպանվող վեգետատիվ բազմացող մշակաբույսերի (կարտոֆիլ, ունաբ, խաղող, նուշ, անփուշ մոշ, ելակ և այլն) թվով 245 նմուշներ վերակտրոնավորվել են, դրանց նկատմամբ իրականացվել է պահպանման արտաքին ռեժիմի (լույս, խոնավություն. ջերմություն) ամենօրյա հսկողություն:

Հուլիս ամսին իրականացվել է գիտարշավ ՀՀ բոլոր մարզերում՝ Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի, VIR-ի (Համառուսաստանյան բուսաբուծության ինստիտուտ) և Ճապոնիայի (Օկայամայի Համալսարան) մասնագետների մասնակցությամբ:

Հավաքվել են տաբեր բույսերի (հացազգիներ, գաթի ծաղիկ և այլն) շուրջ 100 նմուշ՝ գենբանկում երկարատև պահպանման դնելու նպատակով; Պատրաստվել են հերբարիումներ (30 հատ):

Կարտոֆիլի սորտերի in vitro պահպանման ժամկետների երկարացման նպատակով շարունակվել են աշխատանքները սննդարար միջավայրի բաղադրության բարելավման և արտաքին ռեժիմի (լույս, խոնավություն, ջերմություն) կարգավորման ուղղությամբ:

5.23. «ԽԱՂՈՂԱՊՏՂԱԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Հաշվետու տարում կատարվել են հետևյալ հետազոտական աշխատանքները:

Մայիսի 3-ին և 4-ին Արարատի մարզի Այգավան գյուղի ֆերմերային տնտեսությունում հիմնվել է տնկարան, մոտ 195 խաղողի սորտերի, կլոնների և ձևերի ներգրավմամբ:

2016 թ. գարնանը փոքր տնկարան է հիմնվել նաև Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Մերձավան համայնքի ֆերմերային տնտեսությունում՝ մոտ 15 սորտերի ներգրավմամբ:

2016 թ. ապրիլի սկզբին Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանում հիմնադրվել է խաղողի ցուցադրական այգի՝ սպիտակապտուղ տեխնիկական սելեկցիոն Կանգուն (0,5 հա) և սեղանի աբորիգեն Վարդագույն Երևանի (Կարմիր քիշմիշ – 0,5 հա) սորտերով:

2016 թ. աշնանը (նոյեմբեր) վերոհիշյալ այգու հարևանությամբ հիմնադրվեց խաղողի կոլեկցիոն (ամպելոգրաֆիական) այգին (1,3հա)՝ մոտ 300 սորտերի ներգրավմամբ:

2016 թ. մայիս-հունիս ամիսներին առաջատար գիտական աշխատող Դ.Սաֆարյանի կողմից՝ Մերձավանի ֆերմերային տնտեսությունում իրականացվել են խաղողի հիբրիդիզացիոն աշխատանքներ, ներգրավելով բարձրորակ սեղանի սորտեր, այդ թվում նաև քիշմիշային: Խաչաձևումների արդյունքում ստացված հիբրիդային սերմերը հավաքվել են, մշակվել և դրվել պահպանման:

Ընթացիկ տարում շարունակվել են աշխատանքները օրգանական նոր սինթեզված Ազոցեովիտ-1 կենսապարարտանյութի (որպես խթանիչ) փորձարկման ուղղությամբ: Փորձի արդյունքները ցույց են տալիս, որ աճի խթանիչ Ազոցեովիտ-1-ը դրական է ներգործում արմատակալների աճի և արմատագոյացման վրա:

5.23.1. Պտղաբուծություն

Կատարվել է տնտեսագիտական ուսումնասիրություն 1990թ-ից մինչև օրս մի քանի ուղղություններով՝ պտղատու այգիների ընդհանուր և բերքատու տարածքների, նրանց համախառն արտադրանքի ու ըստ մշակաբույսերի և նրանց խմբերի՝ ըստ պետական վիճակագրական տվյալների:

Հանրապետության մի շարք մարզերում գիտարշավային հետազոտությունների միջոցով հայտնաբերվել և ուսումնասիրվել են պտղատու տեսակների բազմաթիվ կուլտուրական, վայրի և վայրիացած սորտեր ու ձևեր:

Վեգետացիայի ընթացքում Արագածոտնի, Արմավիրի և Արարատի մարզերի մի շարք ֆերմերային տնտեսություններում պտղատու մշակաբույսերի նկատմամբ իրականացվել են ֆենոլոգիական դիտարկումներ, սորտերի նույնականացում, նկարագրություններ, քիմիական կազմի անալիզներ:

Հաշվետու տարում շարունակվել են աշխատանքները Կոտայքի մարզի Նոր-Գեղի համայնքում հիմնված խնձորենու այգում՝ նպատակ ունենալով պարզելու տարբեր մանրէների և ֆերմենտների ակտիվութկան դինամիկան արմատային գոտում: Պարզվել է, որ 1.Մանրէների ակտիվությունը բարձր է բույսերի ծաղկման շրջանում: 2. Մանրէների ակտիվությունը փոխկապված է ֆերմենտների ակտիվության հետ:

5.23.2. Գինեգործություն

2016թ. շարունակվել է թունդ խմիչքների վերաբերյալ հետազոտություններ՝ ուղղված նոր տեխնոլոգիաների մշակմանը, կատարելագործմանը և արդիականացմանը: Հետազոտություններ են իրականացվել արտասահմանյան չոր ակտիվ խմորիչների ուսումնասիրությունների ուղղությամբ:

5.24. «Գյուղատնտեսության մեքենայացման էլեկտրիֆիկացման և ավտոմոբիլային փոխադրումների ԳՀԻ»
Դաշտավարության մեքենայացման բաժին

Բաժնում տարվում են չորս թեմաներ.

5.24.1. ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՄԻՋԲՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՄԵՔԵՆԱՅԻ (ԱՅԳԵՓՈՐ) ՄՇԱԿՈՒՄ

Օգտագործելով 2015թվականի իրականացված թեմայի կինեմատիկական որոշ պարամետրեր և 2016թվականի ուժային վերլուծության արժեքները, գիտափորձնական հետազոտությունների նպատակով պատրաստված չափիչ սպասքներով համալրված դինամիկական – լաբորատոր – մեքենայի, պտղատու այգիներում կատարված գիտափորձերի արդյունքներով որոշված են հետևյալ օպտիմալ պարամետրերը.

-մեքենայի համընթաց արագությունը, կմ/ժ 1,1-1,3

- ֆրեզի պտտման անկյունային արագությունը վ$^{-1}$,

- կինեմատիկական պարամետրերի փոփոխման տիրույթը, 12-13

- ֆրեզի բավարար բանեցման պտտող մոմենտը, Ն.մ, 56:

2017 թվականի ընթացքում կիրականացվեն մեքենայի լայն արտադրական փորձարկումները:

5.24.2. ԿԱՐՏՈՖԻԼԱՏՆԿԻՉԻ ՀԵՏ ՀԱՄԱԼՐՎՈՂ ԿԵՆՍԱՀՈՒՄՈՒՍԱՑԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՄՇԱԿՈՒՄ

Հաշվի առնելով կարտոֆիլացան տնտեսությունների պահանջարկը և կենսահումուսի արտադրության առկա ծավալները, հատկապես Գավառի տարածքում, բաժնում մշակվել է կարտոֆիլատնկիչների հետ համալրվող կենսահումուսացան ապարատ, որը իրականացնում է նաև անօրգանական պարարտանյութի ցանք 70-100 գ/մ նորմայով, զանգվածի անընդհատ և հավասարաչափ հոսքով նոր ապարատի փորձանմուշը անցնում է լաբորատոր փորձարկումների փուլը:

Նախապատրաստվում է 2017թվականին իրականացնել դաշտային փորձարկումները:

“Մոտոբլոկային կարտոֆիլատնկիչի կառուցվածքի մշակում և պարամետրերի հիմնավորում

Հանրապետության կարտոֆիլագործական տնտեսությունների գրեթե 50 տոկոսը զբաղվում են կարտոֆիլի մշակությամբ՝ փոքր տարածքների՝ 1-2 հեկտարի վրա: Մեր կողմից 2014-2016թթ. ընթացքում մշակվել է մոտոբլոկային ժապավենագդալիկավոր կարտոֆիլատնկիչ մեքենայի կառուցվածք, որը հնարավորություն է տալիս մեքենայացնել կարտոֆիլատնկման աշխատանքները փոքր տարածքների վրա, զգալիորեն կրճատել ձեռքի աշխատանքը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Մոտոբլոկային կարտոֆիլատնկիչի էսքիզային նախագծի մշակումը հնարավորություն կտա կազմակերպել փորձնական նմուշի պատրաստումը և արտադրական պայմաններում փորձարկել, որի արդյունքներով վերջնականորեն վերամշակել կարտոֆիլատնկիչի կառուցվածքը:

5.24.3. Խաղողի այգու միջշարքային տարածության հարթ վարի ճակատային գութանի մշակում

Առաջադրանքի խնդիրն է եղել՝բացառել վազերի արմատային համակարգի վնասումը, ապահովել միջշարքային տարածության հարթ վար, մշակաբույսի շարքերին մոտ:

Խնդրի լիարժեք լուծումը իրականացվել է համաձայն ագրոտեխնիկական պահանջների՝ հարթ վարի իրականացում հաստատուն խորությամբ, առի լիարժեք շրջումով, ծառի սաղարթատակից դուրս տարածքում և սաղարթատակ տարածքի փխրեցում, փոփոխական խորությամբ, ծառի վերին արմատների թեքությանը զուգահեռ:

Առաջարկվող այգեգործական հողամշակ մեքենան իրականացնում է հարթ-խոր վար միջշարքային տարածության կենտրոնական մասում՝ ծառի սաղարթի պրոյեկցիայից դուրս տարածքում, գութանի ընդգրկման լայնությամբ:

5.24.4. Կերարտադրության և անասնապահական ֆերմաների մեքենայացման բաժին

Աշխատանքները տարվել են երկու ուղղությամբ. 1) ընդհատումներով գործող խառնիչով կերախառնուրդների պատրաստման արտադրամասի մեքենասարքավորումների ու նախագծերի մշակում մինչև 20 կովի հաշվով և 2) հոսքային եղանակով գործող խառնիչով կերախառնուրդների պատրաստման արտադրամասի մեքենասարքավորումների ու նախագծերի մշակում մինչև 100 կովի հաշվով:

Առաջին տարբերակի համար մշակված մեքենասարքավորումները հաջողությամբ անցել են լաբորատոր և արտադրական փորձարկումներ, մեքենաների համալիրը սարքին վիճակում է և արտադրամասի ներդրման էսքիզային նախագծերը պատրաստ են: Պատահական չէ, որ այդ արտադրամասի տեխնիկական փաստաթղթերը ներկայացվել են ՀՀ Կառավարություն որպես ներդրման «Ծրագիր-առաջարկ»: Ի դեպ, կառավարություն է ներկայացվել նաև ներդրման համար պատրաստ, նախկինում կատարված հետազոտությունների արդյունքները՝ «Կենսագազային տեղակայանքի և հիդրոպոնիկ ջերմատան համատեղ գործունեության համակարգ» անվանումով, որպես ներդրման երկրորդ «Ծրագիր-առաջարկ»:

Երկրորդ տարբերակի համար մշակված և լաբորատոր պայմաններում պատրաստված մեքենասարքավորումների մի մասն անցել է լաբորատոր ու արտադրական փորձարկումները, ճշտվել են կառուցվածքային պարամետրերը և շահագործական ռեժիմները: Նոր ստեղծվածների մյուս մասը՝ արմատապալարապտուղներ մանրացնող մեքենան և անընդհատ գործողության ռոտորային կերախառնիչը հիմնականում պատրաստ են, նախատեսվում են 2017 թ. փորձարկել ու ճշտումներ կատարել: Որոշ սարքավորումների՝ կերերի բունկերների ու չափավորիչների, էսքիզային նախագծերը պատրաստ են, սակայն այս տարի չհասցրեցինք պատրաստել և փորձարկել ֆինանսական միջոցների ու աշխատուժի սղության պատճառով:

Որոշվել ու ամփոփվել են կերերի ֆիզիկամեխանիկական հատկությունները և բերվել ինժեներական հաշվարկներում օգտագործման մատչելի տեսքի: Կատարվել են նոր ստեղծված ու ստեղծվող մեքենասարքավորումների համապատասխան հաշվարկներ և լաբորատոր փորձարկումներ:

5.25. Ավտոմոբիլային տրանսպորտի բաժին

Ավտոտրանսպորտային միջոցների վառելանյութի հսկողական և շահագործական ծախսի որոշման նպատակով դասակարգվել են դրանց շարժման ռեժիմները: Ըստ շահագործական պայմանների որոշվել է տրասպորտային տարբեր միջոցների շարժման ռեժիմների տեսակարար քանակը, որը և հիմք է ծառայել վառելիքի ծախսի նորմավորման համար:

Վառելիքի ծախսի նորմավորումը նշված եղանակով հնարավորություն է տալիս որոշել միավոր տրանսպորտային աշխատանքի համար տեսակարար ծախսը գր/տ.կմ, գր/ուղ.կմ: Դրանով հնարավորություն է ստեղծվել տալ համեմատական գնահատական տնտեսվարող սուբյեկտի տրանսպորտային աշխատանքի ռացիոնալ կազմակերպման վերաբերյալ:

Որպես հետազոտության օբյեկտ ընտրվել է բնական սեղմած գազով և բենզինով աշխատող ԳԱԶել ընտանիքի միկրոավտոբուսը: Որպես շահագործման պայմաններ դիտարկվել են Երևան-Արմավիր, Երևան-Սևան,Երևան-Գյումրի և Երևանի ներքաղաքային ուղևորափոխադրումների երթուղիները:

Հաշվետվության մեջ ներկայացված են շահագործման տարբեր կատեգորիաների պայմաններում, տարբեր ավտոտրանսպորտային միջոցների շարժման ռեժիմների դիֆերենցված ցուցանիշները:

5. 26. «Պարենամթերքի Տեխնոլոգիաների, սննդի Անվտանգության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ»

5.26.1. *Կենդանական ծագման հումքի և մթերքի վերամշակման տեխնոլոգիայի բաժին*

Ուսումնասիրվել են կաթնաթթվային և բիֆիդոբակտերիաների կենսատեխնոլոգիական, կենսաքիմիական հատկությունները: Հետազոտված 25 նմուշներից անջատվել են առավել ակտիվ շտամներ, որոնք մեկուսացվել են գոլդեն տեսակի խնձորենու և բալենու ծաղիկներից և ընդգրկվել են թթվասերի մակարդի կազմում: Ուսումնասիրվել են թթվասերի

կենսատեխնոլոգիական հատկությունները (թթվությունը, անտագոնիզմը, մածուցիկությունը, խտությունը, սիներեզիսը, ամինաթթուների և դիացետիլի քանակը (և որոշվել են թթվասերի արտադրության օպտիմալ տեխնոլոգիական պարամետրերը: Բուսական ծագման հումքից և մթերքներից անջատված բակտերիաները նույնականացվել և ավանդագրվել են լաբորատորիայի մանրէների թանգարանի հավաքածուի կազմում:

5.26.2. Սննդի Անվտանգության և Կենսատեխնոլոգիայի բաժին

Բուժիչ կաթնամթերքների հարստացումը լրացուցիչ լցանյութերով, հիմնականում՝ մրգային հավելումներով և դեղաբույսերի մզվածքներով, հնարավորություն է տալիս բարձրացնել պատրաստուկի կենսաբանական արժեքը: Դրա հետ մեկտեղ պատրաստուկին է հաղորդվում լցանյութի համն ու հոտը, այն հարստացնելով նաև սպիտակուցներով, վիտամիններով, տարատեսակ օրգանական, անօրգանական թթուներով և այլ կենսաբանական ակտիվ նյութերով, որոնք կարգավորում և բարձրացնում են օրգանիզմի դիմադրողական, պաշտպանական, նյութափոխանակության գործընթացները:

Բաժնի գիտահետազոտական աշխատանքների նպատակն է հանդիսացել *in vitro* պայմաններում մի շարք կաթնաթթվային բակտերիաների և Հայաստանի տարբեր մրգերի ու հատապտուղների մզվածքների ազդեցության ուսումնասիրությունը մի շարք ախտածին բակտերիաներիզ արգացման վրա: Պարզվել է, որ մրգերի մզվածքներն ունեն տարբեր բակտերիոցիդ ազդեցություն ախտածին մանրէներ ՝ P. aeruginosa, S. marcescens, E. coli, P. vulgaricus, S. paratyphi, S. dysenteriae և B. subtilis –ի նկատմամբ: Օրինակ, ծիրանն ունի բակտերիոցիդ ազդեցություն B. subtilis –ի, խնձորը՝աղիքային ախտածին E. coli-ի, նուռը՝ B. mesentericus, B. subtilis–ի նկատմամբ, սալորը՝ ճնշում է մեր կողմից ուսումնասիրված բոլոր ախտածին մանրէներին, անտառային հատապտուղները՝ մորին, ելակը, հաղարջը և այլն, ճնշում են ստաֆիլակոկերի զարգացումը:

Այսպիսով, վերոհիշյալ փորձերի հիման վրա կոնկրետ ծագմամբ ինֆեկցիաների նկատմամբ կարելի է առաջարկել համապատասխան սիմբիոտիկաթերապիա:

5.26.3. «ԲՈՒՍԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՄԹԵՐՔԻ ԵՎ ՀՈՒՄՔԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ»

Ամբողջ տարվա ընթացքում առանց ընդհատումների ազգաբնակչությանը բուսական ծագման որակյալ արտադրանքով ապահովելը գյուղատնտեսական արտադրության և սննդարդյունաբերության ճյուղերի առաջնահերթ և կարևորագույն խնդիրներից են:

Առաջին ենթաթեմայի շրջանակներում հետազոտվել է պտուղբանջարեղենի հիմնական տեսակների չորացումով վերամշակման այնպիսի տեխնոլոգիաներ, որոնց կիրառումով հումքը ձեռք է բերում բոլոր տեսակի չիպսերին հատուկ հաճելի փխրունություն, անվնաս է մարդու առողջության համար, սննդարար է և կարող է փոխարինել յուղում տապակած արտադրատեսակներին:

Երկրորդ ենթաթեմայում կատարվել է մի շարք հետազոտություններ, որոնք վերաբերվում են բուժիչ խոտաբույսերի հնարավոր կիրառությանն առաջին անհրաժեշտության սննդամթերքների արտադրության մեջ:

Տեսականորեն և փորձնականորեն հետազոտել սննդի անվտանգության և պահպանման, որակի հիմնախնդիրները գամմա ճառագայթման միջոցով:

Կատարվել են կոմպլեքս հետազոտություն մեթոդի մի շարք բարձր խոնավությամբ սննդամթերքները ռադուրացման եղանակով մշակելու ուղղությամբ:

Երրորդ ենթաթեմայում հետազոտվել է Վայոց ձորի աբորիգեն խաղողի կարևորագույն գինեմետ սորտերի գենետիկական պրոֆիլները, ընդ որում, Ավագի 1-ը նկարագրվել է որպես նոր հայտնաբերված սորտ, տրվել է դրա ամպելոգրաֆիական նկարագրությունը:

Հետազոտության արդյունքներով տպագրվել են 6 գիտական հոդված, որոնցից երեքը միջազգային պարբերականներում (scopus) և պաշտպանվել երկու թեկնածուական ատենախոսություններ:

Գիտական աշխատանքներից երեքը զեկուզվել են միջազգային գիտաժողովներում:

5.27.Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի

Ընթացիկ տարում Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնում իրականացվել է «ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման գործիքների և կառուցակարգերի կատարելագործում» գիտական թեման, որն իր մեջ ներառում էր 3 ենթաթեմաներ՝

1. «ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման կառուցակարգերի կատարելա-գործում», որի շրջանակներում ուսումնասիրվել է ագրոպարենային համակարգի պետական կարգավորման գործող մեխանիզմները, աջակցության ուղղությունները, վեր են հանվել ուժեղ և թույլ կողմերը: Առաջարկվել են պետական կարգավորման գործուն կառուցակարգեր և գյուղատնտեսության պետական աջակցության հարթակի սխեմա:

2. «ՀՀ գյուղատնտեսության ռիսկերի գնահատման և ապահովագրական համակարգի ներդրման կառուցակարգերի մշակում», որի շրջանակներում ուսումնասիրվել են գյուղատնտեսության ապահովագրության միջազգային փորձը, այդ թվում Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններում: Վեր են հանվել ՀՀ գյուղատնտեսությունում ապահովագրական համակարգի ներդրման խոչընդոտները, հնարավորությունները և առաջարկվել են համապատասխան միջոցառումներ:

3. «ՀՀ-ում գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացման 2014-2020 թթ. ծրագրի մշակում» -ուսումնասիրվել է ՀՀ գյուղատնտեսությունում կոոպերացման գործընթացը, արդյունքները, «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ մշակվել է գյուղատնտեսության կոոպերացիայի բնագավառում պետական աջակցության ծրագրի մոտեցումները և ուղղությունները:

Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպել են «Կլոր –սեղան քննարկումներ», հրատարակվել են 10-ից ավելի գիտական հոդվածներ: Ներկայացված առաջարկությունները ներառվել են ՀՀ գյուղատնտեսության զարգացմանը վերաբերող ծրագրերում և հայեցակարգային դրույթներում:

5.28. Անասնաբուժության և անասնաբուժական սանիտարական փորձաքննության պրոբլեմային լաբորատորիա

2016 թ. ընթացքում ուսումնասիրվել և մշակվել են հանրապետությունում խոզերի անաերոբային դիզենտերիայի ախտորոշման, բուժման, կանխարգելման և պայքարի միջոցա-ռումներ: Միաժամանակ, հանրապետության մարզերում ժամանակակից մակաբուծաբանական հետազոտությունների մեթոդներով ուսումնասիրվել է գյուղատնտեսական թռչունների ինվազիոն հիվանդությունների, հատկապես արտաքին մակաբույծներով վարակվածության նկատմամբ համաճարակաբանական իրավիճակը: Պարզվել է, որ հանրապետության, որ Հայաստանի մի քանի գյուղական համայքներում և Երևան քաղաքի արվարձաններում բուծվող թռչունների մոտ հայտնաբերել են փետրակերներ, Argas persicus (պարսկական տիզ) արգասային տիզը և Knemidocoptes mutans՝ թռչունների ոտքերի տիզը:

2016 թ.-ին ՀՀ-ում Կոտայքի, Լոռու, Արարատի և Սյունիքի մարզերում տավարաբուծական կաթնապրանքային և գյուղացիական ֆերմերային տնտեսություններում ուսումնասիրվել է խոշոր եղջերավոր կենդանիների նյութափոխանակության խանգարումների և մասնավորապես կետոզի տարածվածությունը, պատճառները:

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության է ենթարկվել Երևան քաղաքում սպառման ներկայացված թարմ և սառեցված ձկները: Նմուշառումը կատարվել է Երևան քաղաքի՝ ձկների վաճառքի տեսակետից առավել մեծ սպառում ունեցող տարբեր կետերից, նմուշառման կանոններին համապատասխան: Ստացված տվյալները գտնվում են վիճակագրական մշակման փուլում, և արդյունքները կամփոփվեն մինչև կիսամյակի ավարտը:

Կատարվել են կովերի արգանդի սուր բորբոքումների բուժման և կանխարգելման արդյունավետ եղանակների մշակման և ներդրման աշխատանքներ: Վերոհիշյալ նպատակների իրականացման համար հանրապետության մի շարք տնտեսություններում116 կովերը ենթարկվել են կլինիկական դիսպանսերիզացիայի, իսկ հիվանդները՝ բուժման, որին նախորդել է դեղորայքի

նկատմամբ մանրէների զգայունության որոշումը: Հիվանդ կովերի մետրիտի բուժման ավարտից հետո միանվագ արգանդ է ներլցվել տևական բակտերիցիդ հատկությամբ օժտված յոդի 1 % - ոց լուծույթ: Վերոհիշյալից 6 ժամ անց ներարկվել է պրոստոգլանդինի սինթետիկ ածանցյալ՝ էստրոֆանը 2 մլ չափաքանակով, իսկ α –տոկոֆերոլը օգտագործվել է ներքին ձևով 300- 600 մգ չափաքանակով:

5.29. Էկոլոգիայի և օրգանական գյուղատնտեսության պրոբլեմային լաբորատորիայի

Առաջին անգամ Հայաստանում լայնորեն մշակվող պոմիդորի և տաքդեղի ցանքերում փորձարկվում են իրանական արտադրության՝ մթնոլորտային ազոտը ֆիքսող Azoto Barvar-1 և հողի ֆոսֆորական դժվարամատչելի միացությունները բույսերի համար մատչելի դարձնող Phosphate Barvar-2 բակտերիալ խտանյութերը, որոնք Իրանի գյուղատնտեսության բնագավառում լայնամասշտաբ կիրառություն են գտել բոլոր մշակաբույսերի ցանքերում և բազմամյա տնկարկներում: Ըստ ստացված տվյալների այդ խտանյութերը բարձրացնում են ոչ միայն մշակաբույսերի բերքի քանակը և որակը, էկոլոգիական դրական մեծ ազդեցություն են թողնում հողի վրա, մասնավորապես նպաստելով հումուսի պաշարների ավելացմանը:

Ուսումնասիրությունների առաջին տարվա արդյունքները ցույց են տվել, որ պոմիդորի և տաքդեղի դաշտային և վեգետացիոն փորձերում կիրառված բակտերիալ խտանյութերի արդյունավետությունը (պտուղների բերքը և վեգետատիվ զանգվածը) զգալիորեն ցածր է եղել հանքային պարարտանյութերից ստացված նույն ցուցանիշների համեմատ, որն ըստ երևույթին պայմանավորված է համապատասխան բակտերիաների թույլ կենսագործունեության հետ:

Պարարտացման բոլոր տարբերակներում նիտրատների պարունակությունը պոմիդորի և տաքդեղի պտուղներում ցածր է եղել ՍԹԽ-ից, դա հիմնավորում է, որ N_{150} կգ/հա չափաքանակը արդյունավետ յուրացվում է մշակաբույսերի կողմից:

Բակտերիալ խտանյութերի և հայ-նորվեգական “ORVACO” համատեղ կազմակերպության կողմից արտադրվող “Օրգանոմիքս” պարարտանյութերի արդյունավետության վերաբերյալ փորձերի մեկ տարվա տվյալների հիման վրա դժվար է ճիշտ եզրակացության հանգել, հետևաբար ուսումնասիրությունները պետք է ևս 2-3 տարի շարունակվեն որպեսզի վերջնական արդյունքները առաջարկվեն արտադրությունում ներդնելու համար:

5.30. ԲՈՒՅՍԵՐԻ ԳԵՆՈՖՈՆԴԻ ԵՎ ՍԵԼԵԿՑԻԱՅԻ ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Արշավախմբային ուսումնասիրություններ: Սերմային հավաքածուն հարստացվել է 45 նոր նմուշով, որից 18-ը դրվել է երկարաժամկետ (-18՝C) պահպանության: Ներկայումս հավաքածուն ընդգրկում է **5506** սերմային նմուշ և **1414** թերթ հերբարիում:

2. Մոնիթորինգ: Կատարվել է ՄՎՑ-ների տարածման կարևորագույն արեալներում խոցելիության և հարմարվողականության գնահատում, կախված մարդածին ազդեցության, շրջակա միջավայրի վատթարացման և կլիմայի գլոբալ տաքացման հետ:

3. Սելեկցիոն աշխատանքներ: Պետական սորտափորձարկման են հանձնվել աշնանացան գարու ,Հայկ 2ե և աշնանացան ցորենաշորայի ,Սիս 2ե սորտանմուշները: Շարունակվում են հացազգիների, սոխի, սխտորի նոր սորտերի սելեկցիոն աշխատանքները:

4. Գենետիկական հետազոտություններ: Կատարվել են ճակնդեղի 3 վայրի տեսակների (Beta corolliflora Zoss., B.lomatogona F. et M., B.macrorrhiza Stev.), 5 մշակովի տեղական ծագման սորտ-պոպուլյացիաների (Աբովյանի, Արամուսի, Շիրակի, Ապարանի, Սպիտակի) կենսամորֆոլոգիական ուսումնասիրություններ, ընթացքի մեջ են դրանց գենետիկական հետազոտությունները:

5. Փաստաթղթավորում: Սերմային հավաքածուի (1980-ական թ.-ից պահպանվող) ցորենի 7 տեսակների (T.spelta L., T.vavilovii Jakubz, T.turgidum L., T.persicum Vav. ex Zhuk., T.aestivum

L., T.polonicum L., T.compactum Host.) 110 նմուշներ գնահատվել են ըստ մորֆոլոգիական հատկանիշների (հասկի երկարություն, քիստավորություն, թավոտություն, գույնը, քիստերի գույն և հատիկի գույն), և տվյալները ներառվել են ԲԳՌԵՀ ցանցի Ցորենի եվրոպական տվյալների բազայում (EWDB): Նոր հավաքված նմուշների (45) անձնագրային տվյալները մուտքագրվել են միջազգային էլեկտրոնային Բազա (EURISCO):

Գիտական հրատարակումներ և տեղեկատվություն

- 2016 թ.-ի ընթացքում տարբեր գիտական տեղեկագրերում հրատարակվել է **4** գիտական հոդված:
- Ստեղծվել է լաբորատորիայի ֆեյսբուքյան ցանցային կայք-էջը (Pgr Lab Anau), որը պարբերաբար թարմացվում է:
- Պատրաստվել է տեղեկատվական թերթիկ, նախապատրաստվում էտեղեկատվական գրքույկ Լաբորատորիայի 35-ամյա պատմության և գործունեության վերաբերյալ:
- Շարունակվում են, մշակաբույսերի Հայաստանում տարածված վայրի ցեղակիցներ և օգտակար վայրի բույսերե եռալեզու ատլաս-գրքի ստեղծման աշխատանքները:

5.31.Բույսերի պաշտպանության և պեստիցիդների սինթեզի պրոբլեմային լաբորատորիա

ՀԱԱՀ-ի բույսերի պաշտպանության և պեստիցիդների սինթեզի պրոբլեմային լաբորատորիայում կատարվել են շարունակական աշխատանքներ ժամանակակից պահանջները բավարարող, N; S; O - պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների շարքի նոր հերբիցիդների, ֆունգիցիդների, աճակարգավորիչների նպատակային սինթեզների իրականացման ուղղությամբ: Սինթեզները իրականացվում են երկու նպատակային ուղղություններով.

1. N; S; O - պարունակող բազմատոմ հետերոցիկլիկ միացությունների ֆունկցիոնալացում,
2. Երկու, կամ երեք տարբեր հետերոցիկլեր պարունակող նոր համակարգերի սինթեզ, որոնք ցուցաբերում են միաժամանակ երկու կարևոր ֆիզիոլոգիական ակտիվություն:

Հաշվետու տարում փորձարկել է 85 նոր պատրաստուկներ, որոնցից 13-ը լաբորատոր-վեգետացիոն փորձարկումների ընթացքում ցուցաբերել են բարձր աճախթանիչ և հերբիցիդային ակտիվություն: Դրանցից առավել ակտիվները կնախապատրասվեն գարնանը դաշտային փորձարկումների համար:

Հաշվետու տարում իրականացված գիտական հետազոտությունների արդյունքները հրապարակվել են 13 հանրապետական և միջազգային գիտական ամսագրերում, զեկուցվել են 5 միջազգային գիտական կոնֆերանսներում:

5.32. Գյուղատնտեսական կենդանիների գենետիկայի, սելեկցիայի և կերակրման պրոբլեմային լաբորատորիա

1. Տավարի մթերատու հատկությունների կատարելագործումը սինթետիկ պոպուլյացիաների ստեղծմամբ: Ներկայումս առաջնային խնդիր է միջցեղային տրամախաչման եղանակով կաթնատու տիպի սինթետիկ պոպուլյացիաների ստեղծումը և հետերոզիսի երևույթի օգտագործումը: Օրացուցային պլանի համապատասխան շարունակվել են հետազոտական ուսումնասիրությունները ՀԱԱՀ-ի Բալահովիտի ուսումնափորձնական, «Արզնու ԹՏԽ» ԲԲԸ-ի, «ՎԱՄԱՔՍ» ՍՊԸ-ի և «Ագրոհոլդինգ Արմենիա» ՍՊԸ-ի տնտեսություններում:

Շարունակվել են բարձրակիթ կովերի աճեցման նորագույն տեխնոլոգիաների ներդրման աշխատանքները: Կատարվել է մաքրացեղ հոլշտին, ֆլեկվի և եռացեղ կենդանիների գնահատում, կաթնային մթերատվության հաշվառումը մինչև լակտացիայի 10 ամիսը, փորձնական խմբում ընտրված յուրաքանչյուր կովից վերցվել է կթված կաթի նմուշ և լաբորատորիայում որոշվել է յուղի, սպիտակուցի պարունակությունը, խտությունը, տիտրվող թթվությունը և գրանցվել հաշվառման մատյանում:

Ուսումնափորձնական տնտեսությունում 2015 թվականից սկսած առաջին ծնի կովերի հասակի և մթերատվության կապի ուսումնասիրությունը շարունակվել է կրկնակի հետազոտությամբ:

Կովկասյան գորշ, ջերսեյ, հոլշտին ցեղերի միջին տվյալներով մշակվել է կաթնային մթերատվության օգտագործական ստանդարտը:

2. «Ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքի արտադրության ավելացման ուղիները ճյուղի վարման տեխնոլոգիաների կատարելագործմամբ»

2016 թվականի Արագածավանի Վ. Սարգսյանի ֆերմայում շարունակվել է ոչխարամսի արտադրության ծավալների ավելացման նպատակով մաքիների գառնատվության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

2016 թվականին կատարվել է «Ագրոհոլդինգ» ՍՊԸ տնտեսությունում բուծվող ոչխարների մթերատվության ավելացման նպատակով իրականացվող աշխատանքներ:

Ընթացիկ տարում ՀԱԱՀ-ի Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսություն, թեմայի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները:

«ԱՐԻԴ» այծաբուծական կենտրոնում շարունակվել են այծամայրերի ծնի կազմակերպման, ստացված սերնդի աճեցման աշխատանքները: Ուսումնասիրվել է տարբեր սեռի և գենոտիպի ուլիկների կենդանի զանգվածի դինամիկան:

Ղարաբաղյան ցեղի ոչխարներից արյան նմուշառումը կատարվել է Սյունիքի մարզի Շաքե համայնքի Միեր Ազոյանի գյուղացիական տնտեսությունից:

Ընթացիկ հաշվետու տարում խնդիր է դրվել ուսումնասիրել Ղարաբաղյան ցեղի տարբեր գենոտիպերով (ըստ Tf, Cp, Al լոկուսների) ոչխարների, պոլիմորֆ սպիտակուցների և արյան շիճուկում կառուցվածքային և ոչ կառուցվածքային սպիտակուցների առկայությունը, որը իրականացվել է իմունոֆերմենտային անալիզի (ELISA-At) միջոցով: Նման թեստերը հնարավորություն են ընձեռում բացահայտել դաբաղի վիրուսի շրջապտույտը զգայունակ կենդանիների օրգանիզմում:

2016թ. կատարվել են 3 տարեկան տարբեր գենոտիպերի այծերի՝ Ալպյան, Զաանենյան, F3 և F4 Խառնածիններ, կաթի ազատ ամինաթթուների քանակական ուսումնասիրություններ:

Հետազոտությունների արդյունքում լաբորատորիայի աշխատակիցների կողմից ռապարակվեն 3 աշխատանք և 3 զեկուցում ներկայացվել է ՀԱԱՀ-ում կայացած միջազգային գիտաժողովում:

Նախատեսվում է 2017 թվականին ստացված հետազոտական աշխատանքների արդյունքներով քննարկման նախապատրաստել մեկ հանձնարարական. Ոչխարամսի արտադրության ավելացման ուղղությամբ և հրապարակել նաև գիտական հոդվածներ:

6.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Սույն հաշվետվությունը ներառում է ՀԱԱՀ ՏՏ և ԻԾ կենտրոնի, տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի, տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի սպասարկման բաժնի, տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժնի, գիտական գրադարանի, արտաքին կապերի դեպարտամենտի, տպարանի, հրատարակչական-խմբագրական բաժնի, աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի, պատմության թանգարանի, էլեկտրոնային ուսուցման և ինտերնետ կապի համակարգչային կաբինետների և հեռախոսակայանի 2016թ. ընթացքում կատարած աշխատանքները:

Հաշվետու տարում իրականացվել են համալսարանի գրադարանային գործի ավտոմատացման, գրքային ֆոնդի համալրման, ինչպես նաև ընդհանուր գրադարանային աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված բազմաթիվ աշխատանքները:

Շարունակվել են նաև ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի, էլեկտրոնային ուսուցման, ներքին փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային լսարանային ֆոնդի ընդլայնման և մի շարք այլ համակարգերի ստեղծման ու զարգացման աշխատանքները:

2016 թվականին իրականացված աշխատանքներից առավել հատկանշականները ներկայացված են ստորև.

- Կենտրոնի կողմից 2014-15 թթ. ընթացքում նախագծվել և ներկայումս շարունակվում են eBuh ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի զարգացման աշխատանքները: Համակարգը հնարավորություն կտա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների կիրառմամբ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում ուսումնական գործընթացը կազմակերպել ժամանակակից կրթական պահանջներին համահունչ: eBuh համակարգը զգալիորեն կնվազեցնի մարդկային գործոնի կողմից թույլ տրվող սխալների հավանականությունը, տեղեկատվությունը վերջնական հասցեատիրոջը կհասնի անհամեմատ արագ և կապահովի դեկանատների գործունեության թափանցիկությունը: Համակարգը փորձնական ներդրվել է համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում և գտնվում է թեստավորման փուլում՝ կատարվում է դասախոսական, առարկայական, ուսանողական և այլ տվյալների մուտքագրում:
- 2016 թվականի սկզբին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շահած «Գինեգործական կրթության գիտաարտադրական բաղադրիչի զարգացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել գինեգործության վերաբերյալ 200 կտոր գրականություն, ընթանում են ուսումնափորձնական արտադրամասի համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման, շենքային պայմանների բարեկարգման աշխատանքները: Արդեն ավարտվել է վերանորոգման և բարեկարգման աշխատանքների մի մասը, պատրաստվել է տեխնոլոգիական սխեման, իրականացվել են շուկայի հետազոտման աշխատանքներ: Հիմնական մատակարարների շրջանում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է լավագույն գին և որակ առաջարկող մատակարարը, ումից էլ գնվելու է անհրաժեշտ ամբողջ տեխնիկան: Արդեն աշխատանքներ են իրականացվում հաջորդող գործընթացների ուղղությամբ:
- Մշտապես իրականացվել են բուհի կայքի համալրման և թարմացման աշխատանքեր: Հանգամանորեն լուսաբանվել և համալսարանի պաշտոնական կայքէջի «Նորություններ» բաժնում տեղադրվել է ՀԱԱՀ-ում իրականացված բոլոր միջոցառումները լուսաբանող ավելի քան 136 նյութ: Տեղադրված նյութերը թարգմանվել են ռուսերեն և անգլերեն: Հաշվետու տարում տեղադրվել է 45 հայտարարություն (ուսման, տեղական և միջազգային ծրագրերի հրավերներ, ծանուցումներ թափուր աշխատատեղերի և այլնի մասին): Հաջորդ՝ ագրոպարենային ոլորտի նորությունները, զարգա-

ցումները, կատարվող աշխատանքները ներկայացնող ,Ագրոլուրե բաժնում տեղադրվել է թվով 52 նյութ:

- Հաշվետու տարում Տեղեկատվական տեխնոլոգիաների գիտելիքի բաժնի աշխատակիցների կողմից շարունակվել է էլեկտրոնային ուսուցման զարգացման և դասախոսների վերապատրաստման գործընթացը: 2014թ.-ից սկսած՝ վերապատրաստվել է 65, իսկ հաշվետու ուսումնական տարում՝ 20 դասախոս: Վերապատրաստվող դասախոսների ցուցակները տրամադրել են ֆակուլտետների դեկանները: Վերապատրաստման դասընթացների արդյունքում 25 դասախոս ծրագրի միջոցով մշակել է դասավանդվող մեկական առարկա: Մշակված առարկաները տեղադրված են ՀԱԱՀ-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում (http://elearning.anau.am/): Ծրագիրը շարունակական է, և առաջիկայում նախատեսված է նրանում ընդգրկել նոր խմբեր, իսկ դասախոսների անհատական այցելությունների ու խորհրդատվությունների միջոցով պարբերաբար թարմացվում են հարթակում տեղադրված ուսումնական նյութերը, նաև բարձրացվում է դասախոսների հմտությունների մակարդակը: Պետք է փաստել, որ ռեկտորատը վերը նշված աշխատակիցներին, ովքեր բարեհաջող անցել էին էլեկտրոնային ուսուցման դասընթացը և ատեստավորվել, այս տարի հանձնվել է վկայականներ:
- 2016թ. ընթացքում ՏՏ և ԻԾ կենտրոնը շարունակել է համակարգել ՀԱԱՀ շրջանավարտների մասին տեղեկատվության մուտքագրման աշխատանքները ԵՄ HEN-GEAR ՏԵՄՊՈՒՍ ծրագրի շրջանակներում ներդրված էլեկտրոնային բազայում: 2016թ. դեկտեմբերի դրությամբ գրանցվել է համալսարանի ավելի քան 2900 շրջանավարտ:
- Թվայնացվել և արխիվացվել են ՀԱԱՀ-ի մասին նկարահանված տեսանյութերն ու գովազդային ֆիլմերը (2000թ.-ից սկսած):
- 2016 թվականին ՀԱԱՀ-ում անցկացված միջոցառումները նկարահանվել, մոնտաժվել և տեղադրվել են ,youtubeե հարթակի ՀԱԱՀ ալիքում, իսկ լուսանկարները՝ www.flickr.com հարթակում:
- Կենտրոնն այս տարի ևս շարունակել է պատրաստել ընդունելության վերաբերյալ տեղեկատվական և գովազդային նյութեր՝ զետեղելով դրանք ինչպես ՀԱԱՀ-ի պաշտոնական կայքէջում, այնպես էլ զանգվածային տարբեր լրատվամիջոցներում: Կենտրոնի կողմից 2016թ. ընդունելությանն ընդառաջ նախագծվել և տպագրվել է դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղեցույց, որը դիմորդին ապահովում է ամբողջական տեղեկատվությամբ՝ համալսարանի, գործող մասնագիտությունների և բուհում սովորելու ընթացքում նրան ընձեռվող մի շարք հնարավորություն-ների վերաբերյալ:
- ՏՏ և ԻԾ կենտրոնի կողմից ստեղծված աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի արդեն գործող career.anau.am կայքում շարունակվում են ուսանողների և գործատուների տվյալների թարմացման և համալրման աշխատանքները: Կայքն Ագրարային համալսարանի շրջանավարտներին հնարավորություն է տալիս տեղեկանալ կայքում առկա թափուր աշխատատեղերի մասին և անմիջական կապ հաստատել գործատուների հետ:
- Տարվա ընթացքում ՏՏ և ԻԾ կենտրոնը նկարահանել է երկու տեսաֆիլմ, որոնցից մեկը պատմում է համալսարանի պատմության, ծավալած աշխատանքների և մասնագիտությունների, իսկ մյուսը՝ ,Ագրարային մենեջմենթե մագիստրոսական ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ի և Գերմանիայի Վայնհենշտեֆանի համալսարանի համագործակցության մասին:
- 2016 թվականին կենտրոնը կազմակերպել և իրականացրել է 312 ժամ հեռավար ուսուցման դասընթաց Վանաձորի, Սիսիանի և ԼՂՀ Շուշիի մասնաճյուղերում. առաջին կիսամյակի կտրվածքով անցկացվել է մոտ 132, իսկ 2-րդ կիսամյակում՝ 180 ժամ հեռավար դասախոսություն:
- Կենտրոնի մի քանի բաժինների համատեղ աշխատանքի շնորհիվ տարեսկզբին ներդրվել է ՀԱԱՀ շրջանավարտների, դասախոսների և երախտավորների persons.anau.am միասնական տեղեկատվական շտեմարան-կայքէջը, որի գերնպատակը ուսանողներին և դասախոսներին, ինչպես

նաև համալսարանի արտաքին շահակիցներին համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, շրջանավարտների և երախտավորների կյանքի, գործունեության մասին տեղեկատվություն մատուցելն է: Տարվա ընթացքում անընդհատ վերանայվել և թարմացվել է կայքի ամբողջ տեղեկատվությունը:

- Դասախոսների՝ արդի տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետման մակարդակը բացահայտելու համար սույն թվականի փետրվարին համալսարանի բոլոր ամբիոններում ՏՏ և ԻԾ կենտրոնի կողմից իրականացվեց հարցում, որի հիմքում դրված էր 2 ուղղություն.

1. բացահայտել ուսուցման գործընթացում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ ամբիոնների դասախոսների իմացության մակարդակը և նրանց ցանկությունը վերապատրաստման ուղղությամբ,
2. պարզել նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասավանդվող առարկաների քանակը և դրանց տեսակարար կշիռն ընդհանուր առարկաների քանակի մեջ:

Այս նպատակով կազմված հարցաթերթիկները բաժանվել են բոլոր ամբիոններին և հավաքագրելով տվյալները՝ կատարվել է վերլուծություն: Ամփոփվել է տեղեկատվությունն ըստ ամբիոնների, ֆակուլտետների և ընդհանուր համալսարանի կտրվածքով: Հարցմանը մասնակցած 585 դասախոսներից 151-ը (26%) չի տիրապետում կամ շատ թույլ է տիրապետում համակարգչային տեխնիկային, 280 դասախոս (48%) տիրապետում է օպերատորական մակարդակով, և 154 դասախոս (26%) տիրապետում է գերազանց: Վերապատրաստվելու ցանկություն է հայտնել 149 դասախոս (25%):

Իսկ երկրորդ՝ ընդհանուր առարկաների մեջ նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ դասավանդվող առարկաների քանակը և դրանց տեսակարար կշիռը պարզելու համար իրականացված հարցումից պարզվել է, որ ՏՏ ընձեռած առավելությունները կարելի է կիրառել գրեթե բոլոր դասավանդվող առարկաների համար: Մինչդեռ, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ դասավանդվում է համալսարանի 684 առարկաներից ընդամենը 150-ը (22%): Դասախոսների մի մասը ՏՏ կիրառմամբ դասավանդում է 1-ից ավելի առարկա, նշանակում է՝ ուսումնական գործընթացում ՏՏ կիրառում են 100-120 դասախոս:

Ընդհանրացնելով կատարված վերլուծության 2 ուղղությունների արդյունքները՝ արձանագրվել է, որ համակարգչային տեխնիկային միջին և գերազանց մակարդակով տիրապետող դասախոսների թիվը կազմում է 431 մարդ: Ինչը նշանակում է՝ պոտենցիալ հնարավորություն ունեցողների ընդամենը 28 տոկոսն է ուսուցումը կազմակերպում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ:

Հաշվետու տարում ՏՏ և ԻԾ կենտրոնի կողմից ստեղծվել է ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած 4 մուլտիմեդիոն լսարան: Ձեռք է բերվել 23 նոր համակարգիչ, 9 տպիչ, որից 3-ը բազմաֆունկցիոնալ, 2 պրոյեկտոր, 2 սկաներ, մոնիտորներ, անխափան սնուցման սարքեր և այլ անհրաժեշտ համակարգչային տեխնիկա: Իսկ Տեմպուս GOVERN ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ-ը համալրվել է ևս 1 ժամանակակից սերվերով և 1 համակարգչով:

Ծրագրային փաթեթներով հագեցած հինգ նոր համակարգիչ է տրամադրվել նաև 1-ին մասնաշենքի ընթերցասրահին:

2016 թվականին անցկացված համակարգչային տեխնիկայի հաշվառման արդյունքում արձանագրվեց, որ ՀԱԱՀ-ում՝ բոլոր մասնաճյուղերում և գիտական կենտրոններում առկա է 650 համակարգիչ, որոնցից 412-ը միացված են ինտերնետ ցանցին. 197 տպիչ, 29 պրոյեկտոր, 17 սկաներ և 13 էլեկտրոնային գրատախտակ:

2016 թվականին կապի այլ միջոցներին զուգահեռ ՀԱԱՀ-ում գործում է նաև օնլայն հարց ու պատասխանի ,skypeե ծրագիրը, որի միջոցով բուհի բազմաթիվ ուսանողներ և շահագրգիռ անձինք ամբողջ տարվա ընթացքում ստացել են համալսարանի գործունեությանը, ընդունելությանը, առկա ծրագրերին առնչվող և այլ հարցերի պատասխաններ:

- 2016 թվականի ընթացքում իրականացվել են համալսարանի հեռախոսակայանի և բոլոր մասնաշենքերի հեռախոսագծերի նախագծման և մոնտաժման աշխատանքներ: Ամբողջությամբ վերափոխվել և թվայնացվել են համալսարանի հինգ մասնաշենքերի հեռախոսագծերը, ինչպես նաև տեղադրվել են նոր հեռախոսակայաններ: Այսօր արդեն համալսարանում գործում է հեռախոսագծերի նոր ցանց:
- ՏՏ և ԻԾ կենտրոնի իրականացրած կազմակերպչական աշխատանքների շնորհիվ Ագրարային համալսարանը 2016 թվականին պատշաճ մակարդակով ներկայացել է ,Կրթություն և կարիերա EXPO-2016ե և «Արմպրոդէքսպո-2016» ամենամյա մասնագիտացված ցուցահանդեսներին: Ցուցադրվել են գիտական կենտրոնների վերջին ձեռքբերումները, ,Զովետ կաթե կաթնամթերքի տեսականին, պաստառներ, որոնցում պատշաճ կերպով ներկայացվել են համալսարանի ֆակուլտետները, քոլեջը, միջազգային կրթական ծրագրերը, ուսումնաարտադրական պրակտիկաները, մասնաճյուղերը, պրոբլեմային լաբորատորիաները, գիտություն-արտադրություն սերտ կապը և այլն: Նշենք, որ նման ցուցահանդեսներն օգնում են առաջին հերթին շրջանավարտներին մասնագիտական ճիշտ կողմնորոշման հարցում: «Արմպրոդէքսպո-2016» ցուցահանդեսում ներկայանալի տեսքի, նրբաճաշակ դիզայներական ձևավորում ունեցող ուրույն տաղավարի և կազմակերպվածության համար Հայաստանի ազգային ագրարային համալսարանն արժանացավ ոսկե մեդալի և մասնակցության հավաստագրի:
- 2016 թվականին ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական կենտրոնը համալսարանին անվճար տրամադրել է ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական որոնողական համակարգի՝ ուսումնական հաստատությունների համար նախատեսված տարբերակի օգտագործման իրավունքը:
- ԻՐՏԵԿ իրավական տեղեկատվական որոնողական համակարգը տեղադրվել է համալսարանի ընթերցասրահների համակարգիչներում և համակարգչային լսարաններում: Համակարգի տեղադրման նպատակն ուսանողներին որակյալ և հավաստի իրավական տեղեկատվության տրամադրումն է, ինչպես նաև նրանց մոտ իրավական տեղեկատվության հետ աշխատելու հմտությունների ուսուցանումը և պրակտիկայում դրանց կիրառումն ու ամրապնդումը:
- Կենտրոնի կազմում գործող բաժիններն իրականացրել են տարաբնույթ այլ աշխատանքներ ևս, որոնք առավել հանգամանորեն ներկայացված են ստորև՝ համապատասխան ենթաբաժիններում:

6.1. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2016 թվականին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանը կազմակերպել է մի շարք միջոցառումներ, ինչպես նաև մասնակցել հանրապետությունում կազմակերպված տարբեր հանդիպումների, իրադարձությունների:

Ինչպես միշտ, այս հաշվետու տարում ևս փետրվարի 19-ը նշվեց որպես գիրք նվիրելու օր: Գրադարանի գրքերի ցանկն այդ օրը ևս համալրվեց դասախոսական կազմի, ուսանողների և համալսարանի աշխատակիցների, բարեկամների նվիրած գրականությամբ:

2016թ. ապրիլին ՀԱԱՀ առաջին մասնաշենքի ընթերցասրահում բացվեց համալսարանի 3-րդ էլեկտրոնային ընթերցասրահը, որտեղ ընթերցողներն օգտվում են էլեկտրոնային գրքերից և տվյալների բազմաբնույթ բազայից:

Գրադարանն ակտիվ մասնակցություն է ունեցել ,Կրթություն և կարիերա EXPO-2016ե ցուցահանդեսին՝ ներկայացնելով գրադարանի նոր գրքերը:

2016թ. հայաստանյան էլեկտրոնային համահավաք գրացուցակի մասնակից գրադարանները որոշում կայացրեցին 2017թ. ALEPH ծրագրից հրաժարվելու և այլընտրանքային Koha ծրագրին անցնելու մասին: ՀԱԱՀ-ի գիտական գրադարանը, ունենալով Koha ծրագրով աշխատելու հարուստ փորձ, Հայաստանի ազգային գրադարանի և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գրադարանի հետ ձեռնամուխ եղավ այդ գործընթացի իրականացմանը:

ՀԱԱՀ-ի գիտական գրադարանի ֆոնդն առ **01.01.2017 թ. կազմում է 566.854** միավոր գրականություն:

Ըստ հրատարակության տեսակի՝

Ըստ գրականության տեսակի	Միավոր գրականություն
ուսումնական	199996
գիտական	312665
գեղարվեստական	49331
փոխանակման ֆոնդ	4862

Ըստ լեզուների	Միավոր գրականություն
հայերեն	188600
ռուսերեն	362065
օտար	16189

2016թ. ստացվել է **4.922 միավոր (368 անուն)** գրականություն.

Այդ թվում		Որից		Ըստ լեզուների	
գիրք, բրոշյուր	**4322**	ուսումնական	**3501**	հայերեն	**4016**
ամսագիր	**560**	գիտական	**1250**	ռուսերեն	**816**
ատենախոսություն	**40**	գեղարվեստական	**171**	այլ	**90**

2016թ. ստացված գրականության քանակը՝ ըստ համալրման աղբյուրների.

Համալրման աղբյուրը	Անուն	Միավոր
համալսարանում հրատարակված	68	2704
որից մեթոդական ցուցումներ	57	1142
պայմանագրային ձևով	11	426
գրախանութներից և տարբեր կազմակերպություններից գնված	2	34
նվիրատվության կարգով	150	630
ընթերցողների կողմից կորցրած գրականության փոխարեն ձեռք բերված	83	478
բաժանորդագրությամբ, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների և անձանց կողմից նվիրատվությամբ ստացված ամսագրեր	0	560
ՀԱԱՀ-ի մասնագիտական խորհուրդների կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսություններ	40	40
ՄԱԿ-ի գյուղատնտեսության և պարենի կազմակերպության (ՖԱՕ) կողմից ստացված գրականություն	13	13
վերականգնված գրականություն	0	32
գրքափոխանակության միջոցով ստացված գրականություն	1	5

Հաշվետու տարում ՀԱԱՀ գրադարանը մասնաճյուղերին տրամադրել է **63** միավոր գրականություն:

Արցախի մասնաճյուղ	35	միավոր գիրք
Սիսիանի մասնաճյուղ	14	միավոր գիրք
Վանաձորի մասնաճյուղ	14	միավոր գիրք

Գրադարանն ունի 4445 ընթերցող, որից.

Ֆակուլտետ	Առկա ուսուցում	Հեռակա ուսուցում
Ագրոնոմիական ֆակուլտետ	160	179
Անասնաբուժական-բժշկագիտ. և անասնաբուծության ֆակուլտետ	187	190
Գյուղ. մեքեն. և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետ	85	149
Հիդրո, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետ	87	137
Տնտեսագիտական ֆակուլտետ	517	729
Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետ	264	251
Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետ	251	324
Ասպիրանտուրա	8	6
Քոլեջ	127	-
Մագիստրատուրա	83	8
Համալսարանի աշխատակից	703	-

Koha գրադարանային ծրագրով գրանցված ընթերցողների թիվը **1924 է:**

Koha ծրագրով սպասարկվել է **6686** միավոր գրականություն:

Ուսուցման ձև	Միավոր գրականություն
ուսանող (առկա ուսուցում)	3222
ուսանող (հեռակա ուսուցում)	2660
համալսարանի աշխատակից	641
մագիստրանտ (առկա ուսուցում)	108
մագիստրանտ (հեռակա ուսուցում)	23
ասպիրանտ	32

Ընթերցողների հաճախումը սպասարկման բոլոր կետերում կազմում է **127 287** մարդ, այդ թվում.

Բաժին	Հաճախում
աբոնեմենտ	89578
ընթերցասրահներ	29084
էլեկտրոնային ընթերցասրահներ	8422
սպասարկման այլ կետեր	203

Հաշվետու տարում սպասարկված գրականության քանակը կազմում է **50661** միավոր գրականություն, որից.

Բաժին	Միավոր գրականություն
աբոնեմենտ	18839
ընթերցասրահներ	30713
սպասարկման այլ կետեր	2001

Ըստ հրատարակության տեսակի սպասարկվել է.

Ըստ հրատարակության տեսակի	Միավոր գրականություն
ուսումնական	40830
գիտական	5703
ատենախոսություն	115
ամսագիր	3009
գեղարվեստական գրականություն	1004

Ըստ լեզուների	Միավոր գրականություն
հայերեն	44565
ռուսերեն	4925
օտար	1171

2016թ. ընթերցասրահներում գրքերից և ամսագրերից պատճենահանվել է **1293 էջ**:

2016թ. ակտավորվեց գրադարանի ֆոնդում առկա պատռված, մաշված գրականությունը, որն օգտագործման համար այլևս պիտանի չէր: Ակտավորվեց **5433** միավոր գրականություն:

Գրապահոցներում կատարվել է ֆոնդի տեղաշարժ, ստուգվել է ֆոնդի դասավորվածությունը:

Համալրման և մշակման բաժնում կատարվել են գրացուցակների ստուգման, խմբագրման աշխատանքներ:

ՀԱԱՀ գիտաշխատողների՝ տպագրման պատրաստվող հոդվածների համար գրադարանում նշանակվում է գիտության համապատասխան դասիչ: Հաշվետու տարում նշանակվել է 225 հոդվածի դասիչ:

2007 թվականից գրադարանը կատարում է ALEPH գրադարանային ծրագրով գրականության մուտքագրում՝ մասնակցելով Հայաստանի գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակի ստեղծման աշխատանքներին: 2013 թվականից գրականության մուտքագրումը կատարվում է նաև Koha գրադարանային ծրագրով:

2016 թ. էլեկտրոնային գրացուցակի ստեղծման նպատակով մուտքագրվել է **5.190 անուն, 20.443 միավոր գրականություն:**

2007 - 2016 թթ. մուտքագրվել է 78. 371 անուն, 413.443 միավոր գրականություն:

9 տարվա ընթացքում մուտքագրվել է ֆոնդի 72 %-ը:

Գրադարանի կայքում ներկայացված են համալսարանի գրադարանում առկա էլեկտրոնային գրքերը: Գրադարանում առկա, բայց քիչ օրինակ գրքերը, որոնք մեծ պահանջարկ ունեն ընթերցողների շրջանում, թվայնացվում են և տեղադրվում գրադարանի ինտերնետային կայքում:

Գրադարանի կայքում առ 01.01.2017թ. կա **888** գրքի էլեկտրոնային տարբերակ:

6.2. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

ՏՏ և ԻԾ կենտրոնի տեղեկատվական համակարգերի կառավարման բաժնի գործունեությունն ուղղված է բուհում ՏՏ համակարգերի զարգացմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում բաժնի կողմից շարունակվել են համալսարանի պաշտոնական կայքէջի ձևավորման ու զարգացման, ուսուցման տեխնոլոգիաների արդիականացման, համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման ու զարգացման և այլ ուղղություններով տարվող աշխատանքները:

2016 թվականին բուհի պաշտոնական կայքէջի այցելուների քանակը կազմել է 227 580 մարդ, իսկ էջերի դիտումների քանակը կազմում է ավելի քան 600 000:

Համալսարանի կայքէջում իրականացված մի շարք փոփոխությունների արդյունքում 2016 թվականին կայքէջի տեղեկատվությունից օգտվող նոր այցելուների քանակը կազմել է 42.8%:

Գրաֆիկներում պատկերված են 2016 թվականին բուհի կայքէջի հաճախումները՝ համապատասխան տոկոսներով և ըստ երկրների ու տարիքային խմբերի:





Հ/Հ	Երկիրը	Այցելությունների քանակը
1	Հայաստան	209 971
2	Ռուսաստան	8113
3	ԱՄՆ	1778
4	Գերմանիա	559
5	Ուկրաինա	505
6	Ինդոնեզիա	498
7	Իրան	478
8	Չինաստան	471
9	Իտալիա	461
10	(այլ երկրներ)	4746

Հարկ է նշել, որ համալսարանի կայքի այցելուների քանակին վերաբերող տվյալները վերցվել են **Google Analytics**՝ վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող համակարգից:

2016 թվականին **Google Analytics** վեբ կայքերի վերլուծությամբ զբաղվող համակարգում, բացի համալսարանի պաշտոնական հիմնական կայքից (anau.am), գրանցվել են նաև համալսարանի մյուս կայքերը՝ գրադարանի (library.anau.am), շրջանավարտների, դասախոսների և երախտավորների շտեմարան (persons.anau.am) և աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի (career.anau.am) կայքէջերը:

Շեշտենք, որ համալսարանի գրադարանի կայքէջն ունի աննախադեպ այցելությունների քանակ: 2016 թվականի մարտի 10-ից մինչ տարեվերջ կայքն ունեցել է 277 250 այցելու, իսկ էջերի դիտումների քանակը նշված ժամանակաշրջանի համար անցնում է 900 000-ը:

Կայքերի վիճակագրությունն ու վերլուծությունը կարևոր գործընթաց է, որը հնարավորություն է տալիս ստանալ հավաստի և ստույգ տեղեկատվություն: Բաժնի կողմից հավաքվում և վերլուծվում է գրանցված կայքերի այցելությունների մասին տեղեկատվությունը, որն արտապատկերվում է թվերով ու գրաֆիկներով: Կայքերի ռեյթինգային համակարգը հնարավորություն է տալիս հետևելու գրանցված կայքերի օրական, շաբաթական կամ ամսական այցելություններին, էջադիտումների քանակին, ինչպես նաև պարզելու այցելուների ինտերնետ դիտարկիչների տարբերակները, օպերացիոն համակարգերը և այլ տվյալներ:

2016 թվականին բաժնի կողմից ավարտվեցին ՀԱԱՀ շրջանավարտների, պրոֆեսորադասախոսական կազմի և երախտավորների շտեմարան կայքէջի ստեղծման աշխատանքները: Այն արդեն հասանելի է գլոբալ ցանցում՝ persons.anau.am հասցեով: 2015 թվականին իրականացվել են տվյալների հավաքագրման, մուտքագրման, կայքէջի ձևավորման աշխատանքները, իսկ վերջնական խմբագրված և ներկայացված կենսագրականների (cv) ձևավորման և խմբագրման աշխատանքներն ավարտվել են 2016 թվականին:

Կայքէջն իր մեջ ներառում է «Երախտավորներ», «Շրջանավարտներ» և «Դասախոսներ» բաժինները, որոնցում, անհրաժեշտ անձի մասին բազմաֆունկցիոնալ որոնման համակարգի միջոցով կարելի է գտնել ամբողջական տեղեկատվություն:

,Երախտավորներե բաժնում ամփոփված է տեղեկատվություն համալսարանն ավարտած այն մարդկանց մասին, ովքեր լուրջ և մնայուն հետք են թողել հանրապետության ագրոպարենային համակարգի զարգացման գործում և գիտության անդաստանում (հասարակական-քաղաքական գործիչներ, գիտության մշակներ և ոլորտի նվիրյալներ):

«Շրջանավարտներ» բաժինն ընդգրկում է տեղեկատվություն շրջանավարտների կյանքի ու գործունեության մասին:

«Դասախոսներ» բաժնում կարելի է գտնել ամբողջական տեղեկատվություն այսօր բուհում դասավանդող բոլոր դասախոսների մասին (նկարներ, կենսագրական տվյալներ, գիտական գործունեության ու հրապարակումների վերաբերյալ տեղեկատվություն՝ դասակարգված ըստ ամբիոնների):

Տվյալների բազան պարբերաբար համալրվում և թարմացվում է:

2016 թվականին կենտրոնը կազմակերպել և իրականացրել է 312 ժամ հեռավար ուսուցման դասընթաց Վանաձորի, Սիսիանի և ԼՂՀ Շուշիի մասնաճյուղերում. 2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում անցկացվել է 132, իսկ 2016-2017 ուստարվա առաջին կիսամյակում՝ 180 ժամ հեռավար դասախոսություն:

2016 թվականին բաժնի կողմից նկարահանվել են համալսարանում տեղի ունեցող միջոցառումները, մոնտաժվել և տեղադրվել են ,youtubeե հարթակի ՀԱԱՀ ալիքում, իսկ լուսանկարները համալսարանի www.flickr.com հարթակում:

Բաժնի կողմից պատրաստվել են նաև 2016-2017 ուստարվա ընդունելության վերաբերյալ գովազդային տեսահոլովակներ, բուկլետներ, դիմորդների մասնագիտական կողմնորոշման ուղեցույց և այլ նյութեր, որոնք բաժանվել են համապատասխան շահառուներին և տեղադրվել են համալսարանի պաշտոնական կայքէջում և հեռարձակվել զանգվածային լրատվամիջոցներով:

Բաժինն իրականացրել է նաև բոլոր պետական ավարտական քննությունների, դիպլոմային աշխատանքների պաշտպանությունների ընթացքի ձայնագրման և դրանց ժամանակավոր արխիվացման գործընթացը:

6.3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔԻ ԲԱԺԻՆ

ՀԱԱՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի գիտելիքի բաժինն իրականացնում է բազմաթիվ գործառույթներ՝ էլեկտրոնային ուսուցման ներդրման կազմակերպում, ուսումնական և գիտական անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրում, մշակում և տարածում, նոր ծրագրերի ուսումնասիրում և ներդրում, բուհի կայքերի և սերվերների սպասարկում, աջակցում գրադարանային գործի ավտոմատացման աշխատանքներին:

Որպես ՏՏ և ԻԾ կենտրոնի ստորաբաժանում՝ գիտելիքի բաժինն ակտիվորեն ներգրավված է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և կենտրոնի կողմից իրականացվող գրեթե բոլոր աշխատանքներում:

Բաժնի աշխատակիցների կողմից հաշվետու տարում շարունակվել է էլեկտրոնային ուսուցման զարգացման և դասախոսների վերապատրաստման գործընթացը:

2016թ. ապրիլին ՀԱԱՀ ռեկտորատի նիստի ժամանակ համալսարանի ռեկտոր Ա. Թարվերդյանն անձամբ էլեկտրոնային ուսուցման վերապատրաստման դասընթացն ավարտելու կապակցությամբ վերապատրաստված դասախոսներին հանձնեց վկայականներ: Վկայականների հանձնմանը նախորդել է համապատասխան ատեստավորման հանձնաժողովի կողմից էլեկտրոնային ուսուցման գործիքներով մշակված առարկաների գնահատումը: 2016թ. նոյեմբերի 1-ից վերսկսվել են էլեկտրոնային ուսուցման վերապատրաստման դասընթացները: Այժմ դասընթացին մասնակցում է 20 դասախոս: Վերպատրաստման աշխատանքները կշարունակվեն փետրվարին: Ծրագիրն ունի շարունակական բնույթ. առաջիկայում նախատեսվում է ընդգրկել նոր խմբեր ևս:

Մշակված առարկաները տեղադրված են ՀԱԱՀ-ի էլեկտրոնային ուսուցման հարթակում (http://elearning.anau.am/): 2016թ. տարեվերջին արդեն կայքի էլեկտրոնային ուսուցման հարթակում տեղադրված է 19 առարկա:

Հաշվետու տարում թարմացվել է էլեկտրոնային ուսուցման Moodle ծրագիրը, ինչը հնարավորություն է տալիս օգտատերերին համակարգից օգտվել ավելի հեշտացված տարբերակով:

2016 թվականին բաժինը մանրամասնորեն ուսումնասիրել է ,Վեբոմետրիքսե վարկանիշավորման հիմնական չափանիշները, ըստ որոնց վերլուծվում է բուհի ներկայացվածությունն ինտերնետ տիրույթում՝ որպես գիտահետազոտական կենտրոն: Համաձայն նշված վարկանիշավորման գործոնների՝ կայքում կատարվել են էական փոփոխություններ և թարմացումներ, որոնք կբարձրացնեն կայքի վարկանիշն ըստ ,Վեբոմետրիքսե վարկանիշավորման աղյուսակի:

Ամբողջ տարվա ընթացքում անընդհատ ստուգվել, ուղղվել և թարմացվել են համալսարանի պաշտոնական www.anau.am կայքէջի հղումները՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն:

Բաժնի կողմից նախագծվել և ներկայումս շարունակվում են eBuh ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգի ստեղծման աշխատանքները: Ամբողջությամբ ավարտված են ծրագրում տվյալների մուտքագրման հատվածի, բացակաների հաշվառման և ուսանողների գնահատման համակարգերի ծրագրավորման աշխատանքները:

Ուսումնական գործընթացի կառավարման ավտոմատացված համակարգում բացի հիմնական 12 մոդուլներից, ներառված են նաև չորս լրացուցիչ այլ համակարգեր, դրանք են.

1. Office365 ծրագրային ապահովման օֆիսային փաթեթը
2. Moodle էլեկտրոնային ուսուցման համակարգը
3. Koha գրադարանային գործի ավտոմատացման համակարգը
4. Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը:

Բաժինը ներդրել է ,Office 365ե ծրագրային ապահովման փաթեթը: Համատեղ աշխատանքի կազմակերպման այս փաթեթը նախատեսված է մեծ լսարանի համար և իր գործիքներով (online Ms-word, excel, power point, mail, one drive, online calendar, one note, skype for business և այլն) իրական ժամանակի ռեժիմում, անընդհատ հասանելիության շնորհիվ դասախոս-ուսանող հարաբերություն-ները տեղափոխում է էլեկտրոնային հարթակ: Այն օգտագործման և կառավարման տեսանկյունից ուսումնական աշխատանքի գործընթացը դարձնում է էլ ավելի պարզ ու հասանելի:

Գիտելիքի բաժինը հաշվետու տարում իրականացրել է հետևյալ կայքերի սերվերների սպասարկում.

- Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պաշտոնական կայքէջ՝ anau.am
- Ընթերցողների էլեկտրոնային սպասարկման և գրադարանային գործի ավտոմատացման համակարգ՝ koha.anau.am
- Գիտական գրադարանի կայքէջ՝ library.anau.am

- Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կայքէջ՝ career.anau.am
- Ագրոպարենային համակարգի ուսումնաարտադրական կենտրոնի կայքէջ՝ ticas.anau.am
- ՀԱԱՀ-ի դասախոսների, շրջանավարտների, երախտավորների շտեմարան-կայքէջ՝ persons.anau.am
- ՀԱԱՀ-ի հեռախոսագիրք՝ phone.anau.am.
- Էլեկտրոնային ուսուցման հարթակ՝ elearning.anau.am
- ՀԱԱՀ հաշվապահության բաժնի սերվերներ:

Գիտելիքի բաժինն ապահովում է ՀԱԱՀ-ում անվտանգության նպատակով տեղադրված տեսախցիկների սերվերի սպասարկումը: Ընթացիկ տարում իր մասնակցությունն է ունեցել հեռախոսագծերի վերափոխման և թվայնացման, ինչպես նաև հեռախոսակայանի սերվերի ներդրման, կարգավորման և ընթացիկ սպասարկման աշխատանքներին:

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺԻՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերի սպասարկման բաժինը, համաձայն ՏՏ և ԻԾ կենտրոնի կանոնակարգի, իրականացնում է համալսարանում առկա համակարգչային սարքավորումների տեխնիկական սպասարկումը, ծրագրային ապահովումը և տեղեկատվական ցանցի անվտանգ շահագործումը:

Հաշվետու ժամանակաշրջանում ՏՏ համակարգերի սպասարկման բաժնի կողմից սպասարկվել է (վերանորոգում, լիցքավորում) համալսարանի 125 տպիչ սարքի քարթրիջ:

Ամբիոններում, դեկանատներում և մյուս ստորաբաժանումներում վերանորոգվել է 10 տպիչ սարք, 96 համակարգիչ, անխափան սնուցման սարքերի մեջ փոխվել է 58 մարտկոց, տպարանում, ասպիրանտուրայի բաժնում և գրադարանի ընթերցասրահներում վերանորոգվել են պատճենահանող սարքեր:

Ամբիոններում տեղադրված համակարգիչները պարբերաբար ենթարկվել են պրոֆիլակտիկ ստուգումների:

Իրականացվել են նաև համալսարանի կողմից ձեռք բերված համակարգչային տեխնիկայի (համակարգիչներ, տպիչներ, բազմաֆունկցիոնալ սարքեր և այլն) բաշխման աշխատանքները: Ձեռք են բերվել լրացուցիչ պահեստամասեր արդեն եղած համակարգիչները բարելավելու համար:

ՏՏ համակարգերի սպասարկման բաժինը կենտրոնի մյուս բաժինների հետ համատեղ 2016 թվականի ընթացքում մասնակցել է նոր էլեկտրոնային լսարանների կահավորման, բացման աշխատանքներին:

Բաժինը կատարում է համալսարանի հեռախոսային ցանցի հիմնարար փոփոխություններ՝ մալուխների փոխում, ցանցի արդիականացման հետ կապված աշխատանքներ և այլն:

6.4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

ԱՏԽ բաժնի հիմնական նպատակն այնպիսի մեխանիզմների մշակումն ու կիրառումն է, որոնք ՀԱԱՀ շրջանավարտներին թույլ կտան առավել արդյունավետ կերպով բացահայտել աշխատատեղեր գտնելու հնարավորությունները և աշխատանք գտնել Հայաստանում գործող ագրոպարենային ոլորտի վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններում: Այն կապող օղակ է ՀԱԱՀ-ի և հայկական մասնավոր ձեռնարկությունների, Գյուղատնտեսության նախարարության, ագրոբիզնեսի և հարակից ճյուղերի գործատուների ու գյուղացիական ասոցիացիաների միջև:

Հաշվետու տարում ԱՏԽԲ-ն հաջողությամբ շարունակեց իր գործունեությունը հետևյալ հիմնական ուղղություններով՝

✓ գյուղատնտեսության և հարակից ոլորտներում աշխատատեղերի հնարավորությունների բացահայտում և դասակարգում,

- ✓ խորհրդատվություն կենսագրական փաստաթղթերի և հարցազրույցների տեխնիկայի վերաբերյալ, ծանոթացում ձեռնարկությունների գործունեությանը,
- ✓ գործատուների և շրջանավարտների միջև կապերի ստեղծում և հարցազրույցների համակարգում,
- ✓ աշխատանքային տոնավաճառների կազմակերպում:

Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժինը տարբեր ուղիներով ապահովում է բազմազան և գործնական տեղեկատվություն. այն Եվրոպայում և ԱՄՆ-ում կրթությունը շարունակելու հնարավորությունների մասին տեղեկատվություն տրամադրող տեղական և միջազգային կրթական հաստատությունների ցանցի անդամ է: ԱՏԽԲ-ն հրատարակում է էլեկտրոնային տեղեկագիր, որի միջոցով հաշվետու տարում շահառուներին տեղեկատվություն է տրամադրել ավելի քան 670 թափուր աշխատատեղի, կրթությունը շարունակելու, մասնագիտական վերապատրաստման և մասնագիտական համաժողովներին մասնակցության հնարավորությունների վերաբերյալ:

Կրթական ցուցահանդեսները կարևորվում են որպես ուսանողական կազմի համալրման գործիքներ: Մասնակցությունը ցուցահանդեսին հնարավորություն է տալիս հասարակության լայն հատվածին, հատկապես բարձր դասարանցիներին և նրանց ծնողներին ներկայացնել բուհի ձեռքբերումները, տալ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ տեղեկատվություն: 2016թ. ԱՏԽԲ-ն մասնակցել է ,Կրթություն և կարիերա EXPO-2016ե և ,Արմպրոդէքսպո-2016ե ցուցահանդեսների՝ ներկայանալով ՀԱԱՀ-ի և Ագրոբիզնեսի դեպարտամենտի հետ միասին:

ԱՏԽԲ-ի կարևոր գործառույթներից է նաև սեմինար-հանդիպումների կազմակերպումը, որոնց հերթական շարքը՝ 12 հանդիպում, ԱՏԽ բաժինը կազմակերպեց 2016թ. փետրվար-ապրիլ ամիսներին՝ ՀԱԱՀ Ագրոնոմիական և Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետների ավագ կուրսերի ավելի քան 170 ուսանողների մասնակցությամբ:

Դպրոց-բուհ համագործակցության շրջանակներում ԱՏԽ բաժնի աշխատակազմը մշտապես մասնակցում է Երևանի և տարբեր մարզերի բարձր դասարանցիների հետ հանդիպումներին, ներկայացնում ՀԱԱՀ մասնագիտությունները, հեռանկարները, ագրոպարենային և հարակից ոլորտներում կարիերայի հնարավորությունները: 2016 թ. ընթացքում Երևանի և ՀՀ մարզերի ավագ դպրոցներից ավելի քան 730 ավագ դպրոցական մասնակցել է նմանատիպ 27 հանդիպման:

Աշխատուժի նկատմամբ կարիքների բացահայտումը չափազանց կարևոր է ԱՏԽԲ գործառույթները լավագույնս իրականացնելու համար: ԱՏԽ բաժնում պարբերաբար թարմացվում է գործատուների բազան՝ ըստ ոլորտների, 2016թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին արվել են կոնտակտային տվյալների բազայի հերթական թարմացումները:

ԱՏԽ բաժինը 2016թ. ընթացքում շարունակել է համակարգել ՀԱԱՀ շրջանավարտների մասին տեղեկատվության մուտքագրման աշխատանքները ԵՄ HEN-GEAR ՏԵՄՊՈՒՍ ,Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների աշխատունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանցե ծրագրի շրջանակներում ներդրված էլեկտրոնային բազայում, որտեղ 2016թ. դեկտեմբեր ամսվա դրությամբ գրանցվել է ՀԱԱՀ ավելի քան 2900 շրջանավարտ:

ԱՏԽԲ-ի համար կարևորվում է միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների հետ համագործակցությունը: 2016թ. կազմակերպվել են հանդիպումներ «ՌՈՍԳՈՍՍՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ՓԲԸ, HSBC Բանկ Հայաստան, ՋիԷնՍի Ալֆա Ռոստելեկոմ ընկերությունների ներկայացուցիչների հետ, ովքեր ուսանողներին ներկայացրին իրենց ընկերություններում առկա թափուր աշխատատեղերը, մասնագիտական աճի հնարավորությունները և կարիերայի զարգացման հեռանկարները:

ԱՏԽԲ-ուսանող, ուսանող-ԱՏԽԲ երկկողմ տեղեկատվական հոսքի արդյունա-վետությունն ապահովելու համար գործում է Աշխատանքի տեղավորման և խորհրդատվության բաժնի կայքը՝

www.career.anau.am, որի միջոցով ուսանողներին ու շրջանավարտներին տրամադրվում է խորհրդատվություն և տեղեկատվություն թափուր աշխատատեղերի, վերապատրաստումների և պրակտիկաների, հարցազրույցներին նախապատրաստվելու, ինքնակենսագրական փաստաթղթերի կազմման վերաբերյալ, իսկ գործատուներին՝ աջակցություն համապատասխան աշխատակիցների ընտրության և աշխատանքի տեղավորման հարցերում: Կայքի տվյալների բազայում գրանցված է շուրջ 1200 ուսանող և շրջանավարտ:

2016թ. ԱՏԽ բաժնի վարիչ Լ. Մնացականյանը մասնակցել է ԿԱԶԱ հիմնադրամի կազմակերպած «Աշխատանքի հմտությունների զարգացում» և «Նեյրոլինգվիստիկ ծրագրավորում» կարողությունների զարգացման դասընթացներին, որոնց ընթացքում քննարկվել են «Կարիերայի պլանավորում», «Ինքնագնահատում և մոտիվացիա», «Աշխատանքի որոնման տեխնիկա», «ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Սթրեսի կառավարում», «Միջմշակութային հաղորդակցություն», «Ժամանակի կառավարում», «Թիմի կառավարում և համագործակցություն», «Ստեղծագործականություն և քննադատական մտածողություն», «Ռեֆրեյմինգ և մոդելավորում» և այլ թեմաներ:

6.5.ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Վերջին մեկ տարվա ընթացքում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի պատմության թանգարանը զբաղվել է ընթացիկ աշխատանքներով:

2016 թվականին լրացան մի շարք անվանի գիտնականների, ոլորտի երախտավորների հոբելյաններ, ուստի պատմության թանգարանի աշխատակիցների կողմից ուսումնասիրվել և կազմվել է հոբելյանների ցանկը, որտեղ ընդգրկվել են բազմաթիվ դոկտոր-պրոֆեսորներ, ակադեմիկոսներ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչներ և այլք՝ տարվա ընթացքում նրանց ծննդյան հոբելյանը համալսարանում նշելու նպատակով:

2015 թվականի հոկտեմբերին համալսարանը տոնեց հիմնադրման 85-ամյակը: Այդ առիթով տարբեր կազմակերպություններից ստացվել են բազմաթիվ նվերներ՝ գեղանկարչական աշխատանքներ, քանդակ, գործվածքի գեղարվեստական ձևավորում, բատիկ, հուշանվերներ, դեկորատիվ-կիրառական արվեստի նմուշներ, մեդալներ և այլն, ինչպես նաև շնորհավորական ուղերձներ, որոնք հանձնվեցին թանգարանին (21 աշխատանք և 38 ուղերձ): Այդ աշխատանքների համար կազմվել է ընդունման ակտ, արվել են լուսանկարներ, լրացվել են գիտական քարտեր՝ ներառելով լիարժեք տեղեկություններ տվյալ առարկայի մասին. հեղինակը, նկարագրությունը, նյութը, չափը, կատարման թվականը, դրությունը, ստացման պատմությունը և այլն: Աշխատանքների մի մասը հնարավորինս ներգրավվել է թանգարանի ցուցադրությունում: Տարածքի սղության պատճառով նյութերի մի մասը դեռևս պատշաճ մակարդակով ցուցադրված չէ, ուստի աշխատանքներ են տարվում մյուս գործերը ևս ցուցադրությունում ընդգրկելու ուղղությամբ:

ՀԱԱՀ-ի ռեկտոր Ա. Թարվերդյանի հրամանով կազմվել է հանձնաժողով (նախագահ՝ Լեռնիկ Նիկողոսյան, անդամներ՝ Սյուզաննա Փիլոսյան, Աշոտ Բաղդասարյան, Լուսինե Կոնջորյան, Էլմիրա Սարիբեկյան) և ստուգվել է թանգարանի ֆոնդը:

Տարվում են աշխատանքներ հայ մշակույթով և արվեստով հետաքրքրվող համալսարանականների խմբի ստեղծման ուղղությամբ: Նախատեսվում է նրանց համար կազմակերպել դասախոսություններ, անվանի արվեստագետների հետ հանդիպումներ, այցելություններ մշակութային տարբեր օջախներ, պատմամշակութային հուշարձաններ: Ուսանողների անվճար այցելություններ կազմակերպելու նպատակով պայմանավորվածություն է ձեռք բերվել Երևանում գործող որոշ թանգարանների հետ:

Անհատ այցելուների հետաքրքրությունը բավարարելու նպատակով գրել և թանգարանի ցուցադրությունում՝ ներառվել է ՀԱԱՀ-ի ստեղծման պատմությունը ներկայացնող էքսկուրսիոն

համառոտ տեքստ, որտեղ հանգամանորեն ներկայացվել է Երևանի պետական համալսարանում գյուղատնտեսական ֆակուլտետի ստեղծումից մինչև Հայաստանի ազգային ագրարային համալսարան անցած ճանապարհը:

Աշխատանքներ են տարվում ՀԱԱՀ-ն ավարտած անվանի արվեստագետներ հայտնաբերելու ուղղությամբ: Այդ առիթով ուսումնասիրվել և գրի է առնվել ՀԱԱՀ-ի այգեգործական ֆակուլտետն ավարտած արձակագիր, լրագրող, ՀՍՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ գրողների միության անդամ Մուշեղ Գալշոյանի կենսագրությունը: Այն կընդգրկվի թանգարանի ցուցադրությունում:

Ուսումնասիրվել է նաև գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, գրող, բանաստեղծուհի, հասարակական գործիչ Մեդորա Խաչատրյանի կյանքն ու ծավալած գործունեությունը, դստեր աջակցությամբ ձեռք են բերվել արխիվային նյութեր:

ՀԱԱՀ-ի ռեկտորի հրամանով կատարվել է թանգարանային առարկաների 2016 թվականի գույքագրում և ներկայացվել հաշվապահություն:

2016 թվականի ընթացքում թանգարանն ունեցել է շուրջ 560 այցելու: Թանգարան են այցելել խմբեր՝ Անասնաբուժական-բժշկագիտության, Ագրոնոմիական, Տնտեսագիտական և մյուս ֆակուլտետների ուսանողներից, դասախոսներ, հյուրեր տարբեր կազմակերպություններից, ինչպես նաև հանրապետության տարբեր քաղաքներում գործող դպրոցների (Էջմիածին, Հրազդան, Բյուրեղավան, Աբովյան, Արագածավան, Դիլիջան, Վեդի, Այնթափ) աշակերտներ, որոնց համար կազմակերպվել է էքսկուրսիա և ներկայացվել թանգարանի ամբողջ ցուցադրությունը:

Թանգարան այցելող յուրաքանչյուր անհատ ուսանողի համար ևս վարվել է էքսկուրսիա, մանրամասն ներկայացվել ցուցադրված հնագույն առարկաների կիրառական նշանակությունը, անվանի գիտնականների կյանքն ու գործունեությունը, թանգարանի հիմնական հավաքածուն:

ՏՊԱՐԱՆ

Ագրարային համալսարանի տպարանում է տպագրվում բուհի ուսումնամեթոդական գրականությունը, ,Տեղեկագիրե գիտական պարբերականը, ,Հասկե պաշտոնաթերթը, պաստառներ, բուկլետներ, ձևաթղթեր և այլն:

2016 թվականին կատարվել են հետևյալ աշխատանքները.

հ/հ	Աշխատանքի անվանումը	Հատ / անուն	Էջերի քանակը	Տպագրակա ն մամուլ
1	Մեթոդական ցուցումներ, դիպլոմային, կուրսային և լաբորատոր աշխատանքներ կատարելու համար	53.0	1028	64.5
2	Աշխատանքային տետրեր, պրակտիկայի օրագրեր և ծրագրեր	11.0	1221	152.6
3	Գիտական ժողովածուներ, տեղեկագրեր	5.0	834	104.5
4	Օգտագործված թղթի քանակը	4204.0կգ		

2016 թվականին հրատարակված ուսումնական ձեռնարկների անվանացանկը՝

հ/հ	Գրքի անվանումը	Հեղինակներ	Ծավալը	Տպաք.	Տպագ. մամուլ
1	Դասախոսական տեքստեր	Ա.Ա.Աղասարյան և ուրիշներ	64	100	4.0
2	Տեղեկատվական համակարգեր և տեխնոլոգիաներ	Ս.Գյուլումյան և ուրիշներ	184	200	15.5
3	Ֆիզիկայի խնդիրների ժողովածու լուծումներով	Ա.Խաչատրյան և ուրիշներ	84	150	5.25
4	Ֆիզիկայի խնդիրների ժողովածու	Ա.Խաչատրյան և ուրիշներ	80	150	5.0

5	Ավտոմոբիլային փոխադրումներ, խնդիրների ժողովածու	Ռ.Բալյան, Ա.Սիմոնյան	210	300	13.25
6	Բնափայտագիտություն	Ա.Փահլևանյան	60	200	3.75
7	Սննդամթերքի անվտանգություն HACCP համակարգ	Հ.Բատիկյան, Ա.Աղաբաբյան	112	200	7.0
8	Բնական ռեսուրսների մոնիտորինգ և կադաստր	Պ.Էֆենդյան և ուրիշներ	192	250	12.0
9	Անգլերեն լեզվի ուսումնական ձեռնարկ	Ն.Գասպարյան և ուրիշներ	240	150	15.0
10	Բարձրագույն մաթեմատիկա	Լ.Դանիելյան	184	200	11.5
			1410	1900	92.25

6.6.ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

2016 թվականի ընթացքում հրատարակչական-խմբագրական բաժինը տպագրության է հանձնել հետևյալ նյութերը.

1. *Մեթոդական ցուցումներ՝ 67 անվանում՝ 149,25 տպագրական մամուլ ընդհանուր ծավալով:*
2. *Գիտական պարբերական (5 համար) և գիտական աշխատությունների ժողովածու՝ 117,75 տպագրական մամուլ:*
3. *Հաշվետվություններ, տարեկան զեկույց, ծրագրեր և այլ նյութեր՝ 175,6 տպագրական մամուլ:*

2016 թվականի ընթացքում հրատարակված աշխատանքների ընդհանուր ծավալը կազմել է 442,6 տպագրական մամուլ:

6.7.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

ՀԱԱՀ-ն ակտիվորեն շարունակում է մասնակցել տարաբնույթ միջազգային ծրագրերի, ինչպես նաև ընդլայնում համագործակցության աշխարհագրությունն ու միջազգային գործընկերների քանակը: Ներկայումս համալսարանում գործում են Տեմպուս, Էրազմուս Մունդուս, Էրազմուս+ ծրագրերը:

Համալսարանն ունի շուրջ 71 պայմանագիր՝ կնքված եվրոպական, ամերիկյան և ԱՊՀ տարբեր բուհերի և միջազգային կազմակերպությունների հետ: Այդ շրջանակներում համալսարանն ակտիվորեն համագործակցում է շուրջ 20 բուհերի և կազմակերպությունների հետ:

2016թ. հունվարից մինչ օրս կնքվել կամ վերահաստատվել է համագործակցության 17 հուշագիր և պայմանագիր:

ՀԱԱՀ-ի համար կարևոր և գործուն կոնսորցիումներ են ԱՊՀ առաջատար ագրարային բուհերի ռեկտորների խորհուրդը և Եվրոմիության Տեմպուս և Էրազմուս ցանցային ծրագրերի բուհերը:

2016թ.-ին սովորելու կամ հետազոտական աշխատանք կատարելու նպատակով արտերկիր է մեկնել 37 ուսանող, իսկ վերապատրաստման ու հետազոտական աշխատանք կատարելու՝ 28 աշխատակից: Միջազգային ծրագրերի և համաձայնագրերի շրջանակներում ՀԱԱՀ-ում վերապատրաստում է անցել Եվրոպայից և Ռուսաստանից ժամանած 10 դասախոս:

2016 թվականին ավարտվեց Տեմպուսի *,Կայուն զբոսաշրջության կառավարման միջազգային բակալավրիական և մագիստրոսական ծրագրերի նոր մոդուլների մշակումե SuToMa* ծրագիրը, որի շրջանակներում «Ագրոտուրիզմի կառավարում» նոր մագիստրոսական դասընթացի համար մշակվել է նոր մոդուլ, ինչպես նաև ձեռք են բերվել նյութատեխնիկական սարքավորումներ՝ վերոհիշյալ դասընթացի անցկացման համար նախատեսված լսարանի կահավորման համար:

Ներկայումս ընթացքի մեջ են Տեմպուսի հետևյալ նախագծերը՝ LeAGUe, GOVERN, ARMENQA:

LeAGUe ,Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում ցկյանս ուսուցման զարգացման ցանցե ծրագրի հիմնական նպատակը ցկյանս ուսուցման մոտեցումների և մեթոդաբանության մշակումն ու համապատասխան կենտրոնների ստեղծումն է: Նախագծի շրջանակներում ստեղծվել է ցկյանս ուսուցման փորձագիտական պորտալ, ՀԱԱՀ-ում կահավորվել է համապատասխան լսարան և նախատեսվում է կազմակերպել պիլոտային դասընթացներ:

ARMENQA ,Հայաստանում ազգային և սեկտորալ որակավորման շրջանակների ամրապնդումե ծրագրի նպատակը Հայաստանի որակավորման ազգային շրջանակի գնահատումն ու նորի մշակումն է, ինչպես նաև որակավորումների ոլորտային շրջանակի ստեղծումը: Ծրագրի շրջանակներում վերջնական մշակում են ստացել ՀՀ ԲԿ Որակավորումների ազգային շրջանակը, որակավորումների ոլորտային (գյուղատնտեսություն) շրջանակը, մշակվել են Ագրոնոմիա, սելեկցիա, գենետիկա մասնագիտության որակավորումների բնութագրիչները՝ հայերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև իրականացվել են բազմաթիվ վերապատրաստումներ ու դասընթացներ:

GOVERN *,Աջակցություն բուհական ինքնավարությանը և հաշվետվողականությանը. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում արդյունավետ փոփոխությունների իրականացման նպատակովե* ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում Բոլոնիայի չափանիշներին համապատասխան ժամանակակից կառավարման համակարգի կատարելագործումն է և բուհի ինքնավարության ու պատասխանատվության ամրապնդումը: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ, աշխատաժողովներ ու վերապատրաստումներ:

Բացի Տեմպուսի ծրագրերից, համալսարանը մասնակցում է նաև էրազմուս Մունդուս ծրագրին: Ներկայումս ՀԱԱՀ-ում գործում են էրազմուս-Մունդուս 3 ծրագրեր:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 ELECTRA ,Արևելյան գործընկերության երկրներում ուսուցման որակի բարձրացում մաքուր տեխնոլոգիաների և հետազոտական գործընթացների միջոցովե ծրագրի նպատակն է եվրոպական և 3-րդ գործընկեր երկրների միջև ձևավորել առավել սերտ հարաբերություններ, որպեսզի մեծացվի հետազոտության և արտադրության ազդեցությունն այն ոլորտներում, որոնք կապված են մաքուր էներգիաների, բնապահպանության և կայուն զարգացման հետ:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 EMBER «Կրթական հնարավորությունների ընդլայնում» ծրագրի նպատակն է նպաստել բուհերի միջև համագործակցությանը՝ նոր կրթական հնարավորություններ տալով բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, դոկտորանտուրայի ուսանողներին, ինչպես նաև վարչական աշխատակազմին:

ERASMUS MUNDUS Գործողություն 2 EFFORT ,Կրթական ուժ՝ միտված ԵՄ-Արևելյան եվրոպական համագործակցության համար շարժունության խթանմանըե ծրագրի հիմնական նպատակն է խթանել համակարգված ակադեմիական համագործակցությանը եվրոպական և արևելյան երկրների բարձրագույն կրթական հաստատությունների միջև, փորձի փոխանակման միջոցով ընդլայնել գիտական հորիզոնները կոնսորցիումի անդամ հաստատությունների միջև, հավասար հնարավորություններ ստեղծել հաշմանդամություն ունեցող ուսանողների համար և այլն:

Համալսարանը մասնակցում է *Erasmus+ Հիմնական գործողություն 1 միջազգային կրեդիտային շարժունության* ծրագրին, որի շրջանակներում ներկայումս կան համագործակցության ծրագրեր տարբեր համալսարանների հետ. Գայզենհայմի համալսարան, Վառնայի մենեջմենթի համալսարան, Ալմերիայի համալսարան, Յագիելոնյան համալսարան, Մինյո համալսարան, Անգել Կանչեվ համալսարան, Բանատի գյուղատնտեսական և անասնաբուժական բժշկագիտության համալսարան, Լիֆի էստոնական համալսարան:

Արդեն 17 տարի ՀԱԱՀ-ը համագործակցում է Գերմանիայի Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի հետ, որի ընթացքում ,Ագրարային մենեջմենթե ծրագրի շրջանակներում ՀԱԱՀ մոտ 65 շրջանավարտ շարունակել է իր ուսումը Վայհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանում, իսկ 104 ուսանող գյուղատնտեսական արտադրական պրակտիկա է անցել Գերմանիայում: 2016 թվականին համալսարանի խոշորագույն ձեռքբերումներից էր Գերմանիայի Դաշնության Կրթության որակի վերահսկման և հավատարմագրման ինստիտուտի

(ACQUIN) կողմից ՀԱԱՀ *,Ագրարային մենեջմենթ միջազգային մագիստրոսական ծրագրի* միջազգային հավատարմագրումը: Հարկ է նշել, որ հետխորհրդային երկրների (ՌԴ, Ուկրաինա, Ղրղզստան, Ղազախստան) 12 առաջատար ագրարային բուհերի շարքում ՀԱԱՀ-ը միակ բուհն էր, որը հավատարմագրման գործընթացում ոչ մի դիտողություն չի ստացել: Հավատարմագրման հավաստագրի հանդիսավոր հանձնումը տեղի ունեցավ հոկտեմբերի 14-ին՝ Վայնհենշտեֆանի կիրառական գիտությունների համալսարանի ,Ագրարային մենեջմենթ միջազգային ցանցի համակարգող դոկտոր պրոֆեսոր Յոհաննես Հոլցների կողմից:

ՀԱԱՀ-ը համագործակցում է նաև մի շարք այլ կազմակերպությունների (Logo, Praxx, GeTec, DJ East) հետ, որոնց միջոցով ՀԱԱՀ-ի ուսանողներն արտադրական պրակտիկա են անցնում Գերմանիայի տարբեր ֆերմերային տնտեսություններում: Արդյունքում ուսանողները ձեռք են բերում մասնագիտությանը համապատասխան կիրառական հմտություններ:

2016 թվականին ՀԱԱՀ-ն ընդլայնեց միջազգային համագործակցության աշխարհագրությունը: Արգենտինայի դեսպանատան միջնորդությամբ ներկայումս սերտ համագործակցության նախադրյալներ են ստեղծվել Արգենտինական AACREA (Գյուղատնտեսական փորձարարությունների տարածքային միավորում) կազմակերպության հետ: Նպատակն է ագրարային խորհրդատվության և ֆերմերային տնտեսությունների միավորումների միջոցով ՀՀ-ում բարձրացնել գյուղատնտեսական արտադրանքի ծավալները և աշխատանքով ապահովել երիտասարդ մասնագետներին: Համագործակցության շրջանակներում հոկտեմբերի 18-ին ՀԱԱՀ-ը հյուրընկալեց արգենտինական պատվիրակությանը՝ ՀՀ-ում Արգենտինայի արտակարգ և լիազոր դեսպան Գոնզալո Ուրրիոլաբեիտիանի ղեկավարությամբ: Հանդիպման ժամանակ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՀԱԱՀ-ն ակտիվորեն մասնակցելու է տարվող աշխատանքներին և իր մասնագետների միջոցով նպաստելու է ագրարային ոլորտում խորհրդատվական ծառայությունների մատուցմանը:

ՀՀ-ում Բրազիլիայի դեսպանատան միջնորդությամբ ստեղծվել են նախադրյալներ, որոնք հնարավորություն կընձեռնեն համագործակցել նաև բրազիլական ագրարային ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ: 2016 թվականի հոկտեմբերին ՀԱԱՀ-ը հյուրընկալեց Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Գյուղատնտեսության, անասնաբուծության և մատակարարման նախարարության գործադիր քարտուղար, նախարարի տեղակալ Էումար Նովացկիի գլխավորած պատվիրակությանը՝ ՀՀ-ում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ. Էդսոն Մարինյո Դուարտե Մոնտեյրոնի մասնակցությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին կրթության, գիտության և տեխնոլոգիաների ոլորտներում համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև ներկայացվեց Բրազիլիայում գյուղատնտեսության առանձնահատկություններն ու զարգացման միտումները: Առաջիկայում ակնկալվում է համագործակցության իրական հնարավորություն Բրազիլիայի գյուղատնտեսական հետազոտությունների կորպորացիայի (Embrapa) հետ:

Համագործակցության ամրապնդման և վերսկսման միտումներ կան նաև ԱՄՆ ուսումնական հաստատությունների հետ: Մասնավորապես, 2016 թվականի սեպտեմբերի 19-27-ը ՀԱԱՀ ռեկտորի՝ ԱՄՆ այցելության ընթացքում համագործակցության համաձայնագրեր և հուշագրեր կնքվեցին Փենսիլվանիայի նահանգային համալսարանի (ՓենՍտեյթ), Վիրջինիայի պոլիտեխնիկական ինստիտուտ և նահանգային համալսարանի (Վիրջինիա Թեք) և Ֆրեզնոյի համալսարանի հետ: Համաձայնագրերի շրջանակներում, ի թիվս բազմաթիվ ծրագրերի (ուսումնական պլանների մշակում, ուսանողների, դասախոսների փոխանակում, համատեղ հետազոտական ծրագրերի իրականացում, կրթական ծրագրերի հավատարմագրում, պարենամթերքի տեխնոլոգիաների, պարենային անվտանգության համակարգերի կառավարման և ագրոբիզնեսի գծով կրթական ծրագրերի համատեղ մշակում, դիպլոմների փոխադարձ ճանաչում, վարչական աշխատանքի բնագավառում փորձի

փոխանակում) նախատեսվում է նաև 2017թ.-ի հունվարին ՀԱԱՀ-ում սկսել «Պարենային անվտանգության համակարգերի կառավարում» հավաստագրային ծրագիրը: Ամերիկյան այցելությունների կարևորագույն արդյունքներից է նաև ապագայում կրկնակի դիպլոմների շնորհման համար նախադրյալների ստեղծման համաձայնության ձեռքբերումը, ինչպես նաև ԱՄՆ Գյուղդեպարտամենտի հետ համագործակցության վերսկսմանն ուղղված հանդիպումները:

ՀԱԱՀ-ում 2016թ. բացվել և հաջողությամբ գործում է Երևանի գինու ակադեմիան (Ի-Վի-էն), որը շնորհում է Գերմանիայի Գայզենհայմի համալսարանի հավաստագիր: Ակադեմիայում ուսումնական պլանն ու գինու քիմիայի ուսումնական լաբորատորիան համապատասխանում են միջազգային չափանիշներին:

2016 թվականի հունիսի 21-24-ը Ալմաթայում տեղի ունեցավ ԱՊՀ երկրների ագրարային առաջատար բուհերի ռեկտորների խորհրդի հերթական նիստն ու գիտաժողովը, որը նվիրված էր այդ ոլորտի կրթական բարեփոխումներին և նյութատեխնիկական բազայի նորացման հիմնախնդիրներին: Հանդիպման ժամանակ քննարկվեց նաև ԱՊՀ ագրարային բուհերի ուսումնամեթոդական խորհրդի ստեղծման հարցը՝ ուսանողների շարժունակությունն առավելագույնս խթանելու նպատակով, ինչպես նաև դասախոսների վերապատրաստմանն ուղղված միջոցառումների խթանումը:

Հատկանշական է, որ ՀԱԱՀ-ը կարող է դառնալ ոչ միայն տեղական մասնագետների, այլ նաև արտերկրյա դասախոսների վերապատրաստման օջախ: Նշվածի վառ ապացույցը 2016թ.-ի դեկտեմբերին Միչուրինսկի պետական ագրարային համալսարանի 5 դասախոսների այցն ու վերապատրաստումն էր ՀԱԱՀ-ում:

ՀԱԱՀ-ի Միջազգայնացմանն ուղղված ռազմավարության ներկայիս կարևորագույն ուղղություններից մեկը համալսարանում կրթություն ստանալու նպատակով օտարերկրյա ուսանողների ներգրավումն է: Այդ ուղղությամբ ներկայումս հստակ քայլեր են կատարվում, ինչի արդյունքում ակնկալվում է, որ մոտ ապագայում ՀԱԱՀ-ը կարող է դասընթացներ կազմակերպել նաև անգլերենով և ունենալ արտերկրից ժամանած ուսանողներ:

Իր գործունեության թափանցիկության և տեղեկատվության տարածման արդյունավետության բարձրացման ուղղությամբ Արտաքին կապերի դեպարտամենտն իրականացրել է որոշակի աշխատանքներ: Մասնավորապես, թարմացրել է դեպարտամենտի կայքը՝ այն դարձնելով առավել ինֆորմատիվ, ստեղծել է ամբիոնների և դեկանատների էլեկտրոնային տվյալների բազա, ինչպես նաև ակտիվացվել է տեղեկատվության տարածումը դեպարտամենտի ֆեյսբուքյան էջով:

Չնայած արտաքին համագործակցության ոլորտում ՀԱԱՀ-ի որոշակի հաջողություններին և համագործակցության քայլերի ընդլայնմանը, դեռևս առկա են որոշ բացթողումներ և աշխատանքների կազմակերպման և իրականացման բարելավման հնարավորություններ: Մասնավորապես, առկա թերացումներն են.

1. Դեպարտամենտի և համալսարանի այլ ստորաբաժանումների միջև թույլ կապ,
2. Եվրոպական չափանիշներին համապատասխան պայմանների բացակայություն օտարերկրյա դասախոսների և ուսանողների կեցության համար,
3. Ուսանողների և դասախոսների շրջանում օտար լեզվի իմացության թույլ մակարդակ,
4. Միջազգային ծրագրերին մասնակցելու տեսակետից ուսանողների և դասախոսների թույլ հետաքրքրվածություն և նախաձեռնողականություն:

6.8.ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնը տարեվերջին, ամփոփելով նախորդ տարվա ընթացքում կատարած աշխատանքները, վեր է հանել լուծման անհրաժեշտություն ունեցող խնդիրներ և մշակել առաջարկությունների և նախատեսվող միջոցառումների ցանկ:

Կենտրոնն իր ծրագրերն ու գործունեությունն իրականացնում է՝ ելնելով համալսարանի առաքելության, ռազմավարական զարգացման ծրագրի, սեփական աշխատանքային պլանի դրույթներից և առաջավոր բուհերի փորձի ուսումնասիրությունից:

Կենտրոնի կողմից մշակվել է ՀԱԱՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ռազմավարական ծրագիրը, որը ներառվել է բուհի զարգացման ռազմավարական ընդհանուր ծրագրում: Կենտրոնի կողմից նախատեսվող հիմնական աշխատանքները բխում են վերոնշյալ փաստաթղթի հիմնադրույթներից:

Առաջարկություններն ըստ բաժինների ներկայացված են ստորև.

6.8.1.ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- Ընթերցողների համար պարբերաբար կազմակերպել գրադարանային դասընթացներ՝ ծանոթացնելու գրադարանին և նրա կողմից առաջարկվող ծառայություններին:
- Գրադարանի աշխատակիցների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, քանի որ գրադարանավարի աշխատանքը պահանջում է նոր որակ, և աշխատակիցների վերապատրաստումը դարձել է անհրաժեշտություն:
- Բաժանորդագրվել միջազգային առցանց էլեկտրոնային բազաների, որպեսզի ընթեցողները հնարավորություն ունենան օգտվելու միջազգային գիտական պաշարներից:
- Գրադարանի համար ձեռք բերել նոր համակարգիչներ:
- KOHA գրադարանային ծրագրերի հաշվետվությունների բաժնում ավելացնել ընթերցողների հաճախումների հաշվառման մասը:

6.8.2.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻՆ

- Ամբողջովին վերափոխել համալսարանի պաշտոնական կայքէջը, որի հիմքում ընկած կլինի կայքերի կառավարման ավելի նոր՝ արդի պահանջներին համապատասխան համակարգ, ինչը կայքին կտա ավելի մեծ ֆունկցիոնալ հնարավորություն և արագագործություն, կլինի ավելի պաշտպանված և անվտանգ, կունենա ավելի նորառճ դիզայն: Կայքի այցելուների համար տեղեկատվություն փնտրելը և գտնելը կդառնա առավել մատչելի:
- Առաջարկվում է ՀԱԱՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնին կից ստեղծել բուհի ուսանողներով համալրված երիտասարդ ստեղծարարների ակումբ: Կամավորության սկզբունքով նրանք անմիջականորեն կմասնակցեն ՏՏ և ԻԾ կենտրոնի աշխատանքներին՝ կիրառելով մասնագիտական և ոչ մասնագիտական կարողություններ, կներգրավվեն համալսարանում իրականացվող միջոցառումների կազմակերպմանը, լրատվական և ստեղծագործական նյութեր կպատրաստեն հատուկ ակումբի համար ստեղծված բլոգում և համալսարանի պաշտոնական կայքում: Ակումբի անդամները հնարավորություն կունենան ձեռք բերել տեղեկատվական ոլորտին առնչվող պրակտիկ գիտելիքներ ու հմտություններ, որոնք կիրառելի են ցանկացած բնագավառում:
- Երիտասարդ ստեղծարարներն իրենց նորարար մտքերն ու գաղափարները կօգտագործեն՝ ի նպաստ հարազատ կրթօջախի: Իսկ նրանցից լավագույնները հետագայում կհամալրեն Հայաստանի ազգային ագրարային համալսարանի աշխատակիցների շարքերը:
- Համալսարանի համար ստեղծել էլեկտրոնային արխիվ՝ փաստաթղթերի էլեկտրոնային պատկերներ, և դրանք պահպանել կենտրոնացված սերվերներում: Էլեկտրոնային արխիվն ունի մի շարք առավելություններ՝ ավելի քիչ ժամանակ է ծախսվում փաստաթղթերը դասակարգելու համար, թույլ է տալիս փաստաթղթերի ,Եզակի օրինակըե դասակարգել և պահպանել մի քանի եղանակով, որը հնարավոր չէ թղթային տարբերակի պարագայում:

6.8.3.ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔԻ ԲԱԺԻՆ

- «Office 365» փաթեթի հասանելիության ապահովում համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի և ուսանողության համար:
- Համալսարանի կառավարման ավտոմատացված համակարգի ներդրում ամբողջ համալսարանում:
- Ամբիոնների հետ համատեղ միասնական շտեմարանի ստեղծում, որում ներառված կլինեն դասավանդվող առարկաներին առնչվող էլեկտրոնային ռեսուրսները՝ տեսանյութեր, ֆորումների հղումներ, տեսական և գործնական այլ նյութեր:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

- ՀԱԱՀ բոլոր մասնագիտությունների վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածության մակարդակի ուսումնասիրություն տվյալների բազայում գրանցված շրջանավարտների հարցման և վերլուծության միջոցով:
- ՀԱԱՀ ուսանողների և ԱՏԽԲ աշխատակիցների համակարգված սեմինար-հանդիպումների կազմակերպում:
- Պարբերական հանդիպումների կազմակերպում ագրոպարենային և հարակից ոլորտների ձեռնարկությունների պատասխանատու աշխատակիցների և ՀԱԱՀ ուսանողների հետ:
- Բոլոր հնարավոր ոլորտների գործատուների բազայի շարունակական թարմացում:

6.8.4.ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Թանգարանի կազմում ստեղծել գեղագիտական կենտրոն և հնարավորություն տալ ուսանողներին և բոլոր ցանկացողներին ըստ իրենց նախասիրությունների սովորել հայկական դեկորատիվ-կիրառական արվեստի որևէ ճյուղ (ժանյակ, ասեղնագործություն, փայտարվեստ և այլն): Այդ նպատակով մշակել և ներկայացվել է ծրագիր:

- Ստեղծել հնարավորություն ՀԱԱՀ-ում կազմակերպել ժամանակավոր ցուցահանդեսներ, որոնք հնարավորություն կտան թե՛ ուսանողներին, թե՛ համալսարանի անձնակազմին ծանոթանալ ժամանակակից հայ կերպարվեստի վարպետների ստեղծագործություններին (գեղանկար, քանդակ, դեկորատիվ-կիրառական արվեստ և այլն): Այն միաժամանակ կստեղծի թանգարանը նոր, արժեքավոր գործերով համալրելու հնարավորություն:
- Ուսանողների գեղագիտական դաստիարակության համար նախատեսվում է ուսանողների շրջանում գտնել ստեղծագործելու շնորհքով օժտված երիտասարդների, թանգարանին կից նրանցից ձևավորել շնորհալի ուսանողների խումբ և դասախոսությունների, անվանի արվեստագետների հետ հանդիպումների ու մշակութային տարբեր օջախներ այցելելու միջոցով հնարավորություն տալ նրանց ծանոթանալու հայ մշակույթին ու արվեստին:
- ՀԱԱՀ-ի 4-րդ մասնաշենքում՝ Մորֆոլագիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի ամբիոնում գտնվում է 1928 թվականին ստեղծված գեղարվեստական արժեք ներկայացնող զարդանախշ մի ամբիոն: Առաջարկվում է հնարավորություն ստեղծել այդ ամբիոնը տեղափոխել պատմության թանգարան մշտական ցուցադրությունում ընդգրկելու համար:

6.8.5.ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ-ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԻՆ

- Գրագողության դեպքերը բացառելու նպատակով խստացնել ներկայացվող նյութերի նկատմամբ պահանջները:
- Մեթոդական և գիտական խորհուրդներին, գրախոսներին ամենայն պատասխանատվությամբ գնահատել տպագրության ներկայացվող ուսումնամեթոդական աշխատանքերը և գիտական հոդվածները:

6.8.6.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

- Զարգացնել համագործակցությունն արտասահմանյան համալսարանների և միջազգային կազմակերպությունների հետ՝ ամրապնդելով հինը և ստեղծելով նոր կապեր:

- Ընդլայնել համալսարանի մասնակցությունը միջազգային շարժունության ծրագրերին և բարձրացնել շարժունության համալսարանական ցուցանիշը:
- Բարձրացնել միջազգային փոխանակման և դրամաշնորհային ծրագրերի վերաբերյալ տեղեկացվածության աստիճանը:
- Խթանել համալսարանի դասախոսների և ուսանողների օտար լեզուների իմացության մակարդակը:
- Մեծացնել համալսարանի ուսանողների և դասախոսների հաշվետվողականության մակարդակը՝ արտասահմանյան այցելություններից հետո:
- Արտերկրից ժամանած դասախոսների և ուսանողների կեցության համար համալսարանի հանրակացարանում ստեղծել անհրաժեշտ պայմաններ:
- Համալսարանում օտարերկրյա ուսանողների դասավանդման համար որոշ թիրախային մասնագիտությունների ուղղությամբ ստեղծել անգլերենով ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր:

7.1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱԳՐՈԳԻՏԱՍՓՅՈՒՌ» ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի Ագրոգիտասփյուռ դեպարտամենտը՝ հիմք ընդունելով 2016 թ. ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի որոշումները, համալսարանի մասնագիտական 18 ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնակցությամբ, համագործակցելով տեղական և միջազգային տարբեր կազմակերպությունների, գիտական կենտրոնների, անհատ ֆերմերային, գյուղացիական տնտեսությունների և վերամշակող ձեռնարկությունների հետ, հաշվետու ժամանակահատ-վածում ագրարային ոլորտում 24 թեմաներով ծավալել է խորհրդատվական գործունեություն հետևյալ ուղղություններով՝

- Երկրատեղեկատվական համակարգեր (ԵՏՀ) տեխնոլոգիաներով պտղատու այգիների տարածքների քարտեզագրում և հողաշինարարական կազմակերպում Արագածոտնի մարզի գյուղական համայնքներում
- Նորագույն տեխնոլոգիաներով մակերեսային ոռոգման գնահատման խորհրդատվություն Սյունիքի մարզի Բռնակոթ համայնքի գյուղացիական տնտեսություններում
- Խաղողի վազի էտի, ձևավորման, կապի և ոռոգման աշխատանքների կազմակերպման Խորհրդատվություն Արարատի և Արմավիրի գյուղացիական տնտեսություններում
- Ծխախոտ արտադրող գյուղացիական տնտեսություններում խորհդատվության ոռոգման աշխատանքների կազմակերպման, բույսերի պարարտացման և հիվանդությունների վերաբերյալ Արմավիրի և Կոտայքիմարզի պայմաններում
- Վարակիչ հիվադությունների բացահայտում և կանխարգելում Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Տավուշի մարզերում
- Ոչ վարակիչ հիվանդությունների տարածման արեալների բացահայտում և կախարգելում Արարատի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի և Սյունիքի մարզերում
- Աղակալած հողերի մոնիտորինգ Արարատյան դաշտի պայմաններում
- Նվազագույն մշակման փորձի խորհրդատվություն Արցախի գյուղացիական տնտեսություններում
- Անշարժ գույքի կադաստրի համակարգի կատարելագործման խորհրդատվություն Արցախի անշարժ գույքի կառավարման համակարգում
- Աղբավայրերի հողաշինարարական կազմակերպման և տարածքների արդյունավետ օգտագործման խորհրդատվական աշխատանքները Գեղարքունիքի մարզի պայմաններում
- Չորային երկրագործության պայմաններում հացահատիկային մշակաբույսերի, աշնանացան ցորենի, գարու բերքատվության բարձրացման հնարավորությունները Թալինի տարածաշրջանի գյուղացիական տնտեսություններում
- Հացահատիկային մշակաբույսերի աճեցումը առանց աղտահանիչների /թունանյութերի/ Լեռնային Ղարաբաղի պայմաններում
- Աշնանացան ցորենի մշակությունը նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ

- Հայաստանի ֆոսֆոր պարունակող նոր տիպի ապարներից ֆոսֆորական պարարտանյութերի ստացում և փորձարկում Կոտայքի մարզի Բջնի համայնքի գյուղացիական տնտեսություններում
- Հայաստանի կալիումով հարուստ ապարներից կալիումական պարարտանյութերի ստացում և փորձարկում Շիրակի և Կոտայքի մարզերի գյուղացիական տնտեսություններում
- Տեխնածին աղտոտված հողերից էկոլոգիապես անվտանգ սննդամթերքի ստացման վերաբերյալ խորհրդատվություն Վանաձորի և Կապանին հարակից գյուղացիական տնտեսություններում
- Գորիսի, Սիսիանի տարածաշրջանի դիատոմիատաբեր ավազանի ֆոսֆորական հանքավայրերից պարարտանյութերի ստացման և կիրառման խորհրդատվություն,
- Կարբիի և Օհանավանի կարկտահարված այգիների արագ վերականգման խորհրդատվություն
- Արարատի մարզի Մասիսի տարածաշրջանի Սայաթնովա և Ռանչպար համայնքների ձկնաբուծական լճակներից դուրս եկող ջրերի արդյունավետ օգտագործման խորհրդատվություն
- Բնական հանքատեսակների չափաբաժինների օգտագործման խորհրդատվության կազմակերպում Լոռու, Սյունիքի և Արարատի մարզերի պայմաններում
- Արարատյան հարթավայրի պայմաններում խաղողի վազի էտի և ձևավորման աշխատանքների խորհրդատվություն Արագածոտնի մարզի գյուղացիական տնտեսություններում
- Պտղատուների ճշգրիտ տեղաբաշխման խորհրդատվություն
- Տնկանյութերի աճեցման և պատվաստակալների ընտրության խորհրդատվություն Արագածոտնի մարզի և Արմավիրի մարզի գյուղացիական տնտեսություններում
- Խաղողի ֆիլոքսերիայի տարածման դեմ կանխարգելիչ միջոցառումնե Արմավիրի և Արարատի մարզի պայմաններում
- Լոլիկի և Կարտոֆիլի ցեցը և դրանց կանխարգելման միջոցառումները Արարատյան դաշտի պայմաններում
- Հացահատիկային մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումները Տավուշի մարզի պայմաններում
- Կարտոֆիլի քաղցկեղի դեմ պայքարի միջոցառումների խորհրդատվություն Գեղարքունիքի մարզի պայմաններում
- Լոլիկի հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների խորհրդատվություն Արարատի մարզի պայմաններում
- Խնձորենու պտղակերի դեմ պայքարի միջոցառումների խորհրդատվություն Արագածոտնի մարզի պայմաններում

Կատարված ծրագրերի արդյունքում ստացվել են հետևյալ հիմնական ցուցանիշները՝

Հանրապետության 10 մարզերում անցկացվել է թվով 121 սեմինար, կատարվել է 221 այցելություն, խորհրդատվություն է մատուցվել 1420 ֆերմերի, սեմինարներին մասնակցել են ՀԱԱՀ-ից և գիտական կենտ-րոններից 27 դասախոս/գիտնական, 195 ուսանող/մագիստրանտ, հրատարակվել և բաժանվել է 13 անուն խորհրդատվական թերթիկ և գրքույկ, համագործակցելով ԳԱՀԿ-ի հետ խորհրդատվական աշխատանքներում ընդգրկվել են ԳԱՄԿ-երի թվով18 մասնագետ, GIZ կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել է Հողաշինարարություն և հողային կադաստր մասնագիտությամբ մագիստրանտների խորհրդատվական արտադրական պրակտիկա Երկրատեղեկատվական համակարգեր առարկայից Վանաձոր քաղաքի արդյունաբերական աղտոտված հողատարածքների քարտեզագրման ուղղությամբ:Մասնագիտական որակավորման և ֆերմերային տնտեսությունների վարման արդյունավետության բարձրացման նպատակով ՀԱԱՀ-ում կազմակերպվել է ֆերմերների վերապատրաստման 2 շաբաթյա դասընթացներ „Անասնաբուժություն„ և „Բույսերի պաշտպանություն„ մասնագիտություններով: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են ՀՀ 10 մարզերի թվով 45 մասնագետներ:

7.2. ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐԻ ԵՎ ՖԵՐՄԵՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Համալսարանի թվով 68 դասախոս հանրապետության առաջատար բուհերում, գիտական կենտրոններում և արտադրական ձեռնարկություններում, աշխատանքից չկտրված, 2 ամիս տևողությամբ անցել են որակավորման բարձրացում: Գյուղ. արտադրության հետ ավելի մոտիկից ծանոթանալու նպատակով երիտասարդ դասախոսները գործուղվել են ֆերմերային տնտեսություններ և վերամշակող

ձեռնարկություններ, որոնց համար տեղում կազմակրպվել են սեմինարներ 24 ժամ ծավալով, դասախոսների մանկավարժական հմտությունը բարձրացնելու ուղղությամբ:
2016թ. դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում (Տեմպուս, Erasmus- mundus և ուրիշ) 40 դասախոս գործուղվել են Եվրոպայի, ԱՄՆ-ի, ինչպես նաև ԱՊՀ երկրների ագրարային բուհեր և գիտաարտադրական կազմակերպություններ, որոնց հետ ՀԱԱՀ-ն ունի պայմանագրեր և ակտիվ համագործակցում է:

Համալսարանը կազմակերպել է նաև Միչուրինսկի պետական ագրարային համալսարանի թվով 5 դասախոսի վերապատրաստման դասընթացներ:

Գյուղատնտեսության աջակցման դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում համալսարանի որոշ դասախոսներ ընդգրկվել են խորհրդատվական խմբերում և համաձայն հաստատված ժամանակացույցի, առանձին մարզերում, ֆերմերների և գյուղ. արտադրության մասնագետների համար անցկացրել են սեմինարներ՝ ուղղված գյուղատնտեսական նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների կոոպերացիայի հարցերին:

Համալսարանի ,,Ագրոէկոլոգիայի,, 6 դասախոսներ, «Կլիմայի գլոբալ փոփոխություն և ագրոէկոլոգիական մոնիտորինգ» ծրագրի շրջանակներում մասնակցել են Կ.Ա.Տիմիրյազև անվան Ռուսաստանի պետական ագրարային համալսարանի կողմից կազմակերպված ԱՊՀ երկրների ագրարային կրթությամբ մասնագետների վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներին:

8.ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

(ուս. խորհուրդ)

ՀԱԱՀ-ի ուսանողական խորհուրդը 2016թ. իր գործունեությունը իրականացրել է հետևյալ հիմնական ուղղություններով

- Ուսումնական,
- Գիտակրթական,
- Ուսումնադաստիրակչական:

Համալսարանի ուսանողական խորհուրդը ունի 25-տոկոսանոց ներկայացվածություն կառամարման բոլոր մարմիններում՝ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետային գիտական խորհուրդներ:

Ուսանողական խորհրդի անդամները անմիջական և ակտիվ մասնակցություն են ունեցել ուսանողների շրջափոխման գործընթացին: Ֆակուլտետների դեկանատների և ուսումնական մասի ներկայացուցիչների հետ բոլոր կուրսերում ներկայացվել են շրջափոխման արդյունքները: Ներկայացված արդյունքները ամբողջությամբ ընդունվել են ուսանողների կողմից:

Ուսանողական խորհուրդը ակտիվ մասնակցություն է ունեցել ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման, ուսանողներին ֆինանսական օգնությունների տրման և անվանական կրթաթոշակների նշանակման գործընթացին:

Ուսանողնական խորհրդի ներկայացուցիչները ուսանողների հիմնախնդիրների բացահայտման և լուծման նպատակով հանդիպումներ են ունեցել ինչպես բոլոր կուրսերի, այնպես էլ ֆակուլտետների մակարդակով:

Համալսարանի ուսանողական խորհրդի գործունեության հիմնական ուղղություններից են ուսանողների իրավունքների և շահերի ներկայացումն ու պաշտպանությունը: Տարվա ընթացքում եղել են բազմաթիվ անհատ ուսանողներ, ենթախմբեր, ովքեր ներկայացրել են բազմաթիվ խնդիրներ՝ կապված ուսումնական գործընթացի, քննությունների կազմակերպման, դասախոսությունների որակի բարելավման և դասախոսների հետ: Դրանք նույնպես ներկայացվել են ամբիոնների, ֆակուլտետների և համալսարանի ղեկավարությանը:

Ուսանողական խորհուրդը գիտական կենտրոնի և ուսանողական գիտական ընկերության հետ համատեղ կազմակերպել են ուսանողական ամենամյա 17-րդ գիտաժողովը: Առաջին փուլը կազմակերպվել է ամբիոններում, ապա ֆակուլտետներում: Վերջում կազմակերպվել է ուսանողական գիտաժողովի համալսարանական փուլը: ՈՒԳԸ-ի հետ իրականացվել են բազմաթիվ քննարկումներ, մասնագիտական օլիմպիադաներ, սեմինարներ, բանավեճ-քննարկումներ:

Համալսարանի ուսանողական խորհուրդը մեծ ուշադրություն է դարձրել ուսանողների ուսումնադաստիրակչական հարցերին: Տարվա ընթացքում իրականացվել են մշակութային, մարզական,

ժամանցային, ճանաչողական, բնապահպանական, առողջապահական և բազմաթիվ այլ միջոցառումներ ու ծրագրեր:

2016թ. իրականացվել են հետևյալ միջոցառումները

- Հունվար-փետրվար ամսվա առաջին կեսին ուսանողական խորհուրդը Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հետ միասին կազմակերպել է սոցիալապես անապահով, բարձր առաջադիմություն և բուհում հասարակական ակտիվություն ունեցող, սակայն վճարովի համակարգում սովորող 1-ին կուրսերի ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման ծրագիրը, հնարավորինս շատ ընդգրկելով ագրարային համալսարանի ուսանողներին, որի արդյունքում համալսարանից 85 ուսանողներ դիմել են կրթաթոշակի մրցույթի համար, որոնցից 15 ուսանող ստացել է ուսման վարձի փոխհատուցում՝ 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ գումար:
- Փետրվար ամսվա երկրորդ կեսին կազմակերպվել է ուսանողական խորհրդի նախագահի և ուսանողների հանդիպումներ, ինչպես կուրսերով, ենթախմբերով, այնպես էլ անհատական կարգով, կիսամյակային քննությունների ընթացքում առաջացած խնդիրներին ծանոթանալու համար:
- Մարտի-ապրիլ ամիսներին համալսարանի 2016 թվականի զորակոչին ենթական շրջանավարտների հետ «Հետբուհական զինվորական ծառայություն անցնելու պայմանների և պահանջների վերաբերյալ» բացատրական և տեղեկատվական աշխատանքներ անցկացնելու կապակցությամբ կազմակերպել ենք հանդիպումներ ՀՀ ՊՆ կադրերի և ռազմական կրթության վարչության անձնակազմի հետ:
- Ապրիլի 2-ից 8-ը ապրիլյան քառօրյա պատերազմի հետ կապված ուսանողական խորհուրդը համալսարանում կազմակերպվել է լայնածավալ կամավոր աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:
- 2016թ. ապրիլի 4-ին ուսանողական խորհրդի ակտիվիստները մասնակցել են ՀԵՀ-ի կողմից կազմակերպված բարեգործական արյունատվության ակցիային:
- Ապրիլի 19-ին կազմակերպվել է ճանաչողական շրջայց դեպի Մայր աթոռ սուրբ Էջմիածին:
- Հաշվետու տարվա հունվար-մայիս ամիսներին պարբերաբար կազմակերպվել է հայոց ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ միջոցառումներ, հանդիպումներ, սեմինարներ:
- Ապրիլի 20-24-ը Ուսանողական խորհուրդը և ՀԱԱՀ պատմության ամբիոնը համատեղ կազմակերպել են «Անցիալը չի լռում» հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես:
- Ապրիլի 23-ին մասնակցել ենք ջահերով երթին:
- Ապրիլի 24-ին կազմակերպվել է երթ դեպի Ծիծեռնակաբերդ, որից հետո եղել է այցելություն ցեղասպանության թանգարան:
- Ապրիլի 29-ից մայիսի 28-ը ընկած ժամանակահատվածում իրականացվել է «Ուսանողական գարուն 2016» սպորտային, ինտելեկտուալ, մշակութային միջոցառումներ, որին մասնակցել են համալսարանի ավելի քան 350 ուսանողներ:
- Մայիսի 9-ին Հայրենական մեծ պատերազմի և արցախյան ազատամարտի հաղթանակների կապակցությամբ կազմակերպվել է այցելություն Հաղթանակի զբոսայգի:
- Օգոստոսի 22-ից 28-ը ագրարային համալսարանի ուսանողական ջոկատը Ծաղկաձորում մասնակցել է «Բազե-2016» համահայկական երիտասարդական հավաքին:
- Օգոստոսի 29-ին տեղի է ունեցել ուսանողական խորհրդի ֆակուլտետային ակտիվիստների հանդիպում ուսանողական խորհրդի նախագահության անդամների հետ, սեպտեմբերի 1-ին առաջին կուրսեցիների ընդունելություն ճիշտ և պատշաճ կազմակերպելու համար:
- Հաշվետու տարվա սեպտեմբերի առաջին շաբաթում տեղի է ունեցել ուսանողական խորհրդի ֆակուլտետային նախագահների հանդիպումները առաջին կուրսեցիների հետ:
- Հաշվետու տարվա ընթացքում ուսանողական խորհուրդը մասնակցել է համաքաղաքային բոլոր շաբաթօրյակներին, ծառատունկներին:
- Հաշվետու տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ Մայր աթոռի միաբանների հետ:
- Հաշվետու տարվա ընթացքում համալսարանի ուսանողական խորհուրդի երգի պարի անսամբլը «Նորքի տուն ինտերնատում» և հանրապետության տարբեր զորամասերում պարբերաբար հանդես է եկել համերգային ծրագրերով, որտեղից վերադարձել են շնորհակալագրերով և պատվոգրերով:
- Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է ներֆակուլտետային 15 ինտելեկտուալ, 35 և ավելի սպորտային խաղ մրցույթներ, միջֆակուլտետային ավելի քան 30 սպորտային և ինտելեկտուալ առաջնություններ, որոնց հաղթողները բուհի ղեկավարության և ուսանողական խորհրդի կողմից խրախուսվել են տարբեր մրցանակներով:
- Կազմակերպվել են հանդիպումներ մշակույթի, սպորտի, գիտության և արտադրության ճանաչված գործիչների հետ:

- Տարվա ընթացքում պարբերաբար բացատրական աշխատանքներ են տարվել ցածր առաջադիմություն և վատ հաճախումներ ունեցող ուսանողների հետ:
- Հաշվետու տարում կազմակերպել ենք 10-ից ավել բարեգործական ակցիաներ, այցելություններ մանկատներ:
- Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում պարբերաբար կազմակերպվել են այցելություններ ՀԱԱՀ հանրակացարան, ծանոթանալու հանրակացարանաբնակ ուսանողների խնդիրներին:
- Շարունակվել է համագործակցությունը հանրապետության և արցախի պետական բուհերի ուսանողական կազմակերպությունների, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի, Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի, Հայաստանի ուսանողության ազգային ասոցիացիայի հետ:
- Դեկտեմբերի 27-ին կազմակերպվել է «Ոսկե հասկ» ամենամյա 10-րդ հոբելյանական մրցանակաբաշխությունը:

9.ՀԱԱՀ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՈՒ „ՀԱՍՈՒՆ ՀԱՍԿ„ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ 2016 Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ լրատվության եւ հասարակայնության կապերի բաժինը հաշվետու տարվա ընթացքում հանրապետական թերթերի միջոցով /հատկապես՝ „Հայաստանի Հանրապետություն„ օրաթերթի եւ „Կրթություն„ շաբաթաթերթի/ հանրությանը իրազեկել է բուհում կատարված կարեւոր իրադարձությունների մասին՝ միջազգային հավատարմագրում, ամենամյա գիտաժողով, կրթական բարեփոխումներ, ավարտական շքահանդեսներ: Այս ամենի մասին տպագրվել է 25 հոդված:

Հիշյալ իրադարձությունները լուսաբանվել են նաեւ հեռուստատեսությամբ: Հատկապես արդյունավետ եւ տեւական համագործակցում ենք „Հ1„ „Արմենիա„ „ԱրմՆյուզ„ „Ար„ „Երկիր մեդիա„ հեռուստաընկերությունների հետ:

Կարեւոր է, որ բաժինը հստակ կատարում է լրատվության երկկողմանի գործառույթը, միշտ պատրաստակամորեն աջակցել ու աջակցում ենք լրագրողներին՝ ագրարային ոլորտի հիմնախնդիրները մասնագիտական բարձր մակարդակով լուսաբանելու հարցում: Այս հանգամանքը մեր գործընկերները միշտ շեշտում են:

2016 թվականի ընթացքում տպագրվել է „Հասուն հասկի„ 16 համար: Ընթերցողներին, ինչպես միշտ, մանրամասն իրազեկել ենք ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի, գիտխորհրդի եւ ռեկտորատի ընդունած որոշումների մասին: Երբեմն հետահայաց անդրադարձել ենք դրանց կատարման ընթացքին, արդյունքներին: Ուսանողների անձնվեր, արժանապատիվ ծառայություն Ազգային բանակում, մարզական հաջողություններ, որանք հարցեր են, որոնց նկատմամբ պաշտոնաթերթը միշտ զգայուն եւ ուշադիր է:

10.ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2016թ. հունվարի 1-ից մինչև 2017թ. հունվարի 1-ը կայացել է ՀԱԱՀ գիտական խորհրդի 14 նիստ:

Գիտական խորհրդի նիստերի օրակարգերը նախապատրաստվել են համաձայն գիտական խորհրդի 2015-2016 և 2016-2017 ուսումնական տարիների աշխատանքային պլանի:

Նիստերում քննարկված հարցերը վերաբերվել են համալսարանի գործունեության տարբեր ոլորտների՝ ուսումնադաստիարակչական, ուսումնա-մեթոդական, ուսումնաարտադրական պրակտիկաների և լաբորատոր գործնական պարապմունքների կազմակերպման, ուսանողների հաճախումների, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեությանը:

Պարբերաբար լսվել ու քննարկվել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը առնչվող համակողմանի հարցեր դեպարտամենտներում, ֆակուլտետներում, ամբիոններում ու բաժիններում: Ընդունվել են որոշումներ՝ ուղղված ուսումնական գործընթացի կատարելագործմանն ու զարգացումներին:

Համալսարանի գիտական խորհրդի նիստում (05.02.2016թ.) լսվել և քննարկվել է ՀԱԱՀ քոլեջում ,Ուսումնական գործընթացի և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակը և բարելավման ուղիներըե հարցը: Նշվել է, որ քոլեջում ուսումնական գործընթացի կազմակերպման գործում դեռևս գոյություն ունեն որոշակի բացթողումներ և թերություններ:

Քննարկվել է (08.04.2016թ.) ժամանակակից պայմաններում ուսուցման գործընթացի կազմակերպման համար չափազանց կարևոր հարց, նվիրված տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի ներդրման և առավել արդյունավետ իրականացման համար:

Գիտական խորհրդի (10.05.2016թ.) նիստում քննարկման է ներկայացվել ՀՀ պետական բյուջեից ,Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանում և զարգացումե բաղադրիչով 2017թ. ֆինանսավորում ստանալու համար:

Նշվել է, որ հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է լուրջ հաջողու-թյուններ ծրագրերի կատարման արդյունքում:

Կարևոր հարցերից, որ լսվել է համալսարանի գիտական խորհրդի նիստում (03.06.2016թ.) ,Ուսումնական գործընթացի կազմակերպման, ուսանողների գիտելիքների գնահատման և գործավարության վիճակը ինֆորմատիկայի և մաթեմատիկական մեթոդների ամբիոնում և խնդիրներըե հարցն է: Նշվեց, որ համաձայն հանձնաժողովի եզրակացության ամբիոնում, որի դերն ու նշանակությունը համալսարանի համար չափազանց մեծ է և կարևոր, վիճակը չափազանց անմխիթար է և նման վիճակով հնարավոր չէ կազմակերպել և իրականացնել պատշաճ ուսումնական գործընթաց:

ՀԱԱՀ գիտական խորհուրդը կարևորելով ագրարային ոլորտի բարձրորակ մասնագետ պատրաստելու գործում պրակտիկ ուսուցման գործոնի կարևորությունը և դերը, 06.07.2016թ. նիստում քննարկել է ,Ուսումնաարտադրական գործունեության արդյունքները ՀԱԱՀ-ի ուսումնափորձնական տնտեսության միավորումումե և նույն նիստում (06.07.2016թ). լսվել և քննարկվել է ,Առաջին կուրսերում ուսանողների հետ դեկանատների, հասարակագիտական և համակարգողների կողմից տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքը և խնդիրներըե: Նշվեց, որ 2015-2016 ուսումնական տարում դեկանատները, հասարակագիտական և հանրակրթական ամբիոնները և համակարգողները հետևողական ամենօրյա աշխատանք են կատարել առաջին կուրսերում ուսումնադաստիարակչական միջոցառումների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Համաձայն 2016թ. ապրիլի 7-ի ,Հայաստանի Հանրապետությունե օրաթերթում հայտարարված մրցույթի և ՀԱԱՀ 2016թ. հունիսի 8-ի հայտարարությանը 08.07.2016թ. գիտական խորհրդի նիստում տեղի է ունեցել մրցութային գործերի քննարկում և թափուր պաշտոնների թեկնածուների ընտրություն:

Հիդրոմելիորացիայի, հողաշինարարության և հողային կադաստրի ֆակուլտետում ,Ուսումնական գործընթացի կազմակերպման, բարելավման հիմնախնդիրներըե հարցը 18.07.2016թ.ներկայացրել է գիտական խորհրդի քննարկմանը համալսարանի կրթության որակի վերահսկման հանձնաժողովի նախագահ՝ պրոֆեսոր Բ.Շահնազարյանը: Ուսումնասիրությունների արդյունքում որոշվել է ուժեղացնել հսկողությունը կրթության որակի ապահովման և վերահսկման գործընթացում առավելապես կարևորել կրթության բարեփոխումների, ուսանողների գործնական հմտությունների ձեռք բերման, ուսանողական պրոցեսում տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների կիրառման աշխատանքները:

Նույն գիտական խորհրդի նիստում (18.07.2016թ.) քննարկմանն է ներկայացվել ,Պետական քննությունների և դիպլոմային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության արդյունքները և խնդիրները ֆակուլտետներում և հեռակա ուսուցման դեպարտամենտումե: Հարցի քննարկման արդյունքում, հաշվի առնելով պետական քննական հանձնաժողովների կողմից արված արաջարկությունները և դիտողությունները, որոշվեց վերանայել քննական առարկաների ծրագրերը և ճշտել պետական քննությունների հարցաշարերը:

2016-2017ուս. տարվա նախաշեմին (30.08.2016թ.) «2015-2016 ուս. տարվա ուսումնական գործընթացի արդյունքները և խնդիրները» հարցը ներկայացրեց ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Յու.Մարմարյանը:

Նշվեց, որ 2015-2016 ուս. տարում համալսարանի բոլոր ստորաբաժանումների աշխատանքներն ուղղված են եղել կրթական բարեփոխումների շարունակականության ապահովման, կրթության որակի բարելավման և ուսուցման կրեդիտային և ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգի ներդրման ուղղություններով:

Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման քաղաքականությունը համալսարանի համար շարունակում է մնալ ռազմավարական զարգացման գլխավոր ուղղություններից մեկը:

ՀԱԱՀ ռեկտորի հրամանով (20.09.2016թ. №129/ԱԾ) ստեղծված հանձնաժողովի նախագահ՝ Բ.Շահնազարյանը 19.10.2016թ. գիտական խորհրդի նիստին ներկայացրեց ,2015-2016 ուս. տարում համալսարանի գիտական խորհրդի հանձնարարականների կատարման ընթացքը և վիճակը հարցի ուսումնասիրության արդյունքները: Նշվեց, որ բոլոր մակարդակներում գիտական խորհրդի հանձնարարականները հիմնականում կատարվել են:

2016թ. նոյեմբերի 11-ին կայացավ հանդիպում Հայաստանի Հանրապետության գյուղա-տնտեսության նախարար, պարոն Իգնատի Առաքելյանի, իսկ 2016թ. նոյեմբերի 29-ին հանդիպում տեղի ունեցավ ՀՀ կրթության և գիտության նախարար, պարոն Լևոն Մկրտչյանի հետ:

,Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և բարելավման ուղիները ագրոնոմիական ֆակուլտետումե հարցի ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են 2016թ. նեյեմբերի 30-ի նիստում:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ուսումնական գործընթացի կազմակերպման, արդիականացման, ուսումնամեթոդական և գիտական աշխատանքների կատարման, դասավանդման որակի բարելավման, կրեդիտային համակարգի լիարժեք ներդրման, ուսանողների հաճախումների ապահովման գործընթացում կան լուրջ ձեռքբերումներ, սակայն միաժամանակ արձանագրվել են որոշ խնդիրներ, որոնք լուծում են պահանջում:

Հանձնարարվեց արմատապես վերանայել թողարկող ամբիոնների առարկայական ծրագրերը, համապատասխանեցնելով դրանք արդի արտադրության պահանջներին:

Դեկտեմբերի 14-ի 2016թ. գիտական խորհրդի նիստում լսվել և քննարկվել է ,Հեռակա ուսուցման ուսանողների հետ տարվող աշխատանքների վիճակը և դեպարտամենտի խնդիրներըե հարցը:

Քննարկման արդյունքում որոշվել է ուժեղացնել վերահսկողությունը հեռակա ուսուցման ուսանողների հաճախումների, ստուգողական և կուրսային աշխատանքների հանձնարարման և դրանց կատարման ընթացքի վրա:

ՀԱԱՀ գիտական խորհրդի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացած նիստերում քննարկվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի և ՀՀ կառավարության Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային համակարգի բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման կրթահամակարգի զարգացմանն ուղղված՝ հանձնարարականների կատարման ընթացքը:

1. Հանձնարարվել էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախա-րարությանը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ մարզպետների հետ համատեղ, քննարկել հանրապետության ագրարային ոլորտում բարձրագույն կրթության մասնագիտությունների անվանա-ցանկում նոր մասնագիտությունների ավելացման, մարզերում ըստ մասնագիտու- թյունների նպատակային տեղերի հատկացման և մասնագետների ու ֆերմերների վերապատրաստման ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը:

2. Հանձնարարվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ բուհերի ռեկտորների հետ քննարկել և ուսումնասիրել կրթական գործընթացների արդյունավետությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծրագրերին:

3. Հանձնարարվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ, ուսումնասիրել Ագրարային համալսարանում դասավանդվող բոլոր կրթական ծրագրերը, դրանց արդյունավետության աստիճանը (հմտությունների և պրակտիկ գիտելիքների փոխանցման տեսանկյունից) և ըստ այդմ մշակվել ծրագրեր՝ մասնագիտական գիտելիքների կատարելագործման և առավել արդյունավետ կիրառման համար, հիմք ընդունելով ՀՀ մարզպետների կողմից համապատասխան մարզերում մասնագիտությունների պահանջարկի մասով իրականացված ուսումնասիրության արդյունքները, և նույն մոտեցմամբ վերանայել նաև գյուղատնտեսության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ծրագրերը:

Գիտական խորհրդի նիստերում լսվել և քննարկվել են դոկտորական, թեկնածուական ատենախոսությունների հրապարակային պաշտպանության երաշխավորության, ատենախոսական թեմաների հաստատման, գիտական ղեկավարների նշանակման և հայցորդների ձևակերպման հարցերը:

Սահմանվել են անհատական կրթաթոշակներ և հաստատվել են անհատական կրթաթոշակների թեկնածուները, շնորհվել են պատվավոր կոչումներ և ընդունվել են ուրոշումներ պատվոգրերով և մեդալներով պարգևատրելու մասին: Իրականացվել է պրոֆեսորադասախոսական կազմի ընտրություն՝ փակ (գաղտնի) քվեարկությամբ: Սահմանված կարգով շնորհվել են պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ (մանրամասն տես գիտական խորհրդի արձանագրությունները):

11. ՌԵԿՏՈՐԱՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում կայացել է ռեկտորատի 22 նիստ՝ մասնակցությամբ ռեկտորատի բոլոր անդամների և հրավիրվածների:

Ռեկտորատի նիստերում քննարկվել են՝

1.ա/ Ուսանողների հաճախումների վիճակն ըստ ամիսների դասաձախողումների վիճակը, բաց թողած ժամերի լրացման վիճակը, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքերը, շրջափոխման արդյունքերը, ակադեմիական պարտքերի մարման վիճակը և արդյունքները (16 հարց):

Ռեկտորատի նիստերում ընդունվել են որոշումներ ակադեմիական պարտքերի հանձնման ժամկետների վերաբերյալ, միջանկյալ և ամփոփիչ քննությունների արդյունքների վերաբերյալ, քննությունների սահմանված ժամկետներում չհանձնելու, ավելի մեծ թվով բացակայություններ ունեցող ուսանողների հեռացման վերաբերյալ:

բ/ Ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակը և խնդիրները համալսարանի ամբիոններում (1 հարց)

գ/Համալսարանի վճարովի համակարգի ուսանողների ուսման վարձերի զեղչերի քննարկում (5 հարց)

2. Ուսումնական պլանների փոփոխման ընթացքը և խնդիրները (1 հարց)

3. 2014-15 ուստարում ամբիոններում արձանագրված թերությունների վերացման ընթացքը և խնդիրները (1 հարց)

4.Դասախոսների վերապատրաստման վիճակը և բարելավման ուղիները (1 հարց)

5.2015-2016 ուստարում ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների վիճակը: Մոսկվայի Սկրյաբինի անվան անասնաբժշկագիտության կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիայի Երևանի մասնաճյուղում (1 հարց)

6.Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների վիճակը ՀԱԱՀ-ի վարժարանում և բարելավման ուղիները (1 հարց)

7. Ուսումնական ծրագրերի վերանայումը (1 հարց)

8. Հեռակա ուսուցման դեպարտամենտում 2016-2017 ուստարվա ընդունելության արդյունքները (1 հարց)

9. ՀԱԱՀ ռեկտորատի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացած նիստերում քննարկվել է Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանի և ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային համակարգի բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման կրթահամակարգի զարգացմանն ուղղված» հանձնարարականների կատարման ընթացքը:

ա. Հանձնարարվել էր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՀՀ մարզպետների հետ համատեղ, քննարկել հանրապետության ագրարային ոլորտում բարձրագույն կրթության մասնագիտությունների անվանացանկում նոր մասնագիտությունների ավելացման, մարզերում ըստ մասնագիտությունների նպատակային տեղերի հատկացման և մասնագետների ու ֆերմերների վերապատրաստման ծրագրերի իրականացման անհրաժեշտությունը:

բ. Հանձնարարվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ բուհերի ռեկտորների հետ քննարկել և ուսումնասիրել կրթական գործընթացների արդյունավետությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ծրագրերին:

գ. Հանձնարարվել էր ՀՀ կրթության և գիտության նախարարին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հետ, ուսումնասիրել Ագրարային համալսարանում դասավանդվող բոլոր կրթական ծրագրերը, դրանց արդյունավետության աստիճանը (հմտությունների և պրակտիկ գիտելիքների փոխանցման տեսանկյունից) և ըստ այդմ մշակվել ծրագրեր՝ մասնագիտական գիտելիքների կատարելագործման և առավել արդյունավետ կիրառման համար, հիմք ընդունելով ՀՀ մարզպետների կողմից համապատասխան մարզերում մասնագիտությունների պահանջարկի մասով իրականացված ուսումնասիրության արդյունքները, և նույն մոտեցմամբ վերանայել նաև գյուղատնտեսության ոլորտում միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների ծրագրերը:

Ռեկտորատի յուրաքանչյուր նիստում քննարկվել են ընթացիկ հարցեր:

Ռեկտորատի նիստերում քննարկված բոլոր հարցերի վերաբերյալ կայացվել են որոշումներ (տես ռեկտորատի արձանագրությունները)